Որոց լինի ներկայն, եմ. կատ՟ն, ի. և հրամայականքն զանազանք։ Ոպ՟, Ածեմ, ածի, ա՛ծ։ Բերեմ բերի, բե՛ր։ Հանեմ, հանի, հա՛ն։ Արկանեմ, արկի, ա՛րկ։ Հարկանեմ, հարի, հա՛ր։ Գտանեմ, գտի, գի՛տ։ Հատանեմ, հատի, հա՛տ։

Մուծանեմ, մուծի, մո՛յծ։ Լու-
ծանեմ, լուծի, լո՛յծ։ Ցուցանեմ
ցուցի, ցո՛յց։ Լուցանեմ, լուցի,
լո՛յց։ և այլք սոյնպիսիք։

Ի սոյն ձեւ Ածանցական Ընդդիմականք։

Ելանեմ, ելի, ե՛լ։ Մտանեմ,
մտի, մո՛ւտ։ Իջանեմ, իջի, է՛ջ։
Անցանեմ, անցի, ա՛նց։ և այլք։

Անկատարական և Ածանցական Ներգործականք։

Լսեմ, լուայ, լո՛ւր։ Ճանաչեմ,
ծանեայ, ծանի՛ր։

Ի սոյն ոճ Ընդդիմականք։

Յառնեմ, յարեայ, արի՛։ Մե-
ղանչեմ, մեղայ, մեղի՛ր։

Ածանցական Ներգործականք։

Դարձուցանեմ, ձուցի, դարձո՛։
Յարուցանեմ, րուցի, յարո՛։
Ծանուցանեմ, նուցի, ծանո՛։
Կեցուցանեմ, ցուցի, կեցո՛։
Սպրեցուցանեմ, ցուցի, րեցո՛։
և այլք բազումք։

## Բայք Պատճառանօղք Ըստ Կերպին.

### Նոյնական Ներգործական :

Լուանամ , լուացի , լուա՛ :

### Նոյնական Ընդմիջականք :

Գնամ, գնացի, գնա՛ : Մնամ, մնացի, մնա՛ : Լողամ, լողացի, ղա՛ : Նոյնպէս, խնդամ, խայտամ, անսամ ջանամ, խաղամ, հաղամ : և այլք սոյնք ամ, այի, ա եղերեալք :

### Սովորական Ներգործականք :

Բանամ, բացի, բա՛ց : Թանամ, թացի, թա՛ց : Բառնամ, բարձի, բա՛րձ : Ամբառնամ, ամբարձի, ամբա՛րձ : Համբառնամ, համբարձի, համբա՛րձ :

### Սովորական Ընդմիջականք :

Գամ, եկի, ե՛կ : Կամ, կացի, կա՛ց : Կեամ, կեցի, կեա՛ց : Կեաց՝ նոյնին երբեք և ոչ է. զի չէ յարմար ներկային բուռում :

Օրինակք Ներգործականաց ։

Գողանամ, գողացայ, գողացիր ․
Ստանամ, ստացայ, ստացիր ․
Իմանամ, իմացայ, իմացիր ։
Մոռանամ, մոռացայ, մոռացիր ․
Իմացիք, մոռացիք, լինին եւ իմա, մոռա

Օրինակք Ընդմիջականաց ․

Լանամ, էացայ, էացիր ։
Գոյանամ, գոյացայ, գոյացիր ․
Զարգանամ, ժրանամ, զօրանամ
սլանամ, վերանամ, ուրախանամ․
եւ այլք յոյժ բազումք այսպէս
անամ, ացայ, ացիր եղերեալք․

Նաեւ այսպիսիք, Մերձենամ,
մօտենամ, արբենամ, գերենամ,
թերենամ, յարենամ, խնամենամ
թշնամենամ․ եւ այլք սակաւք
սոյնպէս եղերեալք ․

Նաեւ այսպիսիք, Յուսամ, յու-
սացայ, յուսացիր, կամ յուսա․
Ցանկամ, ցանկացայ, ցանկացիր,

կամ ցանկամ։ Զ՛ընծամ, ընծայայ, ընծայիր, կամ ընծամ. Տարփամ, տենչամ, տողամ, փութամ. և այլք սոյնպիսիք.

Երընթացք և Չեզոքին Ընդդիմանք։

Դառնամ, դարձայ, դա՛րձ. կամ դարձի՛ր։ Երթամ, չոգայ, ե՛րթ։ Հրամայականն՝ դարձ, է կողմնակի. Իսկ՝ դարձիր՝ է՝ նոյնական։

---

Ըստ այս Պարզականօք Երրորդ Կերպին.

Նոյնական Ներգործական.

Ընկենում, ընկեցի, ընկեա՛. Սորա երրորդ դէմք կատարելոյն՝ լինի ընկէց, աննման այլոցն ամենեցուն. Եւ ա՛յս միայն ունելով աննմանութիւն այլոց, ոչ պատկանի համարիլ կողմնական. զի թէ և լինիցի՝ ընկեալ՝ ոչ լինի խորթաձայն. Ըստ այլում սովորութեան նախնեացն՝ դնի, ընկէց.

Առաջնական Ներգործականք.

Առնում առի ա՛ռ. Գերծում գերծի գե՛րծ. Լնում լցի լի՛ց. Գելում գելի գե՛լ. Ցելում ցելի ցե՛լ. Զենում զենի զե՛ն. Զեղում զեղի զե՛ղ. Արգե-լում արգելի արգե՛լ. Յաւե-լում յաւելի յաւե՛լ. և այլ.

Անջատականք Ներգործականք.

Զգենում, զգեցայ, զգեցի՛ր.
Ընթեռնում, թերցայ, թերցի՛ր.

Անջատականք և Առաջնական Ներգործքնք.

Սպառնում, կալայ, կա՛լ.
Ընկալնում, ընկալայ, ընկա՛լ.

Անջատականք Ընդմիջականք.

Երդնում երդուայ երդուի՛ր.
Ջեռնում ջեռայ ջեռի՛ր.
Ուռնում ուռայ ուռի՛ր.
Հեծնում հեծայ հեծի՛ր.
Յենում յեցայ յեցի՛ր.
և այլք սակաւք, որոց կարելի լինի՝ այ.

Նաև այսպիսիք։

Զարթնում զարթեայ զարթի՛ր։
Ցասնում ցասեայ ցասի՛ր։
Պակնում պակեայ պակի՛ր։
Քաղցնում քաղցեայ քաղցի՛ր։
Փախնում փախեայ փախի՛ր։
Ոստնում ոստեայ ոստի՛ր։
Եւ այլ, որոց կտ̄րն լինի՝ եայ։

Բայք Պարզականք Չ̄րդ Սեռին։

Սրահորականք Լծրին Սեռիցն։

Այրիմ այրեցայ այրեա՛ց, կամ այրեցի՛ր։ Բուժիմ բուժեցայ բուժեա՛ց, կամ բուժեցի՛ր։ Գովլիմ գովլեցայ գովլեա՛ց, կամ գովլեցի՛ր։ Եւ այլն։

Ածիմ ածայ ածի՛ր։ Բերիմ բերայ բերի՛ր։ Արկանիմ արկայ արկի՛ր։ Եւ այլն։

Լուիմ լուեալ եղէ լուեա՛լ լեր։ Ճանաչիմ ծանուցեալ եղէ ծանուցեա՛լ լեր։

Պարձուցանիմ, ձուցայ, ձուցե՛ր։
Յարուցանիմ, րուցայ, րուցե՛ր։
Ծանուցանիմ, նուցայ, նուցե՛ր։
Կեցուցանիմ, ցուցայ, ցուցե՛ր։
Ապրեցուցանիմ, ցուցայ, ցուցե՛ր։

և այլք ։

Բանիմ բացայ բացե՛ր։ Թանիմ Թացայ Թացե՛ր։ Բառնիմ բ̃րձայ բարձե՛ր։ Ամբառնիմ ամբարձայ ամբարձե՛ր։ և այլն։

Գողանիմ գողացեալ եղէ գողացեա՛լ լե՛ր։ Ստանիմ ստացեալ եղէ ստա̃ցլ լե՛ր։ և այլն։

Առնանիմ առայ առե՛ր։ Գերծանիմ գերծայ գերծե՛ր։ Լնանիմ լցայ լցե՛ր։ Գելանիմ գելայ գելե՛ր։ Ցելանիմ ցելայ ցելե՛ր։ Զենանիմ զենայ զենե՛ր։

և այլն ։

Զգենանիմ զգեցեա՛լ եղէ ըզգեցեա՛լ լե՛ր։ Ընթեռնանիմ ընթերցեալ եղէ ընթերցեա՛լ լե՛ր։

 զանա

Զանազան Սրահօրակներոց Ընդմիջա-
կանց եւ Հաստատակի.

Ընդմիջականս ծնեբեցեալք, իմ,
եցայ, եաց.

| | | |
|---|---|---|
| Տրտմիմ | տրտմեցայ | տրտմեաց։ |
| Ըներկրիմ | ըներկրեցայ | ըներկրեաց։ |
| Յագիմ | յագեցայ | յագեաց։ |
| Ցաւ̂իմ | ցաւ̂եցայ | ցաւ̂եաց։ |
| Ժպտիմ | ժպտեցայ | ժպտեաց։ |
| Ընակիմ | ընակեցայ | ընակեաց։ |

Ի սոյն կնի Հաստատակի.

| | | |
|---|---|---|
| Խորհիմ | խորհեցայ | խորհեաց։ |
| Խօսիմ | խօսեցայ | խօսեաց։ |
| Նայիմ | նայեցայ | նայեաց։ |
| Հայիմ | հայեցայ | հայեաց։ |
| Փարիմ | փարեցայ | փարեաց։ |
| Կամիմ | կամեցայ | կամեաց։ |
| Շահիմ | շահեցայ | շահեաց։ |
| Համարիմ | րեցայ | մարեաց։ |
| Պաճանիմ | նեցայ | ճանեաց։ |

եւ այլք սոյնպիսիք. Որք Թեպէտ

ունին զզօրութի՛ւն հարակի, սակայն
՚ի տեղի կրաւորականի հազի՛ւ թէ
՚ի գործ ածին. այլ դնին յաճախ
ներգործական նշանակութ՟բ.

2 Ընդմիջականք երկրորդք, անիմ, այ, իր

| | | |
|---|---|---|
| Ընկանիմ | անկայ | անկեր. |
| Մեռանիմ | մեռայ | մեռեր. |
| Բուսանիմ | բուսայ | բուսեր. |
| Սընանիմ | սընայ | սըներ |
| Ջեռանիմ | ջեռայ | ջեռեր. |

Ի սոյն ձեւ հատորականք.

| | | |
|---|---|---|
| Ծնանիմ | ծնայ | ծներ. |
| Սկսանիմ | սկսայ | սկսեր. |
| Ուսանիմ | ուսայ | ուսեր |
| Վարկանիմ | վարկայ | վարկեր. |

Նոյն դիմին և Աշխարհական Հոմաձայնս.

Տանիմ տարայ տար. Առնիմ, կալայ, կալ, և կալեալ լեր. Ընդունիմ ընկալայ ընկալ և ընկալեալ լեր.

3 Ընդդիմականք, չիմ, եայ, իր.

| | | |
|---|---|---|
| Մատչիմ | մատեայ | մատիր. |
| Փախչիմ | փախեայ | փախիր. |
| Թաքչիմ | թաքեայ | թաքիր. |
| Հանգչիմ | հանգեայ | հանգիր. |
| Թռչիմ | թռեայ | թռիր. |
| Երկնչիմ | երկեայ | երկիր. |
| Կորնչիմ | կորեայ | և այլ. |

Կրաւորականերորդ և Կոչմանկն Ընդդիմականք.

Նստիմ, նստայ, նիստ.

Եւ աստ գիտելի է, զի 'ի կոչմնականաց՝ ոմանք 'ի կատարելումն սահմանականին՝ փոխեն զձև ձայնին և այլապէս ձևանորին. ոմանք յոյժ աննմանապէս, և ոմանք սակաւ ինչ: Եւ են այսոքիկ, Տամ, ետու: Գամ, եկի: Երթամ, չոգայ: Առնեմ, արարի: Յառնեմ, յարեայ: Լսեմ, լուայ: Ըմպեմ, արբի: Գտանեմ, եգիտ: Ուտեմ, կերի: Ճանաչեմ, ծանեայ:

Մեղանչեմ, մեղայ. Ունիմ, կա-
լայ: Ընդունիմ, ընկալայ.
Բայց այսոցիկ՝ լսեմ, ըմպեմ,
ճանաչեմ, մեղանչեմ, ունիմ,
ընդունիմ, կարեն և ըստ ձևոյ
ձայնին ձևանալ կատարեալքն.
Որպէս, լսեմ, լսեցի. ըմպեմ, ըմ-
պեցի. ճանաչեմ, ճանաչեցի. մե-
ղանչեմ, մեղանչեցի. ունիմ, ու-
նեցայ. ընդունիմ, ընդունեցի,
կամ ընդունեցայ. Նոյնպէս և կա-
տարելոցս այսոցիկ, արբի, ծանեայ,
կալայ, ընկալայ, ձևանան ներ-
կայք այսպէս, արբենում, ծանիմ,
կալնում, ընկալնում: Իսկ լռեայ,
մեղայ, ըստ ձևոյ ձայնին ոչ ունե-
լով ներկայս, միայն պակասեալք.
Եւ տես զայն որ Ը ձևոյ ձայնին,
և զայն որ ըստ նախնեացն.

Ըստ չորրորդ Ձայնին օրինակք:

Լսեմ լսեցի լսեալ: Ըմպեմ ըմ-
պեցի ըմպեալ. Ճանաչեմ ճանա-
չեցի ճանաչեալ. Մեղանչեմ

մեղանչեցի մեղանչեա՛. Ծանիմ ծանեայ ծանի՛ր։ Ունիմ ունեցայ ունեցի՛ր. Ընդունիմ ընդունեցի, կամ ընդունեցայ, ընդունեա՛. Կալնում կալայ կա՛լ։ Ընկալնում ընկալայ ընկա՛լ։

Այն ըստ Նախնեաց այսպէս։

Լսեմ լուայ լո՛ւր. Ըմպեմ արբի ա՛րբ. Ճանաչեմ ծանեայ ծանի՛ր. Մեղանչեմ մեղայ մեղի՛ր։ Ունիմ կալայ կա՛լ. Ընդունիմ ընկալայ ընկա՛լ. Մեղիր, ոչ գոյ թէպէտ ըստ Նախնեացն, այլ ըստ կատարելոյն այնպէս ձեւանայ.

## Յաղագս Անկանոն Բայից.

### Գլուխ 16

Չորք այսոքիկ ՚ի բայից, եմ, գամ, լինիմ, եղանիմ, կոչին գոյական բայք. Զի զգոլն կամ զլինելն իւն մի՛այն ցուցանեն, եւ ներգործութիւն ինչ ոչ ունին.

Իսկ միւսքն կոչին իրակականք· վս՟ զի իրակութեա՛ն են նշանակիչք· այսինքն գործողութ՟, կամ կրողութեան· Նա՛ գիցուք աստ զխոնարհմունս էական բայից·

Ըստ այս՝ Եմ, այսոք հայցման խոնարհի·

Սահմանական Ներկայ·

Եմ ես է· Եմք էք են·

Անցեալ Անկատար

Էի էիր էր· Էաք էիք էին·

Ստորադասական Ապառնի

Իցեմ իցես իցէ· Իցեմք իցէք իցեն։

Ըստ այս՝ Գոմ, այսպէս հայցման խոն՟·

Գոմ գոս գոյ։ Գոմք գոք գոն·

Անցեալ Անկատար

Գոյի գոյիր գոյր· Գոյաք գոյիք գոյին·

Բայս՝ Լինիմ, այսպէս խոնարհի։

Սահմանական Ներկայ.

| | | |
|---|---|---|
| Լինիմ | լինիս | լինի |
| Լինիմք | լինիք | լինին |

Անցեալ Անկատար

| | | |
|---|---|---|
| Լինէի | լինէիր | լինէր |
| Լինէաք | լինէիք | լինէին |

Անցեալ Յարակատար

| | | |
|---|---|---|
| Լեալ եմ | լեալ ես | լեալ է |
| Լեալ եմք | լեալ էք | լեալ են |

Անցեալ Գերակատար

| | | |
|---|---|---|
| Լեալ էի | լեալ էիր | լեալ էր |
| Լեալ էաք | լեալ էիք | լեալ էին |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Լեցիմ | լեցիս | լեցի |
| Լեցուք | լեցիք | լեցին |

Ստորադասական Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Լինիցիմ | լինիցիս | լինիցի |
| Լինիցիմք | լինիցիք | լինիցին |

Հրամայական Բացասական առ Երկ-
րորդ Դէմս Ներկայ.

Լեր, մի՛ լինիր։ Լերո՛ւք, մի՛ լինիք
Նմանն, Լիջիր, կամ լիցիս.
մի՛ լիցիս, կամ մի՛ լինիցիս։ Լիջիք,
մի՛ լինիջիք, կամ մի՛ լինիցիք.

Նա Երրորդ Դէմս.

Լիցի՛. մի՛ լիցի, կամ մի՛ լինիցի.
Լիցին. մի՛ լիցին, կամ մի՛ լինիցին.

Նա Առաջին Դէմս.

Լիցուք. մի՛ լիցուք, կամ մի՛ լի-
նիցիմք.

Բայս՝ Լողանիմ, այսպէս խոնարհի.

Սահմանական Ներկայ.

| | | |
|---|---|---|
| Լողանիմ | Լողանիս | Լողանի |
| Լողանիմք | Լողանիք | Լողանին |

### Անցեալ Անկատար

| | | |
|---|---|---|
| Եղանէի | եղանէիր | եղանէր |
| Եղանէաք | եղանէիք | եղանէին |

### Անցեալ Կատարեալ

| | | |
|---|---|---|
| Եղէ | եղեր | եղև |
| Եղաք | եղէք | եղեն |

### Անցեալ Յարակատար

| | | |
|---|---|---|
| Եղեալ եմ | եղեալ ես | եղեալ է |
| Եղեալ եմք | եղեալ էք | եղեալ են |

### Անցեալ Գերակատար

| | | |
|---|---|---|
| Եղեալ էի | եղեալ էիր | եղեալ էր |
| Եղեալ էաք | եղեալ էիք | եղեալ էին |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| Եղէց | եղիցիս | եղիցի |
| Եղիցուք | եղիցիք | եղիցին |

### Ստորադասական Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Եղանիցիմ | եղանիցիս | եղանիցի |
| Եղանիցիմք | անիցիք | անիցին |

Հրամայական Արգելական առ Եղէն բայս Գոյէն Վերջոյ.

Եղիր, մի՛ եղանիր: Եղերո՛ւք, մի՛ եղանիք.

Ապառնի, Եղիջիր, կամ եղիցիս: մի՛ եղիցիս, կամ մի՛ եղանիցիս. Եղիջիք, մի՛ եղիջիք, կամ մի՛ եղանիջիք. մի՛ եղիցիք, կամ մի՛ եղանիցիք.

Առ Երրորդ Դէմս:

Եղիցի՛. մի եղիցի, կամ մի՛ եղանիցի: Եղիցին. մի՛ եղիցին. կամ մի՛ եղանիցին.

Առ Առաջին Դէմս.

Եղիցուք. մի՛ եղիցուք, կամ մի՛ եղիցիմք, կամ մի եղանիցուք, կամ մի՛ եղանիցիմք:

Եւ ճանիր, զի Հրամայականս այս՝ եղիր, Թէպէտ ոչ գոյ ՚ի նախնեաց, բայց ըստ ձեւոյ ձայնին եդաք այնմ, զի մի՛ այնու միայն և նա պակաս գտանիցի.

Եւ ծանիր, զի 'ի խոնարհմունս եական բայից՝ ստորադասնի որակումն ապառնին միայն եղան. իսկ ըղձական բնաւ ոչ եղան: Զի ապառնին ստորադասնին՝ է և ապառնի ըղձականին որպէս և ուսաք: Իսկ զայլ ժամանակսն սոցին դիւրին է հանել 'ի սահմանականէն. որպէս հանեալ եղեն միւս բայիցն 'ի խոնարհմունս նոցին.

Ծանիր և զայս, զի բայս եմ, ունի հրամայական մի 'ի մէջ աւետարանին, եւ. ով՝ ողջեր թագաւոր հրէից. այսինքն լեր. Որոյ յոգնականն ձևանայ՝ երուք. Ունի և ապառնի մի սահմանականի երրորդ դիմին՝ յերգս սրբոյն Ներսէսի, եւյլ. Ոչ իմ կամաւ, այլ քոյդ եսցէ: Որպէս և գոլին 'ի կիր արկանի միայն երրորդ դիմին՝ գոյէ. Որոյ թէ կամիցիմք ձևացուցանել և զայլ միւս դիմսն, կարելի՛ է ասել,

եցից, եսցես, եսցէ· Եսցուք,
եսցէք, եսցեն։ Գուցեմ, գու-
ցես, գուցէ· Գուցեմք, գուցէք,
գուցեն։ Որպէս և եալն նմին,
եալեմ, եալես, եալէ։ Բայց
այսոքիկ ոչ են հարկաւորք· զի
բայքս՝ եմ, գոմ, գոլով պակասա-
ւորք, 'ի միւս երկուցն լծուցա-
նին· որպէս և նոքա 'ի միմեանց։
Ասացի, որպ̃ և նոքա 'ի միմեանց,
զի Թէպէտ լինիմն 'ի կատ̃րլումն
միայն պակասի, և եղանիմն ոչ է
պակասաւոր· բայց երկոցունցն
և ամ̃ խոնարհմունքն ոչ սովո-
րապէս 'ի կիր արկանին· այլ՝ որք
սովորականքն են։ Որպ̃ 'ի տեղի
առելոյ՝ եղանիմ, եղանէի· լեալ
եմ, լեալ էի, սովորական է, լինիմ,
լինէի· եղեալ եմ, եղեալ էի։

Ըստ այսց և զայլսն իմա։

Նաև, գոմ, գոս, 'ի բանս նախնեաց
չեն առեալ 'ի գործ։

## Յաղագս Անդէմ Բայից։

### Դաս 17

Անդէմ բայ կոչին այնք, որք երրորդ դէմն միայն ունին՝ եզական թուով. և այն ևս ոչ օգտէ 'ի տեղի դիմի։ Որգոն, պարտ է, պատշաճ է, ճահ է, ըմբռնէ, հարկ է, ալծնէ, վայելուչ է և այլք։ Նմացի՝ և այն ևս ոչ օգտէ 'ի տեղի դիմի. զի մինչ ասէ որ, պարտ է նստիլ աստ, դէմ ինչ ոչ որոշի թէ ում արդեօք պարտ է նստիլ։ Իսկ յորժամ ասէ, պարտ է ինձ նստիլ աստ, որոշի իրակուին և լինի առաջին դէմ։ Նաև այսպ իսի երից դիմացն ևս՝ նոյն երդ դիմանն վարի։ Որպէս ասել՝ պարտ է ինձ գնալ. պարտ է քեզ մնալ. պարտ է նմա գալ. և այլ։

Նաև խոնարհմանց Անդէմ Բայից լինին այսպէս։

Սահմանական, Պարտ է. Պարտ էր. Պարտ եղև. Պարտ լեալ է. Պարտ լեալ էր. Պարտ լիցի.

Հրամայական, Պարտ լիցի. պարտ մի լիցի, կամ մի լինիցի.

Նա այսքանս է խոնարհումն անդէմ բային և ոչ այլ. վասն զի միայն եզական է և երրորդ դէմ.

Իսկ ըստորադասականն և ըղձականն դիւրին է հանել ՚ի սահմանականէն ոճ զայլոցն.

Աներևոյթ, Պարտ լինել, պարտ լինելոյ, պարտ լինելով.

---

Դառնալ ընթերցողին՝ որպէս էր մտաց՝ դիւրասահմանելի. այժմ է՛ ընկերի՝ ընդունելութեանն՝ ընկալանելի.

Որ ասեն յինչեան՝ ընդհանրութեան՝ անձամն են բայք. չիք է՛ գործածոն ոյր մին ՚ի բայսն՝ ստորագայի.

## Յաղագս Ընդունելութեան :

### Գլուխ ԺԷ

Ընդունելութիւն է երրորդ մասն բանի՛ ծնեալ՚ի բայէ. որ զէութիւն և զիրակութիւն իմիասին նշանակէ. Ա՛յ է վերջք նորին՝ են հինգ. ող, իչ, եալ, ելի, լոց: Որգոն՝ փրկող, փրկիչ, փրկեալ, փրկելի, փրկելոց. Ասացի, զէութիւն և զիրակութիւն իմիասին նշանակէ: Զի անունն՝ էութիւն է նշանակող, և բայն՝ իրակութիւն, որպէս ցուցած յերեսն 18 և 48 Իսկ ընդունելութիւն է նշանակող էութեան և իրակութեան. զի ձայնս այս փրկող, նշանակէ զանձն փրկողին.

որ է էութին. այսինքն փրկօղն
Նշանակէ և զիրակութի նորին,
որ է փրկելն։ Եւ յասացելոյս
հետեւի թէ՝ ընդունելութին ունի
զնմանութի անուան և զնմանութի
բայի. Զի ըստ այնմ որ նշանա-
կէ զէութին, է՛ իբրև անուն.
և ըստ այնմ որ նշանակէ զիրակու-
թիւնն, է՛ իբրև բայ։

Եւ կոչի ընդունելութիւն,
զի անուն մակադրական ըունե-
լով յիրակութէն, այնու անուամբն
անուանակոչի։ Զոր օրինակ,
այն որ փրկէ՝ փրկօղ անուանի.
և այն որ փրկի՝ փրկեալ յորջորջի։

Եւ որովհետև ընդունելութին
ունի զնմանութի անուան և ըզ
նմանութի բայի որպ ցուցաւ,
հետեւմունք նորին՝ են 'ի հետեւ-
մանց նոցին. այսինքն անուան և
բայի. և են հինգ։ Սեռ, Թիւ,
Տեսակ, Ժամանակ, և Հոլով.

Սեռք ընդունելութն՝ են չորք

 ըստ

ըստ բային. Ներգործկն, Կրաւո
րական, Ընդմիջական, Չէզոք.
Ներգործկնն լինի, օղ, իչ, եալ, ելոց.
Չի՛գոն՝ փրկօղ, փրկիչ, փրկեալ,
փրկելոց. Կրաւորականն լինի,
եցեալ, ելի, ելոց. Որպէս, փրկեցեալ,
փրկելի, փրկելոց. Ընդմիջականն
լինի, օղ, եալ, լոց. Որպէս՝ գնացօղ,
գնացեալ, գնալոց. Իսկ վերջս՝ իչ,
հազիւ հանդիպի ընդմիջականաց.
Որ թէպէտ ասի՝ բնակիչ, բայց
ոչ ասի, գնացիչ, ննջիչ. և այլն.
Չէզոքն լինի, եալ, լոց. Որպէս՝
բացեալ, բանալոց. զենեալ, զենլոց.
և այլք. Որք ունին զնշանակութ
ներգործականի և կրաւորականի.
Ներգործական՝ օրինակ, պետրոս բա
ցեալ զդուռն՝ զոր ինքն բանա
լոց էր, և զենեալ զգառն՝ զոր
ինքն զենլոց էր, եփեաց զնա և
եդ առաջի եղբարցն.
Կրաւորական՝ հի՛գոն, դուռն
եղև բացեալ 'ի պետրոսէն, որ 'ի

նմանէ բանալւոյ էր . այսպէս և
միուն . Բայց և կրաւորականք
այսոքիկ՝ եղեալ, էլոյ, ՚ի շարադրու-
թիս նախնեաց՝ սովորապէս ըստ
կերպի ներգործականացն դնին։
Որպ ասել, թաղեալքն ՚ի մեղս՝
թաղելոց են ՚ի դժոխս. ՚Ի տեղի
ասելոյ, թաղեցեալքն, թաղելոց.
Նոյն այս՝ վասն թէթև և համեղ
բերելոյ զձայնն .
Միւք ընդունելուն՝ են երկու .
որպ անուանն և բային. Եզականն՝
փրկօղ, փրկիչ, փրկեալ, փրկելի.
Յոգնականն՝ փրկօղք, փրկիչք,
փրկեալք, փրկելիք.
Տեսակն է նմանապէս երկու .
նախատիպ և ածանցեալ.
Բայց ընդունելութիւն կրկին կեր
պիւ ածանցի. Ի անուանէ և Ի բայէ
Բառ անուանն, որպէս քիշօղ, քիշո
ղութիւն, քիշողական. Արկնա
ծանցական, քիշողականութիւն.
Նոյն բառ բայիւն, որպ քիշօղ, քիշեցու

ցանօղ. յիշիչ, յիշեցուցիչ. յիշ
եալ, յիշեցուց̃լ. և այլ։

Ժամանակք ընդունելութեան՝ են երեք բուն ժամանակքն. այսինքն ներկայն, անցեալն, և ապառնին. Ներկայք են՝ օղն, և իչն. Անցեալք են՝ եալն, և եցեալն. Իսկ՝ լին, և ոցն, են ապառնիք։

Հոլովք ընդունելութեան լինին ըստ անուանն. Օղն՝ հոլովի, Փրկօղ, փրկօղի, փրկօղին. Փրկօղք, փրկօղաց, փրկօղօք. Իչն՝ հոլովի, ո̃պ ազգ ազգի ազգաւ. Եալն՝ հոլովի ո̃պ գործ գործոյ գործով. Լին՝ ո̃պ բարի բարւոյ, և այլն. Իսկ ոցն՝ հազին անուանանայ. վ̃ն և ոչ հոլովի, եթէ ոչ 'ի յոյժ հարկաւորութեան. Նաև իչն, ոչ ըստ ա̃մ նախատիպ բայից հոլովի յարմարապէս. Այս վերջս՝ իչ, սակաւուց նախատիպից յարմարի. իսկ ածանցելոց՝ գրեթէ ա̃մենայն պատկանի.

Որպէս յարուցիչ, լցուցիչ, կեցու-
ցիչ, ապրեցուցիչ, և այլ:
Եւ ծանիր աստ, զի ընդունե-
լութիւն կանգնող, եթէ նշանա
կէ զկանգնեալ ոք ըստ ինքեան,
է ընդմիջական: Իսկ եթէ նշանա
կէ զկանգնելն ուրուք զայլ ոք,
է ներգործական. Որպիսիք են,
լացող, ողբացող, սըգացող, և այլ:
Որոց շատ կիրառութիւնք ընդմիջա
կանապէս լինին:

## Յաղագս Իշխման Ընդունելութեանց ՚ի Բայս: Գլուխ 19

Ներկայ ընդունելութեանց ո-
մանք ՚ի ներկայական բայից
ծնանին: Ո՛րգոն, փրկեմ, փրկող,
փրկիչ: Սրբեմ, սրբող, սրբիչ:
Վարժեմ, վարժող, վարժիչ.
Ընդունիմ, ընդունող. Ընդունիչ:
Եւ ոմանք ՚ի կատարելոյն ծնանին:
Ո՛րգոն՝ բարձի, բարձող, բարձիչ:
Բացի, բացող, բացիչ: Լուացի,


լուա

լուացող, լուացիչ, և այլ։ Իսկ ոմանց՝ մի և նոյն է ձևանիշն ՚ի ներկայէն կամ ՚ի կատարելոյն. Որպէս ածեմ, ածի | ածող, ածիչ. Բերեմ բերի | բերող, բերիչ. Զենում, զենի | զենող, զենիչ. Արգելում արգելի | արգելող, արգելիչ. Եւ ՚ի բայից ոմանց՝ ողն կրկին ձևանի. մինն ՚ի ներկայէն, մինն ՚ի կատարելոյն. Իսկ՝ իչն, յոմանց երկու ձևանի, յոմանց մի, յոմանց ոչ. Որպէս, ուտեմ, ուտող ուտիչ. Կերի, կերող կերիչ. Առնեմ, առնող | արարի, արարող արարիչ. Ասեմ, ասող | ասացի, ասացող. Իսկ և յածանցական բայից՝ ձևանիշն երկու ող, և մի իչ. Որպէս, յիշեցուցանեմ, յիշեցուցանող | յիշեցուցի, յիշեցուցող յիշեցուցիչ. Եւ այսպէս ամենայն ածանցելոց՝ իչն, ՚ի կատարելոյն ձևանի որպէս ցուցաւ.

Իսկ՝ եալն. յայտ է զի ՚ի դերբայականէն

մնայ, այսինքն 'ի յարակատարէն.
Ո՛չ է մինչ բառնաս զդէմն՝ մնայ
ընդունելութի: Որգն, գրէլ եմ,
գրեալ. գրեցեալ եմ, գրեցեալ.
Նոյնպ՟ լուացել, հեղեալ, և այլն.
Ի՛ն և լոյն, յաներևութէն ծը-
նանին. Որգն, գրել, գրելի, գը-
րելոց. Լուանալ, լուանալի,
լուանալոց: Հեղուլ, հեղլի,
հեղլոց. և այլ. Իսկ տես, զի՝ լին
որ է կրաւորական, 'ի ներգործա-
կանէն ծնանի և ո՛չ 'ի կրաւորա-
կանէն. Որպ՟ գրել, գրելի. և ո՛չ
գրիլ, գրիլի: Որպէս է և լոյն:
Բայց եթէ կրաւորակ՟ կամիմք
գտնել զլոյն, 'ի կրաւորականէն
ծնեցուցանեմք. Որգն, գրիլ,
գրիլոց. լուանիլ, լուանիլոց. հե-
ղանիլ, հեղանիլոց. Այլ այսպի-
սիք 'ի յոյժ հարկաւոր տեղիս են
կիրառնլիք, և ո՛չ յամ ուրեք.
զի խոտորութի՛ բերէ շարադրութեն.

### Յաղագս Ընդունելութեան.

## Յաղագս Դերանուանց։
### Պրակ 20

Դերանունն է Չորրորդ
մասն բանի, որ փոխա-
նակ անուան դնի, և
զբացորոշեալ դէմս ցուցանէ։
Որգոն՝ ես, դու, նա, և այլ։
Ասացաւ, 'ի տեղի անուան դնի,
զի 'ի տեղի ասելոյ՝ պօղոս գը-
նացի, ասեմ, ես գնացի։ և 'ի տե-
ղի ասելոյ՝ պետրոսդ գնացեր,
ասեմ, դու գնացեր։ և 'ի տեղի
ասելոյ՝ յակոբն գնաց, ասեմք,
նա գնաց։ Ասացաւ, զբացորոշեալ
դէմս ցուցանէ։ զի ասելով, ես,
նշանակի առաջին դէմս։ Իսկ ա-
սելով, դու, նշանակի երկրորդ
դէմս։ Իսկ ասելով, նա, նշանակի
երրորդ դէմս։ այսինքն՝ յակոբն,
յովսէփն, կամ այլ։
Ոմանք 'ի դերանուանց էականք

են, ոմանք ունականք։ Անձնական կոչին այնք, որք զանձին զէութին ցուցանեն. և են այսոքիկ. ես, դու, նա, սա, դա, ինքն։ Այլ ունական կոչին այնք, որք զունեցեալն նշանակեն. և են այսոքիկ. իմ, քո, իւր, մեր, ձեր։ Այլ ումն կոչի յարաբերական, և է այս, որ։ Այլ ասի յարաբերական, ոչ թէ յառաջբերական. զի զնախընթաց անուանն դարձեալ յառաջ բերէ և ածէ 'ի միտ։

Օրինակ, օրհնեսցէ զքեզ տէր 'ի սիոնէ, որ արար զերկինս և զերկիր։ Նա 'ի բանի աստ՝ դերանունս այս՝ որ, յառաջ բերեալ ածէ 'ի միտ զնախընթաց անուանն՝ տէր։

Այլ դերանուանքս, նա, սա, դա, բաց 'ի կոչիլոյն էական, կոչին ևս ցուցականք. զի զայն զոր նշանակեն, ոչ թէ մատամբ ցուցանեն.

Ըստ այնմ, դա է որդի իմ սիրելի։

 Այլ

Եւ հետեւմունք դերանուանց են չորք: Թիւ, Դէմ, Տեսակ, Հոլով: զԹիւն ի հոլով մուծանեն տես.

Դէմքն են երեք ըստ բային. առաջին, երկրորդ, երրորդ. Առաջին, ես. Երկրորդ, դու. Երրորդ, նա. սա. դա. ինքն.

Սոյին հետեւին եւ ունականքն. զիր, իմ, մեր, հետեւին առաջին դիմին. Քո, ձեր, հետեւին երկրորդ դիմին. Եւ իւր, հետեւի երրորդ դիմին: Իսկ յարաբերականն՝ առ երեք դէմսն եւս վերաբերի: Ապ ասել՝ ես որ խօսիմ, դու որ լսես. նա որ ննջէ: Նոյնպէս եւ հականս այս՝ ինքն, երբ ըստ ինքեան միայնակ վարի, զերրորդ դէմն միայն ցուցանէ. Իսկ յորժամ ընդ այլ դերանուան դնիցի, որում եւ կցի՝ նմին հետեւի, եւ այնպէս առ ամ դէմսն վերաբերի. Որպ ասել՝ ես ինքն եմ. դու ինքն ես. նա

ինքն է. սա ինքն է. դա ինքն է.
Ես ինքն էի որ եկի. Դու ինքն
էիր որ եկիր. Նա ինքն էր որ եկն.
Եւ տես, զի սա, դա, նա, թէպէտ
երեքեանն ես զերրորդ դէմն նշա
նակեն, սակայն սա՝ նշանակէ ըղ
մօտաւորն առաջին դիմին. դա,
նշանակէ զմօտաւորն երկրորդ դիմին.
իսկ՝ նա, պարզապէս զերրորդ դէմն
նշանակէ.

Տեսակն է երկու, նախատիպ և
ածանցեալ. Նախատիպք են
ասացեալքդ ամենեքեան.

Իսկ ածանցք, իմային. քոյային.
իւրոյին. մերային. ձերային:
Քոյական. իւրական. ինքնական.
մերական. ձերական: Ինքնութիւն.
եսութիւն. Բայց դու, դնի քոյին,
՚ի տեղի ասելոյ քոյային. զի հա
մեղ է քոյին քան քոյային. Նոյնպէս և
գտանի մերոյին, ՚ի տեղի ասելոյ՝
մերային. Իսկ ՚ի հոլովմանն՝ դնի
քոյայնոյ, մերայնոյ. և ոչ քոյնոյ,

 մե

մերոյնոյ։ Իսկ այլ դերանուանքն
այսինքն՝ դու, նա, սա, դա,
ոչ ածանցին յարմարապէս.
Որպ̃ եւ եսն հազիւ լինի ածանցել՝
որպ̃ թէ ասիցես, եսական անձն՝
որ է եսութիւն՝ է՛ արմ̃տ ամ̃ չարեց.
Նա՛ ցուցած թէ՝ զերիս միայն
ունի ածանցմունս դերանունն.
ոյին, ոյան, ուլիան։ Իսկ՝ ոյին, է՛
նոյնինքն ոյին որպ̃ ցուցած.

Հոլովք դերանուանց՝ են ըստ
անուանն. բայց զկոչականն ոչ ու-
նին ամ̃քն. և տես 'իններորդոյ։

Հոլովումն Դերանուանս, Ես։

Ուղղական. Ես. իմ. ինև. զինև.
զիս. զինէն. յինէն. ‖ ինձ, ցիս,
առիս, ընդիս. ‖ յիս։

Յոգնական. Մեք. մեր. մեօք.
զմեօք. զմեզ. զմէնջ. 'ի մէնջ.
‖ մեզ, ցմեզ, առ մեզ, ընդ մեզ. ‖
'ի մեզ.

Հոլովումն Դերանուանս, Դու։

Եզական։ Դու. քո. քեւ. զքեւ. զքեզ. զքէն. 'ի քէն. | քեզ, ցքեզ, առ քեզ. | 'ի քեզ. ով դու։

Յոգնական։ Դուք. ձեր. ձեօք. զձեօք. զձեզ. զձէնջ. 'ի ձէնջ. | ձեզ, ցձեզ, առ ձեզ. | 'ի ձեզ. ով դուք։

Հոլովումն Դերանուանս, Նա։

Եզական։ Նա | Նր՟, նորին, կամ նորուն | նովաւ, նովին, և նովիմբ | զնովաւ, զնովին, կամ զնովիմբ | զնա | զնմանէ | 'ի նմանէ | նմա, նմին, 'ի նա, ցնա, առ նա | 'ի նմա, 'ի նմին։ Յոգնական, Նոքա, նոքին | Նց՟, նոցին, կամ նոցուն, կամ նոցունց | նոքօք | զնոքօք | զնս՟, զնոսին | զնոցանէ | 'ի նոցանէ | նոցա, ցնս՟, առ նս՟ | 'ի նոսա, 'ի նոսին, կամ 'ի նոսուն։ Նոյնպէս հոլովին, սա, սորա։ դա, դորա, և այլ։

 Հո

## Հոլովումն Դերանուանս, Որ ։

Եզական ։ Որ․ որոյ․ որում․ զորով․ զոր․ զորմէ․ յորմէ․ Որում, յոր, առոր․ Յորում․ ո՛վ որ գնասդ ։

Յոգնական․ Որք․ որոց․ որովք․ զորովք․ զորս․ զորոց․ յորոց․ Որոց, յորս, առորս․ ՚Ի յորս․ ո՛վ որքդ լսէքդ՝ ՚ի միտ առէք․

Ըստ այսմ հոլովին և ունիմքս, Իմ, իմոյ, իմով ։ Քո, քոյ, քոյով, կամ քով․ Իւր, իւրոյ, իւրով․ Իմք, իմոց, իմովք․ Քոյք, քոյոց, կամ քոց․ քոյովք, կամ քովք․ Իւրք, իւրոց, իւրովք և այլն․ Իսկ հակական դերանունս այս՝ ինքն, որ է երրորդ դէմ ըստ ինքեան, հոլովի [illegible]․ Եզ․՝ ինքն, ինքեան, ինքեամբ ։ Ինքեանք, ինքեանց, ինքեամբք, զինքեամբք, և այլն ։

Նաև սաստ գիտելի է, զի երեքին

սոքանա՝ Իւրեան, Միմեանց, Իւրերաց, են հակման գերանուանք. և կոչին պահպանականք։ Որոց պահպանութիւն՝ ծանիր 'ի ստորև 'ի հոլովմանց նոցին։

Հոլովումն Գերանուանս, Իւրեան։

| | | |
|---|---|---|
| Ո | Ո՛չ ունի | Իւրեանք |
| Ս | Իւրեան | Իւրեանց |
| Գ | Իւրեամբ | Իւրեամբք |
| Ը | զԻւրեամբ | զԻւրեամբք |
| Հ | Չ ունի | զԻւրեանս |
| Պ | զԻւրանէ | զԻւրեանց |
| Ս | յԻւրանէ | յԻւրեանց |
| Տ | Իւրեան | Իւրեանց |
| Տ | | ցԻւրեանս |
| Տ | | առ Իւրեանս |
| Ն | յԻւրեան | յԻւրեանս |

Հոլովումն Ընկերական Գերանուանցս՝ Միմեանց, Իւրերաց։

| | | |
|---|---|---|
| Ո | Ո՛չ ունի | Ո՛չ ունի |
| Ս | Միմեանց | Իւրերաց |

| | | |
|---|---|---|
| Գ. | Միմեամբք | Իրերօք |
| Ն. | զՄիմեամբք | զԻրերօք |
| Ճ. | զՄիմեանս | զԻրեարս |
| Պ. | զՄիմեանց | զԻրերաց |
| Ս. | 'ի Միմեանց | յԻրերաց |
| Տ. | Միմեանց | Իրերաց |
| Տ. | ցՄիմեանս | ցԻրեարս |
| Տ. | 'ի Միմեանս | յԻրեարս |
| Տ. | առ Միմեանս | առ Իրեարս |
| Տ. | ը̃ Միմեանս | ը̃ Իրեարս |
| Ն. | ըն Միմեանս | 'ի յԻրեարս |
| Ն. | 'ի Միմեանս | յԻրեարս |
| Ն. | առ Միմեանս | առ Իրեարս |

Սա՛ յերկեցս այսցանէ, խոյսեամ, գնանց, իրերաց, առաջինն է երկ-դէմ. Իսկ միւս երկու անեզա-կանքն, ըստ յարաբերականին՝ առ ամ դէմս կարեն առածիլ. Որ ասել՝ մեք միմեանց և իրերց. դուք միմեանց և իրերաց. նոքա միմեանց և իրերաց.

Հոլովմունք երից մասնական ան-
ուանց, ոմն, ոք, իմն, և երկուց
հարցականաց, ով, ո՞։ Եւ միոյ
ընդհանրականի՝ որ է, ամենեքեան ։
Որոց իւրաքանչիւրն 'ի բազում
տեղիս դերանուանանայ ։

Հոլովումն Մասնականի, Ոմն ։

Եզական ։ Ոմն ․ ուրումն ․ ոմամբ ․
զոմամբ ․ զոմն ․ զումեմնէ ․ յու-
մեմնէ ․ | ումեմն, ցոմն, առ ոմն ․ |
յումեմն ։ Յոգնական ։ Ոմանք ․
ոմանց ․ ոմամբք ․ զոմամբք ․ զո-
մանս ․ զոմանց ․ յոմանց ․ | ոմանց,
ցոմանս, յոմանս, առ ոմանս ․ |
յոմանս, 'ի յոմանս ։

Հոլովումն Մասնականի, Ոք ։

Եզ՛՛ ։ Ոք ․ ուրուք ․ ոմամբ ․ զո-
մամբ ․ զոք ․ զումեքէ ․ յումեքէ ․
| ումեք, առ ոք ․ | յումեք ։
Յոգ՛՛ ։ Ոմանք ․ ոմանց ․ ոմամբք ․
զոմամբք ․ և այլն ։

## Հոլովումն Անորոշականի, Ոմն.

Ուղ". Ոմն · ումեք · ուրուք · զուրուք · զոմն · զումեքէ · յումեքէ · Ումեք , առ ումն · Յումեք: Յոգ". Ոմանք · ոմանց · ոմամբք · և այլն:

Նա՛ տես, զի սոքա ևս՝ ոք, ոմն, կերպիւ ինչ պակասականք են. զի ոչ ունին յոգնականս ըստ իւր_եանց յատուկ ձևոյն. այլ փոխին յոգնակնաւ ոմնին. զի երկոցն ևս յոգնակնին այս է, ոմանք, ոմանց: Ոմնին իւրքն գոլով, և միասոցն օգնելով: Նաև՝ ոքն, գործիականն ևս ոչ ունելով, ոմնին գործիա_կանաւն փոխի ոմն ցուցան.

## Հոլովումն Հարցական Դերանուանց, Ո՞վ, Ո՞

Ուղ". Ո՞վ · ո՞: ո՞յր · ու՞մ · զու՞մ · զո՞վ · զո՞ · զումմէ՞ · յումմէ՞, || ո՞ւմ, ցո՞վ, ցո՞, առ ո՞վ, առ ո՞ || || յո՞ւմ, յո՞վ, յո՞, առ ո՞վ, առ ո՞: ||

Յոգնա՛. Ո՞յք, կամ ո՞վք. ո՞յց. ի՞ւք. զի՞ւք. զո՞յս. զո՞յց. յո՞յց. Ի ո՞յց, ցո՞յս, առ ո՞յս. Ն ո՞յս.

Ա՛ Ծանի՛ր, զի Հարցականքս, ո՞վ, ո՞, շարակցին երբեմն ընդ մասնկին ա՛յն, և իմաստին հոլովին:

Ո՛ւղղ, Ո՞վ ոք, կամ ո՞ ոք. ո՞յր ուրուք. ի՞ւիւիք. զի՞ւիւիք. զո՞վ ոք, կամ զո՞ ոք. զումեմն ուեքէ. յումեմն ուեքէ. Ի ո՞ւմ ուեք, ցո՞վ ոք, ցո՞ ոք, առ ո՞վ ոք, առ ո՞ ոք. Ի յո՞ւմ ուեք. Ա՛յս երկակ.

Իսկ յոգնակին, Ո՛ւղղ, Ո՞յք ոմանք. ո՞յց ոմանց. որո՞վք ոմամբք, կամ ի՞ւք ոմամբք. զորո՞վք ոմամբք, կամ զի՞ւք ոմամբք. զո՞յս ոմանս. զո՞յց ոմանց. յո՞յց ոմանց. Ի ո՞յց ոմանց, առ ո՞յս ոմանս. Ն ո՞յս ոմանս.

Սոյա՛ ի՟իքն և զի՟իքն՝ իմնին է. որովքն և զորովքն՝ որքին. զի ՚ի կցեալսն՝ նոքին դնիլ յարմարին. Իսկ՝ ի՟ք, զի՟ք, անսովորք են: Նաև՝ զոյս, զոյց, և այլ, թէպէտ դնին ՚ի կարգի հոլովման, սակայն ՚ի նախնեաց անսովորք են ՚ի կիր արկանիլ. որոց զտեղին լնու յարաբերականս, որ, ով ցուցեալ է:

Հոլովումն Ընդհանրական Նշանին, ամենեքեան:

Ամենեքեան, կամ ամենեքին:
Ամենեցուն, կամ նեցունց:
Ամենեքումբ, կամ քումբք:
զԱմենեքումբ, կամ քումբք:
զԱմենեսեան, կամ զամենեսին:
զԱմենեցունց, կամ նեցուն:
յԱմենեցունց, կամ նեցուն:
Ամենեցուն, ամենեցունց,
ցամենեսեան, ցամենեսին,
առ ամենեսեան, առ ամենեսին:
՚ի յԱմենեսեան, ՚ի յամենեսին:

ով Ամենեքեան, ով ամենեքին.
Այսպէս հոլովին և թուական անուանքս այսոքիկ, Երկոքեան կամ երկոքին. Երկոցունց. Երկոքումբք. զԵրկոսեան կամ զերկոսին. Երեքեան կամ երեքին. Երեցունց. Երեքումբք. զԵրեսեան կամ զերեսին։

Նոյնպէս՝ չորեքեան. հնգեքեն. վեցեքեան. եօթնեքեան. և այլն.
Ըստ սեռականի սոյին լինին և անուանքս՝ քաղցր, ծանր, մանր, փոքր, մինչ առ հինգերորդ կերպն պատկանին. որ յիշեցաւ յերես 34.
Որպ քաղցր քաղցու. քաղցունք քաղցունց. ծանր ծանու. ծանունք ծանունց, և այլն.

Իսկ գործիական՝ միայն փոքրն, փոքումբ, փոքումբք. զի միւս այլքն՝ ոչ լինին. որ և պահանջէ կերպն հինգերորդ, դասք, դասուց, դասուք, և այլ.

## Յաղագս Յօդի, Որ է Հինգերորդ Մասն Բանի.

### Գլուխ 21

Յօդն է փոքրիկ ինչ մասն բանի, որ յօդի յայլ մասունս բանին և դիմաւորէ՛ զնոսա։ Եւ են այսոքիկ. ս. դ. ն. այս. այդ. այն. սոյն. դոյն. նոյն։

Ա̄ցի, (յօդի յայլ մասունս բանի և դիմաւորէ զն̄ս.) զի այն է զօրութիւն յօդին, որ առադրի անդէմ և անորոշ հոլովական մասանց՝ և դիմաւորեալ որոշէ՛ ըզն̄ս յայլոց։ Զորօրինակ՝ անունս այր, ոչ ունելով յատկութ̃ դիմ՝ ոչ իմացեալ լինի թէ առ ո՛ր դէմ վերաբերի։ Իսկ յորժամ առադրի նմա մի՛ի յօդիցն, յայնժամ դիմաւորի՛ և յատկանայ ըստ այլ դիմաւոր մասանցն։ Որգոն՝ այրս, այսինքն՝ ես։ Այրդ, այսինքն՝

դու. Այրն, այսինքն սա. որ է պետրոսն, պօղոսն, կամ այլ։ Քանզի՝ ս, նշանակէ զառաջին դէմս. տ, զերկրորդն. ն, զերրորդն՝ որպէս ցուցաք։ Իսկ այլ միւսքն՝ զերրորդ դէմս միայն նշանակեն։ Բայց՝ որք սայիւն կերպարանօքն, այսինքն՝ այս, սոյն, նշանակեն ըզ մօտաւորն առաջին դիմին։ Որպէս ասել, այս քար, կամ սոյն քար. այսինքն այն՝ որ մօտ ինձ կայ։ Իսկ որք դայիւն լինին, այսինքն՝ այդ, դոյն, նշանակեն զմօտաւորն երկրորդ դիմին։ Որպէս ասել, այդ քար, կամ դոյն քար. այսինքն այն՝ որ մօտ քեզ կայ։ Իսկ՝ այն, նոյն պարզապէս զերրորդ դէմս նշանակեն։ Որպէս ասել, այն քար, կամ նոյն քար. այսինքն այն՝ որ ի բացեայ է յերկոցունցս։ Այսպէս են և դերանունքս՝ սա, դա, նա, զորոց յերեսն 121 ասացաք։

Իսկ դիտելի է, զի առաջին երեքն

որք են միատառք, ս, դ, ն, միշտ
վերջադիրք լինին բառից։ Որգոն՝
այրս, այրդ, այրն։

Իսկ վերջին երեքն, սոյն, դոյն, նոյն,
նախադասիլ պատկանին։ Որգոն՝
սոյն օր, դոյն օր, նոյն օր։ Պատա-
հի՛ թէպէտ երբեմն և վերջադրիլ
ոպ յառնէ՛ նոյնէ. բայց ոչ ըստ
ամ բառի և հոլովման լինի այս.
այլ ՚ի հազիւ ուրեք։ Իսկ միջին
երեքն՝ այս, այդ, այն, կարեն լինիլ
նախադասք և վերջադասք. Ոպ
ասել՝ այս մարդ, կամ մարդս այս,
Այդ մարդ, կամ մարդդ այդ,
Այն մարդ, կամ մարդն այն։
Բայց այսուքիկ՝ երբ վերջադիրք
լինին՝ առանց եզատառ յօդի ոչ
յարմարին. Որպ ոչ լինի ասել՝
կին այս. կին այդ. կին այն։
Այլ կինս այս. կինդ այդ. կինն
այն։ Մարդս այս, և այլն.
Իսկ յորժամ նախադասք լինին՝
կարեն դնիլ եզատառին կամ ոչ։

Որգոն՝ այս կինս, կամ այս կին·
Այդ կինդ, կամ այդ կին·
Այն կինն, կամ այն կին·

Գիտելի է և այս, զի եզական
յօդքս, ս, դ, յորժամ ընդ բազմա-
տական յօդի դնիցին, ոչ զնոյն դէմ
նշանակեն, զոր ինքեանք նշանա
կեին· այլ հետևին նշանակութեան
այն բազմատական յօդին, և լինին
երրորդ դէմ։ Օրօրինակ, մարդս՝
նշանակէ զառաջին դէմն· մարդդ՝
նշանակէ զերկրորդ դէմն։ Իսկ
եթէ ասիցի՝ մարդս այս, մարդդ այդ,
նշանակի երրորդ դէմն ըստ նշանակութեան
բազմատական յօդիցս՝ այս, այդ։

Ծանիր և զայս, զի եզական
յօդքն մինչ առադրին բառից,
բաղադրին ընդ նոսա և միանան որին·
Իսկ բազմատականքն զատապէս կը
ցին, որպէս ցուցաւ։ Սոյն եզակա-
նից կիրառութիւնքն՝ պիտանագոյնք
և վայելչագոյնք են մանաւանդ
'ի հոլովմունս ընդունելութեանց


Սպ

Որպէս ասել՝ բացօղս, բացօղդ, բացօղն. Եկեալս, եկեալդ, եկեալն, և այլ:

Գիտեա՛ և զայս, զի եզատաւքն երբեմն թէպէտ դիմաւոր մասանց եւս առադրին, բայց ոչ վասն հարկաւորութեան, այլ խերև զարդ իմն առ՚ի յաւելել յատկացուցանել զդէմսն: Մերս՝ որ պահեմս. որ պահեսդ. որ պահէն. Նոյինքն՝ եւ որ պահեմ. դու որ պահես. Նա որ պահէ. Նոյն՝ զոր մեքս կարծեմք. զոր դուքդ պատմէք, և այլ:

Ե՛ բազմատաւ յօդից՝ են հետեւմունք երեք. Դէմ, Թիւ, և Հոլով. Իսկ եզատաւրիցն՝ դէմ միայն. Դէմք եզատաւրից և բազմատաւրից մինչև ցայժմ ասացան. Իսկ զԹիւ և զՀոլով բազմատաւրիցն՝ տես 'ի հետեւեալսդ.

Ուղղական) Սոյա. այսր և այսորիկ.
Սոյու և այսուիկ զՍոյու և
զայսուիկ. զՍոյս. զՍոյմանէ.
յՍոյմանէ. ՚Ի Սոյմ, այսմիկ,
յայս, ցայս, առ այս, ընդ այս.։

ՅՍոյմ, յայսմիկ, ՚ի յայս, ԵՒն.
Յոգնական) Սոքին կամ այսք.
Սոցին կամ այսց. Սոքիւք.
զՍոքիւք. զՍոսիկ. զՍոյ
ցանէ. յՍոցանէ. ՚Ի Սոցիկ,
ցայսոսիկ, առ այսոսիկ. յՍոյս
սիկ կամ յայսոսում։ Սոյն հո
լովին և միւս երկուքն. Սոյդ.
այդր և այդորիկ. Սոյն. այնր և
այնորիկ, և այլն։ Իսկ՝ սոյն, դոյն,
նոյն, հոլովին ըստ դործ գործոյ.
Միջնահոլով որպ", սոյնում, դոյն-
ում, նոյնում. 'Ի, եւգ", 'ի սոյնում
'ի դոյնում, 'ի նոյնում.

Սէ արդ՝ մասնս այս՝ Յոդ՝ Թէ-
պէտ քանակութեն փոքրիկ ինչ
մասնէ բանի, բայց մեծ է զօրութե.
որ անդէմ մասանց դէմ շնորհէ
և որոշէ՝ յայլոց.

## Յաղագս Նախադրութեան ։

### Գլուխ 22

Նախդիրն է վեցերորդ մասն բանի, որ առաջ դրի անուան և այլ հոլովական մասանց բանին, և նշանակութ ինչ արտաքին յաւելու 'ի նա։ Որպէս ասել, 'ի վ̃ր երկրի · վ̃ս պահելոյ · առաջի նր, և այլ․ Լսացի (նշանակութ ինչ արտաքին յաւելու 'ի նա) զի մինչ ասի՝ 'ի վերայ երկրի, ոչ եթէ լոկ զլուտ ներքին նշանակութ երկրի բառիս աւելի ինչ լինի · այլ՝ ցուցանի գոլ ինչ կամ իրակիլ ինչ 'ի վ̃ր նր․ այսպէս և այլքն։

Նա՛ նախդիրքս՝ զանազան նշանակութիւնս և զանազան անուանս ունին։ վ̃ս զի՝

Ոմանք տեղականք են · որգոն, 'ի վերայ · 'ի վերոյ · 'ի ներքոյ ·

արտաքոյ · դէպ · հանդէպ · շուրջ ·
յանդիման · մօտ · մերձ · հուպ ·
առընթեր · առաջի · մինչ · մինչև ·
զառիվեր · զառիվայր · անդրքան ·
իվերքան · իվերկոյս · իվայրկոյս ·
և այլ:

Ոմանք դասականք են · հի՛գոն,
առաջի · զկնի · յետ · յետքան ·
յետոյքան · նախքան · յառաջքան ·
և այլ:

Ոմանք դերադրականք են · ուրան՝
դերքան · իվերքան · անդրքան ·
առաւելքան, և այլ:

Ոմանք պատճառականք են · հիւղան՝
վա՛ · սակս · յաղագս · աղագաւ ·

Ոմանք նմանականք են · որքէն,
ըստ · որպէս · իբր · իբրև · զօրէն ·
և այլ:

Ոմանք բացառականք են · հինգէն,
բաց · զատ · հեռի · մեկուսի · և":

Ոմանք յարակցականք են · որպան՝
հետ · ըհետ · հանդերձ ·

Ոմանք փոխարինականք են · հիպոն,

փոխան․ փոխանակ․ փոխարէն․

Ոմանք ծածկականք են․ որպէս, գաղտ․ զանխուլ․ ծածուկ․

Ոմանք բացարձականք են․ և են սոսկ, թարց, առանց․

Ոմն է բաղդատական․ որ է, քան․

Ոմն է ընդդիմական․ որ է, ընդդէմ․

Այլ ոմն է միջնորդական․ որ է, ՚ի ձեռն․

Այլ նախդիրքս այսոքիկ՝ զանազան հոլովս պահանջեն ՚ի շարադրութեան․ վ̃ն զի

Ոմանք խնդրեն զսեռականն․

Որգոն՝ ՚ի վ̃ր լերանց․ ՚ի վերոյ երկնից․ ՚ի ներքոյ լուսնոյ․ արտաքոյ խցին․ զառիվեր լերինն․ զառիվայր նորին․ ի վերկոյս բլուրոյն․ ի վայրկոյս այգւոյն․ առաջի բեմին․ զկնի գալոյն․ յետ ամենեցուն․ վ̃ն աղաչելոյ․ սակս սիրելեաց․ հետ բանասիրաց․ ընդ հետ ընկերաց․ փոխան պարգևի․ փոխանակ սիրոյ․ փոխարէն վար_

ցու․ առանց նենգութեան․
՚ի յետոյ աղօթից և պահոց ստանայ
մարդ զշնորհս։

Ոմանք խնդրեն զվերջահոլով տրականն։ Որպէս, հանդէպ նստե լոյ․ յանդիման դիտանոց․ առ ընթեր նմա․ ըստ բանի ձերում․ զօրէն անասնոց․ ընդդէմ օրինաց։

Ոմանք խնդրեն զնախդրիւ տըրականն։ Որպէս, դէպ ՚ի պաղեստին․ մօտ ՚ի տաճարն․ մերձ ՚ի մատուռն․ հուպ ՚ի պարիսպն․ մինչ ՚ի ծովեզրն․ մինչև ՚ի դուռն․

Ոմանք խնդրեն զհայցականն։ Որպէս, որպէս զանասուն․ իբր զքնամեռ․ իբրև զանզգայս։ Նաև՝ նախդիրս՝ սան, և որք սավաճ ձևանան, հայցէնաճ շարադրին․ որբար՝ հզօր քան զառիւծ․ անդր քան զծովն․ իվեր քան զերկինս․ դեր քան զմիտս, և այլ։

Ոմանք խնդրեն զսկզբնականն։ Որպէս, բաց ՚ի նոցանէ․ զատ ՚ի

սոցանէ . հեռի 'ի տանէ . մեկուսի 'ի ձենջ . գաղտ 'ի յամբոխէն . զանխուլ 'ի հօրէն . ծածուկ 'ի մօրէն . և նմանք .

Մ'ի ումն նախդիր' խնդրէ զդոր ծիականն . Որպ̃ս , եկն յս̃ հանդերձ աշակերտօքն .

Նա́ մինն խնդրէ զարտադրակ̃նն . Նստան շուրջ զնովաւ .

Ահա՛ այսպ̃ս պարտիս ճանաչել զիւրաքանչիւր նախդիրսն , թէ զո՛ր հոլով պահանջեն 'ի շարադրութե , ըստ օրինակի եդելոցդ մինչև ցաստ .

Բայց ծանիր , զի նախդիրքս' իվերոյ , իներքոյ , արտաքոյ , կարեն առնուլ և զհայցականն , բաղդատական նախդրիւ՛ քան : Որպ̃ս , իվերոյ երկնից , կամ քան զերկինս . Իներքոյ լուսնոյն , կամ քան զլուսինն . Արտաքոյ խցին , կամ քան զխուցն .

«Նախդիրքս՝ մօտ, մերձ, հուպ, կա-րեն առնուլ և զվերջահոլով տրականն ըստ վայելման տեղւոյն․ որգոն, մօտ ՚ի նմա, կամ նմա․ մերձ ՚ի ձորն, կամ ձորոյն․ հուպ ՚ի այգին, կամ այգւոյն։

«Նախդիրս՝ ըստ, կայ եդեալ ու-րեք զուղղականն առեալ․ Որգոն Եթէ իցէ լեալ ըստ չափ․ Ա նորին 7․ Ոչխար ըստ երգ․ Եսայ 12։

«Նախդիրս՝ որպէս, ըստ մեծի մա-սին թէպէտ զհայցականն խնդրէ, բայց ըստ բերման շարադրութեան՝ կարէ և զայլ հոլովսն առնուլ․ Որգոն, Ուղղական, մտցէ որպէս ջուր ՚ի փոր նր․ Սեռական, մարդոյ որպէս խոտոյ են աւուրք նր․ Գոր", ոչ զինու՝ հաճութ քով․ Բաց", զարթեաւ ոչ ՚ի քնոյ տր․ Տրա", ժողովեաց որպէս ՚ի տիկ․ Ներ", անդ երկունք որպէս ՚ի ծննդեան, և այլ։

Ըստայսմ է և նախդիրս՝ Իբրև․

Երբեւ տնանկ. Երբեւ տրտմեալք.
Երբեւ ծուլու եւ խռովութեան.
Երբեւ իշխանուն̃, եւ այլ.
Ը յօպխսիք եւ այլք դրտանին
այլեւայլ հողովս առնօղք։
«Սախտիրս՝ տռաջի, եկաց առաջի
իշխանին, է՛ տեղական. Առաջի
Նորա երթայր, է՛ դասական.
Յետին կերպս՝ կայ եւ հայցակա
նաւ եղեալ. երթայր յս̄ առաջի
քան զն̄ս Մր 10. 32։
«Սախտիրքս՝ Պնչ, Պ՚նչն, որք են
տեղականք, լինլին ուրեք ժամա
նակականք. Ոպ̄ ասել, մինչ՝ կամ
մինչեւ ՚ի գալուստ տն̄ մերոյ.
Ընդրտան, ուր զհեռաւորութի
ցուցանէ, է՛ տեղական. եւ ուր
զդերազանցութի նշանակէ, է՛ դե
րադրական. Ոպ̄ ասել՝ է՛ այլ ինչ
կղզի անդրքան զքեռինոս.
Ընծ է անդրք̄ զհասուածն մտաց.
Ը. յօպխսիք եւ այլք դտանին,
այլեւայլ նշանակութիս ունօղք.

Ծանիր եւս, զի Նախդիրս՝ ուղ-ղոն, թէպէտ միշտ ստորադիր է եւ ոչ Նախդիր, (որպէս քնոյ աղագաւ, սիրոյ աղագաւ, եւ այլ,) սակայն ոչ անկանի այնու 'ի Նախդիր դա-սուն. զի եւ այլ Նախդիրք՝ լինին ուրեք ստորադիրք եւ ոչ անկա-նին 'ի Նախդիր կարգս. Որպէս ասել՝ վասն իմ են չարիքս, կամ, իմ վասն են. Նոյնպէս, առաջի քո. կամ՝ քո առաջի. Հանդերձ զօրօք. կամ զօրօք հանդերձ, եւ այլ.

Եւ բաց յայսմ երից նախադրու-թեանց՝ են եւ այլ Նախդիրք, տառ, եւ վանկ, որք զհոլովսն կեր-պաւորեն եւ կոչին հոլովական Նախդիրք: Որք են, ի, յ, զ, ց, առ, ըս, ընդ, ըստ: որք եդան 'ի հո-լովմունս անուանց եւ այլոց.

Եւ այս Նախդիրքս, առ, ընդ, բա-ղում զանազան նշանակութիւ-նս ունին. զորոց դիցուք սա-կաւ ինչ.

Սախտիրս այս՝ ատ, ըստ մեծի մարին՝ չինէ զորականն. Որպէս ասել՝ գնաց առ կայսրն. դիմեաց առ իշխանսն, և այլ: Նայց և սոյն կերպիւն 'ի բաղում ուրեք ներգոյական լինի և 'ի բայէն Ճինաչի. զոր օրինակ, գնաց առ յեսու, է՝ տրական. մնաց առ յեսու, է ներգոյական: Որպիսին լրապէս 'ի հոլովառութեն ուսցիս:

Նարձեալ 'ի բաղում ուրեք առ սեռականն եդեալ՝ ներգոյական չինէ. Որպէս, դու մինչ կայիր առ նաւին, ես կայի անդ առ վիմին: որ է ասել 'ի նաւին, 'ի վիմին: Նաև երբեմն այսպիսի գրութե՝ զմերձ լինելն նշանակէ: Որպէս ասի, պետրոս նստէր առ խարուկին և ջեռնոյր: որ է՝ մերձ խարուկին: Նաև երբեմն նշանակէ՝ շնորհ: Ինձ՝ առ ուրս մակաղեսցի: Ես II. 6.

Իբրու՝ զհետ ուրու:

Երբեմն նշանակէ վասն: առնա-

խանձու մատնեցին զնա՛։ Մար. 15. 10
որ է վ̄ս նախանձու։ Ըստ այսմ է
և այս, առ՚ի չգոյէ հիւթոյ։ Ղու.
8. 6. որ է վ̄ս ոչ գոլոյ։ Ու՚իկա
տարելոյ ա̄մ գրելոյ. վ̄ս կտրելոյ։
Ուերկիւղին դողային։ այսինքն
յերկիւղէն, կամ վ̄ս երկիւղին։
Ու ուժի՛ գործէիր։ Եսայ. 57։

վասն ուժեղ լինելոյդ։

Իսկ առ գործիականն եդեալ,
երբեմն զմերձ լինելն ցուցանէ։
կայր յօհաննէս ՚ի զմետաղ առ յի̄ս.
Իսկ երբեմն ներգործական լինի.
որպէս, առ ճանապարհաւն։ Մար. 20
առ ծովեզերբն 13. Երբեմն ըզ
շուրջ լինելն ցուցանէ. որպէս ասել՝
նստան առ սեղանովն։ Իսկ՝ նըս
տեալ կայրն առ ծառովն, է՛ ՚ի
ներքոյ ծառոյն, կամ մերձ.
Երբեմն զպատուկ ժամանակ մի
նշանակէ, առ եղիսէիւ մարգա
րէիւ։ այսինքն՝ յաւուրս եղիսէի
մարգարէին։ Գինի և առ ելորդ.

 վ̄ս

վ՟ն ծոխ բերելոյ զշարադրածն ,
առ՚ի հօրէն լուսոյ. Որ նոյն է ,
՚ի հօրէն լուսոյ .

Այսպէս և նախադիրս՝ ընդ , զանա
զան նշանակութի՟ս ունի : Վ՟ զի
սա և ըստ մեծի մասին չինէ ըղ
տրականն: Յրուեսցի զաւակնց
ը՟ հեթանոսս: որ է՝ ՚ի հեթանոսս:
Աննեռեամ ընդ երկիւղ քո զմար
մին իմ: որ է՝ յերկիւղ քո .

Իսկ երբեմն չինէ զներգոյնն:
Խօսցայ ՚ի գիշերի ը՟ սրտի իմում:
Տրտնջէին ընդ միտս իւրեանց .
Որ է՝ ՚ի սրտի , ըն միտս :

Ակն ընդ ական , ատամն ը՟ ատա
ման , զփոխարէնն նշանակէ .
Մի՛ հոգայք ընդ մարմնոյ , է վ՟ն
մարմնոյ: Ո՛չ է մեզ մարտ ը՟ մար
մնոյ և ընդ արեան , է՛ ընդ դէմ
մարմնոյ: Պայլ ընդ գաւառին Ճա
րակեսցի ես II . 6 : Ընդ նմա և
հաց ո՛չ ուտէի , Նշանակէն զհետ.
Ընդիս եթէ ոք մտցէ. որ է՝ ինև.

խամով։ Ն՟սա այսմ է, որ ոչ մտանէ
ընդ դուռն 'ի դաւիթ ոչխարաց։
որ է՝ 'ի դռնէն. կամ դռնովն։
Որք կամին ընդ արդարուի իմ։
որ է՝ զարդարութիւն իմ։
Վիհ մեծ է ընդ մեզ և ը՟ քեզ։
'ի մէջ մեր և քո։ Ընդ թշնամիս
ունէր զիս։ թշնամի համրէր զիս։
Որ լինի և՝ առին. առ թշնամիս
ունէր զիս։ Նա այսպ է՝ ընդ ա-
նօրէնս համարեցաւ։ Ես 53։
Ընդ ասել բանին՝ ել դևն.
որ է՝ իսկոյն 'ի յասելն։
Անձն և աներորդ՝ առ'ի զարդ.
նշանակ արար զժողովուրդս
ընդ մեզ. որ է մեզ։ Նա այսմ է՝
ընդոստնուլ. որ է ոստնուլ։
Ես առ գործիականն եդեալ,
ըստ մեծի մասին նշանակէ զդոյն
'ի ներքոյ։ Մէջ լուցանեն զճրագ
և դնեն ը՟ գրուանաւ, այսինքն,
'ի ներքոյ գրուանին։ Նայց կարէ
փոխել և այլ զանազան նշանակութ՟ս


ընդ

է գործիկնին, ո՛չ զնախդիրս՝ տու,
Սակայն այսքան ինչ եդելովքս,
կարես և զայլ նշանակութիւնս
տուին և ընդդին ճանաչել:
Իսկ յետ երկուկերպ նախադրու-
թեցս՝ են և այլ նախամասունք
բառից, որք կոչին բաղադրական
նախդիրք: զի ընդդրում և կցին՝
բաղադրին է նմա և միաւորին.
Որք և ոչ միայն ընդ անուան,
այլ և ընդ բայի՝ բաղադրին:
Այս են սոքին. ան. ապ. առ. բաղ.
փաղ. շաղ. ցար. շար: պար. բաժ: համ. համ:
գեր. վեր: տեր. փոխ: ներ. մաչ: և այլ:
Այս բաղադրին այսպ. անզգայ.
ապերախտ. տգետ. բաղադրել.
փաղաուութի. շաղկապ: յարակցել.
շարադրել: և այլն:
Որդ՝ երեք եղեն տեսակք նա-
խադրութեց. այսինքն, զատական,
Հոլովական, բաղադրական:
Զատական այնոքիկ են, որք յա-
ռաջադրին անուան զանազան նշա

Նակութ. տեղական, դսկն, և այլն.

Այն կոչեցան զատականք, զի ոչ բաղադրին ընդ բառին միաւորութ. այլ զատակի՛ կցին ընդ նմ զանազան հոլովառութե ըստ որում ցուցաւ, Ուրոյ երկրի, Ուրոյ երկնից, և այլն.

Իսկ Նախդիրքս՝ առ, ընդ, յերից տեսակացն ես մասն ունին. զի են հոլովականք և զատականք. և լինին ուրեք և բաղադրականք. որպէս առարկել, ընդունիլ, և այլ.

Ըստ այսց և այլ նախդիրք՝ լինին ուրեք զատականք, ուրեք բաղադրականք. Որք են, բաց. ըստ. գեր. ենթ. ներ. մակ. ընդդեմ. և այլ. Որգոն՝ բաց ՚ի մէնջ. բացատրել || ըստ դըրոյն. ըստանձնել || գեր քան ըղմիտս. գերիվերոյ || ենթ անձին. ենթակայ || ներ սրտի. ներածել || մակ ամպոյ. մակածել || ընդդեմ մեղաց. ընդդիմամարտ. և նմանք.

Յաղագս Նախադրութեան.

## Յաղագս Մակբայի.

### Գլուխ 23

Մակբայն է եօթներորդ մասն բանի. որ առադրի բայից և բայապէս ընդունելութեանց. և նշանակութիւնս ինչ արտաքին յաւելու նոցա որպէս նախդիրքն՝ անուանց. Որգոն, ք՟ս փրկիչն մեր այսօր խաչեցաւ. աստէն թաղեցաւ, և այլ: Եւ վասն այն կոչին մակբայք, զի որպէս նախդիրն նախադրի անուան, այնպէս և մակբայն մակադրի բայից և բայապէս ընդունելութեանց ըստորում 'ի վեր ասացաւ։ Որպէս մակբայս՝ այսօր, եդաւ առ բայն խաչեցաւ, և յատկացոյց զժամանակն նորին։ և միւսն եդաւ առ թաղեցաւն և եցոյց զտեղին։ Եւ նշանակութիւնք մակբայից՝ են յոյժ բազումք



և

և զանազանք։ Որք շարակարգեցան ըստ այսմ կարգի։

Ժ(ամանակական) այսօր․ այժմ․ յոր ժամ․ յայնժամ․ երբեմն․ մերթ․ միշտ․ հանապազ․ յամենայն ժամ․ տակաւին․ մինչ․ մինչև․ մինչչև․ մինչդեռ․ մինչև յերբ․ չև․ չևևս․ յաւիտեան, և այլ։

Ժ(ամանակական և դասական) Նախ․ ապա․ յապայ․ յառաջ․ յետոյ․ յետայնորիկ․ սոյնհետայն․ զսոյնհետայն․ այսուհետև․ այնուհետև․ յայսմհետէ, և այլ։

Տ(եղական) աստ․ անդ․ այսր․ անդր․ աստի․ անտի․ իվեր․ իվայր․ ՚ի ներքս․ արտաքս․ ուրեք․ ուր ուրեք․ ուրեք ուրեք․ ո՛չ ուրեք․ ո՛չ ուստեք․ իվերկոյս․ իվայրկոյս․ մինչև ցվեր․ յետս․ յետս յետս, և այլք։

Թ(ուականական) որչափ․ որքան․ այնչափ․ այնքան․ միանգամ․ երկիցս․ երկուանգամ․ քանիցս․

քանիցս անգամ․ քանիմի․ սակաւ մի․ փոքր մի․ փոքր ինչ․ սակաւ ինչ․ սակաւիկ ինչ․ դոյն ինչ, և այլ։

Հարցական) Է՞ր․ ընդէ՞ր․ վասն է՞ր․ զմէ՞․ հի՞մ․ զի՞․ զիա՞րդ․ ո՞րպ․ վասն ո՞յր․ ո՞յր աղագաւ, և այլ։

Ընդհանրական) Համօրէն․ բովանդակ․ իմիասին․ միահաղոյն․ միահամուռ․ առհասարակ․ միանգամայն․ միաբան, և այլ։

Ուրոյնական) ուրոյն ուրոյն․ որիշ որիշ․ հեռի հեռի․ զատ զատ․ ջոկ ջոկ․ դաս դաս․ երամ երամ․ մի մի․ երկու երկու, և այլ։

Առանձնական) միակի․ միայնակ․ միայն․ և եթ․ միայն և եթ․ առանձին․ ինքն ինքեան․ եզակի․ որոշակի, և այլ։

Օտարական) ի բաց․ ի բացեայ․ ի բացէ․ բացէ ի բաց․ իցատ․ իզատ․ հեռի․ մեկուսի, և այլ։

Յայտական) յայտնի․ յայտնապէս․ լուխլու․ հրաձկ․ յայտյանդիման․

Ծածկական) ծածուկ. ի ծածուկ. գաղտ. գաղտնի. ի գաղտնիս. զանխուլ. լուռ. լռելեայն. անմռունչ. անշուշտ. թաքթագուր. գաղտագողի, և այլ։

Յամրական) յամր. հազիւ. հանդարտ. բռանց. մեղմ. թոյլ թոյլ. անագան. հազիւ երբեք. քիչ քիչ. փոքր փոքր. սակաւ սակաւ. սակաւ առ սակաւ, և այլ։

Արագական) վաղ. վաղվաղ. վաղվաղակի. փոյթ. փութով. փութապէս. փոյթ ընդ փոյթ. ըշտապ. ըշտապով. շուտ. շուտ շուտ. շուտով. արագ. արագ արագ. ստէպ. ստէպ ստէպ, և այլ։

Յոյժ արագական) յոյժ փութով. կարի փութով. յոյժ ճեպով. կարի ճեպով. յոյժ շտապով. կարի շտապով. յոյժ վաղվաղակի, և այլ։

Իսկոյնական) իսկոյն. առժամայն. նոյնժամայն. նոյնկէտայն. յանկարծակի. ՚ի քթթելական, և այլ։

Սաստկական) սաստիկ, յոյժ, կարի՛ կարի յոյժ, յոյժ յոյժ, առաւել, առաւել ևս, ևս քան զևս, եօթն պատիկ, և այլ։

Սպառողական) իսպառ, բնաւ, բնաւին, մինչ իսպառ, սպառսպուռ, ամենևին, միըստմիոջէ, և այլ։

Երկբայական) արդեօք, միարդեօք գուցէ արդեօք, թերևս, թերևս արդեօք, լինի թէ, գուցէ, գուցէ թէ, գուցէ երբեք, և՛։

Ճշմարտական) ճշմարտիւ, ճշմարտապէս, ստուգիւ, ստուգապէս, ճշմարտութեամբ, ստուգութե, հաւաստեաւ, և այլ։

Հաստատական) ամէն, ամէն ամէն, իսկ, իսկ և իսկ, արդարև, հաստատութեամբ, և այլ

Ուրացական) ոչ, ոչ ևս, ոչ իմիք, ոչ միով իմիք, ոչ երբեք, ոչ բնաւ, ոչ բնաւ երբեք, և այլ։

Արգելական) մի՛, մի՛ ևս, մի՛ երբեք, մի իմիք, մի՛ և մի իմիք, և այլ։

Նմանական) որ̃պ, այսպէս, այնպէս, նոյնպէս, սոյնպէս, նմանապէս, սոյն գունակ, նոյն գունակ, և''.

Աննմանական) ոչ այսպ̃, ոչ այնպ̃, ոչ այդպ̃, ոչ նոյնպէս, այլապէս, այլաբար, և այլ:

Ցուցական) ահա, ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ, աւասիկ, աւադիկ, աւանիկ, և այլ:

Կրկնական) անդրէն, կրկին, վերըստին, դարձեալ, կրկին անգամ, միւսանգամ, և այլ:

Իզուրական) իզուր, ինանիր, ընդունայն, ընդվայր, վայրապար, տարապարտ, տարապարտուց, տարապարհակ, վարկպարազի, և''

Ողձական) երանի թէ, օչ թէ, մարթան թէ, մուրէր թէ, մուր լինէր թէ. Ո՛րգմ, երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ. Օչ թէ միայն զմի օր բարւոք կեցեալ լինէի. Մարթան թէ ճանաչիցեմ զչափին իմ, և այլ.



Նա

Աշ՟ գիտելի է, զի մակբայից ո-
մանք նախատիպք են, ոմանք
ածանցեալք ։ Աշ՟ ածանցելոցն
ոմանք 'ի մակբայից ածանցին,
ոմանք յայլ մասանց։ Աշ՟ եղերք
նոցին գլխաւորք՝ են այսոքիկ։
բար, պէս, օրէն, բէն, վար, են, ին, ովին,
ի, իցս, ակի, անօր, ուստ, ցի, այն, ոյն, և՛
Որդն, ծածկաբար ասաց։ յայտ-
նապէս ծանոյց։ մայրօրէն սիրեաց։
Հայերէն գրեաց։ տաճկէվար մեկ-
նեաց ։ Ես ինձէն գիտեմ։ դու-
ինքնին եկիր։ բնաւին բարձաւ.
գլխովին կորեաւ։ յայտնի իմա-
ցայց ։ երկիցս էզարկ։ ճշտակի
գնաց։ անդանօր մեռաւ ։ 'ի վե-
րուստ գոչեաց։ բռնցի էհար.
գիշերայն ջուեաց։ կենդանւոյն
կորեաւ. և նմանք։
Աշ՟ 'ի սոցանէ, բար, պէս, օրէն,
զբաղում անուանս մակբայա-
ցուցանեն, մանաւանդ զմակա-
դրականսն ։ Աշ՟ ոչ միայն զան-

ո՛ւանս , այլ և զա՛յլ մասունս ։
Ո՞ր թո՞ւի թէ՝ վերջինս՝ ոչէն ,
սակա՞ւ 'ի կիր արկանի քան ըզ
միւսն։ Ո՞ւ են այսոքիկ որպի-
սականք ․ զի ըստ բազմութեն բա-
ւից զորս մակբայացուցանեն ,
զբազում որպիսութիս իրակութեց
նշանակեն։ որպէս ծածկաբար ,
յայտնաբար , և այլ ։ Սարեն և
ա՛յլք կոչիլ որպիսականք։ որպէս
այսոքիկ , ուղղակի ձգեաց ․ գլխե
րայն գնաց ․ աքացի եհար ․ ողջոյն
կիզա՞ ․ բարո՛ւք ասաց ․ չարո՛ւք
ուսոյց , և այլ։ Ո՞ր այնոքիկ որք
'ի դերանո՛ւանց ածանցին , անձ-
նական մակբայք կոչեսցին ․ զի
իւր որոշեալ դիմաց առադրին ․
ինձէն , քեզէն , և այլ։ Ո՞ր վերջ՝
չէն , երբ ասի՝ հայերէն , յունա-
րէն , վրացերէն , և այլ՝ ցեղական
մակբայ կոչեսցի ․ վասն զեղուս
ազգաց նշանակելոյ։ Ըստ այսմ է
և վերն ։ որպէս ասի՝ հայեվար ,

 ար

արպեվար, տաճկեվար, և այլ․
Իսկ՝ իցս՝ քանակական է․ և ունի զզօրութիւն մասնկանց՝ անգամ։ զի նոյն է ասել, երկիցս եհար, կամ երեք անգամ․ և թէպէտ գնէին ուրեք երկուքն իմիասին, երիցս անգամ, բայց նոյն է նշանակութիւնն և ոչ աւելի։
Լո՛ նշանակութի այլոց եղերաց՝ յայտ է քննողաց․ ո՞պ՝ գիշերայն՝ է՛ ծածկական․ արմատաքի՝ խսպառական, և այլն․

Լո՛ բացում մակադրական անուանք, թէ ածանցին և թէ ոչ՝ լինին որպիսական մակբայք։
Ոպ ասել, համարձակաբար ա̃ց, կամ համարձակ․ ծածկաբար խօսեցաւ, կամ ծածուկ․ և այլք․
Որոց թէպէտ մի և նոյն է նշանակութի՛ն, բայց ուրեք նախատիպն համեղ բերէ զբանն, և ուրեք ածանցեալն։ Լո՛ զայսպիսի մակադրական անուանսն՝ պարտիս

ճանաչել թէ ուր անուանանան,
և ուր մակբայանան. Յորժամ
դնին վ՟ն որպիսութ՟ե անուանց,
են մակադրկ՟ն անուանք. Որգն՝
լայն և համարձակ ճանապարհ,
ածէ զհետևօղսն իւր 'ի դժոխս.
ծածուկ խորհուրդն ա՟յ 'ի հրեշ
տակաց ևս անգիտելի է.
Իսկ յորժամ դնին վ՟ն որպիսու
թեան բայից, լինին մակբայք.
համարձակ ասաց, ծածուկ խօ
սեցաւ, և այլն.
Նոյնպէս և մակբայք ոմանք՝
երբեմն անուանապէս վարին.
Որգն, որքան աւուրքդ անցել են՝
այնքան կեանքդ մեռեալ են.
Իսկ լինին մակբայք մինչ դնին
այսպէս, որքան համեստանաս,
այնքան ազնուանաս։ Նոյնպէս,
փոքրինչ խմոր՝ զա՟մ զանգուածն
խմորէ։ այս՝ անուան. փոքրինչ նիստ
և ապա գնա, այս՝ մակբայ։ Պարզ՝
միայնակ որդի՝ առաւել սիրի.

միայնակ նստէր 'ի խցի իւրում։
Պարզ՝ հանդարտ բնութիւն,
'ի հանդստեան կեայ. հանդարտ
ընթացէք և մի՛ ըշտապիք. այսպ͂
և զայլսն իմա.

Ե՛ մանկբայք որք երբեմն ան-
ուանեան, սակաւք են. և ան-
ուանք որք մանկբայանան՝ յոյժ
բազ͂ումք. Որոց ոմանք դնին ուղ-
ղակին կերպիւ, ոմանք հոլովեալ.
Ուղղական՝ ոպ͂ իվերոյ եդեալքն՝
ծածուկ, համարձակ, և այլք
յոյժ բազումք. Իսկ հոլովեալ՝
որգոն, գիշերի՝ գողացան զնա.
ստուգիւ անց͂. զառաջինն ոչ ծա-
նեաք զձեզ. (այսինքն՝ յառաջ.)
'ի հարկէ խօսեցաւ. 'ի ներքս դի-
մեաց. յերեկոյին ոչ մնաց. և
այլք սոյնպիսիք. Ե՛ ոմանք դը-
նին բաղադրական՝ նախդրիւս՝
ան. անխնայ հարին. անխիղճ տան
ջեցին. անդադար օրհնէր.
և այլք բազումք.

Եւ՛ որք լինին յերկուց միանոյն
անուանց, նոքին են զանազան
հոլովս ունին, և տես սակաւուք.
Ուղղական և սեռ՛՛, որ աւուր ա-
ճեցաւ։ Ուղ՛՛ և սկզ՛՛, կարճիկար-
ճոյ մեկնեաց. Ուղղական և տը-
րական, բերան 'ի բերան խօսէր.
Ուղ՛՛ և աննախդիր սկզբնական,
մէջն՝ ըստ։ օրըստօրէ՛. ամըստամէ՛.
Երկու ուղղական, մէջն՝ առ։
խիտ առ խիտ նստէին. մի առ մի ա-
ղաղակէին. Երկու ուղղական,
մէջն՝ ընդ։ փոյթ ընդ փոյթ.
Երկու սեռ՛՛, ամի ամի՝ շուշաւ 2.
Աննախդիր սկզբնական և նախ-
դրիւ տրական, տանէ՛ 'ի տուն.
(Այս կերպ բաղում գտանի 'ի
հնոց. սրտէ 'ի սիրտ. ազգէ յազգ.
փառաց 'ի փառս, և այլ. Որոց զո-
մանս նորքն նախդրիւ դնեն. 'ի սըր-
տէ 'ի սիրտ. յազգէ յազգ, և այլ.)
Նախդրիւ և նախդրաբ արձ տրա-
կան, 'ի տունս տունս մտանէր.


Ի

Ի սոյն կերպ ներգոյին, եղիցին սովք և սրածութիւնք 'ի տեղիս տեղիս։ Եւ ճըղուամ անուանք կըրկին դրմամբ լինին մակբայք.
Որ Թուականին անուանքն, և այլք.
Որգոն՝ մի մի յառաջ բերէք։
Երկու երկու նստուցէք։
Երեքեւեք գնացէք։ Յօդ յօդ քակտեցին. Մի՛ն ծի՛ն պատառեցին. Տուն տուն որոնեցին. և այլ։
Եւ ոմանք բարդին ընդ ինքեան կամ ընդ այլում և մակբայան.
Ընդ ինքեան, գունդագունդ դիմեցին. չարաչար տանջեցին.
Ընդ այլում, յարաժամ բերկրեսջիք կշտապինտ վայելեսջիք, և այլ.
Դասական մակբայս՝ յառաջ, երբեմն զժամանակ նշանակէ, երբեմն զտեղի. Ժամանակ, յառաջ խորհեցայ, ապա խօսեցայ. Իսկ տեղի, յառաջ կացէք ով ծերունիք.
Բացասական մակբայս՝ ոչ, ունի զնշանակութիւն հական բայիցս,

ոչէ, ոչ գոյ։ գրեմն զօրութիւն ունե-
լով յէնքեն։ Նաեւ յայտ անտի է,
զի ուր եդեալ լինի չիքն, բանն այն
թարց դիմաւոր բայից վճարի․
Չիք մրջիւն անարգ, այսինքն՝ ոչէ։
Չիք որ բարի, այսինքն՝ ո՛չ գոյ։
Նա՛ երբեմն ՚ի տեղի ոչի, դնի
միայն՝ չ․ չեմ, չես, չէ․
Նոյնինքն՝ ո՛չ եմ, ո՛չ ես, ո՛չ է․
Նոյնպէս, եթէ օտարին չեղէք
հաւատարիմ որ է, ո՛չ եղէք՝
Մակբայքս՝ աստի, այտի, անտի,
դնին ՚ի բազում ուրեք ՚ի տեղի
եղականն և յոգնական յօդիցս,
այս, այդ, այն՝ ՚ի սկզբնական հո-
լովման․ Որգոն, ՚ի գետոյ աստի
առցես զջուրն․ որ է ասել, ՚ի գե
տոյս յայսմանէ․ ՚Ի մանկանց աս
տի ո՛չ ոք մնաց անուսումն․ որ է
ասել, ՚ի մանկանցս յայսցանէ․
Նոյնպէս և զմիւս դէմսն իմա․
Իսկ և՝ աստ, անդ, դնին ՚ի տեղի
եղականն ներգոյինի․ Որպէս ասել, ՚ի



՚ի

՚ի քաղաքի աստ, այս″ ՚ի քաղաքիս յայսմիկ ։ ՚ի քաղաքի անդ, այս″ ՚ի քաղաքին յայնմիկ ։ Բայց ՚ի դնիլն մակբային՝ ոչ հարկաւորի եղատառ յօդն։ իսկ ՚ի դնիլ բաղմատառ յօդին՝ դնի և եղատառն. զի համեղասցի ձայնն ։ Թէպէտ գտանի և թարց եղատառին. որպէս ասի, ոչ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշխան մար″ և առ″ ։

Այսու, այդու, են տեղական մակբայք, և սեռականք յօդիցս, այս, այդ։ տես 137 ։

Զայնքս՝ մինչ, մինչև, թէպէտ ՚ի լինելն նախդիր՝ կարեն նշանակել երբեմն զտեղի, երբեմն ըզ ժամանակ որպէս ցուցաւ 141. 144, Բայց ՚ի մակբայանալն՝ միայն ըզ ժմնկ նշանակեն և ոչ զտեղի։

Զայնս՝ օն եօն, կոչի դերբերդմական. զի ՚ի տեղի երդման դնի։ Որպէս ասի, օն եօն արասցէ ինձ տր և օն եօն յաւելցէ եթէ թողից 166.) Նմա։ որ է՝ մի և մի եղիցի։

Նախդիրքս՝ առ, ընդ, ՚ի բազում
ուրեք կցեալ ընդ այլում, լինին
մակբայք։ Որգոն, առանձինն ըս
տէր. առժամայն շիջաւ։ Ընդա
կամբ նայէր. ընդերեկոյս եկն,
և բազումք. Որոց պէս և այլ
նախդիրք գտանին. մի՛ ըստ աչս
դատէք, և այլք։
Երբեմն ՚ի շարադրութե, մակբայն
ոչ դնի կից ընդ բային։ Որգոն,
այսօր եթէ ձայնի նր լուիցէք։
Եւ մակբայն ոչ առադրի բայի՝
նոյնպ առադրի և ընդունելութեն՝
եալ, մինչ բայապէս ՚ի գործ ածի։
ոպ իվերանդ ասց 152. Որգոն,
այսօր ժողովեալ մեցն իմաստին,
և այլ։ Դնիլ կարէ և մակադրքն
անուան. որպէս, յոյժ գեղեցիկ. խա
րէ՛ գիտուն. խիստ յոյժ մաքուր։
Յորոց հետևի թէ՝ մակբայն ե
րից մասանց առադրի. բայի,
ընդունելութե, և մակադրական
անուան ոպ և ցուցաւ։

## Յաղագս Շաղկապի

### Գլուխ 24

Շաղկապն է Վերջին մասն բանի, որ զայլ մասունս բանին՝ կամ զնոյն ինքն զբանն շարակցէ ի խորհուրդս. Որգոն, պետրոս և պօղոս շրջէին և քարոզէին: Երկինք պատմեն զփառս ա՟յ. և զարարածս ձեռաց նորա՝ պատմէ հաստատութիւնն:

Ասացի, (որ զայլ մասունս բանին՝ կամ զնոյն ինքն զբանն շարակցէ ի խորհուրդս.) զի շաղկապն շարակցէ երբեմն զմի մասն ընդ միւսում. այսինքն կամ զանուն ընդ անուան, որպէս այս՝ պետրոս և պօղոս: Կամ զբայ ընդ բայի, ոպ՟ այս՝ շրջէին և քարոզէին. Իսկ երբեմն զշարամանութիւն բառից որ է բանն, կապէ ընդ-

այլում բանի . Արդ այս, երկինք
պատմեն զփառս այ, և զարարածս
ձեռաց նր պատմէ հաս":

Եթէ ունին շաղկապքն զանազան
նշանակութիս . վսն զանազանք
են և տեսակք նոցին. Ոմանք կո
չին բաղհիւսականք, և են սոքա.
և . եւս . այլև . նաև . իսկև . որև .
ևսև . և այլ: Եթէ կոչին բաղհիւ-
սականք, զի բաց 'ի բաղհիւսելոյն
որ է շաղկապելն' այլ ինչ նշանա-
կութի ոչ ունին. Որպէս, իսկզբա-
նէ արար ած զերկինս և զերկիր.
և երկիր էր աներևոյթ և անպատ-
րաստ . և հոգի այ շրջէր 'ի վերայ
ջուրց.

Ոմանք կոչին տրոհականք, և են
սոքա. կամ . կամ թէ . և կամ .
և կամ թէ : Եթէ կոչին տրոհա-
կանք, զի զբառս և զբանս տրոհե-
լով կապակցեն ընդ իրեարս .
Եթէ լինի այս ըստ երից. Երբեմն
տրոհեն էութե և կապեն իրակութ


որ

ուղէն, կամ ես ընթերցայց, կամ
դու։ Այլ երբեմն տրոհեն իրա-
կուք և կապեն էութք։ որպէս,
կամ ընթերցիր, կամ աղօթեա,
և կամ ձեռագործս արա. կամ
թէ ոչ՝ գոնէ մի՛ դատարկաբաներ։
Իսկ երբեմն զերկու տրոհեալ
բանս աննմանս միմեանց, կապակ-
ցեն իրերաց իբրև զմի բան։
որպէս, կամ արարէք զծառն բա-
րի և զպտուղ նորա բարի, կամ
արարէք զծառն չար և զպտուղ
նորա չար։

Ամանք կոչին պատճառականք,
և են սոքա։ զի, քանզի, ո՞չ զի,
այնուզի, փոխանակզի։ Այլ կո-
չին պատճառականք. զի զհետա-
դայ բանն այնպէս բերեն իվր՝
որ ծանուցանէ զպատճառն առա-
ջին բանին։ հնգոն, ուրախ լերուք
ընդ իս, զի գտի զդրամն իմ կորու-
սեալ. և այլն.

Ամանք կոչին փաստականք,

և են սոքա․ վ՟ որոյ, սակս որոյ,
յաղագս որոյ, վ՟ այսորիկ, վասն
այնորիկ, վ՟ այն, այնր աղագաւ,
ուստի, նմին իրի․ և այլ․ Սո՟ա կո
չին փաստառ″, այսինքն՝ պատ-
ճառականք․ զի զնախընթաց
բանն՝ երկրորդ բանին պատճառ
առնուն․ և այնպէս կապեն զեր
կուսեանն ընդ միմեանս․ Օրն՟,
միով հաւատով եղբարք եմք․
վ՟յ պարտիմք սիրել զմիմեանս․
վ՟ այսորիկ ծանրապ՟ մեղանչեմք
եթէ ատիցեմք զեղբարս․

Ոմանք կոչին այլականք, և են
սոքա․ բայց, այլ, իսկ, սակայն,
բայց սակայն, այլ սակայն, իսկ սա-
կայն, և սակայն․ Սո՟ա կոչին այլ″
զի զերկ՟րդ բանն փոխեն ՚ի դիտա
ւորութենէ առաջնոյն և այնպ՟ս
կապեն ընդ նմա․ Օրն՟, դու բա
րւոք ասես զայդ, բայց նա ոչ ըն
դունի զբանս քո․ այլ նա ոչ ը՟ունի․
իսկ նա ոչ ընդունի, և այլն․

Ոմանք կոչին յետ ածարտման սկզբնականք, և են սոքա ։ արդ, և արդ, այլ արդ, իսկ արդ ։ Ընդէ՞ր վասն այն կոչին այսպէս, զի ընկնի ածարտման դիտաւորութեան միոյ, այլ իմն նոր դիտաւորութիւն սկսանին ի վերայ մնաց առաջնոյն ։ և այն երկրորդ բանին՝ ինքեանք սկիզբն լինին ։ Հետեւ՝, Արդ թագաւորք զայս՝ իմիտ առէք ։ Ընդէ՞ր արդ՝ դամբ ղջեա քո ամ՟ սրտիւք մերովք ։ Տես զնախընթաց բանս տոցին և բարւոք ծանիցես զասացեալս ։

Ոմանք կոչին Թէականք, և են սոքա ։ Թէ, եթէ, և թէ, այլ թէ, բայց թէ, իսկ թէ, իսկ եթէ, նա թէ, ապա թէ, ապա եթէ ։ Ընդէ՞ր կոչին Թէականք, զի թէին ձևակերպին և թերատ թողուն զբանն ։ Սորոց զկնի իւրեանց այլ ինչ բան պահանջեն զի կատարեսցի իմացուածն ։ Հիբար՝, Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես ։

և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդ
մօտ ես ։ Եթէ սիրէք զիս, ըզ-
պատուիրանս իմ պահեսջիք։
Սա այսց են և այսոքիկ, թէպտ.
թէև. ոչ թէ. ոչ եթէ ։ հիպպէ",
Թէպէտ վառեցի, բայց շուտով
շիջաւ։ Թէև ձաղեցին, ոչ զղջա-
ցաւ։ Ո՛չ թէ լսելն է գովելի,
այլ որ պահէն զայն 'ի միտ։
Ոմանք կոչին քարշողականք, և
են համավերջքս այսոքիկ.
որովհետև, արդ որովհետև, և
արդ որովհետև, այլ արդ որովհե-
տև, իսկ արդ որովհետև, բայց
արդ որովհետև։ Սո՛ կոչին քար-
շողականք, զի ըստ թէականացն
կիսատ թողուլ զբանն, քարշեն
'ի հարկէ զհետն բան՝ զի լրասցի
իմացուածն։ Օրինակ, որովհետև
ոչ արարիք միում 'ի փոքրկանցս
յայսցանէ, և ոչ ինձ արարիք։
Արդ որովհետև ոչ լսես խրատու-
ուրուք, յայտ է թէ անզգամ ես։

Ոմանք կոչին հարկաւորականք կամ հետեւողականք, և են սոքա. ուրեմն, ապա ուրեմն, արդ ուրեմն, ապա, ապաքէն, իսկ ապա. Սո՛ կոչին այսպէս, զի զհետագայ բանն ՚ի հարկէ հետեւիլ ցուցանեն առաջնոյն. հիգոն, եթէ հաստատացաք, ուրեմն հաստատացեալ եմք. ապա ուրեմն զգործ հաստատացելո՛յ պարտիմք գործել.

Ոմանք կոչին մեկնողնք, և են սոքա. այսէ, այսինքն, այսինքն թէ՛ իբր թէ, իբրու թէ, որպէս թէ. Սո՛ կոչին մեկնո՛, զի զհետագայ բանն իբր զբացայայտիչ առաջնոյն բերեն իւր. որզան, քա՛ն օծեալ Թարգմանի. այսէ՛ ա՛ծ և մարդ. այսինքն ա՛ծ մարդացեալ. Ո՛ ընպէս իմացան, որպէս թէ ոչ իմացան.

Ոմանք կոչին հաստատականք, և են սոքա. ո՛րբար, հի՛բար. ո՛րգոն, հի՛գոն. ո՛րզան, հի՛զան. ո՛րկէն, հի՛կէն. ո՛րպակ, հի՛պակ.

որպէս, հիպէս։ Այլ կոչին հաս
տատականք, զի ի մի մեկնողական
բանից՝ բացայայտ օրինակս բե-
րեն և յայտնի առնեն զբանն։
ո՞պ տեսանես յայսմ գրքուկի և
յայլ տեղիս։ Այլ սոքա թէպէտ
հարցական կերպիւ արտաբերին,
բայց ոչ են զուտ հարցականք․
այլ զհաստատութի՛ բանին իբր
հարցմամբ բացայայտեն։

Ոմանք կոչին կրկնականք, և են
սոքա՝ դրձ, ևս, և ևս, նա ևս։
Այլ կոչին կրկնականք, զի զդի-
տաւորութիւն առաջին բանին՝
դրձ կրկնեն։ հիւն, խոնարհն նը
ման է ջրոյ, և հպարտն հրոյ․
Դրձ, խոնարհն նման է վարդոյ,
և հպարտն փշոյ։ Այլ ևս, խոնարհն
նման է քաղցրութե̃, և հպարտն
դառնութեան։

Ոմանք կոչին դասականք, և են
սոքա՝ նախ, նախ առաջին, նախ և
առաջին․ երկրորդ, երրդ, չրրդ․


յետ

յետ այսորիկ, յայնմ հետէ, և այլ։
Այս կոչին դասականք, զի զբանսն մի ըստ միոյ դնելով այնպէս կապեն ընդ իրերաց։ որպէս, պատուելի է այրս այս, վ͞ս զի նախ՝ է իմաստուն։ երկրորդ՝ է քահանայ։ երրորդ՝ է ճգնաւոր։ չորրորդ՝ է ծերագոյն։
Յետ այսորիկ տուն էր հրէից, Յայնմ հետէ սկսաւ յ͞ս քարոզել և ասել, ապաշ"։

Ոմանք կոչին ժամանակականք, և են սք. յայսմաւուր, 'ի սըմին աւուր, յաւուրսն յայնոսիկ, ընդ աւուրսն ը͞ն այնոսիկ, յայնմ ժամանակի, ընդ այն ժամանակս, ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, և այլք սոյնպիսիք. Այս կոչին ժամա", զի 'ի նոյնում ժամանակի առաջին բանին, այլ ինչ իրակութ ցուցանեն լեալ կամ լինելի. Որպէս, յայսմաւուր վկայաբանութիւն ս͞բյն ա". յաւուրսն յայնոսիկ գայ յոհաննէս մկրտիչ։

յայնմ ժամանակի դայլք և դա֊
ւինք իմաստին Ճարակեսցին։

Ոմանք կոչին նմանականք, և են
սոքա՝ ոպ՟. այսպ՟. սոյնպ՟. նոյնպ՟.
նմանապ՟. սոյն դունակ. նոյն դու֊
նակ. զորօրինակ։ Սա՛ կոչին նը
մանականք, զի պատաշեն բանն և
զերկրորդն նման իւրերաց կացուցա
նեն։ որպէս, ոպ՟ պըտղաբեր ծառն
սիրելի է տընկողին, յորոյ վերայ
միշտ խնամարկէ՛ զի և՛ս պտղաբեր
լիցի, այսպ՟ և բարեգործ հոգին
հաճելի՛ է ստեղծողին. առ որ միշտ
հեղու զիւր շնորհն զի առաւել
ևս բարեգործ ցի։

Ոմանք կոչին նախընտրականք,
և են սոքա՝ քան. քան թէ.
Սա՛ կոչին նախընտ՛՛, զի ընախա֊
սացեալ իրակուին բարւոք գո֊
յուցանեն քան զմիւսն որ զկնի
նորին եկեալ շարանիցի նմին.
Որպէս, բարւո՛ է յուսալ՛ի տ՟ր.
քան յուսալ՛ի մարդիկ. լաւ էր

քեզ թէ չէիր բնաւ գիտացեալ զբարին. քանզի գիտես և ոչ առնես.

Ոմանք կոչին վարանականք, և են սքէ. գէթ. գոնէ. փարթար. Տաճկեվար, դուլի. Այս կոչին վարանականք, այսինքն տարակուսականք. զի յորժամ ոչ կարիցէ ոք հասանիլ մեծագունին, 'ի ձեռն այսպիսի շաղկապաց ցուցանէ ըզ հաճիլն իւր ընդ փոքրագոյնն տարակուսանօք նոցա: Օրինակ, որով հետև ոչ կարեմ ընթեռնուլ, գոնէ ունկնդիր եղէց: Այս նոյնէ ասել՝ գէթ, կամ փարթար.

Բայց սոքա ոչ այնքան 'ի կիրառ կանին ոպ՝ գոնէ.

Ոմանք կոչին առաւելականք, և են սքէ. մանաւանդ. ևս առաւել. մանաւանդ ևս. առաւել ևս: Սոյ կոչին այսպ, զի ի վր̄ա նախկին բանին՝ երկր̄դ բանին առաւել այնպիսութի դնեն: Օրինակ, յուսալ

ցեալ եմք յա͞ծ որ է փրկիչ ա͞մ
մարդկան. մանաւանդ հաւատա-
ցելոց. ևս ա͞ռ՛ել ջերմեռանդից։
(Իսկ մինչ ասի, մանաւանդ կա-
միմ լսել քին խօսիլ, լինի մակբայ
նախընտրական։ զի զնախնկին յիշե-
ցեալ իրակութին ընտրելի գոլ
ցուցանէ քան զմիւսն.)

Ոստ առաւելականացս է և այս.
Դինչ մի։ Պետրոս այնք̃ եղև ողոր-
մած, մինչ զի և զանձն իւր վա-
ճառեաց և ետ աղքատաց։

Ս՛ երկու շաղկապ.քս այսոքիկ՝
թո՛ղ թէ, ուր մնաց թէ, կոչեա-
ցին երկատեսակ.ք։ զի երբեմն ՚ի
վ͞ե փոքրագունին զմեծագոյնն
առբերեն, և երբեմն իվ͞ե մեծա-
գունին զփոքրագոյնն։ ՚Ի վերայ
փոքրագունին զմեծագոյնն, որգոն
բայլել անգամ ոչ կարէ, թո՛ղ թէ
վազել։ ՚Ի վ͞ե մեծագունին ըզ-
փոքրագոյնն, հգոն, զհրեշտակս
դատեմք, թո՛ղ թէ զերկրաւորս


Ս՛

Եւ ոմանք կոչին Թարմատարք, և են սոքա. թէ. եթէ. զի. բա. բամ։ Եւ կոչին Թարմատարք, այսինքն ո՛չ ՚ի հարկէ պիտանա-ցուք. վ՜ն զի թէ դնին և թէ ոչ՝ նո՛յն է բանն, Որպէս, ո՛չ թէ ես ասեմ զայս. ո՛չ ես ասեմ զայս. Գիտեմք զի յա՜յ եկեալ ես. գի-տեմք՝ յա՜յ եկեալ ես։

Եւ տե՛ս, զի շաղկապքս ԹԷ, ԵԹԷ, յորժամ կիսատ թողուն զբանն, կոչին Թէականք. և յորժամ ոչ ՚ի հարկէ մտանեն ՚ի բան, կոչին Թարմատարք որ՜ ցուցաւ. Նաև գտանին և այլ կերպք, ոչ Թէա-կանք և ոչ Թարմատարք. Որպէս, զո՞ր ոք ասեն զինէն մարդիկն թէ իցեմ. դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլո՞ւմ ակնկալցուք. շուրջ հայէր տեսանել թէ ո՞վ զայն ա-րար. և պատմէ աշակերտացն ե-թէ ետես զնա տ՜ր. Եւ այլք բա-զումք, որք ո՛չ Թէականք են և

ոչ Թարմատաղք. և կարեն կոչիլ հապականցականք. զի զկապակցելն միայն ունին ոչ զբաղհիւսմանն.

և այս կերպ յաճախ գտանի.

Նա ըստ այսմ տեսութեան՝ գտանին և այլ շաղկապք, որք այլևայլ նշանակութեամբ վարին. Որպէս շաղկապս՝ զի, լինի պատճառական և Թարմատար. Իսկ, լինի բաղհիւսական և այլական. Որոցպէս և այլք գտանին.

Նա գիտելի է, զի նախադիրն, մակբայն, և շաղկապն՝ ազգականք են իրերաց. Նախ՝ զի է րեքեանն ևս անհոլով մասունք են բանի. վասն ոչ ածին հոլովմամբ որպէս զայլսն. Երկրորդ՝ զի որպէս նախադիրն հետևի անուան և այլոց անուանապէս հոլովելի մասանց, և մակբայն հետևի բայից և բայապէս ընդունելութեանց, նոյնպէս և շաղկապն է հետևող բանից. զի կամ կցէ զմասն ընդ մասին



և

և շինէ զբանն, և կամ զինքն ըղ
բանն կցէ ընդ այլում բանի ոչ
ասացեալ և ցուցեալ։ Երրորդ՝ զի
ոմանք 'ի նոցանէ՝ լինին երբեմն
նախդիր, երբեմն մակբայ։
Են ոմանք մակբայ և շաղկապ։
Են ոմանք սակաւք՝ լինին նախ
դիր, մակբայ, և շաղկապ։

Նուէրք և Մակբայ, Որդոն,

«Նստան շուրջ զնովաւ. շուրջ
հայեր յա՛ թէ ո՛ զայն արար։ || Դըր″
տաւ ի վե՛ր նո՛ր։ ի վե՛ր եկեալ յափշտա
կեցին զնա։ || Եկաց յանդիման
նո՛ր. եկաց յանդիման և ասաց. ||
Գնաց մինչ 'ի ծովեզրն. մինչ զդը
նայր յա՛ յեզր ծովուն։ | Յայնկոյս
քաղաքին։ յայսկոյս դիմացին։ ||
Յետոյ նո՛ր կայր՝ յետոյ սկսաւ։ ||
Եղեն իբրև զմեռեալ։ իբրև մեր
ձեցան 'ի գեօղն. || Ո՛չ քաղաք պա
շարեալ. ոչ պատմեցաւ նոցա։ ||
ո՛չ եկեր աստ։

Ե՟ սակաւ է զանազանութիւն սո-
ցին. զի մինչ առնլով հոլովին՝
յարին ը անուան, են նախդիրք։
Ե՟ մինչ դնին վասն բային, են
մակբայք. որպէս ահա յեդեալ
օրինակացդ ցուցաւ.
Ե՟ որք մակբայանան և շաղկա-
պանան, են այսոքիկ. զի, իսկ,
նախ, ապա, ուստի, ուր, այսպէս,
յայնժամ, զորօրինակ. և այլ։
Ե՟ ծանիր ՚ի հետևեալ օրինա-
կացդ. Զի՞ կայք զօրս ցե-
րեկ դատարկ։ Զի ոչ ոք կալաւ
զմեզ ՚ի վարձու. Ես եմ յարութիւն
և կեանք։ Իսկ նա ը բանսն խռո-
վեցաւ։ Ուր պետրոս եկն, և
այլ պօղոս։ Նախ՝ տես 176. 181.
Եթէ ստուգէ՞ տր զմեղաւորս,
այլ նոյն պատիժ և ինձ պատահի
զի մեղաւոր եմ. որ է ուրեմն, ա-
պա ուրեմն։ Զո՞րք են այս։
զի ոչ լուաք ձայնի տեառն, ուստի
արժանապէս պատժեցաք. որ է,

վասն որոյ, վասն այնորիկ, և այլ։

Որոց», այսոց», տես 177։

Յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, յայնժամ պահեսցեն։ Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից՝ տասն կուսանաց։ Ահա՛ ինչ առաջինքն են մակբայք, և յետինքն շաղկապք։ Եւ ճանաչելն այսպէս։ Եթէ դնիցին միայն վասն զբայն օրակացուցանելոյ՝ են մակբայք։ Եւ եթէ դնիցին վասն կցելոյ ըզբան ընդ բանի՝ են շաղկապք։ որպէս յեդեալ օրինակսդ ցուցանին։ Իսկ եթէ զերկուս նշանակութիւնսն ևս ունիցին, այսինքն մակբայի և շաղկապի, ո՛չ է անդէպ կոչել անդ՝ և մակբայ և շաղկապ։ Մակբայ՝ վասն բայիւն, և շաղկապ՝ վասն կցելոյն։ Որպէս այս՝ յայնժամ նմանեսցի արքայու″։ և նմանք։ Իսկ՝ զոր օրինակ, չինի մակբայ նմանակին, Որպէս եկեսցէ զորօրինակ տեսիք զդա երթալ յերկինս։

Իսկ շաղկապ, զոր օրինակ՝ շող արեւու մինչ ծագէ ընդ նեղ ինչ, նաեւ փոքրագունեղ փոշին երեւի աչաց: Նոյնպ՟ եւ շնորհն մինչ ծագէ 'ի սիրտ մարդոյ, նաեւ զփոքրագոյն յանցանս իւր տեսանէ:

Նոյն՝ նմանական շաղկապ:

Իսկ դնին ուրեք նաեւ հաստատական. ըստ օրինակի շաղկապացս,

որգոն, որչան, եւ այլ:

Սա՛ աստ 'ի վերջնում շաղկապիս ծանիր, զի բաց յեղելոցս աստ 'ի սոյն տեսակի՝ են եւ այլ նախդիրք եւ շաղկապք եւ բազում մակբայք, զորոց եւ այլ իմացք, բայց զի փոքր է գրքոյկս մեր՝ երկիւղ յերկարելոյն առ այժմ այսքան թոյլատրեաց: Որովք թէ բարւոք վարժիցիս, յուսամ թէ ո՛չ մնայ զոր ոչ գիտիցես:

Բանն է նախդիր բաղդատական.

Նաեւ շաղկապ նախընտրական:

## Յաւելուածութիւն ինչ Սերտին վասն երկուցին Մասանց բանին, Անուան և Բայի.

Եհ արդ՝ 'ի կտրել աստ ութեքին մասանց բանին պարզ և համառօտ ասացեալ, խօսելի է այլ ևս սակաւուկ՝ միայն զանուանէ և զբայէ։ Որք գլխաւոր մասունք գոլով բանին, ը̃ղում ինչ ասելիք պատկանին զնոցանէ։ Եւ վ̄ այն ոչ ասացաք յառաջագոյն և թողաք աստ, զի նորավարժ մանկանցն միտք՝ 'ի նախակրթութեանդ անշփոթ և պարզ մնասցեն։ Իսկ այժմ վ̄ զի այսքան ինչ ուսար զմասունս բանին, առանց դժուարութեան և զայլ ասելիս կարես իմանալ։ Լսելով զայս՝ ոչ եթէ բազում ինչ ունիմ յեր կարել, այլ համառօտ և աստ անցանելով, զերևելիս միայն 'ի յիշումն ածից։

## Յաղագս Անուան․

### Գլուխ 25

Անունն է մասն բանի, որով իրն ճանաչի․ ոսկի, քար, փայտ, մարդ, ձի, և այլ։ Պարզ սահմանի անունն այսպէս, Անունն է մասն բանի հոլովական, Թարց ժամանակի և դիմաց։ Ասելով՝ Թարց ժամանակի, որոշէ զանունն 'ի բայէ՛ և յընդունելութենէ, որք ժամանակաւ նշանակին։ Այլ ասելով, Թարց դիմաց, որոշէ զնա 'ի բայէ 'ի դերանուանէ և 'ի յօդէ․ որք դիմաւոր մասունք են բանի։ Իսկ ասելովն, հոլովական, որոշէ՛ զանունն յանհոլով մասանց․ այսինքն 'ի նախադրութենէ 'ի մակբայէ և 'ի շաղկապէ․ բայց ոչ 'ի բայէ․ զի և բայն հոլովական է․ քզի խոնարհումն բային՝ հոլովումն է նմին։



Ան

Նախադասութիւն Ընթական.

Ենթակայական և մակադրին անուանքն՝ վասն կարծելոյ զբառսն կոչին յայլոց՝ գոյական և ածական. և նոյն է իմացումն. Զի գոյականն՝ իւրն զգոյութին ցուցանէ որ է բնութին. Իսկ ածականն իւր գոյականին ածեալ լինի և զորպիսութին յայտնէ. Զի ըստ արտաքածական էութեն ունի զընչութի և որպիսի ինչութի. զընչութի իւրն՝ գոյականն ցուցանէ որ է ենթակայականն. և զորպիսութին՝ ածականն յայտնէ որ է մակադրականն. Որպէս ասել զինչ կայ ՚ի նաւիդ. պատասխանի, փայտ. Որպիսի փայտ. վառելի, շինելի, և այլ. Եւ ըստ զինչութի իւրն մէ, և որպիսութիւնն բազում, այսպէս մի միայն գոյական անուն բաւական է առ՚ի նշանակել զինչութի իւրն. Իսկ ածականք բազումք պատկանին առ՚ի ցուցանել

զզանազան որպիսութիւն նորին ։
Որպէս ասեմք, մեծ մարդ, բարի
մարդ, գիտուն մարդ, և այլ։
Իսկ ենթակայական է այն ասի,
որ ՚ի ներքոյ մակադրինին կայա-
նայ. զի ենթ ասելն՝ ներքոյ ասել է։
Իսկ մակադրական է այն ասի,
որ ի վերոյ ենթակայականին դնի.
է զի մակ ասելն՝ վերայ ասել է.
Եւ գիտելի է, զի գոյական ա-
նուանն առ՚ի նշանակել զէու-
թիւն իրին՝ ոչ կարօտի ածականին.
զի ինքն է իսկական անուն նորին.
Իսկ ածականն առանց գոյականի
բնութիւն ինչ նշանակել ոչ կարէ.
Որպէս յասելն՝ մեծ, փոքր, և այլ՝
բնութիւն ինչ ոչ նշանակի. վասն որոյ
խնդրի՝ որ հանդերձ գոյակա-
նաւն յիշեսցի, մեծ մարդ։
Եւ թէպէտ յասելն՝ արդար,
մեղաւոր, իմացեալ լինի մարդն.
սակայն այսպիսիքս ոչ է մարդ
գոլոյն ասին, այլ վասն այնպիսի

գոլոյն: այսինքն արդար, կամ մե
ղաւոր, կամ այլ: Նա՛ այսպիսիքս
հպատոյն գոլով գոյականին, ա̃մ
որ գիտէ սովորաբս թէ արդար
անունն իւր մարդոյն դնի. վ̃յ
'ի բազում ուրեք թարց գոյակա
նի քիչեցեալ լինին: որպէս ասի,
արդարն 'ի հաւատոց կեցցէ:
Մեղաւորք մեղաւորաց փոխ տան:
Նա՛ ձայնս՝ արդար, թէպէտ կա-
րէ դնիլ և այլում, ո̃պ ասեմք՝
արդար դատաստան, բայց այսպիսիք
առանց գոյականին ոչ իմանին:
Ոի ածականք որք ըստ ուղիղ
պատկանաւորութե՛ մարդոյս միայն
պատկանին, ուր զմարդոյ նշանա
կեն, կարեն դնիլ թարց գոյա-
կանի վ̃ս ասացեալ պատճառիդ:
այսինքն հպատոյն գոլով գոյա-
կանին: Իսկ ուր ըստ համեմա-
տութեան և այլոց պատկանին,
թարց գոյականի դնիլ ոչ կարեն.
զի մի՛ տեսակ մարդոյն իմանիցի:

Այսն հոգայ զտեառն. եդին ըզ
յս՟ 'ի կոյս գերեզմանի:

Ե՛ այնպիսի ածականք որք ը՟
ուղիղ դիտման՝ մարդոյս միայն
պատկանին, թէպէտ բնականապ՟
ածականք են, բայց զի զնմանութի՟
գոյականի յաւէտ ունին քան զա
ծականի, 'ի քերթողացն գոյականք
համարեցեալք են որպ՟ յերեսն 20
ասացաւ: Ե՛ թէ որպ՟ ունին ըզ
նմանութիւն գոյականի, այս է.
Որպ՟ յորժամ միշէ գոյականն,
յայտնի լինի տեսակ իրին, այսպ՟
և յասելն դպիր, և այլն, յայտնի
թէ մարդ է. Նաև որպ՟ իվեր՟ միոյ
գոյականի բազում ածականք դը
նին, այսպէս կարեն դնիլ և 'ի մ՟ց
վերայ. Որպ՟ ասեմք, մեծ դպիր,
գիտուն դպիր. երկրորդ դպիր,
չորրորդ դպիր, և այլ:

Պարզեալ՝ նշան գոյականին և
ածականին է այս, զի գոյականն
բաց 'ի յոյժ սակաւուց՝ միոյ տե

սակի միայն պատկնի։ որպէս անուանս՝ Տէր , միայն մարդոյս ասի և ոչ այլում։ Իսկ ածականն՝ ՚ի վերայ բազմաց և զանազանից դնի։ որպէս ասեմք , մեծ մարդ , մեծ ձի , մեծ քար , և այլ։ Ը՟այսորիկ դպիր և այլք նմանք , թէպէտ բ- նութ͞ե ածականք են , բայց զի միոյ տեսակի միայն պատկանին , գոյականք համարեցեալք են։

Նսայի ՚ի վերոյ՝ (բաց ՚ի յոյժ սակաւուց ,) զի՝ այր , այն , և այլ , որք համանուն կոչին , թէպէտ այլևայլ բնութիս իրաց ցուցանեն , բայց յոյժ սակաւք են այսպիսիք՝

Ծանիր և զայս , զի առ ուրեք՝ ածականն լինի ած͞կն այլում ածականի։ որպէս թուխ կարմիր , խոր կանաչ , և այլ։ Ուրանօր կարմիրն և կանաչն որպէս թէ գոյականք են միւս ածականացն. թէպէտ ինքեանք ևս են ածականք.

Լ͡ն է՝ զի գոյականն լինի ածա-

Ծե

կան, և ածականն գոյական
Գոյականն լինի ածական, կամ բարդմամբ, կամ ածանցմամբ, կամ դրմամբ ի վերայ այլոյ: Որպէս քար և սիրտ՝ են գոյականք. իսկ քարասիրտ և քարեղէն՝ են ածականք: Այս՝ բարդմամբ և ածանցմամբ: Իսկ դրմամբ, որպէս գայլն և վահանն՝ են գոյականք. իսկ յասել՝ գայլ վահան, գայլն ի վերայ վահանին լինի ածական Որպէս, յուդա կիւրեղ, սիմոն պետրոս, և այլ:
Եւ ածականն լինի գոյական, մինչ ածանցի ութիւն. որպէս մեծ, պինդ, սուրբ, են ածականք. իսկ մեծութիւն պնդութիւն սրբութիւն՝ են գոյականք: Ըստ այսմ է և ոսն. որգոն, լայն՝ ածական. լայնումն՝ գոյական: Փաչ, թէ զածականն ցուցանէ, է գոյական. իսկ թէ զփակեցին, է ածական: Ըստ այսմ է՝ ծակ, ծակոտ, և այլ:

## Յաղագս Անուանցն.

### Գլուխ 26

Անուանքն է հ՟րկ և յատուկ։ Հ՟րկ կոչի այն, որ զիրն համօրէն նշանակէ. որպէս մարդ։ Ի՟ս յատուկ այն, որ զմասնաւորն ցուցանէ. որպ՟ գրիգոր։ Բայց մարդոյս յատուկքն՝ թէ արական թէ իգական, ո՛չ այնքան յատկացուցանեն զմինն 'ի յայլոց, որպ՟ յատկացուցանեն չէզոքական յատուկքն. զի յասելն՝ Գրիգոր, բազում գրիգորս կարեմք մտածել. Աւստի առ 'ի յատկացուցանել ըզ մինն միայն 'ի յայլոց՝ դնին ոմանց այլ և մականուանք և յատկացուցիչ բառք, զի որոշեալ 'ի յայլոց՝ յոյժ յատկապէս ճանաչեսցին. Որպ՟ ասեմք՝ գրիգոր լուսաւորիչն. գրիգոր ա՟ծաբանն. գրիգոր նիւսացին. նարեկացին. վկայասէրն, և այլ։ Նոյնպէս՝ մա

րիամ ա͞ծածինն. Մարիամ Մագ-
դաղենացին. Մարիամ քոյրն Ղա-
զարու, և այլ։ Իսկ չեզոքական
յատուկքն ոչ այնքան կարօտին
մականուանց, կամ այլ յատկա-
ցուցիչ բառից. զի սակաւք են
՚ի նոցանէ որք զմինն միայն ոչ նը-
շանակեն. Նաև ծանիր, զի ա͞մ
հ͞րկ անուն, յատուկ անուանս
ո՛չ ունի. որպէս քար, փայտ, ձի,
ոչխար, և այլ. Որոց մասնաւորքն
այսպէս յատկանան. ա՛յս քարս.
ա՛յդ փայտդ. պետրոսին ձին. մեր
սպիտակ ոչխարն, և այլ։

Կան և ոմանք յո՛յժ սակաւք, որք
վասն միայնութեան իւրեանց՝
հ͞րկ անուն ո՛չ ունին. ո͞պ ա͞ծ-,
ե, երկիր, արև, լուսին, եդեմ,
և այլ։ Զորս վ͞ն ո՛չ ընդ այլում
անուանակից լինելոյ՝ միայնակ ան-
ուանեցաք։ Զի պ͞տս և պօղոս՝
են անուանակից միմեանց՝ հասա-
րակ անուամբս՝ մարդ։ Ուռհա

և Համիթ՝ անուանեալ քաղաք. Իսկ միայնակքն ոչ են այսպիսի. Մշջ ք զհասարակ ունող յատուկսն՝ գերազանց ունին զյատկութիւն. Բայց տես՝ զի աշխարհ, և երկիր, յայնժամ են միայնակ, յորժամ զբոլորն համանուն միայն նշանակեն: Իսկ եթէ զբազում մասնաւոր տեղիսն անզանազան նշանակեն, են հասարակ անուանք. Որոց յատուկքն լինին, Հայաստան, յունաստան, Հապաշստան, և այլ: Նորդ՝ որք զհասարակն միայն ունին, են յոյժ բազումք. Եւ որք զհասարակն և զյատուկսն ունին, են սակաւք. Իսկ միայնակքն որք զյատուկն միայն ունին՝ են յոյժ սակաւք.

## Յաղագս Սեռին, Գլուխ 27

Սեռին տեսակքն թէպէտ չորք անուանին, արական, իգական, անորոշ, չէզոք, բայց բնութիւք

իրաց երեք են. այսինքն՝ արու.
էգ. չէզոք. զի անորոշն կամ ա-
րու է, կամ էգ. Սա զի այն կո-
չի անորոշ, որ զարուն և զէգն՝
միով ձայնիւ նշանակէ ոչ ցու-
ցանէ. վասն նշանակեալն նովաւ՝
կամ արու է, կամ էգ. Իսկ մա-
կադրականք ոմանք՝ խնդր երկոցն ևս
դնիլ կարելով, կարեն կոչիլ
դեր անորոշ. Որպէս ասեմք, մեծ այր,
մեծ կին, մեծ քար. Որպէս հայրն
Անտոն, սբ. կոյսն Նունէ, սուրբ
լեառն Թաբօր, և այլ.

Ոանիր ևս, զի յոգն թէպէտ
ըստ բնական նշանակութեանն՝
է անորոշ անուն. բայց ըստ սովո-
րական կիրառութեանն՝ արական
իմացեալ լինի. Ուստի յորժամ
վասն այր մարդոյ լինիցի բանն,
ոչ է հարկ ասել այր մարդ. այլ
բաւական է ասել՝ մարդ. որ ըստ
սովորութեան արու իմացեալ լինի.
Իսկ եթէ վասն կնոջ լինիցի,

 ասի

ասի՝ կին մարդ։ Նա՛ Թէպէտ ասի
ուրեք, այր մարդ, բայց ոչ է 'ի
հարկաւորութե. այլ վս առաւել
բացայայտելոյ. Որ եթէ ոչ դը
նիցի այնպ, ոչ է պակասութի ինչ.
զի մրդն միայն բաւական է զայր
մարդն ծանուցանել։ Նա՛ յայնժամ
մանաւանդ ասելի է այր մարդ,
յորժամ շուրջ զնովաւ կին մարդ
յիշեսցի. որպ ասի, Ա կորն ԺԱ. 6, 7։
Նա՛ որպ մարդն և նմանք նորին՝
այսինքն ծեր, ձիաւոր, բժիշկ,
դրագիր, և այլք այսպիսիք,
Թէպէտ ըստ բնականին անորոշք են,
բայց ըստ սովորութե զարականն
նշանակեն։ Նոյնպէս և կոյսն՝
Թէպէտ ըստ բնականին անորոշ է,
բայց ըստ սովորութե զիգական
ցեղն ցուցանէ։ Իսկ՝ ձի, ոչխար,
Թռչուն, և այլք այսպիսիք, ա
ռանց կարծեաց անորոշք են.
Նունա, աննա, որ է՛ իգական,
եղեալ կայ և արուի. որպ աննա

քահանայապետն. Նոյնպիսիք և
այլք գտանին: Են անձանք
ոմանք, որք այլ և այլ նշանակութիւնս
ունելով, ըստ քանակին կամ ըստ
սեռին այլ և այլ իմացեալ լինին.
Որպէս անունս, այր, եթէ զքար այրն
կամ զհող այրն նշանակիցէ, որ է
մաղարայ՝ ըստ սեռին է չէզոքա-
կան. իսկ եթէ զմարդն ասիցէ,
է արական. Իսկ ըստ քանակին՝
երկուքն ևս են հասարակք.
Լուր, եթէ զպատուոյն անուն
ցուցանիցէ, ըստ քանակին հասա-
րակ է. իսկ եթէ զկին ումն նշա-
նակէ, է՝ յատուկ. Բայց ըստ սե-
ռին՝ երկուքն ևս իգականք են:
Նոյնպէս և Թագուհին, և այլ.
Այծն, ըստ սեռին երբեմն է
իգական, երբեմն չէզոքական.
զի նշանակէ զծնօղն և զծառ:
իսկ ըստ քանակին միշտ հասարակ է.
Նոյնս՝ վահան, եթէ զզէնն ն-
շանակիցէ, ըստ քանակին է հասարակ
և

և ըստ սեռին չէզոք։ Իսկ թէ ըղմարդ ոք ասիցէ, ըստ քանակին է՛ յատուկ, և ըստ սեռին արական։ Ուղտն, թէ գծաղիկն նշանակէ, ըստ քանակին հասարակ է, և ըստ սեռին չէզոք։ Իսկ թէ ըղկին ոմն ասէ, ըստ քանակին է յատուկ, և ըստ սեռին իգական։ Այլ այսպիսիք բազումք գտանին. զորս ըստ տեղւոյն պարտիս նկատել։

## Յաղագս Ձայնի. Պրակ 28

Ձայնն է երեք. պարզ, բարդ, յարաբարդ։ Պարզ կոչի այն, որ միայն մի՛ բառ է. որպէս բարի։ Բարդ կոչի այն, որ յերկուց բառից մի անուն եղեալ է. որպէս բարեպաշտ։ Այլ յարաբարդ կոչի այն, որ իւրոյ բարդութեան այլ բարդութիւն առեալ է. այսինքն բարդութիւն առ բարդութեան յարադրեալ. որպէս բարեպաշտասէր։ Որ յերից բառից մի անուն եղեալ, կոչի ևս

կրկնաբարդ։ Իսկ եթէ գտանիցի
քան զերիս բառսն այլ աւելի բա
ռիւք բարդեցեալ, նաև այն յա-
րաբարդ կոչի․ բայց ոչ կրկնա-
բարդ, այլ՝ եռաբարդ․ որպէս բա-
րեպաշտասիրածին։ Իսկ կցուած
բարդեալ բառից՝ են երից լինի․
այսինքն՝ կամ այբիւ, կամ փո-
խարկութեամբ, կամ նոյնութեամբ․
Այբիւ, որպէս անձնասէր․
Փոխարկութեամբ, որպէս բարեպաշտ։
Իսկ նոյնութեամբ, լայներես։
Իսկ մի՛ գուցէ զածականն իմն
դոյականի եդեալ զատապէս,
կամ զանուն ընդ անուն կցեալ,
՚ի բարդելոյն կարծիցես․ Որպէս
բարի՛ մարդ․ սիմոն պետրոս։
Զի այն կոչի բարդ, որ յեր-
կուցն մի՛ անուն եղեալ է․ Իսկ
սոքա թէպէտ իմն միոյ անձին ա-
սին, սակայն երկու երկու ան-
ուանք են, շարակցիլք զատապէս
առ միմեանս և ոչ բարդեալք։

Նունս՝ Ձձայն, եթէ նշանակէ
զակն մեծ, ո՛չ է բարդեալ. այլ՝
ածական իմն դոյականի զատա̃պ
եդեալ: Իսկ եթէ նշանակէ զայն՝
որոյ ակն է մեծ, է՛ բարդեալ ա-
նուն. Յառաջնում կերպին՝ ըզ
մեծն և զակն սակաւ ինչ հեռի
գրելով 'ի միմեանց, զմեծն սուր
և զակն թո՛յլ պարտ է ընթեռնուլ.
Օրգոն, պօղոսի մեծ ակն. Իսկ
յերկրորդում կերպին՝ մօտ իրե-
րաց գրելով առանց միջոցի՝ ըզ
մեծն թոյլ և զակն սուր պա՛րտ է
ելուզել. Օրգոն, մեծա՛կն պօղոս.
Սոյնպէս են լայներես. արդոտն.

Հաստարմատ, և բ̃մք.

Նեզական անուանքն (որք մօտ
յառաջիկայդ յիշեցին) մինչ բար
դին ընդ այլում կամ ածանցին,
եզական կերպին բաղադրին.
Որ̃ խօսք, խօսակից. աղօթք, ա-
ղօթասէր. բարք, քաղցրաբարոյ,
և այլ: Գտանին թէպ̃տ և քէնի

բաղադրիլք, բայց յոյժ սակաւք
են. ոպ կարծիքական, և այլ՝
Երջապէս ծանիր և զայս,
զի լինիլ պարզ բարդ յարաճերդ՝
ոչ միայն անուան պատկանի, այլև
մուսոյն հանդիպի: Սակայն 'ի
յայլսն ձև ոչ եդաք, զի այսու
և այնք ճանաչին. Նաև այլոց
ոչ կարէ այնքան հանդիպել,
որքան անուան պատահի:

## Յաղագս Թուոյն. Գլուխ 29

Թիւն է երկու. եզակն, յոգն".
Եզական կոչի այն, որ թը
ւով մի է. ոպ ծառ. Յոգնակն
կոչի այն, որ աւելի՛ է քան զմին.
ոպ ծառք. Իսկ՝ հող, ջուր, ա
րիւն, և այլք այսպիսիք 'ի թիւ
մտանել ոչ ունին. զի ոչ ասեմք
մի հող, երկու հող, գ՟ հող, և այլ:
Սակայն վս՟ սակաւուն և բազ
մուն իրին՝ դնին սովորաբ եզա
կան և յոգնական. Ոպ հող, ջուր,


ար

արիւն ։ Հողք , Ջուրք , արիւնք ։
Այլ թէպէտ կարեմք ասել մի հող ,
երկու հող , և այլ , սակայն կու-
տեալ հողոցն ասեմք զայս և ոչ
ստուգապէս միոյ ․ այսպէս և այլքն ։
Այլ անուանք ոմանք անեզականք
են ․ որպէս խօսք ․ բարք ․ աղօթք ․
աղաչանք , և այլք բազումք ․
Այլ ոմանք անյոդնականք են ․
որպէս անեղ ․ եդեմ ․ աստուածածին ․
էջմիածին ․ ամենազօր , և այլ ։
Աշխարհ , երկիր , եթէ միայնակ
իմանին , անյոդնականք են ։ Իսկ
եթէ հասարակ անուն ճանաչին ,
ունին զյոդնականն սակս մաս-
նաւորացն իւրեանց որպէս
ցուցաք յերես 196 ։
Այն և ոմանք կոչեցեալք հաւա-
քականք ․ որք եզական կերպիւ
զբազմութիւն նշանակեն , բայց ոչ ընդ
նոյն անուան ․ Որպէս հօտ ․ տարմ ․
գունդ ․ բանակ ․ երամ ․ ժողով ․
ժողովուրդ , և այլք ։

Պասցի, (ոչ ըստ նոյն անուան։)
Զի հօտն՝ թէպէտ զբազմութի
նշանակէ, բայց ոչ ըստ նոյն ան
ուան. զի ոչ նշանակէ զբազում
հօտս. այլ զբազում ոչխարս.
Այս ըստ նոյն անուան, այսինքն
ըստ հօտ գոլոյն, հօտն եզական է
և ոչ յոգնական։ Որոյ յոգնա
կանն լինի հօտք։ Պյսպ̃ տարմք.
գունդք. բանակք. երամք. ժո
ղովք. ժողովուրդք, և այլ.
Իւ մ̃այն կոչին հաւաքականք,
որ զբազումն ՚ի միութի հաւաքեն՝
մինչ երևեցուցանեն. այսինքն՝
զբազում ոչխարսն մի հօտ. զբզ̃մ
թռչունսն մի տարմ, և այլն։
Նաև այս գիտելի է, զի յոյնք և
տրապք՝ զթիւս անուանց 3 դնեն։
եզական. երկուական. յոգնակն։
Զի զմին այլ կերպիւ ասեն,
զերկուսն այլ կերպիւ, և զայլ ա
նուանսն այլ կերպիւ։ Իսկ մեք եր
կուական ոչ ունելով, զայն ևս


ընդ

ընդ յոգնականսն համաթուեմք· զի զաւելին քան զմին՝ յոգնական կերպաւորեմք· Ո՛յսինքն, թէ մի ծառ է, ասեմք, ծառ· թէ բազո՛ւմ է, ասեմք ծառք· Նա՛ թէ միայն երկո՛ւ է, նոյնպէս ծառք·
Ո՛յսպէս և այլքն։

## Յաղագս Տեսակին· Գլուխ 30

Տեսակն է երկու· նախաատիպ և ածանցեալ·

Նա՛ տե՛ս, զի թէպէտ առ'ի դիւրել զուսումն Նորավարժից՝ զվերջս ածանցելոցն անդ յերեսն 42, միահամուռ զամ'ի միում շարի եդաք որպէս և ոմանք արարին, սակայն ըստ այլ հեղինակաց 'ի զանազան անուանս բաժանեցեալք են· որք կոչին կերպք ածանցելոց· և են այսոքիկ· Գոյական· Նիւթկն· Տեղական· Նախնական· Տնկա″ Ոգական· Դասական· Բազա″ Ստացա″· Պարունա″· Շատա″

Ռունա՛ Պակասա՛. Թաղդատա՛
Գերադրա՛. Լուռաւա՛. Մակրդ
դա՛. Յարմարա՛. Պաշտպանա՛.
Լշանա՛. Թայածա՛.

Գոյական կերպին վերջն է այսն.
Նիւթականին սոքա, եղէն, եայ, ի.
Տեղա՛, ըթ. Նախնա՛, ոանի, եան.
Տնկա՛, ենի. Իգականին, ուհի.
Գասա՛, որդ. Ռացա՛, ուրիան.
Ստացա՛, են և ս սոյնք, ոանի, եան.
Պարունականին, ստան, արան, ոց.
Շատա՛, ուտ, ենտ. Ռունա՛, հոր.
Պակասա՛ ակ. Թաղդատա՛, գոյն.
Գերադրական կերպին, եղ, գին.
Լուռաւական, ակ, եակ, էկ, իկ, ուկ.
Մակրդա՛, ոպ. Յարմարա՛, յուն.
Պաշտպա՛, պան. Լշանա՛, չան.
Թայածականին, ում, ուն, իուն, ու,
ոյն, ուստ, ած, ուած, ան.

Եւ բաց յեղերացդ ածանցելոց
որք ասացան մինչև ցայժմ, գր
տանին թէպէտ և այլք, բայց 'ի
վերջոյ դիցուք զայնպիսիս.

## Մեկնութիւն Նշանաց և Զօրու-
## թեանց Կերպիւք Ծանուցելոց:

### Պրակ 38

Գոյական ասի, զի զգոյութի
իւրն ցուցանէ թէ ինչ ցեղ
բնութի է: Որպէս երկնային, երկ-
րային, օդային, և այլ:

Նիւթական ասի, զի ցուցանէ
զիրն՝ թէ յինչ նիւթոյ եղեալ է.
որև նիւթոյն անուամբ՝ զեղեալն
նշանակէ. Որպէս փայտեղէն, երկա-
թեայ, պղնձի, և այլ:

Տեղական ասի, զի տեղւոյն ան-
ուամբ՝ զտեղացին ցուցանէ
թէ յորմէ տեղւոջէ է. Որպէս եգիպտա-
ցի, ջուղայեցի, և այլ:

Նախնական ասի, զի անուամբ
նախնւոյն կամ հօրն՝ զորդիս
կամ զայլ սերունդսն նշանակէ.
Որպէս պետրոս՝ որդի պօղոսի յօնա-
նու՝ ասի յօնանեան. և սերունդն
արշակայ՝ է արշակունի:

Տնկական ասի, զի 'ի տունկսն՝ բերոյն անուամբ՝ զբերողն նշանակէ, զծառն կամ զթուփն. Որպէս թզենի, արմաւենի. վարդենի, դդմենի, և այլ։

Իգական ասի, զի զմարդոյն իգական ցեղն բացորոշէ։ Որպէս սրբուհի, տիրուհի, դպրուհի, մաքրուհի, և այլ։

Դասական ասի, զի զդասակարգութիւն իրաց և իրակութեանց նշանակէ. Որպէս նախորդ, երկրորդ, երրորդ, չորրորդ, և այլ։

Բացական ասի, զի նշանակեալն սովմանութիւն, թէև իրի ուրուք ոչ դնի իբրև անուն. այլ գոլով պարզ էութիւն, իբրաց միայն 'ի բաղադրելեաց. Որպէս էութիւն ինչ՝ ասի կայ՝ և ոչ կայութիւն. մեծ՝ և ոչ մեծութիւն. խոր՝ և ոչ խորութիւն. և այլ. Բ. յսոքիկ բացյայտ. զի Աստուած կայ է և կայութիւն. մեծ է և մեծութիւն. խոր է և խորութիւն. Զայս կերպ

'ի տրամաբանութեա՛ն անդ լռա-
պէս ուսցիս։

Ստացկ՟ն ասի, զի զիրն՝ ուրուք ստացուա՛ծ, կամ նմա՛ պատկանիլ առ նշանակէ։ Որպ՟ ասի՝ սաղմոս դաւ՟թեան. ձի արքունի։ Նոյեան
տապան, տէրունի օր։

Պարունական ասի, զի անուա՛մբ պարունակելոյն՝ զպարունակօղ տեղին ցուցանէ. որպ՟ Հայաստան,
ծաղկարան, հիւրանոց։

Շատական ասի, որ 'ի տեղւոջ իմիք շատութի՟ ինչ նշանակէ. որպ՟
ծառուտ. օձուտ. մրգաւ՟էտ.
ջրաւ՟էտ, և այլ։

Ունական ասի, զի զէութի՟ ինչ՝ առ ինքեան ունեցեալ իրին անուամբն կոչէ։ որպ՟ շնչաւ՟որ. թևա-
ւոր. ձիաւ՟որ, և այլ։

Պակսին ասի, զի 'ի կենդանւոյ
իմեքէ՝ անուն ունակ մասն ինչ պակասեալ գոլ նշանակէ. և այն պակասեալ մասին անուամբն ըղ-

բոլորն յորջորջէ. որպէս ասի թեւատ.
ձեռնատ. պոչատ, և այլ:

Բաղդատական ասի, որ է համե֊
մատական, զի իր առ իր համե֊
մատեալ՝ նուաղ քան զայն, կամ
առաւել նշանակէ: որպէս ասել,
տունս այս՝ փոքրագոյն և հնա֊
գոյն է քան զայն. զի այն՝ մեծագոյն
և նորագոյն է քան զայս:

Գերադրական ասի, զի զգերա֊
դրութիւն ունակութեանց նշանակէ.
որ է սաստկութիւն և յաւէտութիւն:
որպէս համեղ, ձայնեղ. ցաւագին,
տրտմագին, և այլ:

Նուաղական ասի, զի իրն զոր ասէ,
փոքրիկ գոլ նշանակի: որպէս
Նաւակ. որդեակ. ջորեկ. հացիկ.
որբուկ, և նմանք.

Մակրդական ասի, որ է շաղախա֊
կան, որ զիր ինչ՝ նիւթիւ իւիք
շաղախեցեալ գոլ ցուցանէ.
որպէս մրոտ. ջրոտ. իւղոտ.
աղտոտ, և այլ:

Յարմարկին ասի, զի այս ինչ իր՝ թէ յինչ իր լինիլ յարմարի՝ զայն բացայայտէ և այնպ կոչէ. ոպ փիլոնցու. խորանցու. գաւա֊ղանցու. քննյացու, և այլ.

Պաշտպանական ասի, որ զվերա֊կացութն և զհովաբարձութիւն ուրուք ցուցանէ իւր՝ այնր իրի՝ որ նմա յանձնեցեալ իցէ. որպէս այգեպան. պարտիզպան. ձիապան. ջորեպան, և այլ.

Նշանակին ասի, զի զբազմազան իմացուածս բառից՝ սովոր նշա֊նակեմք և ծանուցանեմք. որպէս յայսմիկ գրքոյ և յայլ սոյնպիսի տեսանի. Աստորում ասի, ուղղա֊կան, սեռական, գործիական, և այլ. Գոյական, նիւթական, նախ֊նական, և այլ. Բանական, շնչա֊կան, մարմնական, հոգեկան, և այլք յոյժ բազումք.

Բայածական ասի, զի 'ի բայէ՝ ածեալ լինի և անուանանայ.

ուստ դարձայ, դարձումն | շարժիլ,
շարժումն | հնչել, հնչիւն | հասի,
հասու | երեւիլ, երեւոյթ | եւ այլն·

Ո՞րն է մեկնումն ածանցելոցն
կերպից այսքան:

Բայց գիտելի է աստ, զի համայն
եզերքդ ածանցելոց, ոչ միշտ
նոյնպէս նշանակեն որպէս անուանքն,
Այլ բազումք ՚ի նոցանէ ՚ի բաց
ուրեք այլազգ քան զոր կոչեցան
՚ի կերպարանին. Զի զոր կերպ
շատ կերպարուցեն, ըստ նոյն ան-
ուան յորջորջեցան գոյական
նիւթական եւ այլ:

Զորօրինակ՝ վերջս այս՝ եայ,
՚ի շատ ուրեք ոչ նշանակէ իբրեւ
նիւթական: Որպէս արամեայ · քա-
ռաչեայ · հասակեայ · արեւմտեայ ·
երեքօրեայ · ճախարակեայ · գոր-
ծունեայ · պաշտօնեայ · քրիստո-
նեայ, եւ այլք: Որոց եւ ոչ մի ու-
նի զնշանակութիւն նիւթականի ·
Զի՝ արամեայ, է իբրեւ նոյն ·

քառաչեայ, հոյ։ հասակեայ, եղ
արեւմտեայ, ոչխ։ Եւ այլքն այլապ
ըստ որում ճանաչին.

Սերջս այս՝ ի, բաց 'ի գոլոյն
նիւթական, այլապ նշանակութէ
ըստ մեծի մասին ածանցէ՝ զբար
դեալսն 'ի թուական անուանց.
միորձի. երկդիմի. եռանկիւնի.
քառոտանի, և՛՛։ Նաև՝ արամբի.
այլազգի. տմարդի. ձրի. մոլի. ար
տուղի, և՛՛։ Լոն լինի առոմանս՝
նի. ոչ նախնի, յայտնի, գաղտնի։
Իսկ՝ նոճի, սօսի, գիհի, կիպարի՝
են տնկականք։ որք զանպտուղ
ծառոյ ասին։ Իսկ՝ ծարանի, է՛
իբրև ճուղ։

Ցի, բաց 'ի գոլոյն տեղական,
լինի և ս ցեղական. ոչ վրացի,
եբրայեցի։ Լոն մերթ զաղանդն
ցուցանէ, մանիքեցի, սադուկեցի
Լոն այլ ուրեք այլապէս. որպէս
առնացի. կանացի. խելացի. մը
տացի. դրացի, և այլ.

Անուն, եւս, ուրեք նախնականին
են, ուրեք ստացականին։
Եթէ ուրուք զսերունդն նշանա
կեն, են նախնականք։ Իսկ եթէ
իմն ինչ որ նորա՛ է՝ կամ նմա՛ պատ
կանի՝ զա՛յն ցուցանեն, են ըստա
ցականք։ Նախնականն 'ի յատկէ
միա՛յն ածանցի։ Իսկ միւսն կարէ՛
ածանցիլ 'ի յատկէ և 'ի հ̃րկէ։
Նայց՝ ուսի, յաճախ 'ի պետուէ
որոշմունսն գնի 'ի հայս։ որպէս
արծրունի. բզնունի. գնդունի.
և բագրումք։ որք կարեն կոչիլ
գաստապետականք։ Այս ուրեք այլ
կերպի՛ւ. ո՞պ ծերունի. պահունի.
գողունի. գտունի, և այլ։
Այս, բաց 'ի գոլոյն նախնական և
ստացկն, լինի և զօրագնդական.
ո՞պ ասի՝ մանասեան գունդն. սե
բաստեան զօրքն. և այլ։ Լինի և
հետևողական որպէս և Եբբայն
անուանէ։ կեփայեան. պ̃ղսեան.
ոսկեանք. հուփսիմեանք։

 Որև

Որև ուրեք լինի անս, որպէս,
վարդանանք, սուքիասանք.
Տես յերեան նորին գրոյն, 2. 0. 283.
Ածանցէ և ի՞ղուամ զթուաբարդ-
անուանսն. ո՞պ՝ երկփեղկեան.
եռամեան. երեքտակեան. չորեք
կերպեան. եօթնարփեան, և այլ՝
Նաև այսոքիկ, ամենեքեան. եր
կոքեան. երեքեան, և այլ.
Նաև ուրեք այլապէս, քաջեան,
Յ մաՅ 12. ներբողեան, վաղորդեն,
երեկեան.
Նաև, ուրեք զնիւթականին նը
շանակէ. ո՞պ բրդենի. ոքէ Բէւ՞ղէն.
Ուրեք զբնութի և զբարս ցու-
ցանէ. ո՞պ վայրենի ծառ. վայրենի
բարք. Արբեմն զմնացուածս ՚ի
ծնողաց, հայրենի տուն. մայրենի
ինչք. Նաև ուրեք այլա՞պ, խողենի
կերպո՞նք. դայլենի հայեցք, և''.
Դ. այլենի, դառնենի, և այլք,
կարեն լինիլ նիւթինք, և նշանա
կանք. Ո՛րգոն, դայլենի մուշտակ՝

է այսինքն գայլեղէն. Գայլենի հայեցք՝ է խեթ գայլական.

Ուհի, ուրեք անուամբ հօրն զդուստրն նշանակէ. որպէս՝ արդարուհի. Այ՛ ուրեք՝ զինքն էգ գոլ ցուցանէ. ոպ սրբուհի. Յառաջնում կերպին՝ է նախնական և իգական. իսկ յերկրորդումն՝ է միայն իգական.

Թագուհի, է կամ կին, կ՟ քոյր, կամ մայր, կամ այլ սերունդ և զարմ արքայի. և կամ ինքն իսկ կին արքայ. Այս եդեալ՝ եգիպտուհի. քահանուհի. սամարուհի. որ է՛ տեղական և իգական.

Սա զուգս վանանդեցին և անբանի՛ առադրելով ասէ, իշուհին բաղսամու. Սուրեան և ձիուհին. որ Ը լաթինաց է և ոչ Ը մեր.

Որդ, երբեմն զգործառնութի ցուցանէ, ոպ լողորդ. որսորդ. ցանցորդ. միջնորդ. առաջնորդ. Երբեմն զներկայ իրակութիւն.



ոպ

որպէս նաւորդ, ճանապարհորդ՝
Եւ ուրեք ըզհաղորդութիւն. որպէս
լծորդ. կցորդ. ադորդ. բաժնորդ.
հասարակորդ՝ Ունի և աւելորդ.
հակառակորդ։ որ նոյն է աւելի,
հեռի. Իսկ մնացորդ, է մնացուած.
Եւ մինչ ըզթիւսն ածանցէ, թէ ը
անուան դնի, է դասն և ածական
նորին։ որգոն, եւթն նշան, երրորդ սե
ղան, և այլ։ Իսկ մինչ ը ինքեան
դնի, լինի շաղկապ. որպ ցուցան՝
Առաջին կերպին՝ ո՛ն շեշտանայ՝
Իսկ միւսոյն՝ է՛չն շեշտանայ, և
ըզկնի դային դնի կամ բութ՝
կամ ստոր, . Եւ մինչ լինի դա
սական, ո՛չ ասի միորդ, կամ միե-
րորդ, կամ առաջնորդ։ այլ՝
նախկին, կամ առաջին. կամ նա-
խորդ, կամ առաջներորդ.
Իսկ ՚ի լինելն շաղկապ, դնի՝ նախ,
կամ առաջին, կամ նախ և առաջին։
Յորին վր այսքան։
Արդ, երբեմն միոյ երի կամ իրա

կուն ցուցանի տեղի, և ո՛չ բազ-
մուն. որպ՟ մննարան, հարսնարան, արքայարան, տպարան, եփարան, լուացարան, և այլ: Երբեմն ըզ բնակութ՟ նշանակէ անզանազան՝ Թէ միոյ Թէ բազմաց: Որպ՟ կայարան. օԹարան. բնակարան:

Ըստ այսց է և օգնականն. յենարան, յեցարան, պատսպարան:

Իսկ՝ գելարան, բացարան, նուագարան, են գործիք: Տեսարան, կարէ գոլ ակն, կամ դիտանոց:

Իսկ 'ի բառս՝ նոյն, 'ի տեղի արանի՝ դնի աղան. որպ՟ կախաղան:

Ոց, սմ և ս ուրեք զմիոյ նշանակէ: որպ՟ մատնոց. ձեռնոց. Թևնոց. գլխանոց. եփոց. հալոց. դարբնոց. լարոց: Ուրեք զգործիք. որպէս խարտոց. յօտոց. փարոց. գելոց:

նոյ, Այս կերպ Թէպէտ ունին ասի, բայց զայն ունիլն ասէ որ 'ի յանձն երևի. զի որ ունի զձի



կամ

կամ զԹուր 'ի պաշտեամի, ոչ ասի ձևաւոր Թուաւոր. այլ այն՝ որ առ լինելն ունի զայսոսիկ:

Իսկ փոքրաւոր, մեծաւոր, գլխաւոր, Թ͞ւաւոր, ոչ վ͞ս ունելոյ ինչ ասին, այլ զկացուած կարգն ցուցանեն. Ուղղաւոր, ուղղարկաւոր, զներկայ իրակութի ցուցանեն: Երկնաւոր, երկրաւոր, են իբր այլն: Եկաւոր, աղաչաւոր, աշխատաւոր, են իբր ող:

Գոյն, որ ըստ ինքեան գնի և ոչ բաղդատի ընդ այլում, է ըստ ինքեան բառ, և ոչ ածանցումն: Ս͞պ ասել՝ մեր խաղողն կարմրագոյն է, իսկ ձեր այգւոյն սևագոյն: Այսոքիկ՝ են բարդեալ բառք և նախադասութիւք. չի գոյն աստ ոչ ածանցումն, այլ զգոյն բառն ցուցանէ, որ է ըմբնի: Իսկ լինի բաղդատական՝ մինչ ասի, մեր խաղողն կարմրագոյն է քան զձերն. իբրու առաւել կարմիր:

Գուին, սա և ը՟ բաղդատականին է.
մերթ ըստ ինքեան բառ լինելով,
և մերթ ածանցումն գերադրականին.
Զորօրինակ յասելն՝ տունս այս
զէ ծնորադրինէ՝ մեզ չէ վայելուչ,
է՛ բաղդեալ և ոչ ածանցումն.
Իսկ յասելն, լալադրին դիմօք սպա
ղանիմ առ քեզ, է՛ ածանցական։
Երրութէ յորդ արտասանօք·
Ա՛ն, ուրեք իբր ող նշանակի.
ոմ՟ գտակ, գիտակ, ընդունակ·
Ուրեք իբր ամենորդ յարմարիչ
բառի։ որպէս յարակ· խառնակ·
կուտակ· նշանակ· փոխանակ· հան
գունակ· ոլորակ· բոլորակ։ Սու
դնի 'ի բարդեալսն՝ ունոն։ բերու
նակ, շարունակ, կենսունակ.
Տես՝ անեղական անուն ձեռնս,
սէրէ կցեցեալ· ոմ՟ և օրէնսու
սույց, և այլ։ Երթ յերեսն 202.
Սան, ձայնս՝ որդեակ, սովորակ
կոչական դնի· թէև գտանի ու
րեք ուղղական։ և է՛ կերպ փա

ղաքշաբար խօսելոյ։ Ուստի այս
կերպ նուաղական, յայլոց փո_
ղաքշական ասի. որ է խանդաղա
տական, կամ գորովական։ ղի ե_
ղերքս, ակ, եակ, եկ, իկ, ուկ,
զայն՝ ը̃ որում կցին՝ ուրեք փոք
րիկ դող ցուցանեն, և մերթ սի
րուն կամ խղճալի երևոյեն։
Այնս ևս, կցեալ ընդ Թիւս,
իբր առանձնութիւն ցուցանէ.
ոպ̃ երկեակ, երրեակ, քառեակ,
և այլ։ ըստայսց է՝ միակ.
Ինչ, ցոյին եդեալ՝ ցիկ, լինին իբր՝
ող։ ոպ̃ դիեցիկ, երգեցիկ, մու_
րացիկ։ Որք ունին զնշանակութ̃
ներգործական ընդունելութե̃։
Գոյ և ըստ կրաւորակնի, ընկեցիկ։
որ է իբր ընկեցեալ։ Իսկ ծնդիկ՝
պարսիկ՝ ցեղականք են.
Ուկ, ըստ նուաղականին՝ կցեալ
՚ի բառս՝ Գիրք, լինի ոյկ՝ գրքոյկ։
Կայ և այլ մի ուկ, որ զաստկութ̃
նշանակէ. ոպ̃ քաղուկ, վաղուկ,

խածուկ, կտրուկ։ Սոքա թէպ՟տ չեն ըստ գրոց, բայց և ոչ են յոյժ գեղջուկ։ Իսկ՝ հեղուկ, ոչ ըղ սաստկութ՟ի, այլ պարզ զհեղանո ղութ՟ի նշանակէ. որպիսիք են, ջուր, ձէթ, գինի, և նմանք։

Գեղջուկ, նշանակէ՝ աչան։
իբր գիւղական։

Ոտ, ուրեք զգերադրականին նը շանակէ. ո՞չ ջլոտ. մսոտ. սրտոտ։ Ուրեք զմարմնոյ ախտն։ ո՞չ ցա ւոտ. բորոտ. ջերմնոտ. խժոտ։ Եւ ուրեք զհ՟կն. ո՞չ երկչոտ. վեհերոտ. նախանձոտ. յաչաղկոտ։ Լուսոտ, է լուսաժէտ, լուսա նացած. որ 'ի նորին լուսոյն զօ րանայ. իսկ արհմրհոտ, է՝ օչ։

Ցու, մահկանացու, զգոյականին նշանակէ։ Իսկ մահացու, է՝ իբր ընդունելութ՟ի 'ի ներգործա կան նշանակութ՟ն. մահացուցիչ։ Իսկ՝ մակացու, ոչ է յայսցանէ. զի սորա տառս՝ ց, իւրական է։

 Գան

Պան, մինչ ասի՝ պահպան, պահա-
պան, պաշտպան, ոչ նշանակի յա-
տուկ ինն ինչ իրի դոլ պահապան
ով այգեպան. այլ հասարակօրէն
և անորոշ ցուցանի։ Իսկ պար-
տապան, է՛ այլ ինն. որ զինքն ըղ-
պարտուց ունօղն նշանակէ։

Այս է՝ իմացումն նշանականին.

իբրու՝ ական։

Ական, կերպս այս՝ թէպէտ նաև
զգայական անուն՝ ածական առնէ.
ով տեղական, բուսական, և այլ։
Բայց այսոքիկ, ազգական. զօրա-
կան. շարական. քերական. օգնա-
կան. վարձկան. մուրացկան, և
նմանք, գոյականք են. Որք թէպէտ
են ածանցեալք, բայց ոչ նախա-
տիպ իմաստ լինին Որպիսիք են,
փոքրաւոր, մեծաւոր, պատաւոր,
թագաւոր, և նմանք։ տես 220

Այս կերպ՝ կան, իբր զձեռք և
գործիք շարադրասիրաց, քան
զայլ եղերս ածանցելոց՝ յանձին
ծգ

դան 'ի կեր ։ Ո ի զպէսպ՛ մտս
բառից սովոր՛ ցուցանեմք ․ որպ՛
իմեր անդ անցու՛ ։ Մ՛այսր կեր
պի ոչ յիշեցաք թէ զայլ և այլ
նշանակէ ․ զի նշանակեալքն ստ
վա՛՝ բազում և զանազանք են
Որ 'ի քաղուածուրեք զստացակա
նին ցուցանէ ․ որպ՛ արքայական
դահոյ , քահանայական զգեստ ․
և այլուր այլապէս ։

Ո, այս կերպ՝ ըստ մեծի մասին զրադրեալն ածանցէ ․ որպէս
գինարբու ․ տաղերգու ․ հացբըր
դու ․ հարսնածու ․ ձայնարկու ․
աշառու ․ հողաբաժու ․ մերձակա
յու , և այլք ։ Իսկ պարզք , տըդու
ածու ․ առու ․ հասու ․ մեծարու ․
մակացու , և այլ ։ Այսր կերպի
մինչ հանդիպի՝ ուրիշն , ըննիլ
կրկնածանց , յերկուց միոյն բառ
նի մասնկա՝ ու , զի թեթև և հա
մեղ գայցէ ։ Որգոն՝ գինարբուքն ,
և ոչ գինարբուութն ։

Սոյն, այս կերպ՝ ուրեք զմակ_ բայսն ածանցէ ո՟րպ և անդ ասա_ ցաւ 158. Բայց ուրեք կցի և ը՟ անուան և առնէ զնա սկզբնէն. ո՟րպ 'ի յերկնուստ. յա՟ծուստ. յաթոռուստ, և այլ.

Նա, ո՟րպ խթան. շրջան. փական. կապան. շարան. պատուիրան. նուիրան, և այլ: Սոցա մեծ մասն անեզականք են: որպէս հոսանք. զբօսանք. յանցանք. պալծանք. պատրանք. տանջանք. աղաչանք. աղերսանք. աշխատանք. ապաշխա րանք, և յոյժ բազումք.

Նոյս կերպ՝ անս, յումանց 'ի յոյժ սակաւ բայից՝ ելանէ՝ ացս: Ո՟րպ գնացք. մնացք. ընթացք. խմացք. մոռացք: ըստ այսց է և՝ հայեցք.

Նոյնպէս այս՝ ան, աշխարհօրէն բա_ ռին, ուրեք զառանելութի ցու_ ցանէ: ո՟րպ ուտան. խուկն. հաշան. զուան. վազան, և այլ:

Նաև վ՟ն զանազան նշանակութե

եղերացդ ոմանց՝ (թէ և այլք մի
նացին յասացելոց և յասելեաց
բա՛ն լիցի այսքան. վա՞ զի այսո-
քիւք և այնք ճանաչին։ Որք թէ
և ոչ ճանաչիցին, չէ ինչ կարի
պակասութի. զի հարկաւոր սոցին
այն է՝ զի ճանաչիցես միայն թէ
ածանցեալ է. Իսկ գիտել թէ
առ ո՞ր կերպ վերաբերի, կամ
զո՞ր նշանակութի ունի, որքան
առ քերթողութին չէ՛ 'ի յոյժ հար
կաւորութէ. զի այն՝ բառագիտու
թիւն է և ոչ քերթողութիւն.
Բայց զի օգնութի մեծ ընծայի
քերթողութե 'ի և զայնպիսիս գի
տելոյն, վա՞յ սակաւ ինչ և յայն-
պիսեացն եդաք.

Արդ՝ յարելով 'ի կարգ ասացե
լոյդ 'ի վերոյ՝ նաև զայս գիտել
ոչէ խոտելի, թէ ոմանք 'ի ծայրից
ածանցելոցն՝ ոչ մի և նոյն կեր-
պի՛ կցին 'ի նախատիպսն. և տես
'ի հետևեալ օրինակսդ.



Ո.ցի

Ցի, եցի, ցի. որպէս պոնտացի · համթեցի · վանեցի Ստան, եստան, ստան. հայաստան · ասորեստան · հապաշստան. Ոց, անոց, ենոց. դպրոց · հիւրանոց · վարդենոց. Աճէտ, եճէտ. հօգաճէտ, գինեճէտ Ագոյն, եգոյն. չարագոյն, բարեգ" Ագին, եգին. ցանագին, մոլեգին. Ցու, ացու, եցու. փիլոնցու · տիրա ցու · գաւեցու. Ական, եկան, կան. մարմնկն · հոգեկան · վարձկան.

Նաև գիտելի է, զի զածանցեալն ոչ միայն 'ի ձայնէն պարտիս ճա նաչել, այլ և 'ի նշանակութէն. զի ըստ ձևոյ ածանցելոց՝ բա զում նախադրիւք գտանին. Որօրինակ՝ ձայնքս, դամթեան, մատեան, թէպէտ ՟Բ վերջին եղե րացն մի և նոյն են, բայց ըստ հե տևման տեսակին զանազանք են. զի դամթեանն՝ ածանցեալ է, և մատեանն՝ նախադրիւ. այսպէս և զայլսն իմա.

Փորձ. գիտելի է, զի տ̃մ ածան-
ցեալք՝ երիս որոշմունս ունին․
այսինքն՝ իրակին, ձևական, միջին․
Իրական այն է, որ նախատիպն և
ածանցեալն զանազանին յիրերաց
ոչ միայն ձայնիւ, այլ և իրօք և
նշանակութ̃բ․ ո̃պ ջուր և ջրային՝
այլ և այլ իրք են և ոչ մի․
Իսկ ձևական այն է, որ նախա-
տիպն և ածանցեալն՝ ձևով միայն
զանազանին յիր̃րց և ոչ իրօք ևս․
որպէս ձի, և ձիակ՝ թէպէտ ըստ
վերջաւորութ̃ցն զանազանք են,
սակայն միևնոյն բառ են երկո-
քին․ զի ձիակն ոչ այլ ինչ է,
քան թէ փոքր ձի․ Ի̂ միջական
այն է, որ 'ի մէջ է իրականին և
ձևականին․ ո̃պ քար և քարեղէն՝
ըստ իրականին այլևայլ նշանակու-
թիւս ունին, և ըստ ձևականին՝
միևնոյն իր են երկոքին․
Փորձ. գիտելի է, զի տ̃մ ածան-
ցելոց պարտիս ճանաչել զնախա-

տիպսն՝ անուն է արդեօք, թէ այլ մասն. զի թէպէտ վերջին կերպին միայն անցանէ բայածական, բայց և յայլոց ոմանք 'ի բայից ածանցին. Որպէս խնդամ, խնդութիւն. Երգեցի. երգեցիկ. Իմացայ, իմացական, և այլք սոյնպիսիք։

Իսկ ածանցեալքս՝ ոչ թէ յանուանէ և 'ի բայէ միայն, այլ յամենայն մասանց կարեն ածանցիլ. թէպէտ ոչ յաճախ, այլ ցանցառակի. Որպէս յիշողութիւն. իւրական. նոյնութիւն. զատական. որքանութիւն. իսկական. թէութիւն, և այլ։ Որս յաճախ քան զայլսն՝ ընդունելութիւն ածանցի. ըստ որում իբր անուն 'ի կիր արկանի.

Ա՛յն որպէս 'ի վեր ասացաք, են և այլ վերջք ածանցելոց. որք ոչ այնքան են յայտնիք, որպէս եդեալքն մինչև ցայժմ. Ա՛յն են սոքա.
շան. սան. անք. ատ. եատ. իատ. գար.
ծէտ. ծոտ. ծուտ. ին. ծոյ. չէն. չին.

ունդ · ուրդ · ութ · մն · անի · անոս · ոսի,
և այլք: Ո՛րգոն, սրբաղան, վիպա
սան · սպանդ · ուրաստ · պահեստ ·
հնդիստ · ցա՛նագար · ախտաժէտ ·
նենգժոտ · ժանտաժուտ · վերին,
ներքին, խորին, ստորին · կուածոյ ·
ծակոտկէն · նախկին, երեքկին,
չորեքկին · ծնունդ · խորհուրդ ·
քամուք · պաշտօն · պիտանի · հե-
րովդիանոս · ջնոտի, և սոյնպիսիք:
Յորոց ոմանք միոյ բառի միայն
հանդիպին · ոմանք երկուց կամ
երից · և ոմանք այլ ա՛ելեաց:
Իսկ յաճախ քան զայլսն՝ են, 'ի
գործ ածի · որ առ նշանակմա՛նն
վերաբերի: զի և իմացումն ա-
րին՝ է՛ ոպ՟ անձն ·
Պ-նի և՝ այ, ածանցակ՟, ը՟ որում
ասի, անիմայ · անխնայ, և՛՛ ·
Ե՛ այսոքիկ, ոն, գէն, կն, ուշ,
'ի ջնոյն մերոց նախնականի է-
ղերք եդեալք են: Երեքն առա-
կան, մին իգական: Ո՛չ վաղորշակ՝

որդի Վաղարշայ. Թիրասդէն,
որդի Թիրասայ. մանանէճ և մա
նանուշ, որդին և դուստրն մա-
նանայ։ բայց սոքա այժմ չեն
կիրառնլիք։

Ա՜րդ՝ մի՛ դուցէ զբարդեալ
անունն ածանցեալ, և զածան
ցեալն բարդեալ կարծիցես.

Զի ածանցակերտ մասնկունքս՝
ային, ուշեն, և այլն՝ ոչ են բառք ըստ
ինքեան. այլ՝ են աննշան ձայնք.
և գալով առ նախատիպսն, կազ
մեն զնս ածանցականս։ Իսկ մա
սունքն բարդեալ բառից՝ ըստ
ինքեանց բառ են. Նա՛ այս է
զանազանութի ածանցականին
և բարդեալ բառին.

Ա՜ վասն տեսակի անուանց և
ածանցելոցն այսքան
մինչև ցայժմ.

Յետ այսորիկ ըզ հոլո վոց,
Նմա առաջարկին ինչ ասե լոց.

# Յաղագս Հոլովմանց Անուանց Ընդհանրական Սեռիցն։

## Գլուխ 32

Հոլովք անուանց՝ թէպէտ 'ի նախակրթութեան անդ, որքան առ 'ի վարժիլ նորուսիցն եդան 'ի կարգի, սակայն որքան առ 'ի գիտել զպէսպիսութիւնս իւրաքանչիւր կերպիցն՝ աստէն այժմ և յաղագս այնց սակաւուք ինչ յիշեսցուք։

Ա՛ գիտելի է նախ, զի երկուեղերքս սեռականաց, այ, եայ, միայն յատուկ անուանց պատկանին։ Ա՛ երեքս, ի՛ ի՛, ոյ, ու, լինին հասարակաց և յատկաց։ Իսկ այլքն ամենայն՝ են միայն հասարակաց։ Ա՛ յայտ է թէ, յատուկ անուանք ա̅ հինգ կերպից միայն գտանին. ի՛ ի՛, ոյ, ու, այ, եայ. և տես 'ի ներքոյ։

Ի՛ ի՛, որպէս անտօն, բարսեղ,



գրի

գրիգոր, դաւիթ, պետրոս, պօղոս,
ներսէս, մովսէս, դանիէլ, մա-
նուէլ, եղիսէ, եղիշէ, յուդա։
Աննա, մարթա, բերսաբէ, եղի-
սաբէթ, հռիփսիմէ, գայիանէ։
Պօնտոս. եգիպտոս. այսինչպօլիս
թաբօր, հերմոն, տօրոս։ փիսոն,
գեհոն, նեղոս։ այբ, բեն, և այլն,
թարց յոգնականի։
Ոյ, որպէս աշոտ, օշին, հեթում,
թաթուլ, շապուհ, մամիկոն,
խաչատուր, տիրատուր, սանատրուկ։
Սանդուխտ, գորանդուխտ, խոս-
րովիդուխտ։ Կարին, զմիւռին,
պաղեստին, գոմոր, արճէշ, բջնի,
արկուռի, ափրիկա, սարդիկա,
թիւատիր, այսինչպօլիս. սեպուհ,
արցախ, և այլք։ Իսկ 'ի տառիցն՝
ին ինոյ, յի յիոյ։
Ոռ, որպէս աբգար, ղազար, խոսրով,
յօնան, փոկաս, յակօբ, յովսէփ,
աբրահամ, բարաղամ, եպիփան,
յովասափ, եղիազար, յօհաննէս

յօհաննու։ Մուշ, սղերտ, բասէն, տաթև, ծայդան, երևան, արտաշատ, ալաշկերտ. լիբանան. յորդանան, և այլ՛

Իսկ յատուկք կերպիցս՝ այ, եայ, եղեալք են ՚ի կարգս հոլովմանց յերեսսն 29. 30.

Այլ գիտելի է, զի յատուկ անուանց յոգնական դիւր հազիւ հանդիպի. վսն յոգնական հոլով ոչ եգաք նոցին. զի ՚ի պիտոյանալն՝ ոչ է դժուարին գիտել զյարմարն ըստ իւր կերպին կամ որպ ձայնին վայելէ։ Սատի իմեր՝ յատուկ զիւրաքանչիւրոց կերպիցն հոլովմանց ասելի է.

Ս[illegible] Հոլովումն՝ ի, իէ։

Ոմանք ՚ի յատուկ անուանց կերպիս այսորիկ՝ առ ուրեք ծայրատ հոլովին. որպ մատթէոս մատթէի. ՚ի տեղի ասելոյ մատթէոսի։ Նոյնպէս թաթէոս թա



թէ

թձէի · հերովդէս, հերովդէի,
կամ հերովդի. և այլ:

Յայսպիսեաց ոմանք առեօթնրդ կերպն դիմեն · որպ փիլիպպոս, փիլիպպեայ: անտոնինոս, անտօնինեայ: բարդողիմէոս, բարդողիմեայ. հերովդէս, հերովդեայ, և այլ: Սրոց ոմանք 'ի կոչականումն էին եղերին. ոպ ով պետրէ · փիլիպպէ · Պատանի և ուղղական այսպիսի · բարդողիմէ յետոյ եկեալ: Իսկ այս՝ վասն կարճելոյ եղեալ է զձայնն.

Ոնո՛անք ոմանք յայլ կերպից՝ և շատքն 'ի յերրորդ կերպէն, 'ի բարդիլն Ը այլում, կամ 'ի յառանուլն զմանիկս՝ ան, ըստ այսմ առաջին կերպիս հոլովին. Սրգոն Նիւթ · նիւթոյ · նիւթով: Հրանիւթ · հրանիւթի · հրանիւթին.
Աննիւթ · աննիւթի · աննիւթին:
Արատ · արատոյ · արատով. բազմարատ · բազմարատի · բազմարատին.

անարատ· անարատի· անարատին ‖
Խրատ· խրատու· խրատու ‖ բա-
րեխրատ, անխրատ· խրատի, խրա-
տին: Հանգիստ, հանգստեան,
հանգստեամբ ‖ նախահանգիստ,
անհանգիստ· հանգստի, հանգըս
տին: Մեղք, մեղաց ‖ ծղմամեղք,
անմեղք, մեղից: Միտք, մտաց ‖
անմիտք, անմտից, և այլք·

## Երկրորդ Հոլովումն ի, աւ:

Այս կերպ՝ եղական սեռա-
կանաւն ոչ զանազանի յա-
ռաջին կերպէն· զի երկուցն ևս
լինի, ի: Որպէս սիրտ սրտի· ազգ. ազ
գի· Այլ զանազանին ՚ի միմեանց
երկաքանչիւր գործիականօքն և
յոգնական սեռականաւն: Որպէս
սրտիւ, ազգաւ: սրտից, ազգաց:
սրտիւք, ազգօք: Այսպէս յատուկ
անուանք՝ որոց սեռականն լինի,
ի, յառաջին կերպէն համարին·
ոչ ըստ եղական սեռականին,

 զի

զի այն՝ երկուցն մի է որպէս ցուցաւ։
Նաև ըստ գործիականին և ըստ յոգնական սեռականին. Որպէս պետրոս պետրոսի, պետրոսին։
պետրոսք պետրոսից, և այլն։
Նու այս կերպ ևս վերաբերին ոմանք յայլոց կերպից 'ի բարդիլն ընդ այլում. Որպէս սէր, սիրոյ, սիրով։ բարեսէր, բարեսիրի, բարեսիրաւ։ Պատիւ, պատուոյ, պատուով։ մեծապատիւ, մեծապատուի, մեծապատուաւ, և այլն։

### ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ՝ ՈՅ, ՈՎ։

Անուանք ոմանք հասարակք կերպիս այսորիկ՝ կարեն և ինով եղերիլ 'ի ներգոյականում ըստ սեռականի նախկին և երկրորդ կերպիցն. Որպէս մարմին մարմնոյ, 'ի մարմնի։ Գետին գետնոյ, 'ի գետնի։ Նաև յարկ, յանկողնի, 'ի դբի, 'ի սափորի, 'ի սեղանի, և այլն։
Նաև գործիականս՝ ով, դնի 'ի շատ ուրեք ոյ։

Անուանք տեղեաց՝ ի անար-տեալք՝ առ այս կերպ վերաբե-րին․ բայց գործիականն լինի ու․ Որպ ասիա, ասիոյ, ասիաւ․ Կարէ սակայն լինել և՝ ասիու, կամ ա-սիայու, կամ ասիայի, ասիայիւ․ Այնպիսիք են, բերրիա․ գաղատիա․ դաղմատիա․ եթովպիա, և այլ։ Մարդ մարդոյ մարդով․ յոգնա-կանն լինի ըստ եզկնի անուանցս՝ ախճիկ, ծաղիկ․ Ուղղ․, մարդիկ, մարդկան, մարդկամբ, և այլն․ Բայց գտնեն ոմանք՝ մարդիկք, մարդկանց, մրդկամբք․ Գտնի ևս ըստ իւր կերպին․ մարդք, մար-դոց, մարդովք․

## Չորրորդ հոլովումն՝ ոյ, եան․

Որոյ անուան ուղղականն ինով եղերի՝ սեռականն նորին լի-նի, ոյ․ Որպ այգի․ այգւոյ․ այրի․ այրւոյ․ այլազգի․ այլազգւոյ․ և այլք սոյնպիսիք․ Բայց՝ փաւանկքն



և

և յատուկքն հեստեն 'ի կանոնէս
Ոպ դի, դիոյ լինի և ոչ դիւոյ.
Նյպ, թիոյ, լեոյ, ձիոյ, և այլ:
Հեղի հեղեայ, և ոչ հեղւոյ.
Նյպ, ղեւեայ, նաւեայ, և այլն:
Նոյնանքս, որդի, հոգի, և այլք
ոմանք, 'ի յոգնական սեռականին
և 'ի գործիականութեան երկաքանչիւր
թւոյն, դնին սովորաբար ըստ երրդ
կերպին, ոյ. պահելով սակայն ըղ
տառս, ւ: Օրգն՝ որդւոց, հոգւոց.
որդւով, հոգւով: որդւովք, հո
գւովք: Գոն ուրեք, որդեաց,
հոգեաց. որդեաւ, հոգեաւ.
Իսկ որդեօք հոգեօք ոչ ուրեք.
Ծագաւ այս՝ և յերեսն 44.
Նոյնանքս, բու բուոյ. ձու ձուոյ
թիւ թուոյ. թեւ թեւոյ. անիւ
անուոյ. պատիւ պատուոյ. և այլք,
'ի հոլովիլն իւրեանց՝ սոյն այս չրրդ
կերպիս համատեսկ երեւին բայց
ոչ են. Քանզի հիւնն սղ ընա
կան գոլով և ոչ պատահական,

են այսպիսիք Է երդ հոլովմամբս գործ գործոյ գործով, և այլն։ Այլ անուանքս, ասուի, արծուի և նմանք, բնակն հին ունելով՝ ՚ի հոլովսն իւրեանց՝ հին ընդ հինի հանդիպի. որպէս ասուեայ, արծուեայ. բայց բարւոք է գընել՝ ասուոյ, արծուոյ։ որ է թեթև և զնոյն կիրառութ։ Որք և զփահինսն ևս անհիւն գնէին, որդւոյ, հօգւոյ, և այլն։ և չէ խօտելի։ զի ոմանց այնպիսեաց կարի՛ վայելուչ հանդիպել։ անհիւն գնել։ որպէս աղաւնոյ, աղօրոյ. քան ասել՝ աղաւնւոյ, աղօրւոյ։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ՝ ու, ու։

Անուանց կերպիս այսորիկ ոմանց սկզբնականն՝ ըստ սեռականին յարմարի լինել. որպէս որթ որթու, յորթու. զարդ զարդու, ՚ի զարդու. Այլ ոմանց երկուքն ևս յարմարին. որպէս գրաստ

դրաստու, 'ի դրաստու կամ 'ի
դրաստէ՛։ Իսկ ոմանց թուի էի՛ն,
բայց ոչ է. որպէս այդ յայդունէ՛.
փոքր 'ի փոքունէ. և այլն.

Զարդն կայ եդեալ՝ 'ի զարդու
և 'ի զարդունէ. այսպէս և պատմա".

Նորէցն 'ի յոդնականին՝ լինի ըստ
ութերորդին. երիցունք, երիցանց.
որպէս հիմունք հիմանց:

Զօրն՝ զօրու, 'ի զօրունէ ‖ զօրք,
զօրաց, զօրօք՝ ըստ եւթներորդ կերպին.

Ժամն՝ լինի ժամու, ժամօք.

Մահն՝ մահու, և մահուան.

Նոյնպիսիք և այլք գտանին. զորս
յաճախ ընթերցուածս հմտացու-
ցանէ. Նաև այսոքիկ թուի այսպէս,
բայց 'ի կարգի անդ հոլովման՝
զամենայնն միապէս ըստ եդեալ
օրինակին պարտիս հոլովել, դաս
դասու 'ի դասէ, զի միտ քո պարզ-
մնասցէ. Նաև ապա յետ վարժե-
լոյդ՝ ծանիցես և զայնոսիկ՝ որք
այլապէսն լինին.

## Վեցերորդ Հոլովումն՝ այ, ան.

Ուղղականքն կերպիս այսո_ րինկ բաց՛ի սակաւուց՝ բաղա ձայնիւ եղերին. Ոպ ադամ. սէթ ենովս. ենովք, գոհար, և այլն. Իսկ՝ հիւնն՝ անուանս Յեսու, կամ այլոց, թէպէտ յուղղակա_ նումն է իբրև ձայնաւոր, բայց 'ի սեռականին բաղաձայնանայ. Ոպ յեսու, յեսուայ. մակու, մակուայ. բալու, բալուայ. գեղ բու, գեղբուայ, և այլ.

Ոմանց վերջին տագոլով, միայն ոյն 'ի յ փոխարկի՝ և իւր այբիւն լի նի այ. Որպէս ղուկաս, ղուկայ. աբիբաս, աբիբայ. բառնաբաս, բառնաբայ, և այլ: Յակոբն լինի յակոբայ, կամ յակոբու. Նոյնպ յովսեփայ, յովսեփու. աբրահա մայ, աբրահամու. մարիամայ, մա րիամու. լինի և՝ մարեմայ, մարե_ մաւ. Ղուկասն լինի ղուկասու,



կամ

կամ ղուկայ։ Սեփասն, կեփա-
սու, կամ կեփայ, կամ կեփայի։
այսպիսիք բազումք գտանին։
Եւ՝ ոմանք այբիւ եղերեալք,
միայն չի առեալ ՚ի վերջն, նոյն
այբիւն լինին տե։ Որպ յուդա,
յուդայ։ կամ յուդաս, յուդայ։
որ լինի ևս՝ յուդայի։ Աննա,
աննայ։ որ յաճախ դնի, աննայի
աննայիւ։ Սաբա, սաբայ, կամ
սաբայի։ Կայիափա, կայիափայ,
կամ կայիափայի, և այլք ոմանք։
Նոյնպէս և լեալքն՝ իա։ որպ ազա
րիա, ազարիայ՝ զաքարիա։ մաղա
քիա։ սոփոնիա, և այլ։ Որք կա
րեն ևս լինիլ՝ այի, կամ եայ։ որպ
ազարիայի, կամ ազարեայ։

## Եօթներորդ հոլովումն՝ եայ, եաւ.

Պատկանեցալքն այսմ կերպիս
յուղղականումն՝ էիւ, կամ
ինով եղերին։ Որպ հեղի։ ղևի։
եսայի։ յեսսէ։ ովսէ։ անգէ։

Յունէ. երինէ. հաբիսինէ, և բա
զումք։ Այնին և՝ հերովդէս, հե
րովդեայ՝ ղևոնդէս, ղևոնդեայ
կրօնիդէս, նիդեայ· անտօնինոս,
նինեայ· կրիտէս, կրիտեայ, և՛։
Այս տես, զի անտօնինոսն արա_
կան, և անտօնինէն իգական, եր
կոցունց են սեռականն գնի ,
անտօնինեայ։ Բայց ունին զկա
տուկ սեռականս իւրեանց, ան_
տօնինոս, անտօնինոսի· անտօնինէ
անտօնինէի· Իսկ՝ սեռականս ան_
տօնինեայ, իբր անորոշ գնի արա_
կանին և իգականին · որպէս
և այլք գտանին։ ‖ Գէորգն լինի
գէորգայ և գէորգեայ· յովէլն՝
յովելայ և յովելեայ· Այսպէս՝
դեմետր՝ դեմետրի դեմետրեայ·
ենաքր՝ ենաքրի ենաքրեայ·
ակիւղաս՝ ակիւղասայ ակիւղեայ·
Մասիս՝ մասսի մասսեայ։
Օրոստոս ամիս՝ տուսի· Օգոստոս
կայսր՝ օգոստոսի և օգոստեայ·

## Ե-ՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՄԱՆ՝ ԱՆ, ԱՄԲ.

Որոյ անուան ուղղականն ըղ կնի բաղաձայնի նուրբ եղե րև, բաց'ի սակաւուց առ այս կերպ վերաբերի. Որպ ակն. ատամն. ե ղեգն. լեսեռն. սիսեռն, և այլ. Բայց արտաքոյքն, երփն երփնի. բևեկն բևեկնի. միղն միգղնոյ. յանդուգն յանդգնոյ, կամ յան դրգնի, և այլ. Լսացի՝ (բաց'ի սակաւուց,) զի և անճանք Ֆեր̃դ կերպին 'ի նոյնպիսեացն են. որպ բեռն. անձն. եղն. խաշն, և այլք. Նաև ոմանք, ուն, ին, ուն եղեր̃լք առ այս կերպ ընթանան. Որպէս տուն. շուն. անուն. աշուն. գա րուն. Ողջիկ. Ծաղիկ. մանուկ. ձնճղուկ. պտուկ, և այլ.

Մանկան յոգնականն՝ կայ եդեալ ըստ եզականի չորրորդ կերպին, մանկտի, մանկտւոյ. Անդրանիկն յոգնական անդրանիկք, աց, ք լինի.

Անունն լինի անուանք, կ̄ նունք. Այսպ̃ կողմունք, կ̄մ կողմանք. Գորտունք, կամ գորտանք. զակունս, կամ զականս, և այլ:

Դուռն, ուր այլևս վանկանայ՝ ըստ Հոլովի. և յայլսն՝ ռայիւ. դուռն, դրան, դրամբ, զդուռն. Իսկ ՚ի յոգնկին՝ բնաւին ըստ լինի. դրունք դրանց դրամբք:

Իններորդ Հոլովումն՝ եան, եամբ:

Անուանք կերպիս այսորիկ յոյժ սակաւք են. եթէ ոչ՝ [illegible] [illegible] [illegible] և Բ[illegible]ն ածանցական նոքօք Հարստացին. Բայց գոլով՝ եթէ լիցէ յատուկ անուն, դա-լըստի Հոլովի: Ըստ այսմ են և ապրուստ, Հագուստ, Հարուստ. ի, ին. ից, իւք. Հարուստն՝ լինի և Հարստաց. Թաքուստ, փախուստ, գոյնի թաքստի, փախստի. ՚ի թաքստի, ՚ի փախստի. Ծնունդ, սընունդ, ելունդ. սերունդ,

յոգնականն՝ ըստ երրորդին լինին, ոց, ովք՝ ծննդոց, ծննդովք, և": Բայց թէ ըստ իւրենց կերպին եւ դնիցին, ոչ է անդէպ. Ի, աւ եզական գործիականն կարէ եւ լինիլ, ով, ոչ ծննդով, և այլն. Ըստ այսց են և խորհուրդն, և ժողովուրդն:

Տասներորդ հոլովումն՝ իւ, աւք.

Սորին սակաւ անուանքն եւ ոչ աւելք՝ զկնի բաղաձայնի նուրբ եզերքին. անձն, եղն, և". Անձն՝ ի լինիլն միանձն, վեհանձն և այլ, ՚ի յոգնականութեան լինի ոչ թուումնք զթուուանս. ցուցեալ 33. Այլ հարսն՝ գործիքին՝ լինի հարսիւ, հարսիւք: Լեառն՝ հոլովի, լերին. լերամբ. զլեառն. ՚ի լեառնէ կամ ՚ի լեառնէ կամ ՚ի լերանէ. լերինք. լերանց. լերամբք. և". Քարին յոգնականն ՚ի սոյն կերպէս կերպաւորի. որպէս քարինք,

քարանց․ քարամբք։ Որոյ և եղա
կան գործիականն, քարիւ, կամ
քարամբ լինի․ Նոյնպէս ուրարիւ
կամ ուրարամբ, և այլք գտանին։

### Սեռականներ Հոլ՝ Եր, Երբ․

Ինչ անուն, որոյ վերջն վերջին
բաղաձայնի ըստ եղերի,
առ սյս կերպ՝ ինեըքս գայ։ Որպէս
եղր․ աղբր․ ասր․ համբ․ և այլն։
Նա բացառոյին, բարձր բրձու․
կուպր կպրոյ․ ծունր ծնրոյ․
փուխր փխրոյ․ դափր դափրի․
օշինդր օշնդրի․ և այլ։
Նոյնպէս՝ ըստ յոգնականին լինի
բարձունք, բարձանց, բարձամբք
ըստ ուղղականին․ կամ բարձուք
ըստ հինգերորդին․
Նաև հեստեն յայսմ կանոնէ յա-
տուկ անուանք նոյնպէս եղերեալք․
որպէս դեմեսր, դեմեսրի կամ դե-
մեսրեայ։ եղնագր, եղնագրի կամ
եղնագրեայ։ աղեքսանդր, աղեք-


սան

սանդրի, կամ դրու · և սոյնպիսիք
Եւ այս կերպ ներքսամուտեն և ո-
մանք իւր եղերեալք: որպ̃ ալիւր ·
ալբիւր · եղջիւր · եղտիւր ·
Որոց հեստեն՝ հարիւրն, և միա-
հեգքն: որպ̃ հարիւրոյ · բիւրոյ
կամ բիւրու · դիւրոյ · Թիւրոյ ·
հիւրոյ · փիւրոյ կամ փիւրի ·
Իսկ՝ քաղցրն՝ որ լինի քաղցեր,
քաղցերբ ‖ քաղցերք քաղցերց
քաղցերբք և այլն, Լինի և ը̃
հինգերորդին · քաղցու ի քաղցուէ ‖
քաղցունք քաղցունց քաղցուք:
Ըստ այսմ են, ծանր, մանր, փոքր
ծաղր, մեղր: Բայց՝ փոքրին յոգ-
նական գործիականն լինի, փո-
քումբք: որպ̃ և եզականն, փոքու
կամ փոքումբ: տես և յերեսն 131
Ըստ փոքրին լինի և անեզականս՝
յոգունք, յոգունց, և այլն:
Ծաղրն՝ 'ի կերպին ու, ծաղրբ ծա-
ղուց ծաղուք: Իսկ մեղրն՝ 'ի
նոյն կերպին ը̃ վերջին հոլովման

անյոգնի՛ն միայ. զի ո՛չ յարմարի մեղուց, մեղուք. այլ՝ մեղրք, ըղ մեղրս, և այլն։ Որտօսր, տօսեր, յոգնականն ըստ նախնեաց՝ արտասուք արտասուաց վարի.

Երկոտասանե՛րդ կերպին անուանքն են յոյժ սակաւք. որք զկնի բաղաձ՛յնի՝ ղատի՛ եղերին. ո՛պ աստղ, և այլ։ Բայց յատուկք այնպիսիք հեստեն 'ի կանոնէն լինելոյ՝ եւ. Ո՛պ պրոկղ՝ պրոկղի լինի և ոչ պրոկեղ։ Եւ վ՛ս երկոտասան կերպիցդ տարածակին հոլովմանց 'ի կարճոյ այսքան.

Իսկ վեց հոլովման առանձինս ձայն,
ձայնին առնել ինչ բազմա ղան.
այլ որ ինչ անգ 'ի ձայրգն է ցան,
համարեալին գոլ բաժա ձայն.

Նստի իվեր դիցուք զանուանց.
ըղ զանազան ձեւակերպմանց.
վերջոյ նոցին և ըսկըզբանց.
սակաւ բանի՛ համառօտանց.

## Յաղագս Զանազան Չափերգութե Հոլովմանց Նուան Հատուածոյէն․

### Գլուխ 33

Զանազան հոլովմունք անուանց՝ կերպիւրին այլ և այլ վերջաւորութեամբք, և քանիւմ նախդրիւք․ որպէս ցուցաւ ՚ի հոլովմունս նոցին։ Որոց վս͞ գիտելի է, զի ոմանց միայն վերջն փոփոխի, և սկիզբն նախդիր չունի։ Այլ ոմանց միայն սկիզբն նախդրիւ լինի, և վերջն ո՛չ փոփոխի։ Իսկ ոմանց և վերջն փոփոխի և սկիզբն նախդիր ունի։

Այն՝ որոց միայն վերջն այլայլի, վերջահոլով կոչի․ որպէս սեռականն և գործիականն։ Այլ այն՝ որոց միայն սկիզբն նախդիր ունի և վերջն ոչ այլայլի, սկզբնահոլով անուանի․ որպէս հայցականն և տրականն եզականին։ Իսկ այն՝ որոց և վերջն փոփոխի և սկիզբն նախ

գծիր ունի, համահոլով յորջորջի․ որ է ասել՝ երկու ծայրն և հոլովեալ․ որպէս պատմականն և սկզբնականն և այլք․

Եւ արդ՝ ըստ այսմ տեսութեան ոչ պատկանի ուղղականին հոլով կոչել․ որոյ վերջն անփոփոխ է և սկիզբն անյաւելուած․ և ինքն է հիմն ամենեցուն։ Բայց կոչի հոլով այնու, զի որպէս այլքն աննման են իրերաց յատուկ ձևովն իւրեանց, այսպէս և ուղղականն աննման է նոցա՝ յատուկ ձևովն իւրով․ վասն որոյ ասին տասն հոլովք անուան․ որ է ասել՝ տասն ձևակերպութիւնք աննմանք միմեանց։

Նաև սկզբնահոլովքն ոչ են իսկապէս հոլովք․ զի այն է ստոյգ հոլով որ իւր գաղափարական թաւալի․ այս է՝ վերջիւքն հոլովի․ որպէս սեռականն և գործիականն և նըմանք։ Բայց որովհետև սկզբնահոլովքն ևս զանազանին յայլոց



հո

հոլովմանց նախդրիւն իւրեանց,
կոչին և Նոքա հոլովք.

Եւ զայսոսիկ գիտասջի՛ր ծանիր, զի տրականն հոլովն կրկին է. մինն սկզբնահոլով, և միւսն վերջահոլով: Սկզբնահոլով այն է որ եդաւ ՚ի հոլովմունսն նախդրիւքս, ի, յ, զ, առ, ընդ: Իսկ վերջահոլովն է նոյն ինքն սեռականն. զի ամենայն սեռական՝ է՛ և վերջահոլով տրական ըստ ձևոյն. Որք ո՛չ զանազանին ՚ի միմեանց ըստ ձևոյն, այլ ըստ իմացուածոյն զանազանին. և ճանաչին այսպէս: Եթէ գնին ընդ անուան, են սեռականք. որպէս այս՝ տե՛ս զցաւս որդւոյ իմոյ. Իսկ եթէ գնին ընդ բային՝ են տրականք. որպէս այս, ցաւք գիպեցին որդւոյ իմում: Իսկ կերպիս՝ ու, եղական գործիականն և ս նման է սեռականին իւրում: վասն մի և նոյն կերպն ու, կարէ լինիլ սեռականն տրական և գործիականն. զորպիսիս ՚ի հոլովառութեան ուսցիս:

Իսկ վն̃ եղերացն և սկզբանցն հոլովոց յատկապէս՝ գիտելի է, զի բուն եղերք հոլովմանց չորք են. ուղղականն, սեռականն, գործիականն, և պատմականն. զի միւսքն ամ̃ սոցին հետևին։ Բայց՝ սեռականքս՝ ոյ, ւոյ, ՚ի ներ գոյականին լինին ւջ, առ՚ի որոշել ՚ի սկզբնականէն. ոպ̃ ՚ի գործոյ, ՚ի բարւոյ։ Իսկ՝ ոյ, կարէ լինել և՝ ում, ՚ի գործում։ ըստ որոց և այլք լինին. Իսկ յատուկ անուանց ներգոյականն՝ ը̃ նախդրիւ տրականին դնի. որ ըստ ուղղականին եղերի և ոչ ըստ սեռականին. Նա՛ տրականն՝ ցուցի կամ ասի՛ որոշի. որպէս յերեսսն 29, 30, ցուցած ՚ի հոլովմունսն. ը̃ որոց և զայլսն իմա. Սոյս եղերք հոլովմանց՝ ըստ եզականին.

Իսկ ըստ յոգնականին ևս բուն եղերք՝ են չորք՝ Ուղղականն, սռ̃կնն, գործիակնն, և հայցկ̃նն.



զի

Զի կոչականն՝ ուղղականին հե-
տևի․ Պատմականն և սկզբնականն՝
սեռականին․ Արտադրականն՝
գործիականին։ Տրականն և ներ-
գոյականն՝ հայցականին․ Իսկ ամ
յոգնականք՝ երեք տարբերք ձև-
անան․ այս է՝ չորքն քէին, ե-
րեքն ցոյին, երեքն սէին․ զի 'ի
սոսին՝ քէն ուղղականին փոխար
կի 'ի սէ․ Այլ որք քէին ձևա-
նան՝ յերկուս կերպս որոշին․
ըստ ուղղականին և ըստ գործիա-
կանին․ Այլ ահա որպէս ասացաք՝
և բուն եղերք սոցին եղեն չորք․
և այսքան վասն եղերացն ։
Իսկ վասն սկզբանցն դիտելի է,
զի որպէս նախ ասացաք՝ սկզբունք
հոլովմանց երկու են․ նախադրին
և աննախադիր․ Առաջին երեքն՝
ուղղական, սեռական, գործիական,
են աննախադիրք․ իսկ յետին եօրն՝
են նախադրին որ յայտ է․
Այլ նախադիրք հոլովմանց՝ են վ̄ք․

ի, յ, ղ, ց, առ, ըն, ընդ, ով.
Որոց՝ յ, այնպիսի բառից նա_
խադրի՝ որք ձայնաւոր տառիւ
սկսանին. Այն ի, ըն, բաղաձայնից
առաջդրին. Իսկ միւսքն՝ երկուցն
ևս կարեն կցիլ. Թէ ձայնաւո_
րաց՝ թէ բաղաձայնից. որպէս ՚ի հո
լովման անդ եղան. Այն կարէ՛
ուրեք թէպէտ հանդիպիլ ձայնա_
ւոր ձայնաւորի և բաղաձայն բա
ղաձայնի, որպէս ՚ի ադամ, յսկզբանց
և այլ, բայց հազիւ գնին այսպիսիք
զի ոչ են ըստ կանոնի.

Որդ՝ արտադրականին, հայցականին,
և պատմականին նախդիրն է՝ զ.
Սկզբնականին՝ ի, յ, ըստ պատշա
ճին որպէս ցուցաւ. Տրականին՝
ի, յ, ց, ըստ որում տեղին պահանջէ,
Իսկ ներգործականին, ի, յ, ըն.
Գնեն ուրեք և՝ ն. նանձինս.
Այլ վ͞ս առին և ընդին՝ ասացեալ է
յերեսն 146. Բայց գիտելի է,
զի յորժամ իրն չիցէ որոշեալ,

Հայցէնն նորին՝ Թարց զայն դնի․
մանաւանդ 'ի յոգնականսն․
Որոշեալ, զսիրտ իմ՛ սրբեա՛ 'ի մղց՝
Նորոգ, և սիրտ սբ հաստատեա յիս։
Յորդեա՝ զվարս ձեր սբ պահեսջիք՝
վարս պարկեշտս ունիջիք․ և այլ՝
Եւ 'ի շարադրածս նախնեաց՝
շատքն ներգոյականին՝ ըստ տրա
կանին եդեալք են․ մանաւանդ 'ի
յոգնակնսն․ և 'ի բայէն ճանաչին։
Զօրօրինակ, եմուտ 'ի սիրտ իմ,
և 'ի սիրտս ձեր, են տրականք։
զինչ կայ 'ի սիրտ քո, և 'ի սիրտս
մեր, են ներգոյականք։ Որև յե-
րեսն 146 եղև յիշեցք։ Իսկ ուր
վտանգ շփոթման լինի, և այժ
հարկաւորի որոշել ներգոյակնին
'ի տրականէն, դնի՝ ըն, ն։ ընսիրտս
նանձինս։ Իսկ կոչականին սովո
րական նախդիրն է՝ ով։ Սակայն
դնեն ուրեք և՝ ո՛, և մերթ՝ է՛, կամ
ա՛յ։ ով տր․ ո՛ մարդ․ է՛ դերի․
ա՛յ հեծեալ։ Սոքին թէպէտ են

կոչականք, բայց սրտառուչ բե-
րեն զձայնն, և ոչ ո՛չ պարզ կո-
չումն՝ մանաւանդ՝ այ։ Ո՜վ ասել
ո՜վ տէր՝ հայեա՛ց 'ի տառապանս իմ։
ո՜ մարդ՝ քանի՞ մնաս անզեղջ :
է՜ գերի՝ ո՞վ գերեաց զքեզ .
ո՜վ խղճուկ՝ քանի՞ հառաչես :
Իսկ պարզ կոչական այն է, որ դը-
նի իբր ուղղական, շեշտիւ միայն
առանց նախդրի։ որպէս՝ ա՛դամ
ո՛ւր ես։ պե՛տրոս բե՛ր զգիրքն .
Սակայն և յայսցանէ լինին սրտա-
ռուչք։ Տէ՛ր փրկեա՛ զմեզ զի կո-
րնչիմք։ Նա՜ յատուկք ոմանք՝
մերթ էի՛ն եզերին 'ի կոչականին.
որպէս յերեսն 236 ասացաւ .
Նաև այսոքիկ՝ ծօ, քա՛, մին ա-
րական, մին իգական, են նախդիրք
կոչականին, բայց աշխարհօրէն,
որք 'ի պատշաճաւոր տեղւոջ՝
առանց անուան ևս վարին.
Նաև ցուցանէ անուանն,
Մարթէն այժմ ասացան.



Մասն

## Սատանօր զննի Սնոճան՝ Սաութեն ինչ Սերոտին և զմ Բայի։

### Դրոլ 34



ա՛ նախ գիտելի է, զի 'ի խոնարհմունս բայից՝ ո մանք կոչին բնադէմք, ոմանք գրադէմք։ Բնադէմ կոչին այնք, որք ոչ ունին զվանկս եւս։ Որգոն, զնամ զնայի զնացից՝ զնայցեմ, զնա՛, մի՛ զնար, և այլք։ Իսկ գրադէմ ասին այնք, որք նոյն եւս վանկիւ՛ն եղերին. զնացեմ զնացէի զնացեցեմ. Իսկ բայք ոմանք ունօղք զնշանակութ ներգործականի, 'ի ներկայն և յայլ տեղիս՝ ոչ ունելով զձև կրաւորականի, զնին գրադիմի՛ն և ճական բայի՛ս լինին։ Որգոն, լամ լացի լա՛ց։ լացել լինիմ լացեալ եղէ լացել էր։ Սրգամ սրգացի սրգա՛։ սրգացեալ լինիմ

սրդացեալ եղէ սրդացեալ էր։
Այսպէս, ողբամ ողբացեալ լինիմ։
Հոգամ հոգացեալ լինիմ....։
Խոկամ խոկացեալ լինիմ....։
Զգամ զգացեալ լինիմ, և այլ։
Իսկ տամն՝ ներգործական՝ տամ տաս
տայ. կրաւորական, տուեալ լինիմ
տուեալ լինիս տուեալ լինի. կամ
տուիմ տուիս տուի։

Կան և երկուսն ներգործականքն՝
որոց կարէ թէպէտ ձևանալ կրա
ւորականն, բայց վասն բարւոք ար
տաբերելոյ և դիւրիմաց լինելոյ՝
դնին նոյնպէս էական բայիւն։
Որպէս, գողանամ գողացայ գողա
ցիր. 'ի դէմս ներգործականի։ Գողա
ցեալ լինիմ գողացեալ եղէ գո
ղացեալ էր. 'ի դէմս կրաւորականի։
Քան ասել գողանիմ գողանեցայ
գողանեցիր։ Այսպէս՝ զգենում
զգեցայ զգեցիր. 'ի դէմս ներ"։
Զգեցեալ լինիմ զգեցեալ եղէ
զգեցեալ էր. 'ի դէմս կրաւ"։

Սոյնպէս իմա և զմիւսսն որք այսոցիկ հետևին: հիւղա՛, Ստանամ ստացեալ լինիմ: Իմանամ իմացեալ լինիմ: Մոռանամ մոռացեալ լինիմ: Ընթեռնում ընթերցեալ լինիմ: Կալնում կալեալ լինիմ: Ընկալնում ընկալեալ լինիմ, և այլն:

Այլև հրամայականք այսպիսիք, գրեա՛ց, կամ գրեցէ՛ք, լուացէ՛ք, հեղէ՛ք, ե՛ւս բարւոք իմացեալ լինին եթէ դնիցին նոյնպէս՝ գրեցեա՛լ լեր, լուացեա՛լ լեր, հեղեա՛լ լեր, և այլն:

Իսկ և հարկ բայքն մինչ կրաւորական լինի իմացուածն, կարեն դնել նոյնպէս՝ և բարւոքապէս յատկանալ: Որպէս, խորհիմ խորհեցայ խորհեա՛ց, 'ի տեղի ներգոր": Խորհեցեալ լինիմ խորհեցեալ եղէ խորհեցեալ լեր, 'ի տեղի չէզոք": Ծնանիմ ծնայ ծնի՛ր, 'ի տեղի ներ" Ծնեալ լինիմ ծնեալ եղէ ծը-

նեայ լեր, 'ի փեշի կրօ՛՛ : Նոյնպէս և
զայլսն է տեսանել։ Այլ գրեմ թէ,
զամ կրաւորականսն այսու կեր
պիւ կերպաւորել ոչ է խոտելի.
Այլ մինչ այսպէս կերպաւորին,
ոչ է փոյթ դնել ըզ դրադէմն
եղեալ. զի էական բայն ցուցանէ
յառկապէս թէ կրաւորական է։
Բայց թէ կամիս դնել այնպէս՝
ոչ է անդէպ։ Այլ յայսպիսում
ձևակերպման՝ նաև չէ՛ պարտ դը
նել դրադիմիցն՝ եղէ լեմ, եղեալ
էի. այլ՝ լեալ եմ, լեալ էի.
Այլ երկրորդ գիտելի է, զի որպէս հասա
րակ բայքն միանոյն ձայնիւն
ունին զնշանակութիւն ներգործա
կանի և կրաւորականի, այսպէս
և այլ բայք որք ոչ են հասարակ՝
'ի տեղիս ոմանս իւրեանց՝ են հա
սարակ։ Որպէս լուանամ և
լուանիմ՝ լինին լուացեալ եմ։
Լնում և լնանիմ՝ լցեալ եմ։
Որ միանոյն ձայնն՝ է ներգոր



ծա

ծական և կրաւորական։ Որոց
Թէպէտ կարէ գնիլ կրաւորականն՝
լռանեցեալ, ընանեցել, սակայն
ոչ է սովորութիւն նախնեացն։
Որք զմեծ մասն կրաւորականաց
վն թեթև բերելոյ զձայնն և հա
մեղ զբանն՝ ներգործակ գնէին
'ի դրադէմսն և յաներևոյթսն.
հինգն, Յորանեալ է այր. 'ի քեզ
թողեալ է աղքատն. Թաղելով 'ի
սիրտ երկրի. 'Ի փեչի տանելոյ՝ նրա
նեցեալ. Թողեցեալ. Թաղելով.
Բայց 'ի հարկաւոր տեղիս գնել
այնպ ոչ է խոտելի։ տես 113
Նդեալ կան ուրեք և ներգոր
ծականք սովորապէս կրաւորա
կան ձայնիւ։ Որպէս, և կոչեցեալ
զնա. 'ի տեղի ասելոյ՝ կոչեալ.
Նոյնպէս, կերան և յագեցան. 'ի
տեղի ասելոյ՝ կերին. Յո՞ բա
զումք գտանին այսպիսիք. զորս
ներգործապէս գնել բարւոք է.
Ո՛չ եթէ զշարադրածս նախնեացն

փոխելով, այլ յորժամ դու շա-
րադրեցես ինչ. Այլ ոչ՝ լուա-
ցեալ, լցեալ, են հասարակ,
նոյնպէս լինին և ամ ածանցելոց
դրադէմքն. Օրինակ, Դարձուցա-
նեմ դարձուցանիմ, դարձուցեալ եմ.
Կեցուցանեմ կեցուցանիմ, կե-
ցուցեալ եմ. Նա՛ թէ ներգոր-
ծական թէ կրաւորական՝ միևնոյն է
դրադէմս. Այլ այսպիսիք ըստ
ձայնին ոչ որոշին. զոր թէ կամիմք
այսպէս որոշեմք. Դարձուցեալ եմ,
դարձուցեալ լեալ եմ. Կեցու-
ցեալ եմ, կեցուցեալ լեալ եմ.
Կամ դարձուցանեցեալ եմ, կեցու-
ցանեցեալ եմ. Բայց այս ոչ է մեզ
ընտանի սովորութիւն.

Նաև երկոսին ներգործականքն
բաց 'ի ներկայէն և յանկատարէն՝
'ի յայլ ամանակսն ըստ հասարա-
կացն են. Օրինակ, գողանամ գո-
ղանիմ, գողանայի գողանէի ‖ գո-
ղացայ, գողացայց, գողացեալ եմ,

 գո

գողացի՛ր: Նա՛ գողացայ, գո-
ղացայց, գողացե՛լ եմ, գողացի՛ր,
միևնոյն ձայնիւ են ներգործա-
կանաց և կրաւորականաց:
Նոյնպէս և զայլ երկուսն ներ-
գործականսն իմա:

Այլև ամ ներգործկնաց կատա-
րելոյ և ապառնւոյ առջին դէմն
՚ի յոգնականումն են հասարակ:
Որպէս, գրեմ, գրիմ: գրեցաք,
գրեսցուք: Լուանամ, լուանիմ:
լուացաք, լուասցուք: Հեղում,
հեղանիմ: հեղաք, հեղցուք:
Նա՛ գրեցաք, լուացաք, հեղաք:
գրեսցուք, լուասցուք, հեղցուք,
են ներգործականաց և կրաւո-
րականաց հասարակաց: Զորս
եթէ կամիցիմք զանազանել՝ դը-
նեմք, Գրեցաք, գրեցեալ եղաք:
Լուացաք, լուացեալ եղաք: Հեղաք
հեղեալ եղաք: Գրեսցուք, գը-
րեցեալ լիցուք, կամ գրիցուք:
Լուասցուք, լուացեալ լիցուք,

կամ լուանիցուք․ Հեղցուք, հեղեալ լիցուք, կամ հեղիցուք, կամ և հեղանիցուք․

Կարեւոր գիտելի է, զի ոմանք 'ի համառօտ բայից՝ ուր ներգործական լինի նշանակութիւն՝ կարեն դնիլ ներգործական ձայնիւ 'ի տեղիս ոմանս․ Օրինակ, ո՞ տարցէ զիս 'ի քաղաք ամուր․ Յորժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց․ Պահեա՛ դու զորդիս սպանելոց

Համբերեա զիս անպիտան ծառայ․ Ըստ այսոցիկ լինին և երկատեսակ ներգործականք ոմանք․ Օրինակ, խմա՛ զբանս իմ․ Աոււ՛ զժողովուրդ քո․

Կա՛ ընդմիջականք ոմանք, 'ի տեղիս ոմանս կարեն դնիլ կամ ներգործապէս կամ կրաւորապէս, մնալով 'ի նոյն նշանակութեան․ Օրինակ, ճգնեմ, կամ ճգնիմ․ Աճեցան, կամ աճեցին․ Այսպէս՝ դողացի, դողացայ․ ջանացի, ջա–

նայցայ․ փութացիր, փութա՛ ։ դարձիր, կամ դա՛րձ ։ Նայեա՛ց, կամ նայեա՛, և այլ։

Չորրորդ գիտելի է, զի նախնիքն մեր՝ այսպիսի բայից՝ բնակիմ, նուաղիմ, պակասիմ, պատկառիմ, և այլ, 'ի տեղի կատարելոյ զհրամայականն եդեալ են, և չէ՛ խոտելի Ս՛գր․, Բանն մարմին եղև և բնակեաց 'ի մեզ։ Ողորմեա՛ ինձ տր զի նուաղեալ եմ ։ Թշնամւոյն զէն պակասեաց մինչ իսպառ ։ Ո՞վ ոք դարշացաւ և ո՛չ պատկառեաց ։ Նդեալ կան ՟ն այսօր և յօդնին հրամայականք ոմանք 'ի տեղի կատարելոյ սահմանինին․ Ս՛գր․, հի՛ւանդ էի և տեսէք զիս, և այլն․ Լսէ ցնն յր, իմացարու՛ք զայս ամենայն ։ Որ շնորհօք տր հոգւոյն յաղթեցէք թշնամւոյն․ Ի տեղի ասելոյ, տեսիք, իմացայք յաղթեցիք ․ զոր կերպ այժմ 'ի գործ ածել ո՛չ է ուղիղ։

Մերձապէս ծանիր և զայս, զի դրադէմք նախադաղափարաց ոմանց՝ ընդ ածանցելոցն ունեալ ձև հանան։ Որգոն, յառնեմ, յարուցեալ եմ։ Ճանաչեմ, ծանուցեալ եմ։ մեղանչեմ, մեղուցեալ եմ։ պակնում, պակուցեալ եմ։ ցասնում, ցասուցեալ եմ։ զարթնում, զարթուցեալ եմ։ մատչիմ, մատուցեալ եմ։ փախչիմ, թաքչիմ, և այլ։ Որոց թէ նախատրպին և թէ ածանցականին՝ նոյն է դրադէմն։ Զի ոչ է սովորութիւն՝ յառնեմ, յարեալ եմ։ Ճանաչեմ, Ճանաչեալ եմ, կամ ծանեալ եմ։ մեղանչեմ, մեղանչեալ եմ։ պակնում, պակեալ եմ։ ցասեալ եմ, և այլն։ Նայց կորնչիմն՝ լինի կորուսեալ, և ոչ կորուցեալ. որպէս և բուն ածանցութիւն նորին լինի սէին և ոչ ցոյին ընդ այլոց։ Իսկ ածանցութիւն եղանեմին՝ լինի զայն, եղուզանեմ. որ է ճբբու եղուցանեմ։

## Յայտարարութիւն Յաղագս Ընչեմանց Ժամանակայն Բայից։

### Դասք 35

Նախքան զգիտել քո ըղձբը զլխմունս բայից՝ ծանի՛ր, զի ըստ յաճաբայէն եդելոյ՝ բայից երեք ինչ տեսանին. արմատ, ըլ ծորդատար, և դիմաւորիչ։

Որպէս ՚ի բայս՝ գրեմ, արմատն է՝ գր. ըծորդատար, ե. իսկ դիմաւորիչ, մ։

Արմատքն են բազմազանք.

Ծորդատարքն են չորք, ե, ա, ու, ի. Որովք լինին չորեքին ըլ ծորդութիւնքն բայից՝ դիմաւորիչ տառիւս՝ մ, եմ, ամ, ում, իմ. որպէս գրեմ, լուանամ, հեղում, գրիմ. Սամ ձևով աներևութին, գրել, լուանալ, հեղուլ, գրիլ։

Նոյն դիմաւորիչ կոչին այնք, որք զդէմս խրակողին որոշեն յայլոց. որպէս յասելին՝ գրեմ, դիմաւորիչ տառս՝ մ, զառաջին դէմս ցուցանէ.

այսպէս և զայլսն իմա։ Ն՞ մինչ
բայն խոնարհի ՚ի յայլ և այլ ձևս,
արմատն միայն, և այլքն փոխին։
Ա՞ արդ՝ ծնօղք ամանակացն
բայից երկու են. ներկայն և
կատարեալն սահմանականին. զի
պէս պէս խոնարհմունք բայից՝
կամ ՚ի ներկայէն բղխեն, կ̃ թէ
՚ի կատարելոյն. և տե՛ս այսպ̃.
Ա՛նկատար ամանակն բայից՝ ՚ի
ներկայէն ձևանայ. Օրգոն,
գրեմ գրես գրէ. գրէի գրէիր
գրէր. այսպէս և այլքն.
Ա՞ գրադիմիցն ոմանք ՚ի ներ-
կայէն ծնանին, ոմանք ՚ի կատա
րելոյն. ՚Ի ներկայէն որպ̃ս, գրեմ,
գրեալ եմ. սիրեմ, սիրեալ եմ.
գովեմ, գովեալ եմ, և այլ։
Իսկ ՚ի կատարելոյն՝ հետևեալ, գրեցի,
գրեցեալ եմ. սիրեցի, սիրեցեալ եմ.
լուացի, լուացեալ եմ. բացի, բա
ցեալ եմ. բարձի, բարձեալ եմ.
կերի, կերեալ եմ, և այլ.

Իսկ ոմանց մի և նոյն է ծնանիլն ՚ի ներկայէն կամ ՚ի կատարելոյն. օրին՝ Հեղձուում հեղձի, հեղձեալ եմ. Թողուում թողի, թողեալ եմ. Ածեմ ածի, ածեալ եմ. Բերեմ բերի, բերեալ եմ. և այլ։

Նա՛ ապառնիք սահմանականին ըստ եզականի առաջին դիմին, ՚ի կատարելոյն ծնանին յաւելմամբ միոյ տառիս՝ ց. Օրինակ, գրեցի, գրեցից. լուացի, լուացից. հեղի, հեղից. Գրեցայ, գրեցայց. լուացայ, լուացայց. հեղայ, հեղայց.

Իսկ այլ միւս դէմքն և յոգնականքն այլազգ լինին. Գրեսցես, գրեսցէ. լուասցես, լուասցէ. հեղցես, հեղցէ. գրեսցիս, և"

Իսկ ապառնիք ստորադասականին և ըղձականին, ըստ ներկային եղերին. որոց երկրորդ կերպն ես ըստ առաջնոյն վերջանայ. Օրին՝ Գրեմ. գրես. գրէ. գրիցեմ. գրիցես. գրիցէ. Լուանամ. լուա

նաս. լռանայ | լռանայցեմ. լռա-
նայցես. լռանայցէ. Հեղում.
հեղուս. հեղու | հեղուցում. հե-
ղուցուս. հղցու. Գրիմ. գրիս.
գրի | գրիցիմ. գրիցիս. գրիցի.

Նոյնպէս և յոգնականքն.

Նաև ծանիր աստ, զի ոչ երիցևս ներգործական կերպից կատարելքն սահմանականին՝ ըստ առաջին դիմի եզակինին՝ միայն լինին, ի: Նոյնպէս և ապառնիքն նորին ըստ առաջին դիմի եզականին որ 'ի կատարելոյն ծնանին՝ լինին միայն, ից. Նաև ոչ ներկայք իւրաքանչիւր կերպիցն են զանազանք, այսպէս և ապառնիք ըստորոգասականին և ըղձականին որ 'ի ներկայէն ծնանին՝ լինին զանազանք: և միայն երկրորդ կերպն ըստ առաջնոյն եղերի ոչ ասացի: Բայց այսու զանազանին. զի առաջին կերպն լինի, իցեմ, իցես, իցէ: Երկրորդն այցեմ, այցես, այցէ. ոչ ցուցան.

Սա՛ ապառնիք հրամայականին ցոյի՛ց կերպարանօրեալք, ոմանք սահմանականին են, ոմանք ըղձականին: Իսկ որք չէի՛ց կերպարանօրին, միայն հրամայականին են

Բայց գիտելի է, զի ե՟րդ դէմն ապառնոյ սահմանականին 'ի յոգնականումն, գրեսցէք, լուասցէք հեղցէք · գրեսջիք, լուասջիք, հեղջիք, ոչ ուրեք գտանին 'ի բընագիր գրեանսն մեր: Որոց փոխանակ՝ դնի չէի՛ց կերպացեալն հրամայականին, գրեսջիք, լուասջիք, հեղջիք, և այլն: Որոյ և՟ զականն գտանի, ահա յղասջիր և ծնցիս որդի · որ է սահմանական և ոչ հրամայկն: Սա՛ յայն սակս զցոյի՛ցսն եդաք անդ 'ի խոնարհմունսն, զի յոգնակինն համեմատ գայցէ իւրում եզականին · որպ՟ և յայլ շարագրածս հեղինակաց եդեալք են: Արդ ուրեմն բարւոք պարտիս ճանաչել զամենայն

ապառնիսն. զցոյլիւն եւ զջերիւն.
Թէ ո՛ւր ուրեք են հրամայանք,
եւ ո՛ւր ուրեք յայլ որակաց:

Ըստ կարգի բանիս ծանիր եւ զայս, զի ոչ գնի 'ի բնաւ ուրեք սահմանականն հրամայական եւ հրամայականն սահմանական.

Նոյն սովորաբար 'ի գրուածս նախնեաց' ապառնիք ստորադասականին 'ի սահմանականէն գնին. Որպ այս, եթէ նստայց 'ի խաւարի' տրէ իմ լոյս. Որոյ ձեւն սահմանական է, եւ իմացն ստորադասական.

'Ի տեղի ասելոյ' նստիցիմ:

«Նաեւ այս սովորութ է նախնեաց' 'ի բաղում ուրեք 'ի տեղի անցելոյ եւ ապառնւոյ' զներկայն դընել. Որգն, գայ յն եւ առնու ըղհացն եւ տայ նց. Յորժամ հարկանի փող գալստեան քո տր. Գրաս բոցով եւ գատես զտիզրս.

Իսկ բայածական անուանք' ոմանք 'ի ներկայէն ելանեն.



Որպ

Որպ̃ անէրեմ, անէրումն. անէ-
րութիւն. անէրական։ Ոմանք 'ի
կատարելոյն, բացի, բացումն,
բացութ̃ի. իմացայ, իմացումն,
իմացին. Իսկ ոմանց միենոյն է
ծնանիլ 'ի ներկայէն կամ 'ի կատա-
րելոյն. որպ̃ ածեմ ածի, ածումն.
բերեմ բերի, բերումն, և այլ.
որք են առանց ցոյց կոչմնկքն.
Այլ և ծնեալ յաներևութէն,
լալումն, լալութիւն, լալական,
լալօնք.

Նա՛ այսքանս շատ լիցի մզ̃ բը
ղխմանց բայից և բայանունանց.
զորոց քերթողն կորովի՝ կարէ՛ եր
կար մանկագրէ.

## Յաղագս Ընդդէմ Բառից.

### Գլուխ 36

Ընդդէմբայից ոմանք միշտ այն-
պէս վարին. որպէս այսո-
քիկ, պարտ է. ճահ է. մարթ է.
բան է. արժան է. ըմբռն է. պի

տոյ է. պատեհ է. պատշաճ է. պատ
կան է. իդեպ է. ո՛չ է մարթ. ո՛չ է
փոյթ, և այլ։ Սո՛յն ոմանք դոլով
դիմաւորքք, պատահմամբ լինին
անդէմք։ և Ճանաչին այսպէս.
Յորժամ բայ իմն դնիցի այնու
կերպիւ որ կարիցէ վերլիս դէմ
սն ևս նոյն մի երրորդ դիմաւոն վա
րել՝ է անդէմ. ո՛պ այս, Պատա
հեցաւ ինձ գալ այսր. պտհցաւ
քեզ մնալ անդ. պտհեցաւ սմա
գնալ 'ի տուն. Իսկ թէ դիցի
այնու կերպիւ որ վերլիս դէմն
ևս յատկապէս ունիլ կարիցէ,
է դիմաւոր. ո՛պ այս. Պտհեցայ
ես քեզ. պատահեցար դու ինձ.
պատահեցաւ նա մեզ։
Նաև այսուէ յայտ, զի դիմա
ւոր բայն դնի եզական և յոգ
նական. իսկ անդէմն եզկն միայն.
Թէպէտ դոն և այլ նշանք, բայց
երկուքս այսոքիկ բաւականք են
որոշել զանդէմսն 'ի դիմաւորաց.



Սո՛

Այս բազում ածական անուանք՝ մերթ և գոյականք, և չի ընդունելութիք՝ էական բայիս՝ է, լինին անդէմ բայք. Որգոն, բարի է ինձ նստիլ աստ. չա՛ր է քեզ յամել այդր. ծա՛նր է նմա գալ ընդ մեզ: Նոյպէս, հա՛րկ է. հարկաւոր է. ո՛չ է հարկ. օգո՛ւտ է. վնաս է. կարելի՛ է. հաճելի՛ է. դարշելի՛ է, և այլք բազումք:

Որ շարժէ և ոչ շարժի,
նմա տալի է պաշտօն:

Նայքս, ցօղել. ծիւնել. ամպել. անձրևել. լուսանալ. մթանալ, և այլք այսպիսիք, յայլ հեղինակաց դիմադուրկ կոչեցեալք են. այսինքն անդէմ: Չէ վ՟ս չունելոյ գերիս դէմսն յատկապէս, այլ զի ո՛չ են յարմար ասել, ցօղեցի, ցօղեցեր, և այլն. Սակայն 'ի Ճարտասանաց չէ ինչ որ ոչ ասի ըստ նմանութե. Որպ՟ յերգս շարականաց ասի, որ ցօղեցեր 'ի մեզ

յամպոյ օրինաց որոյ այսօր ըղ
կոյսն մարիամ Եւ 'ի սաղմոսին,
ցօղէա՛ յիս մշտկա՜. Ոպ՟ և ասել՝
թէպէտ մըլթացայ լեըրև ղգիշեր,
յուսամ լուսանալ ոպ՟ առաւօտ։
Իսկ մինչ տէր բայլ ոչ նկատիցի,
անդ այսպիսիքս են զուտ դիմա՜
զուրկ. Ոպ՟ ասել՝ մինչ ինձ լու՜
սացա՛, քեզ խոր մըլթացա՛.
Եւ վս՟ անդէմ բայից այսքան.

## Յաղէնչ Պաբաւըլիւ շՆայից.

### Գլուխ 37

Ն կողմնական բայից ոմանք՝ կա
րեն ունիլ և զկերպ նոյնկնի.
որպ՟ Եղծեմ եղծեցի եղծեա՛.
Օծեմ օծեցի օծեա՛. Ստեղծեմ
ստեղծեցի ստեղծեա՛. Դերծեմ
դերծեցի դերծեա՛, և այլ՝
Եւ թէպ՟ այսպ՟, բայց կողմնական
'ի գործ ածին. որպ՝ Եղծանեմ
եղծի եղծ. Օծանեմ օծի օծ,
Ստեղծանեմ կամ ստեղծում,
ստեղ

ստեղծի, ստեղծ. Գերծում
կամ գերծնում, գերծի, գերծ.
Այլ ոմանք ՚ի բարդիլն Ը այլում
լինին նոյնականք. որպ Արկա-
նեմ արկի արկ | քօղարկեմ, կեցի,
կեա՛ց. Առնեմ արարի արա՛ | բա-
րբառեմ, եցի, եա՛ց. Գնեմ եդի
դի՛ր | փոխադրեմ, եցի, եա՛ց, և այլ.
Արա՛, թէպէտ նոյնական երևի՝
բայց ո՛չ է յարմար ներկային
խւրում. տե՛ս յերեսն 86.
Այլ այսպիսիք, բարի առնել,
սահման դնել, ո՛չ են բարդեալք,
այլ՝ կցեալք. զի սոքա՝ առնել,
դնել, ՚ի բարդիլն՝ փոխեցան ՚ի
ձևոյն որպ և ցուցաւ. իսկ ՚ի կը-
ցելն որպէս ի վերոյ, ո՛չ փոխին ՚ի
ձևոյն. այլ՝ մնան ՚ի նոյն. Որպէս՝
առնեմ, արարի, արա՛ | բարի առ-
նեմ. բարի արարի. բարի՛ արա.
Դնեմ, եդի, դի՛ր | սահման դը-
նեմ. սահման եդի. սահման դիր.
Ըստ այսմ բանի՝ երկրպագեմ,

է բարդեալ. որ լինի՝ եցի, եա՛. Իսկ երկիր պագանեմ, է կցեալ. որ լինի, պագի, պագ։ Որոյ և պարզն է՝ պագանեմ։

Նոյնպէս, ածեմ ածի ած | մոռածեմ, մոռացեցի, ծեա՛, բաղդեալ. 'ի միտ ածեմ, 'ի միտ ածի, 'ի միտ ածջեալ. Նոյնպ̃ և այլք։

[illegible], 'ի բարդիցն ընդայլում, (որպ̃ վ̃ անուան ասացաք 236,) առ այլ կերպ վերաբերի. որպէս Խօսիմ խօսեցայ խօսեա՛ց. Բարեխօսեմ, եցի, եա՛. և այլք սակաւք. Իսկ ոմանք 'ի բարդելոցն մինչ թողուն զբարդութիւն, ոչ կարեն բայանալ. որպէս բարեբանել, ոչ լինի՝ բանել. գեղազարդել, ոչ լինի՝ զարդել. Բայց սա՛ զօրէ, կարէ բայանալ վանկիւն՝ առ. որպ՝ զարդարել. Նոյնպէս լինի և մեծն, մեծարել. Բայց այսք են և որք ածանցմամբ անուան բայանան և ոչ ըստ ինքեանց. Որպ̃ վեր,



վի

վերանորել· երկու, երկրորդել·
ցեխ, ցխոտել, և այլ· Ըստ այսց
են և՝ փողոտել, Թրատել· Որք
լինին Թէպէտ փողել, Թրել,
բայց ոչ ըստ նոյն նշանակուԹե·
Իսկ փողոտել, Թրատել, ոչ են
ածանցմամբ նման որպ ցխոտել·
զի ոտ, ատ, ՚ի բայս՝ յաճախուԹ են
ցոյցք· բեկոտել, ծուատել, և՛
Գիտելի է և այս, զի վերջս այս՝
անալ, գրեԹէ զամ անուանս
բայացուցանէ· մանաւանդ զմա
կադրականսն· որպ ծանրանամ·
կարծրանամ· կակղանամ· կարմրա
նամ· սևանամ· քարանամ· հողա
նամ· մարդանամ, և այլք իբր ան
Թիւք· որք ամէն են երկատնկք·
որք յերեսն 81 բացայայտեցան·
Բայց ոմանց սակաւուց՝ ենամ յար
մարի և ոչ անամ։ որպ գերենամ,
Թերենամ, լեղենամ, խնամենամ,
ընտանենամ, և այլք· Որք և յե
րեսն 91 յիշեցեալք են·

Սատ իմա՛ և զայսպիսիս երկձև բայացեալս, Նորիլ նորանալ. Դեղնիլ դեղնանալ. Կարմրիլ կարմրանալ։ Վստահիլ վստահանալ. Բնակիլ բնականալ։ Կաղալ կաղանալ. Մուրալ մուրանալ. Շնալ շնանալ. Զղջալ զղջանալ. և այլք։

Բայց կաղալ, է կա՛ղ քայլել։ Իսկ կաղանալ, պտհմամբ ինչ կաղ լինիլ որ ոչն էր.

Գտանելի է ևս, զի կրաւորակերպ ընդմիջականք ոմանք՝ ոպ̄ ծաղկիլ խոտորիլ և այլ, ուրեք կրօղս ունելով, ներգործաբ̄ ՚ի գործ ածին։ Ոպ̄ ասել, մինչ ծաղկել յուսայի յիս զխրատ քո, ընկերք չարաբարոյք խոտորեցին զիս։ Սա՛ ոմանք ներգործօղս ունելով՝ կրաւորաբ̄ ածին ՚ի գործ, Մեռաւ միհրան ՚ի հայոց։ որոցպ̄ և այլք գտանին։

Սա՛ կրաւորական բայքն ուր ոչ



ու

ունիցին ներգործօղս, ընդ միջակին համարեալ են։ Մ՛եգ., լցաւ ժամանակն և բարձաւ տէրունին նր̃։ Մ՛եկնեցաւ ՚ի նոցանէ և խառնեցաւ ընդ այլս։ Այս յոյժ բազումք են այսպիսիք։

Այն, թէ զայս լաւ նշանակէ, է՛ ներգործական. եղաց յո̃ զէմ որոյ կրաւորականն է՝ լացեալ լինիմ։ Իսկ թէ ըստ ինքեան լաւ ցուցանէ, է ընդմիջական։ պետրոս եղաց դառնապէս։ Ըստ այսմ են, ողբալ, կոծալ, և այլք։

Այս՝ բղխել, ներգործական կերպիւ է հ̃րկ։ Բղխեաց սիրտ իմ զբան բարի։ Բղխեաց յարմատոյն յեսսեայ։ Լինի և ընդմիջական, այսօր բղխեաց ջուր կենդանի յէմ։ Բայց դնիլ կարէ և ս բղխիլ. ՚ի բերանոյ նորա բղխի արդարութիւն։

Ըստ այսմ է և թեզալ։ Ամպն տեղայ զանձրև իւր։ Տեղայ անձ_

րեն 'ի յամպոյն. Ընդ անձրևոյն կարկուտ տեղաց. Մա՛ ևս կարէ դնիլ կրաւորկերպ, տեղացեալ լինի:

Նոյնպէս և այլք գտանին.

Են և այլ բայք, որք այլ և այլ նշանակութիւն ունելով, ըստ այլ և այլ սեռից վարին. Որպէս բայս՝ ագանիլ, եթէ նշանակէ ըզգեցումն, է չէզոք բայ. որ ուրեք ներգործապէս վարի, ուրեք կրաւորապէս: Զգօն, պետրոս ագանի, հանդերձն ագանի. Իսկ եթէ նշանակէ զընականալն, է ընմիջական. Որպէս այս, առ մեզ ագիր վք ընդ երեկս է. և եմուտ ագանիլ ընդ նս. այսպ և այլք.

Գիտելի է և այս վերջապէս, զի ներգործական և կրաւորական բայքն առընչաձայնքեն. այսինքն կապակցեալք են ընդ միմեանս. զի այն է ներգործող՝ որ ունի կրող. և այն է կրող՝ որ ունի ներգործող: Իսկ այն որ է՛ 'ի ներ-

գործական կերպի և ոչ ունի կը
րող, կամ այն որ է 'ի կրողական
կերպի և ոչ ունի ներգործօղ,
երկոքինն ևս ընդմիջականք են.
որպէս ննջել նստիլ և այլ:

Ուստի և այն բայք՝ որք կարեն
ունիլ զնշանակութիւն ներգոր
ծականի՝ և ոչ ունիցին կրօղս,
և այն կրաւորականք՝ որք չու-
նիցին ներգործօղս, են ընդմիջա
կանք ո՟չ ցուցաւ. պետրոս ելաց
դառնապէս. լցաւ ճ՟մ՟կն, և այլ:

Եւ այս որ ինչ ասացաւ, ըստ
նախաորպիսցն իմացեալ լինի.
զի 'ի յածանցեալսն ը՟ միջականք
ո՛չ գ՟ոն. այլ ա՟մ՟քն են ներգործա
կանք և կրաւորականք.

Բայց տե՛ս, զի ներգործօղն ը՟
կրողին, կամ կրօղն ը՟ ներգոր
ծողին, երկու էութիւնք են. մինն
իրակօղ մինն կրօղ: Իսկ ը՟ միջա
կանն մի էութիւն է. զի ինքն է իրա
կօղ և ինքն է կրօղ: Իսկ ածան

ցեալն՝ թէ յընդմիջականէ լինի՝
երկուց լինի ցոյց · զի յայնժամ
լինի զուտ այնպ՝ ոպ են ներգոր
ծօղն և կրօղն առ միմեանս ։ ոպ
յարուցանել կեցուցանել և այլ։
Իսկ եթէ 'ի ներգործականէ ա
ծանցի, լինին երեք էութիւնք՝
որպէս յասելն, յիշեցուցանեմ,
երեք էութիւք իմանին ։ ա այն՝
որ յիշել տայ ։ բ այն՝ որ յիշէ ։
և գ այն՝ որ յիշվի· Ուստի այս
պիսիքս՝ կոչին և անցողականք ·
զի զիրակութն երկրդին՝ առա
ջինն անցուցանէ առ երրորդն։
Ուստի նախկինն է խրակող, յե
տինն կրօղ· իսկ միջինն՝ ներկառ
մամբ նախկնոյն է կրօղ, ներկառ
մամբ յետնոյն խրակող ։
Ընդ այսոց և այս է գիտելի, զի
ածմնցումն ոմանց բայից ծան
րաձայն գոլով՝ ձևանան բայիւ՝
թամ. Ոպ ղուկ 23, եւ տանիլ զնա
առ Հերովդէս։ Նոյն մր 15, Հարկել



ընդ

ընդ եղեգան՝ տալը ըմպել նմա ·
Որք են՝ տանեցուցանել, ըմպե-
ցուցանել։ Որպէս, եւ լուցանել
զճրագն եւ ցուցանել զվիրագն ·
Ըստ՝ միւս զօրութիւն իմացեալ
լինի · որոյ դնիլն ա՛ներորդ է ·
իբրու ասել, եւ լուցանել եւ եւ
ցուցանել․ ոչ է՝ լուցեցուցանել,
ցուցեցուցանել։ Եւ ծանրաձայն
ածանցութիւն՝ մանաւանդ 'ի ներ-
գործականէն լինի · որպէս ծլէրոյ
լուցեցուցանել․ վասն որոյ ոչ ամ
ներգործականք կարեն ածանցիլ
յարմարապէս․ Իսկ ընդմիջականք՝
գրեթէ ամենեան ածանցին ·
Եւ այն կրաւորականք ընդմիջա-
կանք որք ներգործապէս եւ
կրաւորապէս եդան, իբրու ա-
ծանցեալք իմանին․ զի նոյն է
ծաղկել ծաղկեցուցանել․ մեռան
'ի Հայոց, իբրու մեռուցան ·
Ըստ այսմ է՝ ես կացի թէ՛ր 'ի նը
մանէ․ որ է՝ կացուցայ ·

Գտանին և ածանցեալք 'ի տեղի
նախատրպի. որպ 'ի անդի դնելոյ
լոյր, դնի 'ի բերան ուրեք լուսոյ.
Որպէս ներգործականք 'ի տեղի
կրաւորականի, կրաւորականք 'ի
տեղի ներգործականի. կամ այլ
որակք 'ի տեղի այլ որակաց որպ և
ցուցանի. և այլք այսպիսիք՝ խօսից
արժանիք բաղումք գտանին.

Որպ և յանուանց՝ բաց 'ի յայն-
ցանէ որք միով կերպիւ թարց
դժուարութեն հոլովեալ լինին,
բազում և այլք գտանին զանա-
զան բնութիւս անօղք. զորոց մասա-
ցաք 'ի կարգին թերու նշմարինչ
'ի յիշուածն ածել. Յորոց ոմանք
յամ հոլովս իւրեանց ը̃ երկուց
կարեն հոլովիլ. որպ շահի շահու.
մահու մահուան. Ոմանց յոգ-
նականն լինի երկու. կոյսք կու-
սից, կուսանք կուսանաց. Ջուրք,
ջրոց կամ ջուրց. Ոմանց եզականն
այլ կերպիւ լինի՝ և յոգնականն այլ.

որպ՟ քար քարի, քարինք քարանց·
Ոմանց ոմն ինչ հոլովն լինի ըստ երկուց· որպ՟ գնդան՟ գնդին՟· 'ի տեղւոյ 'ի տեղւոջէ· Ոմանց ոմն ինչ հոլովն լինի ըստ այլ կերպի, և ոմն ինչն այլ· որպ՟ կանգուն կանգ-նոյ, կանգնան՟· թոյնք թունից, թունօք· Ոմանք երկուս նշանա կուծս ունելով՝ այլևայլ հոլովս առնուն· Որպ՟ վահան, եթէ զէն, վահանի· իսկ թէ մդ՟, վահանայ·

այսպէս՝ գոհարն շուշանն և այլ

Մշտալար՝ եթէ ձայն, մշտալարոյ·

իսկ թէ լսօղ, մշտալարի·

և ոմանց վերջին՟ հոլովիլ ոչ յար մարի, այլ նախդրին՟ միայն·

Այսքան նշմարանք՝ միայն զի յիշեալք լիցին· Զորոց ամե նից զանուանց և զբայից՝

Տարագրութին՝ այժմոյս 'ի Բեզ 'ի ափոփէ·
ցանկալի երկար՝ և յառաջաբան՝ ներփակէ·
Ա... որ այս Բրա՝ համեմատեալ՝ ունինջ է·
Բայց հրաշալի ինչն՝ երկար չէ՝ առաջինն է·

Ա՜րդ՝ որովհետև երկարե-
ցա՜ սակա՜ւ ինչ զանուա՜նս և
զբայս՛ քան զոր նախն կամէաք,
դիցուք փոքր ինչ և զայլս:

## Յաղագս Ընդունելութեանն:
### Գլուխ 38

Ու, ինչ, եղերեալ ընդունե-
լութիւնք՝ թէպէտ 'ի քեր-
թողաց ներկայք անուանին, բայց
կերպիւ ինչ՝ ունին զպատկուն
ժամանակի. յաղագս որոյ առ ամ̃ն
ամանակս կարեն տարածիլ:

Օրինակ, Կրողն 'ի յինքեան ըզ-
կրողն ամենի. եղև կերակրիչ
այնմիկ արքայի, որ է կերակրիչ
երկնի և երկրի: Ո՛հա՛ առաջին
օրն և ինքն՝ առ անցեալն նկատի,
իսկ յետինքն՝ առ երեկին ամա-
նակսն ևս կարեն տարածիլ:

Աղերեալքն 'ի օդ, առ գոյական

անունն եղեալ՝ են ածականք․
և առ ածականն՝ գոյականք,
Ուռաշինն ոսկւոյ, կռուածոյ բնութ․
տրտնջօղ բերան, պատառօղ գա
ղան, և այլ՝ Երկրդն ոսկւոյ, բա
րի՛ ծնօղ․ գիտուն դրօղ․ համա
շխնօղ․ ըստայսմ է և՛ չի․ Իսկ
յասելն՝ արագ դրօղ, շուտ ըն
թերցօղ, արագն և շուտն մակ
բայք են և ոչ անուանք․
Ամանք զայսպիսիս, ածօղ, եղօղ,
կրաւորական համարին՝ բայց
ոչ են․ զի նոյն է ըստ ձևոյ՝ տեսօղ
և տեսանօղ․ այրօղ և այրեցօղ․
Ոմանք ևս, զի վանկս՝ ինչ, 'ի քա
նի մի սակաւ բայից՝ ունի ձևանայ
և ոչ ինչ․ Ով վայելել վայելուչ․
տեսանել տեսուչ․ ընկալնուլ
ընկալուչ․ սրտառել սրտառուչ․
մտառել մտառուչ․ Ներեա ևայլ․
Ոչ այս կերպ՝ ինչ, ոմանք 'ի գիտ
նագունից՝ ոչ գնեն ընդունելու
թիւն․ այլ՝ բայածական ածան

ցումն․ և չէ՛ խոտելի․ զի և ընդ-
դունելութիւնք 'ի բայից լինին․
սակայն մերս ըստ ձևոյն եղաւ․

Սերպս՝ եալ, դնի երբեմն անուա-
նապէս և երբեմն բայապէս։

Անուանաւոր», հատեալ անդամ,
որ է կրաւորական նշանակութ․
'ի տեղի ասելոյ հատեցեալ։

Իսկ 'ի ներգործականութ՝ դնի
'ի տեղի բայի․ հատեալ զմատն 'ի
բաց ընկէց․ որ է ասել, էհատ և
'ի բաց ընկէց․ Սակայն կարէ՛ գը-
տանիլ և 'ի ներգործականութեն
անուանապէս եղեալ․ որպ ասի,
տարաւ զիս 'ի սենեակ կղացելոյն
զիս․ որ է ասել՝ կղացողին․

Սուկանի արկելոյ 'ի ծով, և յա-
մենայն ազգաց ժողովելոյ․ որ է ժո-
ղովողի․ Բարձրեալ ած․ կատա-
րեալ մարդ․ նանրեալ սիրտ․ ած-
արեալ հայրապետ, անուն ասե-
լի են քան ընդունելութիւն․
զի ոչ են 'ի բայէ․ զԽաչելեալն

խնդրեք․ իմանի՝ զի խաչելեալն
նոյն զխաչեցեալն ․

Վերջս՝ Լի, լինի ապառնի այսպէս,
հերկելի, ցանելի, հնձելի, ժո
ղովելի, և այլ։ Իսկ՝ սիրելի, գո
վելի, ատելի, խոտելի, պատուե
լի, պաշտելի, և այլք այսպիսիք,
կարեն նկատիլ կամ ածներկայն
և ապառնին, կամ առ երկոքն ևս,
ըստ որում բանն նկատի ․

Սա՛ 'ի սովորութե հնոց՝ բաղում
Լի, մանաւանդ յոգնկին՝ Լիք,
եդեալ կան 'ի տեղի դնիլոյ՝ օղ, օղք․
և որ ընդունելի հոգւոյ իմոյ,
որ է ընդունօղ։ Բանալի արքայութ
որ է բացօղ։ Աւստի ուրեք իմն 'ի
շարակնոցին մեկնութեամբ ե
դեալ է, փափկութե դրախտին
բացօղ բանալի ։

Իսկ՝ Լիք, որք զգայութիւնքս՝
տեսանելիք, լսելիք, հոտոտելիք․
որք իմանին՝ օղք և ոչ Լիք ․

## Յաղագս Դերանուանց.

### Գլուխ 39

Դերանուանքս՝ իմ, քո, իւր, մեր, ձեր, են ուրեք ուղղականք ունականաց, և ուրեք սեռականք հականաց. որպէս ցուցան ՚ի հոլովմունսն։ Որք թէ զանձն նշանակեն, են հականք։ և թէ զունեցեալն ասեն, են ունականք։ և ճանաչին այսպէս. Եթէ ընդ անուան դնիցին, են ունականք և ուղղականք։ որպէս ասել, անձն իմ. անձն քո. անձինք մեր, և այլ։

Իսկ լինին հականք և սեռականք՝ մինչ դնին, կամ ընդ նախդրի. ի վ՟ր իմ. ի ներքոյ քո. վ՟ս մեր, և՛ Կամ ընդ աներևոյթ բայի. իջանելով քո ՚ի դժոխս։ Եւ կամ ը՟ երրորդ դիմի դերադեմ բայից. տեսեալ է իմ զքեզ. տեսեալ է քո զմեզ. տեսեալ է մեր զձեզ, և այլ. Այսպիսիքս են անդէմ բայք.

զի զերեք դէմսն ևս՝ միևնոյն եր
բոլոր դիմացն վարեն ոչ ցուցանէ։
Եւ ասացաւ ՚ի յերեսն 108.

Սա՛ ունականքս, իմ, քո, և այլն,
՚ի լինելն էակին և ոչ ունական,
բաց ՚ի միոյս՝ իւր, այլքն միշտ սե
ռական միայն և եղական. Երկոքն,
վա՜ իմ են չարիքս. վա՜ քո մեռա
նիմք. վա՜ իւր ասաց, և այլ.
Ասացի (բաց ՚ի միոյս) զի մինս այս
իւր, յէականութենն ևս կարէ ունել
և զայլ հոլովս. Որգոն, իւրեաւ
յաղթահարեց. այսինքն ինքեամբ
իւր իւրով ինքեամբ. Որպէս հան
գերձ արկաւ զիւրեաւ. հայեցաւ
շուրջ զիւրև. Որ զիւր ինքն ըղձայ
գովել, միշտ զիւրդն պատմաբանէ.
Մերժեաց յիւրդն զխորանն ՚ի սե
րովէ. Յակոբ ընտրեաց իւր տր.
պահեաց առ իւր զխորհուրդն։

Սա՛ տես՝ զի ըստ էական նշանա
կութեան՝ իմ, չինի սեռական հա
կադարձական ձայն. քո՝ դուին.

Դէ՛ մեքին · ջե՛ր դուքին ·

Իսկ յայնժամ ասին հակադար_
ձականք, յորժամ անձին ուրուք
իրակու͞թն առ ինքն վերաբերի ·
այսինքն, իւրն առ ինքն : Որպ͞
ասել, ես վասն իմ խօսիմ · դու
վ͞ս քո իմանաս, և այլ:

Իսկ՝ իւր, լինի սեռական հակա_
դարձման միւս երից դէմնացն,
նա, սա, դա : զի սեռականք նոցին
ոչ հակադարձին առ ն͞ս : զի մինչ
ասի՝ նա վ͞ս ն͞ր խօսի, սեռականն՝
նորա, ոչ հակադարձի առ ինքն ·
այլ՝ առ այլս վերաբերի : Նոյնպ͞
սորայն և դորայն ոչ հակադար_
ձին առ ինքեանս : Վասն որոյ
դնի իւրն և ասի, նա վ͞ս իւր խօսի ·
սա վ͞ս իւր ասէ · դա վ͞ս իւր լսէ ·
Նոյնպ͞՝ պետրոս վ͞ս իւր, և այլ:

Իսկ ՚ի յոգնականին, լինին հա_
կադարձականք սոցին՝ իւրեանցն և
իւրեանցն · Որգոն, նոքա վասն իւ_
քեանց, կամ վասն իւրեանց:



Ի

Ի լերինն ունեցեալ իւրն յոգ-
նական, եթէ ունօղն է եզակին,
Իւրոյ 'ի գործ ածի. որդւոյ իւրոյ.
Իսկ թէ և ունօղն է յոգնական,
Իւրեանց գնի. որդւոց իւրե՛նց:
Պիտելի՛ է ևս, զի 'ի Դերան-
ունսն՝ թէպէտ միոյն միայն ա-
սացա՛ւ յարաբերական, սակայն
և դերանունսն՝ նա, 'ի շատ ուրեք
յարաբերանայ. Իսկ Հոլովքն իւր՝
գրեթէ միշտ այնպիսանան.
Սո՛ տես 'ի սաղմոսին 99, աղաղա-
կեցէք առ տ՟ր ա՟մ երկիր, և բա՛նէ
Ինքն թ՟պտ և՝ ա, յարաբերող,
բայց 'ի սակաւ ուրեք. տե՟ս գլ՟ւխ 2,
և սա 'ի նմին ժամու յարուցեալ
գոհանայր զն՟նէ՛. որ է անձա.
Իսկ յարաբերականսն՝ որ, ինքն և
պարզ դերանուան այս՟մ. որ խընդ-
րէ՝ առնու. Ինքն և հարցական
անուն. ո՞ր է դուռն երկնից.
Ինքն և բաղհիւսական շաղկապ.
որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինքն.

Լինի և Թարմատար. Ես գիտեմ
որ աստ ինչ ոչ գոյ: Լինի և Նախ
ընթաց նախին, որ զինքն քննէ,
նա՛է մարդ: Լինի և ընդհանրա
կան անուն այսպէս՝ որ ինչ: Սամ
մասնական և Ընդհանրական, որպէս:
Աստ այսմ նշանակումն է և այս,
իւրաքանչիւր: Իւրաքանչիւր, եր
կաքանչիւր, հոլովին որպէս որ:
Աստ այսոց է և անուն՝ այլ:
Առ յածանցմունս դերանուան՝
որպ քոյին, կարէ նոյնպ լինել և՝
իւրոյին, մերոյին, ձերոյին, որ է՝
իբրու այլն, որ յիշեցեալ է:
Նայց և յոգնականն՝ այլնք, դնի
որպ: քոյք, իմոյք, ձերոյք, մերոյք:
Աստ որոց և՝ ամենթոյք: Համա
րին ածանցեալք և այսոքիկ, նո
րայք, նորայց կամ նորայոց, զնո
րայս, և այլն: Այսքան վասն
Դերանուան: Իսկ յորս այլոցն
առ այժմ բաւական համարեսցին
որ ինչ ասացան:

## Յաղագս Ախտակրութե կամ Միջարկութեան: Գլուխ 40

Աստ 'ի վերջնում մասանց բանի՝ նաեւ այս գիտելի է, զի գոյ եւ այլ մասն բանի, զոր բանիբուն վարդապետն Սիմէօն Ջուղայեցի՝ ախտական կոչէ եւ ընդ մակբայսն դասակցէ. Իսկ այլք՝ միջարկութիւն անուանեն եւ այլ մասն ասեն բանի՝ Որք են այսպիսիք, ո՜հ, վա՜յ, աւա՜ղ, եղո՜ւկ, եւ այլ: Նա՛ կոչեցաւ ախտական, իբրու ախտակրութիւն. զի ցուցանէ զներքին ախտակրութիւն սրտին, թէ որպիսի կիրս կրէ 'ի յներքին. Զորօրինակ՝ յորժամ երկար ձայնիւ՛ գոչէ ոք, ո՛հ. իմացեալ լինի թէ՝ զմեծ իմն տրտմութիւն կամ զցանկութիւն կրէ 'ի սրտին.
Իսկ կոչեցաւ Միջարկութիւն, զի արկանի իմէջ բանից իբր ըստ ինքեան միայնակ, ոչ ընդ ումեք

կապակցեալ. և թէ որպէս, յէ-
տոյ ուսցիս։ Այլ նշանակութիւնք
միջարկութեանց՝ են զանազանք.
Ոմանք կոչին հիացականք. որք
են, ո՜, ո՜վ, բաբէ. զի իվերայ
գերազանցից ապուշ մնալ ցու-
ցանեն։ Օրգն, ո՜՝ որ մի ես և
միայն մի. ո՜վ խորո՜ցդ անհասու-
թեան. բա՜բէ, որքան առատութիւն
պարգևացդ է տուեալ ՚ի մարդիկ.
Գոնին սոքա և ՚ի վշտ խո՛ր թշուառ-
ութեան. ո՜վ յիմարութեանդ.
որպէս փոխանակես զանանցն
ընդ անցաւորիս։
Ոմանք կոչին եղկականք. վա՜յ,
աւաղ, եղուկ. զի ի վշտ թշուառ-
ութեանց պատկանին. օրգն, վա՜յ
քեզ անձն իմ. աւա՜ղ գերւոյս.
եղո՜ւկ, ո՛չ գտանեմ զինչ արարից.
Ոմանք կոչին ափսոսականք. ո՜հ,
աւաղ, ափսոս. որպէս ասել,
ո՜հ՝ արդարն մոլորեցաւ. աւա՜ղ
իմ անցեալ օրերուս. ափսո՜ս՝ կո
րուսա՜ք զգիտութիւնն.

Ոմանք կոչին երանականք․ օշյ
երանի, մարտան ‖ որք իբրու
խնդալով երանեն զհաճելիսն․
որգոն, ո՛չ յաջողեցան գնացք քո ‖
երանի՛՝ ուր թողուն եղև մեղաց ‖
մարտա՛ն՝ ծանեար զճշմարտուին։
Ոմանք կոչին հաւանականք, կամ
ըղձականք, կամ կամեցողականք։
որք են, ա՛մէն․ եղիցի՛ եղիցի․
Ոմանք են չհաւանականք․ քաւ․
քաւ լիցի․ մի՛ լիցի․ ո՛ն անդր ‖ որպ
մինչ ասէ ոք, որովհետև սիրես
զն, կամիս ուրեմն ատել զած․
՚ի դէպ է ասել, քա՛ւ․ քաւ լիցի,
և այլն․ Յայսցանէ կարէ գոլ և
մակբայս՝ օնևօն․ որէ ևս իբրու՝
մի՛ լիցի, մի՛ արասցէ․ Բայց այսու
որոշի, զի սպառնալ ունի յինքն․
որ յերեսն 166 ցուցաւ․
Ոմանք են հեգնականք․ վահ․
իհ․ էհ ‖ և հեգնելն՝ գովելով
պարսաւելն է․ զոր աշխարհօրէն
տնազել ասեն․ որպ ասել, ի՛հ բը

ժիշկ հմտագունեղ, որպէս շուտ փոխես զհիւանդն ՚ի կենաց։

Ոմանք են յորդորականք, և են այսքա։ ո՛ն․ հապայ․ աղէ ‖ ո՛ն՝ արի՛ք գնասցուք աստի ‖ հա՛պայ՝ յառա՛ջ խաղացէք ‖ ա՛ղէ՝ զմտաւ ածէք։

Ոյոքին՝ կոչին և առհրամայականք․ զի ունին՝ հրամայական բայ հետևելի ոչ ցուցած։ Բայց աղէ, շաղկապ յաճէտ կարէ կոչիլ քան միջարկութիւն․ զի ոչ յոյժ ներքսական բերէ զձայնն․ և լինի շաղկապ, որպէս արդ, ապարդ, և այլն։

Փոխելի՝ է աղէտական, կամ աղէկիզական, կամ ցաւակցական․ Որպէս, փարելի՛, զանպարտն ՚ի խաչ բևեռեցին։ Կամ այսպէս, զանպարտն ՚ի խաչ բևեռեցին, փարելի՛։ Ըստ այսմ են և այսք, է՛ գերի, ա՛յ խղճուկ․

Ը[illegible]՝ է բերկրական․ որ ցուցանէ զներքին բերկրութիւն հոգւոյն առաւ։

Հոյրէ, է վրիժական, կամ հա-
տուցական։ ոպ̃ գողողք փախուցի̃.
գողունեօքն անկցի ՚ի փոս ինչ և
րմբռնիցի, ասեն՝ հայթէ եղև. օխ
Ըստ այսմ երևի, վաշվաշ անձինց
մերոց զի ընկլու՛՛։ Նաև այս,
ասէին ինձ վաշ վաշ։ ուէ օխ օխ.
Յայսցանէ գոլ թուի և՝ այո́ այո́
տեսին աչք մեր։

Յիրաւի, մինչ մինակ գնի, որպ̃՝
քիրա̂ ի՝ բազում պատժոց եմ
արժանի, լինի յանձնառական.
Իսկ Է բայի՝ լինի պատկանական
մակբայ կամ հաւանական. քիրաւի
խոնարհեցու՛՛։ Խիմա՛՛ ԺԹ.

Կարգ Առաջին Հատորի Քեր-
ջանութեանս, որ է Նախաշխնութեան
կամ Արտաշնչիս.

Որոյ զկնի սկսանի Հատորն երկ-
րորդ. որ է Շարամանութ̃ի
կամ Կիրառութ̃ի։

Թւ Յաւուրն Ծրոյ Փառաց յաէի
փոխմս ամէն.

ՃՌՏՈՐ

Նըկըրըդ

ամենայնաբանութեան

Կ իրաւունթէ

Մ ասանց

Բ ունին ։

Որ է Հ արամ

նոսա ընդ իւրեարս

ըստ թերլնողայն ։



## Յաղագս Համաձայնութեան Մասանց Բանին ։

### Գլուխ ։

Ն́ աստ գիտելի է, զի որպ̃
մանկունքն նախ ուսա
նին զանու́անս տառիցն,
և ճանաչեալ տըպաւ́որեն 'ի մտի
զձևակերպութ̃իս նոցին , և ապա́
սկսանին հեգել զն̃ն ը̃ միմեանս
և վանկացու̃ցնել զերուսն ձայնին,
Այսպէս և աստ յետ ուսանելոյ
զմասունս բանին մի մի ըստ իւրա֊
քանչիւր որպիսութեանց նոցին,

սկսանելի է այսուհետև շարա-
հիւսել զն՟ս ընդ իրեարս ըստ կա-
նոնի քերթողացն ։

Որդ՝ շարամանութ՟ մասանց բա-
նին որ է նոյն ինքն բանն, ու-
նի երկուս գլխաւոր տեսութ՟ս.
Համաձայնութ՟ և Հոլովառութ՟ի։

Օրինակ, Կոյսն ծնաւ զք՟ս։

Ի բանի աստ, համաձայնութիւն
այն է, որ կոյսն և ծնաւն նմա-
նեցան իրերաց թուով և դիմաւ։
զի որպ՟ կոյսն է եզական, նոյնպ՟ և
ծնաւն է եզական. և որպ՟ կոյսն է
երրորդ դէմ, նոյնպ՟ և ծնաւն է
եր՟րդ դէմ. Այլ այսպ՟ յա՟մ տեղիս՝
բայն և տէր բային որ է անունն՝
պարտին համաձայնիլ միմեանց
թուով և դիմաւ.

Այլ հոլովառութ՟ այն է, որ ծը-
նաւն էառ զհայցական հոլով՝
զք՟ս. Քանզի սովորութ՟ է ներ-
գործական բային՝ առնուլ ըզ-
հայցական հոլով. (զոր յառաջ


եր

երկրեալ ուսանելոյ եմք։)

Այլ աստ՝ ծնաւն՝ է 'ի ներքոյ ծածկեան նշանակութեն. վյ̃ է առ զհայցականս՝ զքո՛. Այլ յայսցանէ յայտ է, թէ նախ պարտ է համաձայնել զտէր բայից և բայից, և ապա տալ զխնդիրն բային զոր հոլով և պահանջէ։ Ուրեմն նախ զհամաձայնութեն պարտիմք խօսել և ապա զհոլովառութեն։

Այն համաձայնութիւնք մասանց բանին 'ի շարադրութե՝ գտանին զ՛ այսքան, Անուան ընդ անուան։ Դերանուան և անուան։ Մասնական անուան ընդ անուան, Յօդի ընդ ան"։ Բայի ընդ ան"։ և Պատասխանւոյ ընդ հարցման։

## Յաղագս համաձայնութեան

### Անուան ընդ անուան։

### Պրակ 2

Համաձայնութի անուան և անուան այն է, որ ածական

անուանն համաձայնի ընդ գոյականին իւրում թուով և հոլովիւ։

Օրինակ, եթէ գոյականն իցէ եզական, պարտի և ածականն լինիլ եզական։ Եւ եթէ գոյականն իցէ յոգնական, պարտի և ածականն լինիլ այնպէս։ Որգոն, այր բարի, արք բարիք։ Այս՝ համաձայնութիւն ըստ թուոյ։

Եւ եթէ գոյականն իցէ ուղղական կամ սեռական կամ գործիական և այլն, պարտի և ածականն լինիլ այնպէս. որ լինի համաձայնութիւն ըստ հոլովման։ որգոն, Կին բարի, կնոջ բարւոյ, կնաւ բարեաւ։ Կանայք բարիք կանանց բարեաց, կանամբք բարեօք, և այլն։ Իսկ եթէ ասիցի՝ կին բարիք, կամ կանայք բարի, տարաձայնութիւն լինի ի թուոյ. զի մինն է եզական և միւսն յոգնական։ Իսկ ի հոլովմանն համաձայնք են. զի երկոքեանն ևս են

 ուղ-

ուղղականք ։ Ապա՛ թէ ասիցի ,
կին բարւոյ , կամ կնոջ բարի ,
լինի տարաձայնութ՟ ըստ հոլովման .
զի մինն է ուղղական և միւսն սե
ռական ։ Իսկ ըստ թուոյն համա
ձայնք են . զի երկոքեանն ևս են
եզականք ։ Իսկ յորժամ ասիցի
կին բարեաց , կամ կանանց բարի ,
լինի տարաձայնութ՟ ըստ թուոյ և
ըստ հոլովման ։ զի մինն է եզակ՟ն
և մինն յոգնական . մինն է ուղ
ղական և մինն սեռական ։
Ապա՛ այս օրինակք տարաձայնութ՟
վ՟ս այն եղան աստ , զի բացայայ
տանիցես ոչ միայն զհամաձայնու
թի՟ն , այլև զտարաձայնութիւն ։
Ապա՛ յորժամ գոյականն նախա
դասի ածականին , պարտի ածա
կանին համաձայնիլ ը՟ գոյակ՟նին
թուով և հոլովին որպ՟ ցուցաւ ։
Իսկ եթէ ածականն նախադասի
գոյականին , ոչ է հարկ յա՟մ ու
րեք համաձայնել զն՟ս իրերաց ,

Ո ի այնպիսեացն՝ ոմանք համա
ձայնութիւն գեղեցկանան, ոմանք
տարաձայնութեամբ. Եւ ոմանց
միևնոյն յարմարութիւն է թէ հա
մաձայնին թէ տարաձայնին։
Օրին., մեծ զօրութիւն. մեծի զօ
րութեան. մեծաւ զօրութեամբ ‖
այս՝ համաձայնութիւն ըստ թուոյ
և ըստ հոլովման. Բարի մարդոյ,
բարի մարդով ‖ այս՝ տարաձայնու
թեամբ ըստ հոլովմանն միայն.
Բարի կանանց, բարի կանամբք ‖
այս՝ տարաձայնութիւն ըստ թուոյ
և ըստ հոլովման։ Բազում վըշ
տաց, կամ բազմաց վշտաց։ Բա
զում վշտօք, կամ բազմօք վշտօք ‖
այս՝ տարաձայնութիւն և համաձայն
ութիւն։ Եւ սակաւք են որք կարի
ցեն նախադաս դրմամբ յարմա
րանալ համաձայնիլ ընդ գոյականին.
ըստ յոգնականին այլ սակաւք.
Իսկ ըստ ոմանց հոլովմանց յոգնա
կանին ոչ բնաւ. Որպէս ոչ վայելէ

ասել, բարեպաշտք թագաւորք. և այլք այսպիսիք. որովք ոչ վարեցան հինքն. բայց նորքն յարմար հմտիբն և ածեն ուրեք 'ի գործ.

Ս՛ Թէպէտ ըստ սեռականին երևի ուրեք սակաւ ինչ յարմարութ 'ի համաձայնիլն, ոպ ասել՝ բարեպաշտից թագաւորաց, բայց սակայն չհամաձայնիլն՝ ևս բաւողք է. զի համաձայնիլն այսպիսեաց՝ պղտոր բերէ զիմացուածն.

Որօրինակ՝ յորժամ կամիցիմք ցուցանել զժամանակս բարեպաշտ թգրաց և ասիցեմք համաձայնելով, ծաղկեցաւ քրիստոնէուին 'ի ժամանակս բարեպաշտից թագաւորաց, շփոթութիւն լինի բանին. զի ածականս բարեպաշտ՝ ոչ շարակցի թգրաց, այլ շարակցի արանց ժամանակին այնորիկ՝ յորոց վր թգրքն թգրեցին. Իբրու ոչ թէ թգրքն էին բարեպաշտք, այլ ժողովուրդքն ժամանակին այնորիկ.

Նոյն այսպէս ասել երեւի, ծաղկեցին
քրիստոնէութիւն 'ի ժամանակս Թա
գաւորաց՝ բարեպաշտ ժողովրդոց.
Մոյ պարզագոյնք չհամաձայնիլն
այսպիսեաց քան զհամաձայնիլն,
զի համաձայնութիւք սոցա՝ երբեմն
զպարզութիւ բանիցն կորուսանեն
ոմ ցուցան, և երբեմն զհամեղու
թիւն բառնան. մանաւանդ յորժամ
ածէնն գժուարահոլովելի իցէ.
Մորոյ պարզ կանոն նախադաս
ածականին ՟Ը յաճախ կիրառութ
եանցն այնէ. որ եզական և ուղղա
կան մնայցէ. օրգն, Բարի՛ գործ.
բարի՛ գործոյ. բարի՛ գործով ||
բարի՛ գործք. բարի՛ գործոց. բա
րի՛ գործովք, և այլ: Նոյն յայս
պիսի տեղիս՝ ածականն թէպէտ
դնի եզական և ուղղական, բայց
թէ յոգնական իցէ գոյականն
և սեռական կամ՝ այլ ինչ հոլով,
այնպէս համարեցեալ լինի և ա
ծականն։ Այսինքն՝ կերպին է

ղական և զօրութիւն յոդնական ։
կերպիւ ուղղական և զօրութիւն
հոլովեալ ։

Բայց թէ նախադաս ածականն ունիցի զմի ՚ի տառիցս, ս, դ, ն, որք են եղատառ յօդքն, յայնժամ ՚ի հարկէ պարտի համաձայնիլ ը̅ դոյականին թուով և հոլովին ։ Որգն, Մեծին Անտօնի, Սրբոյն Գրիգորի ։ զի ոչ լինի ասել՝ մեծն Անտօնի, սուրբն Գրիգորի ։ և այս ը̅ է ղակ̅նեբն լինի և յատուկ անուանց ։

Լաւ, յորժամ բայն դնի ՚ի մէջ ածկնին և դոյականին, անդ ևս ՚ի հարկէ պարտի համաձայնիլ նախադաս ածականն ընդ դոյականին ։ որգն, Սիրօղքն Այ՝ զանազանից ընդդիմացան փորձութեանց ։ ուստի մեծաց և բազմաց արժանացան վարձուց ։ զի ոչ լինի ասել, զանազան ընդդիմացան փորձութեանց ։ Իսկ թէ զբայն հանես ՚ի միջոյն, կարէ՛ դնիլ այսպէս ։

Սիրողքն ա՟յ՝ զանազան փորձու-
թեանց ընդդիմացան. վասն որոյ
մեծ և բազում վարձուց ար-
ժանացան:

Ցուցական անուանքն՝ և ածա-
կանք ոմանք, որպէս՝ Գծ, այլ,
և այլք, յաճախագոյնս գտանին
համաձայնեցեալք նախադասութ̃
ընդ դոյականին քան զայլ ածա-
կանսն. Որգոն, միոյ աւետարանի
աշակերտքս՝ միով սիրով եմք կա-
պակցեալք. ՚ի միջի ուսուցչի
ուսանելով զայս:

Լէ թուականք եզականակերպք՝
կարեն դնիլ ը̃ եզական դոյա-
կանի, և երբեմն ը̃ յոգնականի:
Որչէն, Է սրահ, տասն այր: հինգ-
զգայութիւնք, տասն կուսանք:
Իսկ որք ոչ ունին զկերպ եզակա-
նի՝ ընդ յոգնական դոյականի դը-
նիլ յարմարին: Որպ̃ ասել, երեք
անձինք, չորք տարերք. զերիս ան-
ձինս, զչորս տարերս, և այլ:

Եւ՞ է այսպիսիքս յորժամ զկնի իւրեանց ունիցին այլ իմն ածական նախքան զդադականն, ին քեանք համաձայնքին, և միւսն ոչ։ Օ՛րգն, միով չնչին պարսաքարին յաղթեաց երկուց հզօր մարտակցացն։ Ողջոյն տուք և այլոց բարեպաշտ եղբարց։

Եւ՞ է երբեմն մինչ երեք լինին ածականքն, առաջինն և երկրդն դնին համաձայն, և յետինն տարաձայն։ Օ՛րգն, և այլովք բազմօք մխիթարական բանիւք խօսէր Է նոսա։ Կամ առաջինն և վերջինն տարաձայն, և միջինն համաձայն։ և այլ բազմօք մխիթարական բանիւք։ Եւ՞ է կամ երբեքեանն և ս դնին տարաձայն։ և այլ բազում մխիթարական բանիւք։ որև հը նոյն է սովորութիւն։

Եւ՞ է յորժամ ածականն և դադականն եդեալք լիցեն ՚ի նախդրի՛ հոլովման, նախդիրն՝ միայն

նախադասեցերոյն դնի. Թէ դոյա
կանն լինէ նախադասեցն. Թէ ա-
ծականն. Որգոն, զայր անիրաւ ա-
տէ՛ Ած: Յանէ անիրաւէ՛ լուաց
լեր. Յանձն չարամիտ իմաստու-
թիւն ոչ մտանէ: Զանիրաւ այր
ատէ՛ Ած. Յանիրաւ ատնէ լուա՛ց
լեր. 'Ի չարամիտ անձն իմաս".
Եւ՝ 'ի տեղիս ոմանս՝ երկուսն եւս
դնի. Որպէս, ո՛՝ որ բան դըր
ուատեսցէ զքեզ կոյս երջանիկ.
որ տարար 'ի քեզ զանմատոյց ըզ
լոյսն՝ զած զանխմնալին: Եւ այս
Ը հայցականին պատկանի լինիլ.
իսկ ըստ այլոցն յոյժ հազւին:
Որ՝ 'ի մանուկ 'ի կուսէն պար-
տեալ ամաչէր, և այլ:
Ե. Ծականս՝ սուրբ, 'ի դրոշմածս
նախնեաց դնի սովորաբար Ը
դոյականին բուրում 'ի հայցական
հոլովման՝ նախադաս դրմամբ ա-
ռանց զայի: Որպէս, մբ զածա-
ծինն և զմն մբս: մբ զառաքեալս
և.

և զմարգարէս ։ մե զհոգւոյն փա-
ռաւորեսցուք , և այլ ։

Շաղկապեալ գոյականքն՝ թէ և եզականք իցեն, զածականն յոգնական թուով պահանջեն ․ զի քան զմին աւելի եզականքն գալով իմիասին՝ յոգնականանան ․ վ͞ս և ածականն նոցին յոգնական դնիլ յարմարի ։ Որգոն , Դաւիթ և Մովսէս գիտունքն մեր ․ Դաւթի և Մովսէսի գիտնոցն մերոց , և այլ ։ Իսկ եթէ երկու շաղկապեալ ածականք նախադասին գոյականին , կամ երկոքին ևս պարտին դնիլ տարաձայն գոյականին , և կամ երկուքն ևս համաձայնիլ ընդ նմա ։ Որպէս , գիտուն և բարի առն դիպեցայ ․ կամ գիտնոյ և բարւոյ առն ‖ գիտուն և բարի արանց ․ կամ գիտնոց և բարեաց արանց ։ Իսկ ոչ է պարտ ամենևին զմինն համաձայնել և զմինն ոչ ։ Բայց բարեգոյն է զեր

կուսն եւ անհամաձայն դնել ըստ
նոյն սովորութեան որպէս ՚ի վեր ասացաւ.

Եւ յորժամ այսպիսի շաղկապել ածականք նախադրիցին գոյականին ՚ի նախդրիւ հոլովման, նախդիրն նոյնին՝ երկուց ածականացն եւ պատկանի դնել։

Օրինակ, զգիտուն եւ զհեզ այր՝ գործ է գտանել. ՚ի գիտուն եւ ՚ի հեզ առնէ մի՛ լինիր ի բաց.

Իսկ եթէ գոյականն նախադասի ածականին, նախդիրն միայն գոյականին եւ յետին ածականին դնի.

Օրինակ, զայր գիտուն եւ զհեզ գործ է գտանել։ յառնէ գիտնոյ եւ ՚ի հեզէ մի՛ լինիր ի բաց.

Բայց մինչ այսպէս վերջադրիցին ածականքն, թէ նախդիրն յետին ածականին եւ ոչ դնիցի՝ ոչ է յոյժ անդէպ։ Օրինակ, զայր գիտուն եւ հեզ. յառնէ գիտնոյ եւ հեզէ.

Բայց զյարմարութիւն այսպիսեաց՝ ըստ տեղւոյն եւ ըստ բառին պարտէ

նկատել. զի ուրեք յարմարի նախ-
դիր և յետին ածականին, և ու-
րեք ոչ։ Մեծ, զայր արիւնահեղ
և զնենգաւոր պիղծ առ" Ի մարդոյ
չարէ և 'ի լեզուանւոյ խեաց լեր։
Իսկ ոմանց նոյնպ̃ յարմարի դը-
նիլն և ոչ դնիլն։ Մեծէն, զայր ար-
դար և զհեզ, կամ հեզ Ի մարդոյ
չարէ և յանիրաւէ, կ̃ անիրաւէ։

Ըստ այսմ և զայլսն խմա։

Այն շաղկապեալ անուանք ոչ
պարտին գոլ խառն 'ի գոյական-
նէ և յածականէ. որպ̃ թէ ասել,
քար և փոքր, ձի և մեծ. Այլ
քար և փայտ, ձի և մարդ. մեծ և
փոքր, և այլ։ Այն ոմանք ուրեք
թարց շաղկապի շարադրին։
'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ ձիթոյ
իւրեանց լցան"։ 'Ի նարգոյ մեղաւորէ
նենգաւորէ փր"։
Իսկ երբեմն 'ի մէջ երկուց ա-
ծականաց գոյականն մնայ,
ընու զտեղի շաղկապի։ Որպէս
ա̃։

ո՛վ համեստ մայրդ մաքուր․ որ է
ո՛վ համեստ և մաքուր մայր․

Իսկ մինչ լինի ածականն՝ այլում ածականի ածական, զայն կանոն համաձայնութե պարտի պահել, զոր ունի ածն առ գոյականն իւր․ Արդ յորժամ ասի՝ մեծ գիտուն, այնպէս է որպէս թէ ածականն նախադասեցաւ գոյականին․

Իսկ մինչ ասի գիտուն մեծ, ոպ թէ գոյականն նախադասեցաւ։

Բայց այսպիսեաց ոմանք մինչ փոխադրին յառաջ և յետ, փոխադրի և իմացուածն․ օրին, Խորամանկ խորհեմ, խորհեմ խորամանկ․ Ահա յառաջնումն՝ խորամանկն եղև ածն խորհեմին․ և յերկրորդումն՝ խորհեմն եղև ածական խորամանկին․ Իսկ մեծ գիտուն՝ թէ և փոխադրեցին տեղեաւ, իմացումն ոչ փոխադրի․ զի թէ մեծ գիտուն և թէ գիտուն մեծ, մեծն է ածն գիտնոյն

և գիտունն ոչ գոյական մեծին.

Եւ յորժամ ասի մեծ գիտունն պղատոն, մեծն ո՛չ է ածական պղատոնին, այլ՝ գիտնոյն.

Թէպէտ երկոքեանն ևս են ի վ̄ր պղատոնին, բայց ը̄ս կարգի իմացման՝ մեծն է ածական գիտնոյն, և գիտունն է ածյ̄ն պղատոնին.

Եւ յորժամ ածականն շաղկապեալ գոյականաց յոգնականանայ ոչ ասջ̃.ք, միւս ածականն որ է ածական ածականին, մնայ եզական. որ̄գն, Դաւիթ և Մովսէս մեծ գիտունքն մեր | այս՝ ը̄ս ուղղականին. Իսկ ըստ սեռականին՝ կարէ համաձայնիլ, կամ ոչ. որպէս, Դաւթի և Մովսէսի մեծ գիտնոցն մերոց. կ̄մ մեծաց գիտնոցն. Իսկ եթէ ածականն բըռնահոլով իցէ, ո՛չ է պարտ համաձայնել. Որ̄գոն, ընտիր գիտնոցն. և ո՛չ ընտրից գիտնոցն.

Եւ տես, զի յորժամ ածականն

լինի ածական ածականի, առանց
շաղկապի դնին առ միմեանս ըստ
օրինակի դրման ածականին ընդ
գոյականին իւրում որպէս ցուցաւ։
Իսկ յորժամ երկու ածականք
շաղկապաւ դնիցին, յայնժամ
ոչ է մինն միւսոյն ածական. այլ
երկոքեանն են ածականք նոյն
գոյականի, կամ թէ այլում ածա-
կանի։ Որպէս, ընտիր և պայծառ
ծաղիկ. Հին և խորին իմաստութիւն։

Այլ 'ի տեղիս ոմանս՝ ածական
անունն 'ի վերջադասիլն և՝
մինչ ունիցի զկնի իւր ընդ բայն
էական, դնի եզական թուով և
յոգնական գոյականի։ Որպէս,
մեղք իմ բազում են յոյժ, ծանր են
քան զաւազ ծովու։ Իսկ ուրեք
համաձայնին. լերինք բարձունք
են եղջերուաց։

Այլ 'ի բազում տեղիս իբր սո-
վորապէս ածականն առանց
գոյականի դնի։ Որպէս, անմիտն

ատէ՛ զխրատ․ արդարն ՚ի հաւատոց կեցցէ․ և յոյժ բազումք․

Նա՛ և յայսպիսի տեղիս՝ գոյականն զօրութ̃ իմացեալ լինի․ այսինքն մտօք՝ իբրու այսպ̃, անմիտ մարդն ատէ զխրատ․ Նա՛ և յորժամ ածականն առանց գոյականի դնի, պարտ է նմա նշանակել զօրութե̃ զգոյականն իւր կամ յատկապէս կամ անյատկապէս․ Յատկապէս, կոյսն ծնաւ զքս̃․ այսինքն մարիամ կոյսն․ Անյատկապէս՝ արդարն ՚ի հաւատոց կեցցէ․ այսինքն արդար մարդն ո՛ և իցէ․ Իսկ յորժամ եդեալ ածականն ո՛չ ունիցի գոյական, ո՛չ գրմամբ և ո՛չ իմացմամբ, յայնժամ ածականն այն է՛ մակբայ․ Որգոն, զայդ արդա՛ր ասացեր․ այսինքն ստուգապ̃։

Նա՛ և երբեմն յորժամ ածականն դնի՛ զկնի գոյականին, և յետ նորին դնի բայն, ո՛չ իմանի թէ ածականն այն՝ անուն է արդեօք

թէ մակբայ. Որպէս ասել, պետ
րոսն անորդի մնաց 'ի տան խըռում.
Յորում անուանս անորդի, կարէ կը
ցել ընդ պետրոսին և լինել ածա
կան նորին, կամ կցել ընդ բային
և լինել մակբայ. Եւ այսպիսիքս
պարտին այսպիսի դրմամբ և ար
տաբերմամբ որոշիլ. Պետրոսն
անորդի՝ մնա՛ց 'ի տան խըռում.
այսինքն, որ է ասել, անորդի պետ
րոսն. Իսկ մակբայ այսպէս,
Պետրոսն՝ անորդի մնաց 'ի տան
խըռում. որ է ասել, անորդի մը
նաց պետրոսն. Ի՛ջ օրինակ.
Ո՛ անոյց զխորհուրդն բարի ծա
նօթից խըրոց. Ի՛ Հա՛ստ ես բա
րին՝ կարէ լինել ածական խորհըր
դոյն, կամ արանցն. զոր պա՛րտ է
նմանապէս բթիւ և շեշտիւ որոշել.
Սորբեմն բարին և չարն և այլք,
թէպէտ դնին առանց դոյակա
նի և ոչ նշանակեն զդոյական ինչ՝
ոչ յատկապէս և ո՛չ անյատկապէս,



բայց

բայց և ոչ են մակբայք. այլ են
գոյական անուանք եղեալք 'ի
տեղի բայականաց իւրեանց՝ բա-
րութ̃ չարութ̃. Ոպ̃ ասել, բա-
րին և չարն ներհակ են միմեանց.
այսինքն բարութ̃ն և չարութ̃ն.
Նոյնպիսիք են՝ քաղցրն և դառն,
պարզն և պղտորն, և այլք.

Երկու գոյական հասարակ ան-
ուանք զնոյն իր նշանակօղք,
Թէ անմիջապէս շարադրին ընդ
իրեարս և թէ միջոցաւ, համա-
ձայնիլ պարտին միմեանց թուով
և հոլովիւ. Անմիջապէս, որգն,
քակեցին զմեհեանն զտեղին բագ-
նեաց. Այս միջոցաւ, քակեցին
զմեհեանն զայն մեծ զտեղին բագ-
նեաց. Ըստ այսմ է, 'ի քաղաք ա̃յ
մերոյ 'ի լեառն սբ̃ նր̃. Որոց եր-
կուցն ևս պարտի դնել հոլովա-
կան նախդիրն ոպ̃ ցուցաւ.
Նոյնպէս լինին և երկու ածա-
կանք զնոյն իր նշանակօղք.

Իսկ երկու գոյականք, կամ եր
կու ածականք՝ այլ և այլ իր նը
շանակօղք՝ համաձայնին իրերաց
շաղկապաւ. Օրին., քար և փայտ.
քարի և փայտի. քարին և փայտին
և այլն։ Մեծ և փոքր. մեծի և
փոքու, և այլ։
Յո՟ ք՟, ը՟ ա՟մ հոլովմանց կարեն
գնիլ համաձայն։ Իսկ՝ սիմոն պետ
րոս, յուդա կիւրեղ, զայն կանոն
համաձայնութեան ունին, զոր ունի
նախադաս ածականն ը՟ գոյականին
իւրում։ Ու ի նախկինն կցեալ
անուանց՝ իբր ածական՝ յատկա
ցուցիչ լինի միւսոյն. Որպէս սի
մոնն է յատկացուցիչ պետրոսին,
և յուդայն՝ կիւրղին։ Ըստ այսց
են և յատուկ անուանք արականք
և իգականք՝ եդեալք առ հ՟որկն
իւրեանց. Որպէս՝ սիմոն դպիր.
կոյսն նունէ, և նմանք.
Իսկ չէզոքական յատուկն ը՟ իւր
հ՟որկին այսպէս համաձայնի.

Գետն փիսոն, փիսոն գետն ‖ գետոյն փիսոնի, փիսոնի գետոյն կամ փիսոն գետոյն ‖ գետոյն փիսոնին կամ փիսոնի, փիսոն գետոյն ‖ 'ի գետոյն փիսոնի, 'ի փիսոն գետոյն ‖ 'ի գետն փիսոն, 'ի փիսոն գետն ‖ 'ի գետոյն փիսոնի, 'ի փիսոն գետոյն ‖ այսպէս և այլք ·

## Յաղագս Համաձայնութեան Դերանուան ընդ անուանս. Գլուխ 3

Ունական Դերանուանքս՝ իմ, քո, իւր, մեր, ձեր, իւր, ուր վերջադասին անուանն, համաձայնին ընդ նմա թուով և հոլովին 'ի յեզականութեան: Իսկ 'ի յոգնականութեան հոլովին համաձայնին· բայց թուով կէս հոլովն համաձայնի և կէսն ոչ· Որգոն, որդի իմ· որդւոյ իմոյ· որդւոյ իմում· որդւով իմով· զորդի իմ· յորդւոյ իմմէ· ցորդի իմ· յորդւոջ իմում· ով որդի իմ: Որդիք իմ· որդւոց իմոց· որդւովք

իմովք. զորդիս իմ. յորդւոց իմոց.
ցորդիս իմ 'ի յորդիս իմ. ո՛վ որ-
դիք իմ. Ոհ՛ ո՛չ ասացի՝ կեանս
յոգնականին համաձայն եղաւ
ըստ թուոյն, և կեանս ոչ. զի ոչ է
բարւոք՝ որդիք իմք, որդիս իմս,
և այլն. Որք թէպէտ գտանին ու-
րեք, և նոքին յաճախ առնուն 'ի
կիր, այլ ոչ և հինքն.

Իսկ յոգնականքս՝ իմք, քոյք,
մերք, ձերք, և սերինքն, յայնժամ
'ի գործ ածիլ յարմարին, յորժամ
առանց անուան ընդ ինքեանց մի-
այնակ դնիցին, և անուանն զօրու-
թեամբ իմացեալ լիցի. Որգոն,
յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ըն-
կալան. Իսկ ուր նախադասին
անուան, կարեն դնիլ համաձայն
հոլովին կամ տարաձայն. հիգոն,
վասն իմոյ անձին, կամ վասն իմ անձին ||
իւրով զօրութեամբն, կամ իւր
զօրութեամբն, և այլն. Բայց՝ սա, 'ի
վերջադասիլն եւ՝ կայ եղեալ 'ի


բա

բաղում ուրեք իբր սովորապէս անհամաձայն հոլովին ընդ գոր_ծիական անուան. բանին քո. կամօք քո, և այլ: Իսկ ըստ Թուոյն համաձայնութե՟, նոյնպէս լինին ունկնքս 'ի նախադասիլն՝ ո՟ղ և'ի վերջադասիլն: Բայց ոչ այնք՟ սովոր են սոքին նխ՟դսիլ անուան,
որքան սովոր են վերջադասիլ:

Սա գիտելի է, զի ունականքս այսոքիկ՝ իվ՟ ունեցել իրացն՝ են իբր ածական անուանք: վ՟յ որպիսութ՟ համաձայնութ՟ սոցին ոչ է հեռի 'ի համաձայնութենէ ածականին ընդ գոյականին.

Ուստի ո՟ղ վ՟ նոցին յերեսն 316 ասացաւ թէ՝ որն և իցէ նախա_դաս, հոլովական նախդիրն՝ նմին առադրի, այսպէս և աստ: Որգն՝ զարարմունս իմ, զիմ արարմունս||
'ի սրտի իմում, յիմում սրտի:
Գտանի ուրեք և երկուցն եդել. և զիմ զաչս եբաց|| 'ի մերմէ 'ի հո

ղեղէն բնութէս ։ և այս լինի 'ի
նախադասիւն դերանուան որոշ
ցուցան ։ Նոյն մանաւանդ լինի
սոյնպէս երկոցունցն ևս եդեալ
յորժամ խմբէ երկուցն այլ ինչ
բառ կամ բառք մտանեն ։ Որգոն
և զքո միասնգամ զգալուստդ ։
'ի քո յանձն առնու բնակել յու
րովայնի ։ Նոյն մինչ վերջադասին
անուան 'ի նախդրիւ հոլովման, հո
լովական նախդիրն իւրեանց զօ
րութի իմացեալ լինի ։ Որգոն,
զորդի իմ ։ զորդւոյ իմմէ ։ յոր
դւոյ իմմէ ։ ցորդի իմ ։ յորդւոջ
իմում ։ Իբրու այսպէս տալով
իմացս, զիմ ։ զիմմէ ։ յիմմէ ։ ցիմ ։
յիմում ։ Բայց վն ծանրաձայն
գոլոյ ասել՝ զորդի զիմ, դնի զոր
դի իմ ։ (Թէպէտ դտանի ուրեք
և այնպէս ։ զխաղաղութիւն զիմ
տամ ձեզ ։) Իսկ ուր նախադա
սին անուան, անդ հոլովական
նախդիրն դերանուան՝ ներդոր


ծու

ծութ̃ դնի՝ և անուանն զօրութ̃
իմացեալ լինի։ Մ՛իդոն, զիմ արար
մունս. յիմում սրտի։ Ընդ 'ի սա
կաւ ուրեք երկուցն ևս դնի ծայ̃
ցուցան, զիմ պաշս և այլ.
Ընդ յորժամ թարց անուան դը
նին, առանց յօդի ոչ յարմա
րին. որպէս եդեալքն իմերոյ,
իւրքն, յիւրսն, և նմանք.
Զի 'ի տեղիս այսպիսիս՝ յօդքն
եղատաուք՝ զզօրութի իմացեալ
անունն տան նշմարել։ Այլ և այս՝
յորժամ զիւրն զնմ հանիցէ.
այսինքն զիւր ոչխարսն։
Ընդ է ուրեք՝ զի անունն ե
դեալ է՝ և դերանունն զօրութ̃
նշմարեցեալ։ Որպէս, և ոչ զանձն
համարեցայ արժանի առ քեզ գա
լոյ։ որ է՝ ասել՝ զանձն իմ ։ զսէրն
այ ոչ ունիք յանձինս։ որ է յան
ձինս ձեր։ Ընդ ոմանց այսպիս
եաց յոյժ պիտոյանայ բութս՝
առ'ի պարզել զիմացուածն։

Հիւէն, գնացէք ցուցէք զան-
ձինս՝ քահանայից։ որ է՝ ասել,
զանձինս ձեր։ Յորում եթէ ոչ
գնիցի բութն՝ քահանայից ան-
ձինքն իմացեալ լինին։

Ծանիր և զայս, զի ասացեալ դերանուանցս սեռականն՝ կայ եդեալ ուրեք 'ի տեղի վերջահո-լով տրականի, և տրականն 'ի տեղի սեռականի։ Իբրու 'ի տեղի ասելոյ՝ ետու որդւոյ իմում, իմոյ։ և 'ի տեղի ասելոյ՝ վ̄ն որդւոյ իմոյ, իմում։ Ի սոյն ոճի են և այսք, անուն նմա յօհաննէս։ որում անուն էր յոբ։ զի՞նչ անուն է քեզ։ Ի տեղի ասելոյ, ն̄ր, որոյ, քո։

Սա՛ իւրն՝ եդեալ կայ ուրեք՝ իւրում, 'ի տեղի ասելոյ՝ իւր։ Տ̄ր 'ի տաճար ս̄բ իւրում։ Ներքինին նստել 'ի կառս իւրում։

Գիտելի է և այս, զի դերանուանս քս, երկուս սեռականս և երկուս գործիականս ունին։ քոյ, քոյոյ։

քով, կամ քոյով ‖ այսպ և յոգնա
կանն, որպ ցուցաւ ՚ի հոլովմանն։
Այս մինչ վերջադասի անուան,
քոյ և քով պատկանի. Իսկ ՚ինա
խադասիլն՝ քոյոյ, քոյով. Որգոն՝
գնա՛ ՚ի տուն եղբօր քո՝ սիրե_
լեաւ քով ‖ գնա՛ ՚ի տուն քոյոյ սի
րելւոյն՝ հանդերձ քոյովք այլովք
սիրելեօք. Բայց ոչ է այս այնպ
կանոն թէ միշտ այսպէս պարտ է
լինիլ, այլ իբրու թէ՝ յարմարա_
գոյնն այս է։ զի գտանին և այն_
պիսիք որք ոչ են այսպ։ Որպ ա_
սել, վ̅ քո բանից, կամ բանից
քոյոյ. բանիւ քով, կամ բանիւ
քոյով. Այսքան վ̅ ունական
դերանուանց։ Իսկ

Յարաբերական դերանունս որ,
պարտի համաձայնիլ ը̅ իւրում
նախընթացին թուով. իսկ հոլո
վիւ՝ առ ուրեք ըստ հանգիպման։
որգոն, Ո՞վ է բուն բարութիւն.
որ է՝ անստեղծ բարին. որոյ բարու

թիւնն անսպառ է. որով կայանայ ա՛մ բարի. զորով ոչինչ է բաց յին-քենէ. զոր բարեբանեն երկինք և երկիր. զորդ պատմեն հանուր եր-նութիւք. յորդ իջանեն համայն բա-րութիւք. առ որ ձկտին ա՛մ իղձք. յորում ճշմարիտ երանութիւն կայա-նայ. այս՝ երջան: Իսկ յոգնակին, երանեցեալ են սուրբքն այ, որք բնա-կեալ են յերկինս. որոյ տեսութիւն

լի է հրճուանօք, և այլն.

Ա՛ ըստ նախնեացն սովորութե՛ գտանի ՚ի բազում ուրեք և թը հով տաղաձայն ՚ը խուռում նախ-ընթացին. այսինքն եզական թը հով ընդ յոգնականի եդեալ. Որպէս ըստ հին օրինակին գոյծ 9, արքն որ ընդ նմայն երթային. ՚ի տեղի ասելոյ՝ որք ի զա՛մ աղգս

զոր արարեր. ով է՛ զորս.

Նոյն յարաբերելի անունն յարա-բերականին՝ երբեմն պատա-հաբար վերջադրի՛ նմին. Որգոն,



որ

որ առաքեացն զիս Հայր՝ ընդ իս է․ որ է ասել՝ Հայր որ առաքեացն զիս ։ զոր ոչն կամիմ զչարն՝ զայն գործեմ․ որ է զչարն զոր ոչն կամիմ ։ Իսկ երբեմն նախընթացն ոչ դնի ներգործութե՛ , այլ զօրութեամբ իմացեալ լինի․ կամ յատկապէս, կամ անյատկապէս ։ Յատկապէս, որ ստեղծ զմեզ, կամի՝ զի կեցցուք ։ այսինքն Ած ։ Իսկ անյատկապէս, որ հաւատայ յիս, կեցցէ ։ այսինքն ով որ և իցէ ։

Նաև յարաբերականն՝ յոյժ օգտակար ձեռնտու է շարադրողին․ զի յորժամ զանուն իմն կամիցիմք կրկնել և վերակրկնել, դնեմք որ և նովաւ հնարեմք զկրկնումն ։ զի զնոյն անուն կրկնել և վերակրկնել ոչ բարւոք գայ լսելոյ ։ Միայն դնի յարաբերականն ՚ի տեղի նորին իբր յիշելով զնոյն անուն որ հոլովին և պահանջին ։ որպէս ցուցանեն իմերոյ իմոյ անուանս՝ Մ․Թ․ ե․

Շաղկապել եզական անուանքն զյարաբերական դերանունն՝ յոգնական թուով պահանջեն։

Ո՛րգոն, դաւիթ և մովսէս փիլիսոփայքն հայոց՝ որք վարժեցան 'ի յաթէնս, իմաստութեան արմատք եղեն մեզ։

Իսկ՝ էական և ցուցական դերանուանքս՝ նա, սա, դա, միշտ սեռական հոլովին կցին ընդ անուան. զի անունն ինչ հոլով և իցէ, ոչ 'ի սեռական գոլոյ ոչ անկանին։ Ո՛րգոն, որդի նորա. որդւոյ նորա. որդւով նորա. զորդիս նորա. յորդւոց նորա. 'ի յորդիս նորա, և այլ. որք են հոլովառութիք և ոչ համաձայնութիւնք. Ո՛ի այնք դնին համաձայնք, որք զնոյն իր նշանակեն. Իսկ որք զայլ և այլ իրս ցուցանեն, հոլովառուք շարակցին.

Որպէս ահա գործիականաւ՝ նովին, և ներգոյականաւ՝ 'ի նմին, որք ըստ եզականին միայն ձևանան,

յորժամ ընդ անուան կային , վա
զնոյն իր ցուցանելոյ՝ համաձայնին
ընդ նոսա թուով և հոլովիւ .
Նովին մարմնովն ել յերկինս .
'ի նմին տան ագանիցիք .
Նա՛ սոքին և յայսպիսի տե_
ղւոջ իբր յօդ 'ի գործ ածին .
զի նոյն է ասել , նովին մարմնովն
կամ նոյն մարմնովն . 'ի նմին տան
կամ 'ի նոյն տան . Նոյն և միւս
դէմքն , սովին դովին , 'ի սմին 'ի
դմին . Իսկ մինչ ը̄ բայի կային՝
զուտ դերանուանք են և յարա_
բերողք . Որգոն , ա՛ռ զվահանն հա
ւատոյ և նովին մարտիր | յոր կո
չումն կոչեցար՝ 'ի նմին կացջիր .
Իսկ թէ ասիցի , այնու մարտիր ,
'ի յայնմիկ կացջիր կամ 'ի նոյնում
կացջիր , յօդքս՝ այնու , և այն՝ լի
նին դերանուանք . զորոց և
յայլում լուիցես .
Նաև պակասականքս՝ միանց ,
իւրոյ , ըստ ցուցականաց՝ սե_

ւականաւ կցին ընդ անուան ·
Որպ ասել՝ գործակցութիւ իրե-
րաց՝ շինեցին զտունս միմեանց:
որք են ևս հոլովառութիւնք·
Սարէ՛ լինիլ և իւրեանն, ընկերն
իւրեան· զընկերն իւրեան· ընկե-
րաւն իւրեան· Թէպէտ հազիւ·
Որպ ՚ի շարակնոցին, իւրեան գոր-
ծակցօք· Իսկ՝ եւ, դու, ինքն, ընդ-
բային յաւէտ ունելով զլուծ՝
անդ տեսցին ·

## Համաձայնութիւն Ասնականաց ան-
## ուանց ընդ անուան ·

## Գլուխ 4

Ասնականքս՝ ոմն, ոք, իմն, համաձայնին ընդ անուան թուով և հոլովիւ· որգոն, Ոմն կին · ուրումն կնոջ · կնաւ միով | կանայք ոմանք · կանանց ոմանց · կանամբք ոմամբք, նոյն · Եթէ ոք մարդ · եթէ մարդոյ ուրուք | եթէ մարդիկ ոմանք ·

 եթէ

եթէ մարդոց ոմանց, և այլն.

Փայտ իմն. փայտի իրիք. փայտիւ իւիք։ փայտք ոմանք. փայտից ոմանց, և այլն.

Նաև գիտելի է, զի մասնականքս՝ կարեն թէպէտ նախադասիլ և վերջադասիլ անուանն, սակայն՝ ուրեք նախադասիլն է համեղ՝ ուրեք վերջադասիլն. և ուրեք երկուքն ևս։ Նաև յեզականն գործիականումն, յարմարագոյն է՝ միով, քան ոմամբ. Որպէս ասել, գնաց տիկինն միով նաժշտիւ, և ոչ՝ ոմամբ նաժշտիւ։ զի ոմամբն ոչ ունի պարզապէս զնշանակութիւն միոյ մասնականի որպէս ոմն։ Իսկ 'ի յոգնականումն վայելչագոյն է, եթէ թագուհին նաժշտիւք ոմամբք։ Նաև զի՝ թուական անուն՝ մի, 'ի բազում ուրեք համազօր է մասնական անուանց. այր մի էր 'ի կեսարիա. առն միոջ էին դ դստերք։ որ է այր ոմն. և այլ.

Անուանքս՝ այլ, իւրաքանչիւր, որք են մասնականք համարին, 'ի կըցիցն Ը. մասնականացս՝ ոմն, ոք, իմն, կարեն համաձայնիլ ընդ նմին ըստ հոլովման, կամ մնալ ուղղական. Մարդոյ, այլումն, այլոյ ուրուեմն կամ այլ ուրուեմն. Իւրաքանչիւրոք, իւրաքանչիւրոյ ուրուք կամ իւրաքանչիւր ուրուք. Այլ իմն, այլոյ իրիք կամ այլ իրիք: Ըստ այսց և

Երկաքանչիւրն լինին։

Գիտելի է և այս, զի մասնկունքս՝ ոմն, ոք, իմն, թէպէտ միապէս զմասնաւոր էութիւն նշանակեն, Բայց իմն, անշունչ իրաց կամ յոյժ նուազ կենդանեաց պատկանի գընիլ. Մրգոյ, քար իմն, շիւղ իմն. մրջիւն իմն, զեռուն իմն, ևնման. Իսկ ոմն՝ մարդոյս միայն պատկանի. որպէս՝ եթէ ոք կին աղօթիցէ, քահանայ ոք եթէ գայցէ, և այլ Իսկ՝ ոք, թէպէտ ամենեցուն կարէ պատկանիլ, բայց կենդանեաց

 առա

առաւել, և մարդոյ յոյժ առա-
ւել։ Այս թէպէտ այսպէս, բայց
ինձ պատկան այն թուի՝ զի ոչ,
և ոչ, մարդոյս դիւրին և հրեշտա-
կաց, և այլոցն ամենից՝ ինձ.

Իսկ 'ի բազում ուրեք իմոյ անշունչ
իրաց՝ 'ի տեղի սպասու՝ կամ ա-
ռելոյ՝ ինձ, գտնի յարմարագոյն անհը-
լով մասնականս՝ ինչ. Որպէս ա-
սել, 'ի ժողովելն նոր խուրճ ինչ,
շիւղ ինչ եմուտ 'ի մասն նոր.

Իսկ թէ ասի՝ սկի ինչ, փոքր ինչ,
նիւթս գտնի անուան. սակաւ ինչ
խուրճ, փոքր ինչ խմոր, և այլ.

Ոչ ինչ, գտնի ուրեք 'ի տեղի մակ-
բայից՝ մինչդեռ, տակաւին,
իբրև, յորժամ. և յայտնի է
ուր եդեալն է.

Ոմն ինչ, ոչ ինչ, լինին ընդհանրա-
կան անուանք և ոչ հոլովին.
Որ ինչ իմ է՝ քո է. Ոչ ինչ է իմ,
որ չիցէ քո. Նայց՝ ոմն, թէ ըղ-
ձքութիւն ասէ, կարէ հոլովիլ և-

զական · կախեաց զերկիր ի վերայ
ոչընչի յոբ 26 · յոչընչէ արար զգ
մեզ, և այլ ։ Իսկ՝ ինչ, եթէ ապ
րանք նշանակէ, յաւէտ յոգնակն
վարի · ինչք ընչից ընչիւք, և այլ ·
Իսկ թէ մասնական անուն, ան
հոլով և անյոգնական ։

Որ ինչ, ոչինչ, թէպէտ են ան
յոգնականք, բայց եզական կեր
պիւ՝ են գերադոյն յոգնակնք ·
Ինչ՝ գնի ուրեք և իբր զարդ,
միթէ դու մեծ ոք ինչ ես ք̃ զնա ·
Ունի թէպէտ և այլ տեսուիս,
բայց առ այժմ այսքան ։

Մասնականս ոչ, նախքան զինքն
ունելով՝ ոչ, լինի ընդհանրական
անո ն ոչ որ ինչ ոչինչ · Երգոհ,
ոչ ոք կարէ երկուց տերանց ծա՛.
Իսկ ըստ ինքեան ևս՝ ոչ, նշանա
կէ ուրեք զընդհանրութիւն ·
մի ումեք ասիցէք զբանդ ·
Ոչ հա՛ ոմն՝ է ը՛ հանրական · բայց
այնոչ, ոչ թէ մասնական և ընդ

 հան

հանրական, զի զամ մասնականսն ընդհանրապէս նշանակէ։ Նոյնպէս են

իւրաքանչիւր-քն և իւրաքանչիւրութիւն։

Արկանելով ուրեք զմի և զնոյն անուն, գտնեն 'ի տեղի իւրաքանչիւրի. Որգոն, մի մի 'ի նոցանէ տանէր մարս երկուս. որ է իւրաքանչիւր 'ի նոցանէ. Նա տուն տուն պահապանս եդ. որ է իւրաքանչիւր տան. Նաև վասն այնր լինի այս, զի և ձայնս իւրաքանչիւր՝ ինքնակրկնեալ է. իւր, իւրաքանչիւր. Նոյս միջոցաւն՝ ասանց, երկուք միայն գտանին բարդեցեալք. իւրաքանչիւր, երկաքանչիւր, և ոչ այլ. Տես և զայս, ամենայն ոք, ամենայն ինչ յարմարի. Իսկ՝ ամենայն ումն, ամենայն իմն՝ ոչ.

Նաև վասն մասնական անուանց այսքան. Զորոց թէ այլ ինչ անցան արտաքոյ համաձայնութեան, մի՛ ինչ մեղադրեր. զի ըստ մերս գիտման աստ պատկանեցաւ։

## Յաղագս Համաձայնութեան Յօդի ընդ անուան։ Գլուխ 5

Յօդքս այսոքիկ, ս, դ, ն, ըստ նմանութեան ածական անուանց՝ մինչ վերջադասին անուան, համաձայնին ընդ նմա թւով և հոլովին։ օրգ․ Մանուկս այս․ մանկանս այսորիկ․ մանկամբս այսու կամ այսուիւ․ զմանուկս զայս․ 'ի մանկանէս յայսմանէ կամ այսմանէ․ 'ի մանուկս յայս կամ այս․

'ի մանկանս յայսմիկ կամ այսմիկ։ Մանկունքս այսոքիկ․ մանկանցս այսոցիկ․ մանկամբքս այսոքիւք․ զմանկունս զայսոսիկ․ 'ի մանկանցս յայսցանէ կամ այսցանէ․ 'ի մանկունս յայսոսիկ կամ այս", եւայլ։

Իսկ յորժամ նախադասին, ուրեք համաձայնին և ուրեք ոչ։ օրգ․ Այս մանուկս․ այս մանկանս կամ այսր մանկանս․ այսու մանկամբս կամ այս մանկամբս․


զայս

զայս մանուկս • յայս մանկանէս
կամ յայսմանէ մանկանէս • յայս
մանուկս • յայսմ մանկանս կամ
յայսմիկ մանկանս • Այս ման-
կունքս • այս մանկանցս • այս ման
կամբքս • զայս մանկունս • յայս
մանկանցս, և այլն։

Ս՛է տես, զի սոքա յորժամ վեր
ջադասին անուանն՝ հոլովական
նախդիրն իւրեանց՝ երկուցն ևս
դնիլ յարմարի՛ • իսկ 'ի նախադա-
սիլն ո՛չ։ Այսոյն 'ի վերջադասիլն
և՛ կարէ դնիլ յօդն առանց յիւր
բայց ո՛չ և առանց զայն ոմն ցու-
ցանէ։ Ս՛է նախդիրս՝ ա-, որն և
լիցի նախադաս՝ նմին առադրի։
որգոն, առ մանուկն այն • առ այն
մանուկն։ Իսկ նախդիրքս՝ ց, ըստ,
եթէ նախադաս լինի յօդն՝ նմին
միայն առադրի։ որգոն, ե՛կն մինչև
ցայն մանուկն • խօսէր ընդ այն
մանուկն։ Իսկ եթէ վերջադաս
լինի • երկուցն ևս նախադրին •

որպէս՝ ցմանուկն ցայն ․ ընդ մա
նուկն ընդ այն ։

Յօդքս այսոքիկ՝ սոյն, դոյն, նոյն, մինչ նախադասին անուան, ուրեք համաձայնին, ուրեք ոչ ։ Որգոն, նոյն մանուկն ․ նոյն մանկանն կամ նոյնոյ մանկան ․ նոյն մանկամբն կամ նոյնով մանկամբն ․ ՚ի նոյնոյ մանկանէ կամ ՚ի նոյն մանկանէ ․ ՚ի նոյնում մանկան կամ ՚ի նոյն մանկան ․ Նոյն մանկունքն ․ նոյն մանկունցն ․ նոյն մանկամբքն ․ զնոյն մանկունսն ․ ՚ի նոյն մանկանցն, և այլ ։ Իսկ եթէ վերջադասք լինին, պարտին համաձայնիլ ընդ անուան թուով և հոլովին ։ սակայն յոյժ սակաւակի հանդիպի այն, որպ̃ և յերեսն 134 ասացեալ է ։ Նա յօդս՝ նոյն, թ̃պտ ը̃ ինքեան է երրորդ դէմ, սակայն առ երեքս դէմսն ևս բայից կարէ շրջածիլ ։ Որգոն, ես նոյն տէրն եմ ․ դու նոյն հզօրն ես ․ նա նոյն գթածն է ․

Ըստ որում և դերանուանքս՝ որ, ինչն, յերեսն 120 ասացան.

Ըստ որոց են և պակասականքս՝ մեծանց, իբրեւրոյ, տես յերեսն 126.

Նոյն, դնի ուրեք 'ի տեղի ասելոյ՝ ոչ է այլ և այլ. Որգոն, նոյն հոգի է որ տայ զանազան շնորհս. Կամ թէ ասել, մի և նոյն հոգի է որ տայ զան''.

Ծանիր և զայս, զի սեռականս այսր, միշտ նախադաս լինիլ յարմարի: Որգոն, այսր մանկանս. և ոչ մանկանս այսր. Իսկ այսորիկն, վերջադասիլ առաւել յարմարի քան նախադասիլ: Նոյնպէս և վերջահոլով տրականս՝ այսմ, նախադասիլ պատշաճի, այսմ մանկանս: Իսկ այսմիկն՝ դնիլ կարէ յարմարապէս նախադաս և վերջադաս:

Նա՛ տես, զի ձայնս՝ այս, է յօդ և անուան դիմի: այսպէս և՝ այսպ. Որդ՝ եթէ յօդ, հոլովի որպէս յերեսն 137. Իսկ թէ անուան

դիմի, հոլովի որպէս գործ գոր
ծոյ գործով, և այլն։

Միատառ յօդքս՝ ս, դ, ն, ուրեք ուրեք հականդիմականք լինին. այսինքն այլ դէմ այլում դիմի առադրին։ Որպէս, յոր եսն յուսացայ։ որում դուն վկայեցեր։ գիտեմ զոր ընտրեցիդ։ Ի քոյոցս քեղ ընծայեմ, և այլ։ ԵՒ պատճառն այսորիկ երկու է։ Բայց զայս ևեթ ծանիր, զի յայսպիսի տեղիս՝ բառն ինչ դէմ և իցէ՝ ըղ նոյն դէմ պարտիմք ըմբռնել։ Որպէս ձայնս՝ եմ, թէպէտ ունի յօդ երրորդ դէմ, բայց զի ինքն՝ ես, է՛ նախկին դէմ, նախկին դէմ համարելի է։ այսպէս և զայլսն իմա։ Որոց յօդքն իբրու զարդք են, և ոչ ըստ յոյժ պիտանութեան եդեալք։ Որպէս և այսք, որ յերկնից դայ։ զոր ոչն գիտէք։ և այլք բազումք։ Յաճախ ճարտասանք 'ի բազում ուրեք վ՚ղ զարդարուն



բե

բերելոյ զբանն՝ զեզատառ յօդն զատեն 'ի բառէն իւրմէ և ընդ այլում բաղադրեն. Ո՛րգոն՝ զմաքուրն մայր, զանհայրն ծնօղ, ըզ մերն միջնորդ, սիրեմք և գովեմք: Որ իմանի՝ զմայրն մաքուր, ըզ ծնօղն անհայր, զմիջնորդն մեր. Ա՛ տես, զի ասելն՝ վ͞ս կնոջն սամարացւոյ, զկինն սամարացի գոլ ցուցանէ. Իսկ ասելն՝ վ͞ս կնոջ սամարացւոյն, կամ կնոջն սամարացւոյն, զկնոջ այրն սամարացի նշանակէ: սոյնպիսիք և այլք գտանին.

Յօդս՝ ն, դնի ուրեք 'ի տեղի ամ͞ի. մարդն բանական է, և կապիկն անբան. իբրու ասէ, ամէն մարդ. ամէն կապիկ. Իսկ մարդն որովհետև տեսակ մեր է, կարէ և սէիմ՛ դնիլ. Ո՛րգոն, մարդս մեղանչական է. որ է իբր ամէն մարդ. Թէպէտ գտանի՝ մարդ բանական է, բայց չէ այնքան յարմար ո͞ճ յօդիւն.

## Համաձայնութիւն Պատասխանաց ընդ Հարցական անուանց ։

### Պրակ 6

Տեսակք հարցման թէպէտ բազումք են, ոմանք անուանականք, ո՞վ ես դու։ ոմանք բայականք, տեսե՞ր զնա։ և ոմանք մակբայականք, ո՞ւր էիր։ Բայց աստ ըզ հարցական անուանսն միայն պարտիմք իմանալ։ Որք են, ո՞վ, ո՞, ո՞ր. զի և այս որ, ՚ի բազում ուրեք հարցական լինի։ Եւ պատասխանականն անունն պարտի համաձայնիլ հոլովիւ ընդ հարցականին յամ ուրեք։ Իսկ թուով՝ ո՛չ յամ ուրեք. այլ ըստ հանդիպմանն. որգոն, Ո՞վ ստեղծ զքեզ. ած. Ո՞յր ես պատկեր. այ. Ի՞ւ կեաս. շնորհիւն այ։ Ո՞ւ սոյց զքեզ. վրդպտք եկեղեցւոյ։ Ո՞ւմ ես աշակերտ. վարդպտաց եկեղեցւոյ. Ի՞ւ ուսար զայդ.

շնորհօքն ա՟յ. զի՟ւ փարիլ կամիս.
զքի՟ն. զո՞ առաւ՟ել սիրես. զք՟ս.
զուժմէ՛ խօսիլ փափաքիս, զքէ.
յորմէ՞ ուսար զայդ, ՚ի մ՟բ եկե՟
ղեցւոյ. յո՞ դիմել ցանկաս, ՚ի
քս՟ յս՟. յո՞ւմ հանդչիս քս՟, ըն
սիրտս հեզոց. ո՞ր է դուռն երա
նութե՟, քս՟. Ոյք են սիրողքն
զնա. պահօղքն զպատուի՟րանս նր՟.
որո՞ց տայ զպսակն կենաց. սիրո
ղացն իւրոց. այսո՟ւ և այլքն:
Ըհա՛ ո՟ւ ասացաք՝ ոմանք եդան
համաձայն հոլովի՟ն որ հա՛րկ է,
և ոմանք համաձայն թուո՟ւոյ և հո
լովի՟ն ըստ հանդիպման:
Նա՛ և տես, զի ո՟ւ յարաբերականս
ո՛չ ՚ի բ՟ղ՟ւմ ուրեք լինի հարցական,
այսո՟ւ և հարցականս՝ ո, դնի յարա
բերակն. Որանի ում թո՛ղ եղև
մեղաց. ՚ի տեղի ասելոյ՝ որում.
Որոյ մանաւանդ յոգնակին՝ ոյց,
դնի ՚ի տեղի որոց. Որպէս ՚ի մ՟բ
երգսն դաւ՟թի՛ է տեսանել:

## Յաղագս Համաձայնութեան Բայի ընդ Անուան.

### Գլուխ 7

Ի համաձայնութեան բայի ընդ անուան՝ անուն և դերանուն՝ մասնական և ընդհանրական և հարցական անուանք՝ և յօդ՝ և անուանացեալ ընդունելութիւն միապէս վարին. Որք Թէպէտ զանազան մասունք են բանին, սակայն առաջի բային միևնոյն են. Վասն զի որն և իցէ 'ի նոցանէ՝ կարէ ունիլ զբայն և կոչիլ անուն բայի կամ ներբայի. Վասն որոյ 'ի լսելն քո՝ անուն բայի, ոչ միայն զանուն պարտիս մտածել, այլ նաև զմիւս անուանս հոլովելի մասունս. որք ամենեան առաջի բայիս անուն համարեցեալք են: Այս է պատճառն որ զհամաձայնութիւն բայի ընդ անուան՝ ի վերջոյ եդաք քան զայլսն. զի

այնոքիկ ամենեքեան համաձայն-
եալքն ընդ իրեարս մինչև ցաստ՝
'ի կողմանէ բային անուան համա-
րեալ են ոչ ասացաք.

Արդ՝ ա՟մ դիմաւոր բայ՝ ունի
կառավարող ինքեան անուն իմն
ուղղական. որ է տէր այնր իրա-
կութեն: Օրգ.ն, պետրոսն գնաց.
պօղոսն մնաց. եպիփան ննջեաց:
Որև բայըն՝ իւրում անուանն
պարտի համաձայնիլ թուով և դի-
մաւ. Այսինքն՝ եթէ անունն
իցէ եզական, պարտ է և բային
լինիլ եզական: Իսկ թէ անունն
իցէ յոգնական, պարտ է և բային
լինիլ յոգնական: Իսկ թէ ա-
նունն իցէ առաջին դէմ, կամ
երկրորդ, կամ երրորդ, պարտ է
և բային լինիլ այնպէս: օրգ.ն,
Ես գնացի. դու գնացեր. նա գը-
նաց: մեք գնացաք. դուք գնա-
ցիք. նոքա գնացին: Իսկ թէ՟պտ
անունն և ընդունելութիւն ոչ ու-

նին դէմս ինքեանց , սակայն յօ֊
դիւ դիմաւորին և յատկանան
որպէս յերեսն 132 ասացաւ ։

Իսկ անյօդ ուղղական անուանքն
'ի համաձայնութե բային՝ երրորդ
դէմ համարեցեալ են ․ զի զնոյն
դէմ բային պահանջեն սովորա֊
պէս ․ մանաւանդ յոդնականքն ․
Ո՛րգոն , երկիր շարժեցաւ ․ վէմք
պատառեցան ․ գերեզմանք բացան ։
և այլք բազումք ․

Իսկ կոչական անուանքն թէ յօ֊
դաւորք թէ անյօդք՝ ամենքն են
երկրորդ դէմ ․ որք և ընդ այնմ դիմի
բային համաձայնին ․ Ո՛րգոն ,
ո՛վ պետրէ՝ լո՛ւր ձայնի ․ ղա՛զարէ՝
ե՛կ արտաքս ․ արդ թագաւորք զայս
'ի միտ առէ՛ք՝ և բազումք ․

Եզական ուղղականքն յայնժամ
մանաւանդ դնին թարց յօդի ,
յորժամ շարակցին ընդ սոսա ,
ամէն ․ ամ ․ ոմն ․ ոչ ոք ․ իւրաքան֊
չիւր , և այլ ։ Ո՛րգոն , ամէն մարդ


ըն

ընթանայ․ ա՛մ մարմին խօսէ․
ումն զինուոր էր ընդ նմա․ ոչ ոք
անզեղջ արդարանայ․ իւրաքան-
չիւր մարդ՝ է յատուկ անձն։

Հարցական անուանքն են՝ ո՞, ո՞վ, ը̃ ե՞րդ դիմի բային շարակցին․ որպ՝ ո՞ արար․ ո՞վ ասաց․ Ի՞նչ ոչ ասի՝ ո՛ արարի, ո՛ արարեր․ և այլ․ Բայց մինչ ընդ էական բայիս՝ եմ, կցցին, ընդ երկս դիմսն ևս կարեն շարակցիլ ուղղ., ո՞ եմ ես․ ո՛ ես դու․ ո՛ է նա։ Ըստ այսց են և մասնականքն։

Իսկ յարաբերականս որ, ՚ի լինիլն հարցական՝ միշտ ընդ եր̃դ դէմն շարակցի․ ո՞ր է դուռն երկնից․ ո՞ր բան գովեսցէ զքեզ, և՛․ Նաև յետ էական բային՝ ընդ դերանուան կցիլ ոչ ունի ոպ ըզ միասն․ զի ոչ կարէ ասիլ որ է սա, ո՛պ ասի ո՛ է սա։ Ի՞նչ գիտացեալ փոքրինչ զհամաձայնութիւն, ծանիր և զտարաձայնութիւնն ․

Ոչ ի յասելն՝ ես գնացաք, դու
գնացիք. կամ մեք գնացի, դուք
գնացեր. լինի տարաձայնութիւն
ըստ թուոյ: Այլ յասելն՝ ես գը
նացեր, դու գնացի. կամ մեք գը
նացիք, դուք գնացաք. լինի տա
րաձայնութի ըստ դիմի: Իսկ թէ
ասի՝ ես գնացիք, դու գնացաք.
կամ մեք գնացեր, դուք գնացի.
լինի տարաձայնութի թուոյ և
դիմի. որք ամենեքեան աւերք
և անկանոնք են:

Շաղկապեալ եղեն անուանքն
զբայս յոգնական թուով պահան
ջեն. զպատճառն ի համաձայնու
թեն անուան յերեսն 318 անցաք:
Որգոն, ողորմութի և ճշմարտութի
պատահեսցին, արդարութի և խա
ղաղութիւն համբուրեսցին:
Իսկ ոմանք ուրեք եզակինին հա
ճանին. ամպ և մէգ շուրջ է զնո
վաւ. ահ և դողումն եկն ի վր իմ.
ամ դատանութիւն և բարկութի


և

և սրտմտութին բարձցի 'ի ձէնջ.

և այլք սոյնպիսիք.

Ի, յսպիսեաց եղական բայն' զօ րութ յոգնական իմաստ լինի. և կարէ դնել թէ կամիս. շուրջ են զնովաւ. եկին խիտ իմ. բարձցին 'ի ձէնջ. Ի՛ ոմանց նոյն եղա կան բայն' իմաստն լինի զօրութ վերաբերել առ իւրաքանչիւր շաղ կապեալ անունն. Որպէս այս, ուր հեռ և նախանձ է, անդ է ան կարգութի' և ատելութի' և բար ձումն ամ բարեաց. Որ է ասել, ուր հեռ է և նախանձ, անդ է անկարգութի և անդ է ատելութի և անդ է բարձումն ամ բարեաց. Բայց քանզի զնոյն բայ կրկնել և այլ կրկնել ծանրաձայն թուի'

մի' անգամ դնի և բաւ է.

Յորժամ զկնի եղական բային դնի իւր եղական անուանն, ըզ կնի նորին եթէ գայցէ շաղկա պեալ յոգնական անուն, նոյն

եղական բայի՛ն շատանայ։ որգոն
Կոչեցա՛ւ յս̃ և աշակերտքն նորա
՚ի հարսանիսն ։ գլուխ իմ լցաւ
ցօղով, և վարսք իմ տարափով գի-
շերոյ։ ՚Ի շաղկապեալ անուանսն
թէ այլ և այլ դէմք գտանին ,
բայն նոցին՝ գերագոյն դիմին հե-
տևի։ և է՛ գերագոյն դէմ նախ-
կինն քան զերկրորդն, և երկ̃րդն
քան զերրորդն։ որգոն, Ես և դու
ուսանիմք ։ և ոչ թէ՝ ուսանիք ։
Դու և պետրոսն ուսանիք ։ և
ոչ թէ՝ ուսանին։ Ես և դու և
պետրոսն ուսանիմք ։ և ո՛չ թէ
ուսանիք, կամ ուսանին։ Ես՛ ու-
րեք թարց շաղկապի դնին ան-
ուանքն։ ռուբէն, շմաւոն, ղևի,
յուդա, եղբարք էին։

Անեզական անուանքն ըստ յոգ-
նակերպութեան ձայնին՝ զբայն
յոգնակին խնդրեն ։ Որգոն,
լցան հարսանիքն բազմականօք։
և կեանք են ՚ի կամաց նորա ։

 բայց

Բայց ոմանք ուրեք կարեն դը
նիլ եղականաւ և ոչ է անդէպ.
լցաւ հարսանիքն , շինեցաւ բա
ղանիքն , կարծիքն քո ստոյգ է ,
և այլ. որև ծնոցն է սովորութի.
Ո. յապախսիքս յայնժամ մանաւանդ
յարմարին եղական բայի , յոր-
ժամ ընդ եղական անուան դը
նին կամ ընդ աներևոյթ բայի.
Ո՛րգոն , տրտմութիւնն կիրք է.
երկբայութիւնն կարծիք է. աստ
դոլն քո փառք է ինձ. խօսիլն քո
կեանք է մեզ. Իսկ թէ յոգնա-
կան է կցեալ անունն ընդ նմա ,
յայտ է զի և բայն յոգնակին դնի.
որգոն , բանքդ այդոքիկ կիրք են
ինձ. Բայց անեղական անեղակա
նի հանդիպեալ , կարէ ուրեք ե-
զական բայիւ շարակցիլ. Ո՛րգոն
կեանքն մեր ընթացք է. արտա-
սուքն վասն մեղաց՝ հոգևոր
բաղանիք է :
Զայնս՝ խորանչիւր , ունելով ըզ

նշանակութ̃ մասնաւոր ընդհան
րութ̃ որպէս ասացաւ, կարէ՛ շա
րակցիլ երբեմն ը̃ եզական բայի՛
և երբեմն ը̃ յոգնակինի։ Որգն,
եթող յայնժամ իւրաքանչիւր ըզ
գործն իւր։ Թողին իւրաք̃չիւր
զգործս իւրեանց։ Իսկ՝ 'ի կցելն
ընդ եզակեան անուան, կամ ընդ
մասնականիս ոք, սովորապէս զե
զականն պահանջէ։ իւրաքանչիւր
այր՝ զիւրն հաց կերիցէ։ իւրա
քանչիւր ոք զիւր միտս հաճեսցի։
Սակայն կարեն երբեմն և յոգնա
կանաւ գնիլ։ իւրաքանչիւր այր՝
մտին ընդ պահօք։ Իսկ թէ ընդ
յոգնական անուան գնիցի, 'ի
հարկէ յոգնական գնի և բայն։
Որգն, իւրաքանչիւր ծաղկունք
ետուն զհոտս իւրեանց։

Սա՛ այսոքիկ, ամ̃ ինչ. ամ̃ ոք.
ամ̃ մարմին. որ ինչ. ոչինչ. ոչոք,
թպտ̃ ը̃ հանրական ասութ̃ք են,
բայց զի ձայնիւ եզականք են,

զբայն կամ զյարաբերկն դերա-
նուննն եղական խնդրեն. ուղղն,
ամ ինչ նուաճ եղև. ամ որք զնա
բռնաբարէ. ամ մարմին խոտ է.
որ ինչ իմ է՝ քո է. ոչ ինչ է չար
նուաճ. ոչ որք կարէ գալ առիս.
Սռ. յամ՝ ամ ինչ որ իմ է. ամ որք
որ թագաւոր կոչէ զանձն իւր.
Բայց այս՝ զոր ինչ ած արար՝ բա-
րի է, կարէ ասիլ և՝ բարի են.
Թուական անուանքն՝ թէ և ե-
զականք իցեն՝ վն բազում գոլոյ
թուեցլ իւրին, զբայն յոգնական
սովոր են առնուլ. Եթէ երկու
աղայցեն ՚ի մի երկանս. երկու
ճնճղուկ գանկի միոջ վաճառին.
Հինգն ՚ի նոցանէ յիմարք էին.
յորմէ եօթն դևն ելեալ էին.
Բայց կարեն ուրեք և զեզակին
առնուլ. Տասն այր եկին առ մեզ,
Հինգն գնաց Հինգն մնաց.
Դոքս՝ այս, այդ, այն, ՚ի պատճառս
յոգնական կամ յոգնակերպ ան-

ուած հանդիպելոյ՝ զէական բայն
ի մէջ մտեալ՝ յոգնական դնիլ պա
հանջեն ։ որզոն, Ա՛յս են կամք
հօր իմոյ․ այդ իսկ են սքանչելիք․
այն իսկ են վարձք նոցա, և այլ ։
Որք ոչ միայն ըստ թուոյն են տա
րաձայն, այլ և ըստ դիմաց ․ բաց
՚ի յերրորդ դիմէն․ զի ՚ի յայսպիսում
դրութե̃՝ յօգն ինչ դէմ և իցէ,
դնի բայն երրորդ դէմ ։ ուստի ՚ի
դնիլ յօգին երրորդ դէմ, համա
ձայնին դիմաւ, բայց ոչ և թը
ուով որպէս և ցուցաւ ։
Ե՛ւ տես՝ զի ասացի ի վերոյ, թէ
(ամ̃ բայ դիմաւոր՝ ունի կառա
վարօղ իւրեան ուղղական անուն
իմն․ որում պարտի համաձայնիլ
դիմաւ և թուով) որպէս և ցուցաւ ։
Բայց սակայն՝ ուր իրակութիւնն
թարց դիմի դնի, անուն նորին
ըստ մեծի մասին սեռական լինի․
և է անդէմ իրակութ̃ աներևոյթ
բայն և բայաց ընդունելութիս եալ ։

Մերգոն, յելանել դիւրին՝ համրն խօսեցաւ. 'ի խաչիլ փրկչին՝ երկիր շարժեցաւ. տեսեալ յուդայի՝ գնաց խեղդեցաւ, և այլք բազումք. Այս յայսպիսի տեղիս ոչ ասի համաձայնիլ բայի ը̅ն անուան. զի անդէմ իրակութիւնս վ̅ս թիւ դէմ ոչ ունելոյ, անուանն թէ եզակի թէ յոգնական՝ թէ դիմաւոր թէ անդէմ՝ կարէ դընիլ. Մերգոն, 'ի տեսանելն իմ ըզքեզ՝ կամ տեսեալ իմ զքեզ՝ ուրախ եղէ յոյժ. 'ի տեսանելն ձեր զմեզ, կամ տեսեալ ձեր զմեզ՝
ուր" եղ". տեսեալ ա̅յ և այլ.

Ասացի, ըստ մեծի մասին սեռական դնի, զի երբեմն և ուղղականաւ փարին. Մերգոն, եկեալ տ̅րն դատցէ արթունս. եկեալ ծ̅ռյ քն յանցս Տ̅ն պ̅րհին. Այր համեստ 'ի խօսիլն և 'ի լսելն միևնոյն է.

Նաև դրադէմ բայքն՝ ուրեք սեռականաւ շարադրին. որգոն,

Տեսեալ է իմ զքեզ՝ ուր նստէլ
էր քո ։ Այսինքն տեսեալ եմ
ես զքեզ՝ ուր նստեալ էիր դու․
Ասէ՛ յայսպիսի տեղիս՝ անունն
որ թի՛ւ կամ որ դէմ և իցէ ,
բայն դնի եզական և երրդ դէմ․
զի է՛ ՚ի կարգս անդէմ բայից․
Օրգ՚ն, տեսեալ է իմ զքեզ․ տե
սեալ է ձեր զմեզ։ տեսանել էր ման
կանցն զձեզ, և այլն ։
Ծանի՛ր ևս, զի երբեմն անուն
բայի՛ն՝ աներևոյթ բայն լինի ․
օրգ՚ն, գնալն քո տրտմեցոյց զիս ։
Լինի և բայածէ՛ն անունն, դար
ձուամն ՚ի մեղաց՝ է դիմել յա̃ծ ։
Երբեմն մասնական անունն ըստ
ինքեան ․ ոմն ՚ի մէնջ անդ մնաց․
Ասէ՛ երբեմն յարաբերականն ոչ,
կամ ըստ ինքեան, որ խնդրէ՝ ա֊
նու, կամ նախընթացիւք որ յիշե
ցեալ է յերեսն 334․
Ասէ՛ ուր մասնական անուանքն
դնին անուն բայի ի̅ն ինքեանց՝

լինին դերանուանք. զի 'ի տեղի
անուան դնին։ Իսկ Հարցականքն՝
և ընդհանրականս՝ ամենեքեան,
գրեթէ յոր ա͞ն դերանուանց վա
րին։ զորոց յերեսն 127 նշմարեցաւ.
Այլ այսու ծանիր զվարիլն ըստ
դերանուան, որ առանց անուան
դնին. ոչ ուրեք և յոդքն.
Տես և զայս, զի 'ի տեղի ուրեք՝
ընդ հետ անուան բայի՝ դնի և
դերանուն՝ և անուն նոյն բայի
իբրու անելորդ. Որգոն, ցուպ
քո և գաւազան՝ նոքա մխիթա_
րեսցեն զիս. Յ͞ս նազորեցի՝
նա քակեսցէ զտեղիս զայս։
Իսկ երբեմն առանց անուան դը
նի բայն. կամ յայտնագոյն գո
լով դիմն, կամ վ͞ս նախ յիշեց_
մանն. որգոն, 'Ի քեզ տ͞ր յուսա_
ցայ, մի՛ ամաչեցից յաւիտեան.
այս՝ յայտնագոյն գոլով դիմն.
Յարուցե քում փրկեա՛ և այլ.
այս վ͞ս նախ յիշեցմանն, տ͞ր.

Ասացի, (յայտնագոյն գոլով դի-
մին,) զի նախկին և երկրորդ-
դէմքն դերանուան՝ ես, դու, վս̄
գոլոյն յայտնագոյն՝ ոչ միշտ հար-
կաւորին դնիլ 'ի բանի։ Իսկ ուր
այլ և այլ դէմք լինին, դնին անդ
ներգործութե̄։ որպէս, Ես գրեցի՝
դու ընթերցար։ Պետրոսն և ես
ասացաք, բայց դուք ընաւ
ոչ լուայք։

Իսկ 'ի բղ̄մուրէք՝ տէր բային
դնի ներգործութե̄, և բայն զօ-
րութե̄ իմացեալ լինի։ Որգոն,
մեք կամք, և դու ստեղծիչ մեր։
Յորում իմանին էական բայքս
եմք, եմ և այսպիսիք բազումք են։
Որպէս և մակադիրք այսպիսիք,
Գիրք ծննդոց։ Գիրք ելից ։
Սաղմոս դաւթի։ Օրհնութիւն
մովսէսի և որդւոյն իէլի, և այլ։
Յորս ամենեսեան իմանի զօրութե̄
էական բայս՝ է։

Ած վասն Համաձայնութեանց ասացան ։

## Յաղագս Հոլովառութեան Մասանց Բանին.

### Գլուխ 8

Ի հոլովառութեան աստ՝ պարտիմք գիտել թէ ո՛յք են առնլիք որք կոչին խոնդիրք, և ո՛յք են առօղք որք կոչին խնդրօղք: Առնլիք են հոլովք անուանց: Իսկ առօղք, անուն, բայ, և նախդիր. Բայց կոչմամբ անուանն՝ իմանին աստ և միւս հոլովական մասունքն. որպէս յերեսն 353 ասացաւ. Նաև կոչմամբ բային՝ իմանի և ընդունելութիւնն. զի ունի ըղնշանակութիւն անուան և բայի որ ասացեալ է. Այս երբեմն առնու կամ առնանի իբրև անուն, և երբեմն առնու միայն իբրև բայ. Յանցելոցս յայտ է՝ թէ ՚ի շարագրութեան երեք են հոլովառութիք,

Անուան, Բայի, և Ն, ախդրութ. զի կամ անուանն առնու զանուն, կամ բայն առնու զանուն, և կամ նախդիրն առնու զանուն։ զորոց կարգաւ ասելի է.

Յաղագս Հոլովատուութեան Անուան։

Գլուխ 9

Երկու դոյական կամ երկու ածական անուանք՝ այլ և այլ իր նշանակօղք՝ ոչ պարտին շարակցիլ ընդ իրեարս նման հոլովին. Որպէս թէ ասել, ամպ մէգ, հող ջուր, պարզ գէջ, թաց չոր. Ամպոյ մգի, պարզոյ գիճի, ամպով մգով, պարզին գիճին, և այլն. Այլ պարտին դնիլ կամ շաղկապաւ, կամ այլազան հոլովին. Շաղկապաւ, ամպ և մէգ, հող և ջուր, պարզ և գէճ, թաց և չոր. Իսկ այլազան հոլովին, ջուր ամպոյ. ջրով ամպոյ. ՚ի ջրոյ ամպոյ, և այլ։ Բայց թէ իցեն է.

նշանակօղք նոյն իրի, շարակցին ընդ իրերարս նոյնով հոլովին. յա͞ բ͞. սիմօն պետրոս. Թուխ կարմիր. մեծ գիտուն, և այլ.

Այլ ոչ եթէ երկու գոյականք կամ երկու ածականք զնոյն իր ոչ նշանակօղք՝ ամենևին ոչ կարեն շարակցիլ ընդ իրերս նման հոլովին առանց շաղկապի. զի կարէ ասիլ՝ հաց ջուր բաղում գոյ աստ։ Այլ պատկանագոյն է ասել հաց և ջուր.

Իսկ եթէ այնպիսիք իցեն որոց մինն միւսոյն պատկանի, ամենևին ոչ կարեն դնիլ նման հոլովին. ոչ շաղկապաւ, և ոչ առանց շաղկապի. զոր յառաջիկայդ ուսցիս։ Այլ յորժամ աւելի քան զերկուսն իցեն անուանքն, շաղկապն նոցին՝ յետնոյն միայն դնի և բաւ է. որպէս ասել, հաց ջուր և հանդերձ. հաց ջուր՝ փայտ և տեղի. Նայց այսպիսիք զանազան

կերպիւ կարեն դնիլ ա͞ն հաճուճ շարադրողին։ Որգոն, հաց և ջուր և փայտ։ Հաց ջուր և փայտ։ Հաց և ջուր, փայտ և հուր։ Որք և ուրեք Թարգ շաղկապի դնին. ո͞պ յերեսն 359 ցուցաւ։

## Յաղագս Ոստման Սեռականին։

### Գլուխ 10

Յորժամ երկու գոյականն անուանց մինն միւսոյն պատկանի, այսինքն ն͞ր լինել ցուցանի, միւսն այն՝ սեռականն հոլովիւ դնի. Ո͞պ ջուր ամպոյ, պտուղ ծառոյ, գլուխ մարդոյ։ Այլ զի գոյականն ուղղականքն իբրև ունօղ կամ յատկացուցիչ ինքեանց՝ զսեռական հոլովն խնդրեն. զի նա է որ յատկացուցանէ զնոսա յայլոց, այսինքն սեռականն. Որ͞պ աստ եղև ամպն յատկացուցիչ ջրոյն. զի նովաւ իմացեալ եղև թէ ինչ ջուր է։ այսպէս և միւսքն.

Ինչ ուրեք՝ զի և ամ̃յն խընդ-
րէ յատկացուցիչ ինքե̃ն զսեռա-
կանն։ Օրինքն Հայոց, գիտունքն
յունաց, մ̃ւքն տ̃յ, և այլ։
Ո՞ դնի երբեմն յատկացուցիչ
զկնի յատկացելոյն։ Չարչարինք
որդւոյն տ̃յ։ գործիք չարչարա-
նաց որդւոյն տ̃յ։ Ա̃մ յաջողու-
թեան գործոց սիրողացն առա-
քինութ̃ն զտ̃ր աղաչեսցուք։
Ո՞ ուրեք այնպ̃ յատկացուցիչ
դնի սեռականն, որ կարէր դը-
նիլ ուղղական։ Որ̃պ ասել, ՚ի դը-
նալն իմ ՚ի քաղաքն կեսարիոյ,
ետու նմա ի̃ն քու ցորենոյ։ որ
կարէ ասիլ՝ կեսարիա, ցորեան։
Ո՞ որ ընկալցի աջոյ ձեռամբն
իւրով։ Նոյն է՝ աջ ձեռամբն։
Ըստ այսց են՝ արք զօրութեան,
որդիք արատոյ։ Որ է՝ արք զօրա-
ւորք, որդիք արատաւորք։
Նինջէր ՚ի քուն թմնձրութեան։
որ է՝ ՚ի քուն թանձր։ Պուծ բա

րութեան ոչ ունիմ. գործ չարութեան
շատ ունիմ: որ է՝ գործ բարի,
գործ չար։

Նաեւ յորժամ ըստ պահանջման շարադրութեան՝ այսպիսեացս հոլովից հարկաւորի, ուղղականն որ է յատկացեալն՝ մտանէ 'ի դանազան հոլովս ըստ և պահանջի. իսկ սեռականն որ է յատկացուցիչն նորին՝ միայ միշտ 'ի սեռականն հոլովման: Օրգ՝, Ջուր ծովու. Ջրոյ ծովու. Ջրով ծովու. զՋուրն ծովու. Ջուրք ծովու. Ջրոյ ծովու. Ջրովք ծովու. զՋուրս ծովու, և այլն.

Յորժամ հոլովելի անուանն սեռականին՝ գնի 'ի սեռական հոլովում, յայնժամ երեւի թէ երկու գոյականն անուանք նոյն հոլովին գնին առ իրեարս. որպէս Ջրոյ ծովու. կամ ծովու Ջրոյ. Բայց այս՝ 'ի սոյն հոլովում միայն պատահի. զի որովհետեւ յատկա-

ցուցիչն (որպ̃ ասացաք) է միշտ 'ի սեռական հոլովում, յատկացուցեալն եւս մինչ մտանէ 'ի նոյն հոլով՝ լինին նման իրերաց։ Իսկ 'ի այլ հոլովման ոչ լինի ասել՝ ջուր ծով. ջրով ծովով. զջուր զծով. 'ի ջրոյ 'ի ծովէ, և այլն.

Եւ է ուրեք՝ զի 'ի մէջ յատկացուցիչ սեռականին և յատկացուցեալ ուղղականին՝ մտանէ էական բայս՝ է. Որպէս, աղօթից է տունս այս. վարժման են այն տեղիք. Եւ որոց զկնի էական բային դնի աներևոյթ՝ իբրու ըստ այսց են. Ոյր է դիտել զմիտս. քաջ հովուին է պահել զհօտն, և այլ.

Եւ ուր հոլովելի անուանն վերջադաս դնիցի սեռականին իւրում, հոլովական նախադիրն նորին՝ սեռականին դնի. Որպէս, զծովու ջուրն. 'ի ծովու ջրոյն և այլ:

Եւ թէպէտ այսպէս առադրի, սակայն դու զնախադիրն զայն՝ մը

տողքդ յետոյն բառին կցելով և
զայն յառաջ դասելով, զսեռ̃կնն
միշտ սեռական պարտիս իմանալ։
Օրինակ, ասի զծովու ջուրն
և իմանի՝ զջուրն ծովու։ ասի՝ 'ի
ծովու ջրոյ, և իմանի 'ի ջրոյ ծովու

Կա՛ առ ուրեք կայ եդեալ նա_
խադաս սեռ̃կն առանց նախ_
դրբ. որպ̃ 'ի շարակնոցին, կուսոյն 'ի
պաշտելութէ. որ է 'ի պաշտելու
թենէ կուսոյն.

Իսկ ոմանց ուրեք այսպիսեաց
հայց̃կն նախդիրն՝ երկուցն ևս
դնի և ոչ վնասէ։ Որգոն, զայ̃ ըզ
հոգին. Լինի այս մանաւանդ
յայնժամ, մինչ 'ի մէջ երկուցն
այլ ինչ բառ կամ բառք մտանեն.
Որչափ, զքարչարանս 'ի յանձն ա_
ռեր զխաչի | զմեղացն մերոց ըն
կալեալ զպատիժն. զի զերկայնմը
տութեն նորա զքաղցրութիւնն
ոչ ծանեաք. Օ այս որպիսութի
ունին և սեռականքն ցուցական
և

և պակասական դերանուանց, և
յարաբերականին։ Ո՛րգոն, յարոյց
յմ̄ զնո̄ր զդուստրն ։ Ներհակ իրե
րաց քանկէին զմիմեանց զգործն ։
զորոյ մեք գիտեմք զհայրն ։
Գ. տանի այսպէս և ըստ այլ հո-
լովմանց՝ ՚ի բանիցն ՚ի խռովութէ.
յորդւոյ ՚ի մարդկանէ, և այլ։
Անդրնպի այս և Նախադրութ
խնդրոյն։ Ո՛րգոն, զօտարի զհետ
ոչ երթան ։ զմիմեանց զկնի շրջին ։
զորոց զհետ մտեալ կացին անդ.
Յբեմն նախդիրն և յօդն հայ-
ցականին՝ առադրին սեռակա-
նին, և ինքն հայցականն զօրու-
թիմացեալ լինի ։ Տուք զկայսերն
կայսեր, և զայն այ̄. այսինքն, ըղ-
պատկերն կայսեր՝ զպատկերն այ̄.
Ըստ այսմ է, բարձնեցէք զիւր
քերոբէիցն. Տուք զվ̄ն մեղացն։
Որ է առել, բարձեանեցէք ըղ-
նստեալն իւր քերոբէից. Տուք
զպտ̄ղն զայն, որ է վ̄ն մեղաց.

Հաւաքական անուանքն՝ յոգնա-
կան թուով՝ զյոգնական սե-
ռականն առնուն նոյնպ. յատկա-
ցուցիչ լինելոց։ Որպ., բանականք
հրեշտակաց. գունդք սերովբէից.
դասք քահանայից. երամք աղաւ-
նեաց, և այլք.

«Ներգործական ընդունելութիւնքս՝
օղ, իչ, սովորաբար ըստ մեծի մա-
սին՝ զկրօղն իւրեանց սեռական-
նաւ պահանջեն։ Որպ., բարձօղն
մեղաց, փրկիչն ծի։ Որ իմանի՝
բարձօղն զմեղս։ որ և ուրեք այնպ.
գտնի։ Իսկ՝ իչն, հայցականաւ.
որպ. այս՝ ընդունիչ զկօղն երկնայինն։
հազիւ ուրեք գտանի։

«Նաև՝ լի, ՚ի բազում ուրեք զներ-
գործօղն իւր՝ սեռականաւ առնու.
սիրելին սրբոց՝ գովելին վերնոց՝
կոյսն մարիամ։ Որ իմացեալ լինի՝
սիրեցեալն ՚ի սրբոց, գովեցեալն ՚ի վերնոց
Ըստ այսմ է օծեալ այ. գովեալ-
լինելի. առաքեալք քի. և այլք։



Նաւ

Եւ արդ՝ սեռական հոլովն՝ լինի կամ յատկացուցիչ ո͞չ ցուցի՛. որդի ա͞յ. Կամ խնդիր նախադրութեն. վ͞ն ա͞յ։ Եւ կամ անուն բայի ջունողի գրեմ. տեսեալ ա͞յ պշարհան մեր.

Եւ լինի յատկացուցիչ գոյկն գոյականի, գլուխ մարդոյ. Ածական ածականի, մեծն գիտնոց. Գոյական ածականի, գիտունք ազգաց. Եւ ածկն գոյականի, տեղիք գիտնոց.

Եւ տես, զի անուն իմն յատկանայ կամ սեռականաւ, որպէս գլուխ մ͞դոյ։ Կամ դերանուամբ, գլուխ իմ. Կամ ածականաւ, ս͞բ սիրտ. Եւ կամ ածանցեալ անուամբ, ոսկեղէն աթոռ. որ է եւ ածական. որ կերպ կարէ եւս ասիլ՝ ոսկի աթոռ։

Լինի յատկացուցիչ ուրեք եւ գործի". բնութ̄ բարի. լինի եւ յայսմ՝ 'ի բնէ լոյս, 'ի ծնէ կոյր, եւ այլ

## Յաղագս Հոլովառութեան Ածա_ կան Անուանց: Գլուխ ԻԸ

Ածականք՝ հանգէտ • կցորդ • պատեհ • պատշաճ • պատկան • ըմբռնն • համուտ • տեղեակ • գիտուն • գիտակ • ներհակ • համեմատ • հաւասար • հպատակ • հընազանդ • ցաւակից • պիտանի • անպիտան • պարտական • արժանի • անարժան • Թշնամի • ընտանի • շահաւոր • օգտակար • համաձայն • տարաձայն • և այլք սոյնպիսիք՝ խնդրեն զվերջահոլով տրականն:

Որպէս, նման յօհաննէս մկրտիչ՝ անմարմինքն վարուքն եղև հանգէտ հրեշտակաց • որ էր կցորդ առաքելոցն և մարգարէից:

Ածականք՝ հեղ • ժիր • ծեր • խիստ • ծոյլ • կոյր • ժանտ • բիրտ • լիրբ • գարշ • գուլ • լի • դառն • քաղցր • զգօն • զգաստ • հզօր • խո_



հեմ

հեզ · խոնարհ · արդար · առողջ ·
ամբողջ · արթուն · մաքուր · ան-
բիծ · տգեղ · վատթար · անարգ ·
ղազիր · տկար · հիւանդ · գեղեցիկ
հանճարեղ · և այլք սոյնպիսիք
որք զգով կամ զպարսաւ նշանա
կեն, զգործիկնն առնուն․ որգոն,
Ուսարուք յինէն, զի հեզ եմ և
խոնարհ սրտիւ։ Ժիրն հոգւով՝
ոչ կասի ՚ի հոգևոր պատերազմին,
թէ և իցէ ծեր մարմնով։

Ածականքս՝ մեծ · փոքր · լայն ·
նեղ · կարճ · երկայն · ցած · բարձր
ծանր · թեթև · կարծր · կակուղ ·
քաղցր · դառն · մանր · խոշոր ·
լոյծ · պինդ · չար · բարի · հզօր · տը
կար · խոհեմ · յիմար · գիտուն ·
տգէտ · կարմիր · պայծառ · տգեղ ·
և յոյժ բաղումք, առնուն ըզ
հայցականն, նախդրիւս քան։ Կամ
ածանցմամբ՝ գոյն, գին, կամ թարց
ածանցման։ Որգոն, մեծ՝ չափ մե

ծագոյն քան զլեռաւն մասիս ։
Տրտում, չափ տրտմագին քան ըզ
ծնօղ որդեմեռ, և այլ։
Աւ գրեթէ ամ̃ ածականք զոր
հոլով և պահանջեն, յետ այն
հոլովոյն՝ կարեն առնուլ և հայ-
ցական՝ միջնորդութ̃ նախդրայս՝
քան, կամ առաւել քան։ Որպէս,
Յօհաննէս հմուտ է գրոց՝ քան
զայլ ուսումնականս։ Որև թէպէտ
մանուկ է, բայց զգօն է բազում
առաւել քան զծերսն ։

••••••••••••••••••••

Ածականքս՝ մերկ. զուրկ. խառն
ունայն. դատարկ. թափուր.
պարապ. սուրբ. մաքուր. զգոյշ.
օտար. անմասն. անխնամ. ան-
պարտ. տարագիր. և այլք սոյն-
պիսիք՝ զսկզբնականն խնդրեն ։
Որպէս, լաւ է մերկ ՚ի հանդերձից՝
քան զմերկն յիմաստից ։
Իսկ մնացեալ հոլովքն, այսինքն
արտադրականն, պատմականն,

 Նախ

նախադրի՛ տրականն, և ներգոյա-
կանն, ոչ են սովոր խնդրել յան-
ո՛ւանէ. Թէպէտ ուրեք ուրեք գը-
տանին, այլ զնոսա բայն պահան-
ջէ. Իսկ կոչականն ոչ յանուանէ
խնդրի և ոչ 'ի բայէ. այլ բացար-
ձակ դնի 'ի բանի. անուն բայի
միայն լինելով.

Սա՛ ծանի՛ր ասա, զի ածական
անուանք զոր հոլով և պահան-
ջեն, զնոյն հոլով խնդրեն և
բայքն նոյնն. Որպէս, լաւ է մերկ
'ի հանդերձից, քան զմերկն յիմաս-
տից || լաւ է մերկանալ 'ի հանդեր-
ձից, քան մերկանալ յիմաստից.
այսպէս և այլքն.

Ծանի՛ր ևս, զի հոլովաւոր Թի-
բառից կրկին է. եզառական,
յոգնառական. Եզառակն այն է,
որ բառ լինի զոր հոլով և առնու՝
իբրու միշտ զնոյն պահանջէ.
Ով հանգէտ՝ իբրու միշտ զորա-
կանն խնդրէ որպէս ցուցաւ.

Իսկ յոգնառական այն է, որ բառ-
իմն կարէ առնուլ երկուս հո-
լովս ոչ ի միասին, այլ կամ զայս
կամ զայն։ Որպէս անհաս՝ կարէ առ-
նուլ կամ զորականն աննախնդիր՝
կամ զսկզբնականն՝ յոգնական
թուով։ Որզան, Ած է անհաս հը-
րեշտակաց և մարդկան. կամ ՚ի
հրեշտակաց և՚ի մարդկանէ.
Իսկ այս երեքկին լինի. Առա-
ջինն է նոյն բառիւ և նոյն
դիտմամբ. որպէս եդեալս իվերոյ,
Ած է անհաս. զի՝ թէ հրեշտակաց՝
թէ ՚ի հրեշտակաց՝ միևնոյն է իմա-
ցումն. Երկրորդն է՝ նոյն բառիւ
և այլ իմացմամբ. որպէս այս,
պատմեցի քեզ, պատմեցի զքեն.
Ուր բայս՝ պատմեցի, կարաց առ-
նուլ թէպէտ զհոլովսն՝ քեզ, զքեն,
բայց ոչ են ՚ի նոյն իմացման. զի՝
այլ է ասելն պատմեցի քեզ, և այլ՝
պատմեցի զքեն. որ է, վասն քո.
Իսկ երրորդն է այլ բառիւ և այլ

դիմամբ, կամ նոյն դիմամբ. Ը՛նդ բառին և այլ դիմամբ, մերկ մարմնով, մերկ յիմաստից. Ը՛նդ բառին և նոյն դիմամբ, մերկ մարմնով, մերկ ՚ի հանդերձից, և այլք.

Արդ՝ ասացեալ հոլովմունքդ անուանց մինչև ցայժմ, են եզականք. ուստի դնելի է սակաւ ինչ և յոգնականն.

Մասնականքս՝ ոմն, մին, միւս, իւրաքանչիւր, երկաքանչիւր. և թուական անուանքն և դասականք նոցին, կարեն առնուլ զեզականն և զսկզբնականն յոգնական թուով. Որպէս, ոմն ՚ի գիտնոց, կամ գիտնոց. հինգն նոցա, կամ ՚ի նոցանէ. չորրորդն ՚ի զինուորաց, կամ զինուորաց, և այլն. Որոց սկզբնականն յաճախ ՚ի կերպարանս քան զեզականն. Բայց կարեն առնուլ և զներգոյականն նոյնպէս յոգնական թուով. Ոմն ՚ի նէ.

նս · հինգն 'ի դոսա · չորրորդն 'ի
նստեալսդ · և այլ ։

Ածականք ոմանք առնուն ըզ-տրականն կամ զսկզբնականն ·

Անհաս մտաց , կամ 'ի մտաց ։ հե-ռի իմաստից , կամ յիմաստից ·

Ո՞ւնէ վերջացեալ ընդունելու-թիւք գերադրանցուն նշանա-կիչք՝ ըստ ա՞յց վարիս ։ Անտանելի համայնից , կամ 'ի համայնից ։ ան-քննելի վերնոց , կամ 'ի վերնոց · և այլք այսպիսիք ։ Որոց տայ զնշա-նակութիւն գերադրանցուն մաս-նիկս՝ ան · զի բառնալով զչափա-ւորութիւն բառին , ածէ զնա յանչափութիւն ։

Ածականք բազումք՝ առնուն այլ և այլ հոլովս ըստ իւրոց կերպին ։ հինգն , Սէր սրտիւ , ու 'ի մեղաց ։ մերկ մարմնով , մերկ յիմաստից ։ սուր մտօք , սուր 'ի չարիս , և այլ ։

Ոմանք ևս՝ կարեն առնուլ զգոր-ծիականն կամ զներգործականն ։

Նկարագիր էութ՟, կամ յէութ՟։ մշտնջենաւո՛ր գոյութ՟, կամ ՚ի գոյութ՟։ Ոմանք յայտնեաց և զսկզբնականն առնուն. անտես էութեամբ կամ յէութ՟. անտես յումեքէ. և այլք.

Բաղդատական ածանցս՝ գոյն, ըստ մեծի մասին իբրու սովորաբ թէպէտ զհայցականն առնու նախդրիւս ան, բայց կարէ՛ ուրեք առնուլ ևս՝ զսեռականն, կամ զսկզբնականն, կամ զներգործականն յոգնական թուով։ որպէս, Նրբագոյնն գիտնոց, կամ ՚ի գիտնոց, կամ ընդ գիտունսն.

Ըստ այսմ իմա և զածանցս՝ եղ. զի գոյն, եղ, ՚ի հոլովառութեան միապէս վարին.

Բայց տես, զի այն որ հայցականն դնի՝ ցուցանի ոչ գոլ ինքն ՚ի բաղդատելոցն յայնցանէ. որպ՟ մինչ ասի, հեզագոյն է քան ըզ գառն, ցուցանի թէ բաղդատեն

ո՛չ է գառն, այլ՝ ա՛յլ ինչ էութի բաղդատեալ առ գառն: Իսկ եդեալքն միւս այլ հոլովմունք, ցուցանին գոլ 'ի նոցանէ: որպ̃ մինչ ասի, պարարտագոյնն 'ի գառանց, կամ 'ի գառինսն, ցուցանի մի ոմն 'ի գառանց: Նաև՝ հայցականն կարէ՝ բաղդատել զիրն առ մի ինչ և առ բազումս: որպ̃՝ հեզագոյն քան զգառն, կամ ք̃ զգառինս: Իսկ միւսքն առ բ̃զ̃մս միայն կարեն բաղդատել, որպ̃ ցուցաւ:

Յաղագս Չափու Համարունակ Բանաջին: Որոյ չափօղն և չափելին զանազան հոլովմունք վարին:

Գլուխ 12

Չափօղն ուղղական և չափելին գործիականն: Տախտակս այս երկայնութ̃ն է Ե̃ կանգուն, և լայնութ̃ն երկու կանգուն: Չափօղն ուղղական և չափելին հայցական. գետինս այս ունի

զլայնութիւն երկոտասան կանգուն,
և զերկայնութիւն յիսուն կանգուն։
Չափօղն ուղղական և չափելին
տրական · Նաւս այս շինչ՛ եօթն
կանգուն 'ի լայնութի, յիսուն
կանգուն յերկայնութի։
Չափելին ուղղական և չափօղն
սեռական · լայնութի պարունակի
է քսան կանգնոյ, և երկայնու-
թիւնն երեսուն կանգնոյ։
Չափելին ուղղական և չափօղն
գործիական · այսր յարկիս եր-
կայնութին է վեց կանգնաւ, և
լայնութին է հինգ կանգնաւ,
Չափելին ուղղական և չափօղն
սկզբնական · բարձրութի տանս
այսորիկ շինեցաւ 'ի չորից կանգ-
նոյ, և լայնութին 'ի վեցից։
Չափօղն և չափելին ուղղական ·
թանձրութի որմոյս է եօթն թիզ,
և բարձրութիւնն հարիւր թիզ։

Աէ վասն անուանն՝ Ձուղակատա-
րեան՝ Բառ ընդհ այսպան։

## Յաղագս Հոլովառութեան Բայից Ներգործականաց։ Գլուխ ԺԳ

Ներգործական բայքն վասն ներգործականութեան իւրեանց՝ առնուն սովորապէս ըզ հոլովն հայցական։ զի կրողն իրակութն ներգործականին՝ հայցական հոլովին դնի։ ոպ այս՝ մովսէս էհար զվէմն։ Այլ ներգործկնաց ոմանք զհայցականն միայն առնուն։

Յիշեցի զռահաբ և զբաբիլոն, Ըստ այսմ են, կապել, քակել, լարել, ջախել, կարել, մանրել, փշրել, հերկել, ծեծել, փորձել, դատել, կշռել, ձաղել, նեղել, պատուել, խաբել, Թուել, սերտել, քննել, սիրել, ատել, օրհնել, գովել, բախել, բանալ, զենուլ, և բազումք։ Կապեցին ըզ յն և տարան։ քակեցին զյարկն ուր էր յն։ ծլէք լարեցէք զաղեղունս։ Երեմ 46։



Իսկ

Իսկ ոմանք յետ հայցականին և այլ հոլով պահանջեն. որպէս 'ի ստորև 'ի հետևեալսդ ցուցանի։

### Ուղղական յետ Հայցականին.

Ներգործականքս՝ կոչել, անուանել, օծանել, ստեղծանել, կացուցանել, նստուցանել, առնել, դնել, շինել, կարգել, և այլք նմանք, յետ հայցականին՝ զուղղականն պահանջեն։ Դուք կոչէք զիս վարդա͞պտ և տ͞ր։ յ͞ս զսիմոն՝ պետրոս անուանեաց.

Այլ ուղղականացս այսոցիկ յոդնակինն՝ ը͞ս կերպի անորոշ հայցականին դնի։ Որպէս, եօծ զնա քահանայ, և զիս կացոյց պաշտօնեայ։ արար զմեզ քահանայս և պաշտօնեայս։ և ոչ քահանայք և պաշ՛՛.

### Սեռական յետ Հայցականին.

Ներգործականք յոյժ սակաւք՝ յետ հայցականին զսե͞ռկնն խնդրեն. Որպէս, գնեցի զակն զայն ծնգից

դենարից. վարձեցի զայս ձի՝ եր
կուց սատերաց. գնեցեր զմեզ
ա̅յ, յոյժ է. զոր ստացաւ աբրա-
համ գնոց արծաթոյ. Լինի այս
և նախդրիւս ընդ. վաճառեաց
յուդա զք̅ս ընդ երեսուն ար-
ծաթոյ. Բայց այս կերպ՝ գնեցի
զակն զայն հնգից դենարից և այլն,
ոչ բարուք թուի ինձ ասել սե-
ռական. այլ տրական համարեալ
լինի. Որպ և տաճկեվարն այնպ̅
ձևանայ. պէշ տինարէ՛ սաթըն
ալտըմ. որ թէ սեռական լինէր՝
տինարըն ասիւր և ոչ տինարէ.
զի տինարըն սեռականէ, և տինարէ
տրական. Բայց որովհետև այլք
սեռական համարեցան, և մեք ՚ի
նոյն շաւիղ ընթացաք.

Ա՛ն ներգործականք ոմանք՝ առ-
նուն զսեռականն յետ հայցա-
կանին՝ նախդրայն մի՛ նորդուէ.
դիր զմեղս ՚ի վերայ մեղաց նո̅.
Ըստ այսմ են, չինել, դիզել, կու-

 տել

տել, բարդել, սփռել, ցանել, ձգել, արկանել, ընթադրել, կացուցանել, և այլք բազումք.

Որդւոյ, չինեաց զտուն իւր իմն՟ անապզոյ. Ընթադրեաց զմեզ ՚ի ներքոյ ոտից իւրոց. Կացոյց ըղմեզ առաջի դըսին, և այլ:

Ընդ՟ բղ՟ւմ բայք յետ առնլոյ զհոլովս իւրենց՝ կարեն առնուլ եւ սեռ՟կն միջնորդութե՟ նախդրաց.

Տրական Սեռականական՝ շնչի զ՟այց".

«Սերգործականքս՝ յայտնել, յանձնառնել, ա՟անդել, ընծայել, պարգևել, նո՟իրել, ընձեռել, շնորհել, յաջողել, պատո՟իրել, վճարել, դասակցել, կցորդել, հաղորդել, խոստանալ, տալ, մատուցանել, հատուցանել, և նմանք, յետ հայցականին խընդրեն զտրականն վերջահոլով. Յայտնեցի զանուն քո մարդկան. քեզ յանձն առնեմ զանձն իմ. և"

Տրական Անշեբնագոյն յետ
Հաշուականին ․

Ներգրծկնքս՝ ածել, բերել, տանել, մղել, սուզել, ձգել, կոչել, փչել, ծագել, ցրուել, հեղուլ, ընկենուլ, առաքել, ար կանել, հոլովել, գլորել, մու ծանել, յուղարկել, ժողովել, հրաւիրել, ամբառնալ, համբառ նալ, և այլք, յետ հայցականին խնդրեն զնախդրիւ տրականն ։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս ։

Յայսցանէ բազումք՝ ունին և զսկզբնականն զօրութիւն ․ և ուր պիտոյ լինի՝ գնին ներգործութիւ․

Տարան զմեզ 'ի տուն իւր․ այս ինքն՝ 'ի փողոցէն, կամ այլ․

Նա՛ ուրեք գնի սկզբնականն, և տրականն զօրութիւն իմացել լինի ։ ընկէց զքարն 'ի ձեռացն ․ այսինքն 'ի գետին, կամ 'ի ծով, կամ յայլ․

Իսկ ուրեք երկուքն ևս ներգոր ծութիւ գնին․ ընկեցին զյօնան



'ի

'ի նաւէ անտի 'ի ծով: Եւ է՝ զի
երկուքն ևս զօրութեամբ. մըտ
րակ 'ի կուշտ արարեալ՝ վազեցոյց
զձին. որք 'ի տեղւոջէ 'ի տեղի.
Սատայսմ է, առաքեաց զբան իւր
և բժշկեաց զն̃ս. որք յերկնից 'ի
յերկիր. Եւ է՝ զի հայցականն ևս
ոչէ եդեալ. առաքեալ կոտորեաց
զմանկունսն: Որ իմանի, առ̃ց
զզինուորսն յէմէ՝ 'ի բեթղեհէմ.

Տրոխան ընդլին յեր Հայց".

Նայ.քս՝ խառնել, յօդել, լծել,
զուգել, դնել, հիւսել, յեռուլ,
զուգակցել, լծակցել, շաղկա_
պել, բաղհիւսել, շարակցել,
յարակցել, բաղադրել, պսակել,
և այլ, յետ հայցականին խնդրեն
զտրականն որ կ··ղմ ընդլին.
Որոց զարիւնն պիղատոս խառ_
նեաց ընդ զոհս ն̃ց. մ' յօդեր ըղ
սուտն ը̃ ստոյն. լծելով զդարշն
ընդ գարշին. Ցեղականումն ն̃ց

նախդիրս ընդ, է՛ զատական նախ-
դիր. առադրեցեալ վերջահոլով
տրականին: Իսկ 'ի յոդնականում
լինի հոլովական նախդիր, շինող
զնախդրին տրականն: Ոպ̃ ասել,
եդի ըղթելն ընդ մետաքսին և
հիւսեցի ընդ նմա. այլ զինչ՞ որ

դեօք յեռուից ընդ նոսա:

Տե՛ս ընդ նմա՛ ընդ նոսա. և ո՛չ

ընդ նոցա կամ ընդ նոցին:

'Ի բանս, (զոր ա̃ծ զուգեաց՝
մարդ մի՛ մեկնեսցէ,) զօրութե̃
իմանի այս, (զկինն ընդ առն.)

որոյ պէս և այլք գտանին:

Գործիական յետ Հայցականին:

Ներգործականքս՝ հոլովել. դա-
նել. ծեծել. խոցել. խոցոտել.
ջախել. ջախջախել. բախել. տան-
ջել. քերել. քերթել. խաղել. ծա-
կել. ծակոտել. ծասկել. ծամել.
կիղել. կնքել. ձմլել. չափել.
պատել. ծածկել. ներկել. հար-

 կա

կանել․ խողխողել․ ջարջարել․
սփոփել․ կերակրել․ խրատել․
մխիթարել․ լնուլ․ խնուլ, և բա
զումք, յետ հայցականին գոր_
ծիական պ՟նչեն։ Հոմոնեսցես
զն՟ս դաւաղանաւ երկաթեաւ։
լցին զաւազորն ջրով, և խցին խո
տով զգերան նր․ Այսցանէ բա
զումք՝ ուր հարկն ոչ պահանջէ՝
դնին Թարց գործիականի․
Տր հոմոնեսցէ զնա։ Եկից զոր_
ձնան մովսէսի․ խցին զգերանս
առխածուց, և այլ։

Արտադրական չեր Հայցականին։

Նայք ոմանք Ն, Երդործականք՝
առնուն զարտադրական մէջ
նորդութ անորոշ հայցականին։
Լուցին հուր զեկեղեցեաւն ։
զանզնաւն յարդ ծխեցին ։
զբանտին զինուորս եդին ։
և բազումք լինին այսպիսիք ․
Որոց ոմանք առանց հայցակնի

գնին ։ որպէս ասել, փորձեցին զծա-
ռուղին ։ Ջրեցին զվարդենեաւն ։
աւելեցին զխոտանոցն , և այլ ։
Որոց որոշակի հայցականն զօր-
ութիւն իմացեալ լինի ։ Իբրու ասել,
փորձեցին զպետինն զծառուղին ։
Այլ ուրեք արտադրականն 'ի տե-
ղի հայցականի գնի ։ Պատեցին՝
պարսպեցին զքաղաքան ։ Որ է
ասել՝ զքաղաքն ։ Աշկահեցին՝
քամահեցին զինև . որ է զիս ։
Բստ այսց է՝ ծիծաղեցան զինև,
կամ՝ խլերայ իմ ։ որ է ևս՝ զիս ։
Նաև այս՝ բանբասեցին զինէն ։
որ իմանի ևս՝ զիս ։

Հայցական անորոշ՝ Յոգնական թուոյն ։

Բայք ոմանք Ներգործականք՝
առնուն զանորոշ հայցականն
յոգնական թուոյն յետ հայցա-
կանին որպէս իվեր յիշեցաք ։
Արար զմեհեանսն եկեղեցիս և
դպրոցս ։ Կացոյց զմեզ քննոյս
և

և պաշտօնեայս։ Նստուցանէ ընդ նմա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։ և այլն։

Պատմական չինի Հայցականին.

Բայք ոմանք Ներգործականք՝ զկնի Հայցականին առնուն ըղ պատմականն. որպէս՝ ասել, ոչ գիտեմ զճարութիւն զնմանէ։ Մի՛ խոկար մի՛ խորհիր մի՛ կարծեր մի՛ մտածեր զայդ զինէն։ Ընդէ՞ր վըկայես վճռես պատմես և հաստատես զլուրդ զայդ զծղօրէ քումմէ և զմէնջ։ Մեք զայդպիսի ինչ ոչ իշխեմք և ոչ համարձակիմք ստորոգել զումեքէ։

Իբրու ասել՝ մեք զայդպիսի ինչ ոչ ստորոգեմք զումեքէ՝ այսինքն ոչ ասեմք ի վերայ ուրուք այդպիսի ինչ։ Պատմականն հոլովս և վամին սեռականն՝ համազօրք են իրերաց։ Որպէս ասել՝ պատմեմ ձեզ զքէ, կ՛ասել՝ վասն քո։ Նոյնպէս՝ ճառեմ

ձեզ այսօր զերանելեացն հոգւոց, է՛ ասել՝ վս երանելեացն հոգւոց։ Նոյն յոյժ սակաւք են որք ոչ լենին այսպէս։ Ապ ասել՝ բուռն եհար զհանդերձէ նր, ոչ կարէ ասել՝ վասն հանդերձի նորա։

Անէբնական յետ Հայցականին.

«Ներգործականք՝ փրկել. զրկել. մաքրել. սրբել. Թիւրել. հերքել. մերժել. ժտել. խնդրել. խըլել. հանել. զատել. ջոկել. ջնջել. բառնալ. առնուլ. ազատել. բաժանել. անջատել. տրոհել. արտաքսել. աքսորել. արձակել. արգելուլ. խափանել. լուծանել. փարատել. բժշկել. գողանալ. մուրանալ. և այլք, յետ հայցականին զսկզբնականն խնդրեն, Փրկեցեր զանձն իմ ՚ի մահուա" Սրբեա՛ զմեզ ՚ի մեղաց մերոց. Այնպիսեաց ևս բազմաց սկըզբնականն զօրութ իմացեալ լինի.



փըր

Փրկեաց զնա աջ իւր։ Եթէ զոք զրկեցի, հատուցից նմա։ Որ իմանէ՝ փրկեաց զնա 'ի վշտաց։ Եթէ զոք զրկեցի յընչից։

Ներգոյական յետ Հայցականին։

Ներգործականք՝ դնել. Թաղել. պահել. ծածկել. գրել. տպել. կնքել. ընդել. արածել. տարածել. ծրարել. համբարել. տպագրել. գծագրել. գտանել. հեղուսել. բևեռել. սևեռել. մակագրել. փորագրել. որոնել. արպաճորել. նստուցանել. Թաքուցանել և այլք, յետ հայցականին առնուն զներգոյականն։ Եդին զնս 'ի գբի ներքնումն։ Թաղեցին զմն 'ի նոր գերեզմանի։ պահեմ զբանս իմ 'ի սրտի քում, և այլ։ Ո՛ գրեթէ՝ ամ բայք՝ յետ առնըլոյ զհոլովս իւրեանց, կարեն առնուլ և զներգոյականն նշանակօղ զտեղի նոյն իրակութ։

Սի որովհետև ամ իրակութիւն ՚ի տեղւոջ կատարի, ունի ամ բայ ներգործական մի տեղական. որ զօրութիւն իմանի. և ուր հարկն պահանջէ՝ դնի յայտնապէս. Որպէս մինչ ասի, մովսէս էհար զվէմն առաջի ժողովրդեանն, յայտ է թէ՝ յանապատին. այսպէս և այլքն.

Նաև ծանիր աստ, զի բայք ոմանք ներգործականք յոյժ սակաւք՝ զկրաւորականն խորհրդոյ՝ վերջաւորով տրականաւ առնուն և ոչ հայցականաւ որպէս այլոցն է սովորութիւն. Որք են, յաղթել. տիրել. իշխել. առաջնորդել. երկրպագել կամ երկիրպագանել: Որգոն, քաջալերեցարուք զի ես յաղթեցի աշխարհի. Որ իշխանքն են՝ տիրեն նոցա: Այլ՝ մարմնոյ իւրում ոչ իշխէ. Առաջնորդեա մեզ տէր ՚ի յարդարութիւն. Երկրպագեմք քեզ տէր աստուած մեր. Երկրպագեսցեն նմա ամ թագաւորք երկրի. և այլ.

Յաղթելն՝ թէ՟պ ըստ յարմարու
թե՝ զհայցականն առնուլ ցու
ցանի, ո՟պ և կարէ դնիլ, բայց ը՟
սովորութե՝ տրականաւ շարադրի.
ո՟պ եդեալն ի վերոյ և այլք.

Սն և այլ ներգործկնք՝ որ թ՟պտ
ունին զհայցականն, բայց 'ի
տեղի հայցականի՝ կարեն ուրեք
զայլ հոլով առնուլ. Որ՟պս, կե
րին զհացն ն՟ր, կամ 'ի հացէ ն՟ր ||
արբին զջուրն գետոյն, կամ 'ի
ջրոյ գետոյն || քննեցուք զայդ,
կամ զայդմանէ. Նշկահէ քամա
հէ՛ արհամարհէ՛ զմեզ, կ՟մ զմեօք.
Բամբասէ՛ վատաբանէ՛ չարախօ
սէ՛ զմեզ, կամ զմէնջ, կ՟ վ՟ս մեր.
Մայելեցաք զբարութիւն ա՟ն,
կամ 'ի բարութէ ա՟ն, կամ 'ի բա
րութե ա՟ն. Հաւատացուք զա՟ծ,
կամ յա՟ծ, և կամ ա՟յ. Բայց՝ հա
ւատալ զա՟ծ՝ կամ յա՟ծ՝ է՛ հաւա
տալ զգոլն ն՟ր. իսկ հաւատալ ա՟յ՝
է՛ հաւատալ բանիցն նորա.

Նայած՝ հարցանել զնա կամ ըղ-
նմանէ կամ վասն նր՝ են ՚ի նոյն
նշանակութիւն։ Իսկ հարցանել
նմա՝ է այլ նշանակութիւն։
Այնպիսիք են ևս, ասել, ճառել,
պատմել, վիպել, և այլ։
Են և ոմանք՝ որք զկրողն իւր-
եանց կամ հայցականաւ առ-
նուն կամ տրականաւ՝ նախդրիւս
ի՛վերայ, կամ վասն. Որք են, լալ.
ողբալ. կոծալ. սգալ. և այլ։
Մտածել, իմանալ, զկրողն իւր-
եանց՝ կամ հայցականաւ կամ
պատմականաւ և կամ վասնիւ սե-
ռականաւ առնուն.
Լսել, զլուեալն՝ ուրեք հայցա-
կանաւ առնու, ուրեք տրակա-
նաւ. լուր տր ձայնի իմում ‖
լուայ զձայն քո և երկեայ։
Գտնի և պատմականաւ. լուաք ըզ
նմանէ յեփրաթայ. որ կարէ ևս
ասել, վ՛ նորա. Եւ որոհիմ լինի՝
խորհիմ զայն. կամ յայն. կամ

 զայն

դայնմանէ. կամ վասն նորա.
Խոստովանիմ՝ զնա, կամ ՚ի նա,
կամ զնմանէ. Նոյնպէս և
այլք գտանին.

Ծիծաղիլ՝ ՚ի ներգործական նը
շանակութեան՝ զկրողն իւր կամ
սեռականաւ առնու՝ նախդրիւս
իւերոյ, կամ արտադրականաւ.
Ասացի այժմ, (ծիծաղիլն ՚ի ներ
գործական նշանակութեան,)
զի մինչ լսելով ինչ կամ տեսա-
նելով կամ մտածելով լինի ծի
ծաղիլ, է ընդմիջական: Իսկ թէ
հեգնել լինի որ է տնազել, է հա
սարակ բայ՝ որ ունի զնշանակութի
ներգործականի և կրողականի.

Ծանիր և զայս, զի մինչ վասն
բայի իրիք ասի թէ՝ առնու զայս
ինչ հոլով յետ հայցականին,
ոչ է այնպէս անխախտ կանոն թէ
նախ հայցականն պարտի դնիլ և
ապա միւսն և միւսն. այլ ՚ի կամս
շարադրողին է: Որպէս բանս այս՝

(պետրոս վաղեցոյց զձին 'ի դաշ
տէ անտի 'ի լեառն,) ըստ բնա_
կան կարգին է շարամանեալ՝
Ըստ որում պարտի դնել նախ ա_
նուն բային, ապա բային, ապա
հայցականն, ապա սկզբնականն,
և ապա տրականն ոչ և եղան։
Բայց շարադրողն ըստ որում հա
մեղ համարի՝ այնպէս շարադրէ։
օրինակ, Պետրոս 'ի դաշտէ անտի
վաղեցոյց զձին 'ի լեառն։ Պետրոս
զձին վաղեցոյց 'ի լեառն 'ի դաշ
տէ անտի։ Զձին 'ի դաշտէ ան_
տի վաղեցոյց պետրոս 'ի լեառն․
Զձին վաղեցոյց պետրոս 'ի լեառն
'ի դաշտէ անտի․ և այլն։
Ահա այսոքիկ չորեքին ևս՝ են
ըստ անխորժական կարգին և
ոչ ըստ բնականին․ զի ըստ որում և
անխորժ են՝ այնպէս շարադրեն․
Եւ թէ զխնդիր առնէ բնական
կարգ, մի՞ զի բնութեամբ նախ է
էութիւնն քան զներակութին իսկ․


իսկ

Իսկ անունն է էութին, և բայն իրակութին. վ̃ որոյ նախ անունն պարտի դնիլ, և ապա բայն։

Եւ ներգործական բային անմիջոց մօտեւոր՝ իւր կրողն է. վ̃յ զկնի ներգործականին պարտի դնիլ իւր հայցականն. Եւ բայս փոխեցոյց, որոյ՛ հետև ունի զտեղական նշանակութի, հա՛րկ է զի նախ այն մը տածիցի յորմէ սկսանի վազելն, և ապա այն՝ ուր դադարի վազելն. վ̃որոյ ասացաւ, ՚ի դաշտէ անտի ՚ի լեառն. այսպէս և զայլս այսպիսիս գիտասցես.

Որդ՝ յետ և յառաջ դրութիք բառից ՚ի շարադրութե՝ թէպէտ սակս համեղ բերելոյ է զբանն, սակայն ոչ ամ̃ քերթող բանականն է այսմ. այլ այն միայն, որև ճարտասանականին ունի զհետևումն. Զի քերթողութի՝ ուղիղ շարադրելոյ տայ զկանոն. իսկ ճարտասանութի՝ համեղ բերելոյ.

## Յաղագս Հոլովառութեան Կրաւորա- կան Բայից. Գլուխ ԺԴ

Որպ̃ Ներգործական բայքն բաց 'ի յոյժ սակաւուց՝ վ̃ն ներգործուե̃ իւրեանց առնուն զհայցականն, այսպէս և Կրաւորականքն վ̃ն կրաւորուե̃ իւրեանց զսեռականն պահանջեն. Զի որպէս կրօղն իրակութեան ներգործականին՝ հայցական հոլովիւ դնի, այսպ̃ և ներգործօղն իրակուե̃ կրաւորականին՝ սեռական դնիլ պահանջի. Որգոն, մովսէս եհար զվէմն. վէմն հարաւ 'ի մովսիսէ. Նա՛ զոր ինչ հոլով պահանջէ ներգործականն, ըղնոյն առնու և կրաւորականն բաց 'ի հայցականէն. Զի յորժամ հայցական ունօղ ներգործականն փոխարկի 'ի կրաւորականն իւր, ուղղականն նորին լինի սեռական, և հայցականն ուղղական.

Իսկ այլ հողմքն թէ գտանին՝ նման ՚ի նոյն հողմոյ։ Ս՚իգծ, մով սէս էհար զվէմ գանաղանան ‖ վէմ հարան ՚ի մովսիսէ գանաղանան։ Դուք կոչէք զիս վարդապետ և տր ‖ ես կոչիմ ՚ի ձէնջ վարդպտ և տր։ Յուդա վաճառեաց զքս՝ հրէից ընդ երեսուն արծաթոյ ‖ քս վաճառեցն ՚ի յուդայէ հրէից Ը Լ արծա"։

Իսկ բայս այս՝ աշակերտել՝ մինչ փոխարկի ՚ի կրաւորականն իւր, ուղղականն տրական լինի և ոչ սկզբնական ։ Յս աշակերտեաց զպետրոս ‖ պետրոս աշակերտեցաւ յի։ Ըստ այսմ են, հնազանդել, հպատակել, խոնարհեցուցանել։ Որոց ներգործականին և՝ է՝ տրական մի զօրութբ։ որ մինչ հարկն պահանջէ՝ դնի յայտնապ։ Պետրոս հնազանդեաց զպատանեակն ինքեան ‖ պատանեակն հընազանդեցաւ պետրոսի ։

Եւ այն ներգործականք որոց կրօղն տրական գնի, մինչ փոխարկին 'ի կրաւորականն, նոյն տրականն լինի ուղղական։

Որպ̃ս յաղթեց ինձ· աշխարհ յաղթեցաւ 'ի քէն, և այլն։

Ասել, ճառել, պատմել, վիպել, և նմանք, մինչ միայն պատմական գնին, պատմականն այն է՛ նոցա 'ի տեղի հայցականի։

Պօղոս պատմէ ղքէ· քո̃ պատմի 'ի պօղոսէ։ այսպ̃ և այլն։

Բայց այս գիտելի է, զի յոյժ սակաւք գտանին ներգործականք 'ի շարադրութ̃՝ որոց հայցական կրօղն զօրութ̃ իմաստ̃ լինի։ որպ̃ առաջնոյն ներգործեայն։ Իսկ կրաւորականաց մեծ մասին ներգործող սկզբնականն զօրութ̃ իմաստ̃ լինի։ որպէս, Խաչեցար և թաղեցար վ̃ն մեր։ Որ իմանի, խաչեցար 'ի հրէից կամ 'ի զինուորաց, և թաղեցար 'ի յովսեփայ։



Եւ

Ա՜ բազում այսպիսի սկզբնական ներգործողք մինչ երեւիլ հարկաւորին, գնին սեռականաւ և նախադրիւ՝ 'ի յետոյ։ Արդ, խաչեցար 'ի ձեռն հրեից, և թաղեցար 'ի ձեռն յովսեփայ։

Ա՜ այս մի՜ պարզելոյ զբանն՝ 'ի տեղի ուրեք յոյժ հարկաւորի. որպէս, Հրեշտակք զկոյսն մարիամ վերափոխեցին յերկինս. Սոյն մարիամ վերափոխեցաւ 'ի ձեռն հրեշտակաց յերկինս։ Զի եթէ ասիցի, 'ի հրեշտակաց վերափոխեցաւ յերկինս, շփոթումն լինի իմացուածոյն. որպէս թէ 'ի միջոյ հրեշտակաց վերափոխեցե՜լ իցէ. Ով ասէ, զի մի՛ զրկեսցիմք 'ի սատանայէ. որ է ասել՝ զի մի՛ զրկեսցիմք 'ի շնորհաց 'ի ձեռն սատանայի. այսինքն խաբէութեան սորին։

Հարկաւորի և այնպիսի տեղւոջ, ուր ներգործող սկզբնականն որ միայն կրաւորականին

պատկանի՝ և հարկ սկզբնականն
որ ներգործականին ևս պատկա-
նի՝ իմիասին հանդիպիցին։
Ո՛րգոն, քո ազատեաց զմեզ 'ի սա-
տանայէ՛, մեք ազատեցաք 'ի սա-
տանայէ՛ 'ի ձեռն քո։ Զի եթէ
ասիցի՝ 'ի սատանայէ 'ի ձէ, խառնակ
և ծանրաձայն լինի։ Սատանօր՝
'ի յետոյ ձէ՝ զօրութ սկզբնական
իմացեալ լինի. զի իրակութիւն
կրողէն 'ի նմանէ արտահոսի։
Արդ ևս ասիլ՝ քի, կամ ազա-
տութն քի։ Նա՛ ուր ոչ ունիցի
կրաւորականն ներգործօղ սկզբ-
նական, ոչ ներգործութ ոչ զօրութ,
անդ կրաւորականն այն ըս նմա-
նութ կրաւորակերպ ըստ միջականի
եղել լինի։ Նա ո՞պ ջուր հեղայ,
և ցրուեցան ամ ոսկերք իմ։
Նա բազումք են այսպիսիք որք
կոչին կրաւորականք. ըս այնմ
զի կրօղ են իրակութ. և ընդմիջա-
կանք ըստ այնմ, զի ոչ ունին ներ

գործօղս։ Եւ ներհակ այսմ՝ լինին ուրեք, զի ընդ միջականն իրակութեն իւրոյ ներգործօղ ունելով՝ իբր զկրաւորական վարին։ Մեռաւ մինչրն 'ի քաջացն հայոց։ Եղբայրն իմ տրտմեցաւ յինէն։ Ընկեցայց ևես 'ի թշնամեաց իմոց։
Այս՝ և յերեան 283 յիշեցաւ։

## Յոլովականութիւն Հաստատուն Բայից։

### Գլուխ 15

Ես վասն հոլովմաութեան հասարակ բայից գիտելի է, զի որք ինչ վս՟ հոլովմանութեան ներգործականացն և կրաւորականացն ասացաք, զնոյն իմա և զայնցանէ որք ուրեք ներգործապէս և ուրեք կրաւորապէս 'ի կիր արկանին։ որգն, Մարիամ ծնաւ զքս՟. քս՟ ծնաւ 'ի Մարիամայ։ Ես դաւանիմ զքս՟ որդի այ՟. քս՟ դաւանի իմ դաւանեալ լինի յինէն որդի այ՟։ Գրս՟ թացեալ

զպատուն 'ի ջուրն՝ ետ յուդայի.
պատուն թաղել 'ի քէ 'ի ջուրն՝
տուեալ յուդայի, և այլն.

Մե̃ վարդապետն խրատիս՝ 'ի գերեցիկ մեկնութեան զուկաստ ամենատարանին 'ի վե̃ բանին՝ (ա̃մ որ խոստովանեցի յիզ առաջի մարդկան,) ասէ վս̃ աշակերտացն՝ թէ այսու ա̃մի զօրութիւն յաւերու 'ի նա̃. արհամարհել զմահ, և խոստովանիլ 'ի նա առաջի մարդկան թէ ա̃ծ է. և խոստովանիլ 'ի նմանէ առաջի հօր և հրեշտակաց թէ վկայք են ա̃ծութե̃ նր. յերեսն ձ̃հթ.

Բայց հասարակքս՝ նոյնէ, հայնէ, զկրօղսն իւրենց սկզբնահօրով տրակեանան խնդրեն. Նայեցայ 'ի քեզ, և նայեցայ 'ի քեն. Հայեցայ 'ի նա, և հայեցայ 'ի նըմանէ. Իսկ բայլիս գորին՝ արտագոյական գնի կրօղն. ոչ՝ փարեցայ զնովաւ, և փարեցայ 'ի նմանէ և այլ.

Սբ՟ն Նարեկացին յաղօթական բանս իւր ՚ի գլուխն ե՟՝ ասէ , մի՛ եղիցի ինձ կողկողել և ոչ ո‿ղորմիլ · որ է՛ ողորմելւոյն ։ Եւ՟ ՚ի գլուխն Ծը՟՝ ասէ ,՚ի քէն ողորմեալ փրկիչ Քի՟ ։ որ է ողորմեցեալ ։ Յորոց յայտ է թէ և՝ ողորմիլ , կարէ՛ գտնիլ ՚ի կարգս հասարակաց ։ Սակայն և այս՝ ՚ի ներգործական նշանակութեն՝ զկրողն իւր տրա‿կանաւ՟ առնու ։ և հրամայականն կարէ՛ լինիլ՝ եա , եաց ։ ողորմեա՛ ինձ տ՟ր զի հիւանդ եմ ես ։ ողորմեա՛ց մեզ տ՟ր ա՟ծ մեր ։

Յաղագս Հոլովառութե՟ Ընդմիջական Բայից ։ Գլուխ 16

Ըստ առամն Աղաչականին ։

Բայքս Ընդմիջականք՝ կալ · մնալ · նստիլ · երևիլ · կեր‿պանալ · ձևանալ · պատկերանալ · ենթակայանալ , և այլ , թէպէտ և ղայլ հոլով կարեն առնուլ ,

սակայն ուրեք ուղղականաւ շա
րադրին։ Այս կացի Թագաւոր 'ի
նմանէ ‖ պետրոս պաշտօնեայ մը
նաց ‖ պօղոս դատաւոր նստաւ ‖
ծառքդ տեղւոյդ՝ մարդիկ երև
եցան ինձ ‖ և այլ․

Ասացի՝ (Թէպէտ և զայլ հոլով կարէն առնուլ,) ոչ ասել,
Կացի և մնացի 'ի տան նորա․
Նստաւ յո̃ իմ̃ իշխ ‖ նստաւ 'ի լերինն Ձիթենեաց․ Երևեցաւ Տէր ‖ երևեցաւ 'ի թաբօր, և այլ․

Ա՛ էական բայքս՝ եմ, լինիմ, եղանիմ, սովորապէս ուղղական պահանջեն։ Այս եմ ծ̃յ․ դու ես արքայ․ պետրոս եղև քահանայ։ և բազումք այսպիսիք։

Ըստ այսոց վարին և բ̃ղւմ կրաւորականք։ Տունս այս դպրոց շինեցաւ․ այն փայտ աթոռ կազմեցաւ․ դու վարժապետ կարգեցար․ ես պաշտօնեայ կացուցայ․ դոքա մանկունք կոչեցան, և այլ․

Որք ունին և զսկզբնականն զօ-
րութիւն. և ուր պիտոյ լինի՝ դնին.
Որ կերպ ուրեք և ընդմիջականին
հանդիպի. Ես կայի թագաւոր
'ի Նմանէ ։ Յորում բայս կայի,
է իբր զկրողականն ածանցելոյն
կայուցայ. տես և յերեսն 288 ։

## Ոտասամն Սեռաջանին.

Ընդմիջականք ոմանք առնուն
զսեռականն՝ 'ի ձեռն առնկանա-
ւու նախդրաց. Որգոն, խնդամ,
ցնծամ, խայտամ, ընկրկիմ, և
զուարճանամ վասն հաւատոյս.
Իսկ լամ, ողբամ, սգամ, կոծամ,
տրտմիմ, տխրիմ, ցաւիմ և վարա-
նիմ վասն գործոյս։
Յիսուս փրկիչն Քրիստոս՝ աշխատեցաւ վաս-
տակեցաւ քրտնեցաւ անարգե-
ցաւ նախատեցաւ չարչարեցաւ
խաչեցաւ և թաղեցաւ վասն մեր.
Հիանամ զարմանամ ապշանամ
և ափշիմ ի վերայ մեծամեծացն այս ։

Ձանգեաւն հոգւին իմոյ եղիսէի·
Լացէք ի վերայ անձանց ձերոց·
Ասացաք մնացք ինքեանց հարկիս·
Ընկանիմք առաջի քո տէրամայր·
Սոյն բազում կրաւորականք Ը
այսոց վարին· որպ ի վերոյ՝ անար-
գեցաւն և այլ· Նաև այլ բազում
բայք վերաբերին առ այս կերպ·
որք կամ առանց այլ ինչ հոլովոյ,
կամ ընդ առնելոյ ուհոլովս իւր-
եանց՝ առնուն և սեռականն՝
այսպէս նախդրաւս միջնորդութե·
որպ և յերեսն 392 երևի յիշեցեալ·
Սոյն տարակուսելի է աստ՝ թէ
այսպիսի հոլովառութի նախ-
դրին է արդեօք՝ թէ բային·
Ասելի է թէ՝ ըստ դրութե՝ նախ-
դրին է, բայց ըստ մտաց՝ բային է
համարելի· զի և նախդիրն խնդ-
րոյն իւրով վասն բային մտացն
եղեալ լինի· Որպէս յասելն՝
վա ձեր, իմ մեր, առանց բայի
իմացուածն ինչ ոչ լինի·

Ըուան Մերձաւոր Տրա՛։

Ընդմիջական բայք՝ ցանկալ. տենչալ. տարփալ. բաղձալ. ըղձալ. քաղցնուլ. պապակիլ. կարօտիլ. փափագիլ. ծարաւիլ. բաղկանալ. ղայրանալ. դժուարիլ. ժամանել. նմանիլ. նախանձիլ. ներհակիլ. ծառայել. համբերել. հանդուրժել. տոկալ. ընդդէմ կալ. պատահիլ. հանդիպիլ. դիմակայիլ. ընդառաջ ելանել, և այլք, խընդրեն զտրականն վերջահոլով։

Ցանկացայ փրկութեան քում Տէր։

Տենչացեալք անճառ լուսոյն, վերասլացան ՚ի կեանս անմահս.

Ընդառաջելեալ արքային՝ դասք երբայեցւոց, և այլ։

Ընդդէմ բայք՝ պարտ է, պատշաճ է, և այլն, որովհետև յատկութ դիմի ոչ ունին ըստ յերեսն 108 անցան, դիմորոշութիք նոցին այսու վերջահոլով տրականաւս դնին։ որոց զկնի այսպիսի տրա

կանոնն՝ շարակցի աներեւոյթ բայ, իմ ուղղական անուն լըցրու տեր իրականութեն. Մըղան, պա՛րտ է ինձ գրել. Ճա՛հ է քեզ ընթեռնուլ. Հա՛րկ է նմա միտ դնել: Պատշա՛ճ է մեզ տեղիս այս. արժա՛ն է քեզ պատուե՛լ այդ. ըմբռնո՛ն է նմա այնպի ըսեստ: Հաճելի է ինձ մեալ աստ փութալի է եւ քեզ գալ այսր.

Մայս կերպս՝ ուրեք բացարձակ դնի առանց դիմի յատկութեն. Որ շարժէ եւ ո՛չ շարժի, նմա՛ տալի է պաշտօն. Իսկ ուր այսպէս դնի առանց յատկութե՛, ցուցանի թէ առ ամենայն ոք պատկանի. Որպէս այս ի բրու ասէ, ամենեցուն պարտ է նմա տալ պաշտօն:

Մանկն բայս՝ ձգի, մինչ դնի միայն ըստ ինքեան, լինելով միադիմական անդէմ, ինքնըստ զօրականն վերջաւորով՝ դիմաւորին ինքեան եւ անուան բայի. եւ զինի նորին աներեւոյթ բայ: Նոյն նմա անցանել



ընդ

ընդ արտորայս ։ Եղև մտանել նմա 'ի ժողովուրդն , և այլ ։

Ե՜ ահա կայսպիսի կերպում՝ անուն բային տրական դնի ողջուցանէ, Զի թէ աներևոյթս՝ անցանել՝ դիմաւոր դնիւր , անուն բային ուղղականն լինէր այսպէս, եանց նմ ընդ արտորայս ։

այսպէս և միւսն։

Ե՜ տրականս՝ ինչ , և այլ, ըստ կերպի զոր ասելոց եմ; բացում ներգործական բային պատկանի բաց 'ի խնդրոցն իւրեանց։ որպէս , Տուր ինձ զհացն զայն , և արա ինձ խորտիկս։ Բաց ինձ զդուռն քո , և փակեա զնա այլոց ։

Ձևեաց գարպաս որդւոյ իւրում, և այդի տնկեաց նմա 'ի պարարտ տեղւոջ։ Որ կերպ ուրեք իբրու զարդ դնի։ Տես դու ինձ զբազմութիւն արանցդ ։ Նոյն այս՝ ուրեք և ընդմիջականի լինի ։

Ե՛լ դու ինձ 'ի գլուխ լերինդ, և այլ։

## Վասն Նախդրին Տրականին.

Ընդ միջականքս՝ գալ. գնալ. եր թալ. փութալ. դառնալ. ան սալ. մերձիլ. մերձենալ. մօտիլ. մօ տենալ. վստահիլ. վստահանալ. վերանալ. հասանիլ. բարձրանալ. թռչիլ. մատչիլ. երդնուլ. յե նուլ. պշնուլ. յօժարիլ. յանդըդ նիլ. ձեպել. վաղել. խնայել. անխայել. եղանել. մտանել և այլք, ընդ խնդրին տրականն պա հանջեն. Գնայ յո՛ ՚ի գիւղ մի. Գնաց յանապատ տեղի. Ե՛րթ ՚ի սեղովամ, և այլն։ Յայսպիսեաց բառուցս՝ ունին և զսկզբնականն զօրութ. և ուր պիտոյ լինին՝ դնին.

Տես յերեսն 393 և բաց է.

Նախկան բայից կերպս այս տրա կանի (ես եղէց ձեր ՚ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ՚ի դստերս.) յաճախ ՚ի կիր առնի ՚ի բանս նախնեաց. որ ինքու



զուստ

ղուտ ուղղական իմացեալ լինի ։
Այս եղէց ձեզ հայր, և դուք ե-
ղիջիք ինձ ուստերք և դստերք ։

Առանձ Տրականին ընդլի ․

Ընդ միջնորդս՝ հաճիլ․ հաշտիլ․ կա-
գել․ կռուիլ․ վիճել․ վիճաբա-
նել․ հակաճառիլ․ բանակռուիլ․
մարտնչիլ․ խոժոռիլ․ ոգորիլ․ խա-
ղալ․ շնալ․ պոռնկիլ․ անցանել․
հիանալ․ զարմանալ և այլք, առ-
նուն զտրականն ընդլի։ Հաճե-
ցար տ̅ր ը̅ երկիր քո։ Արթ հաշ-
տեաց ընդ եղբօր քում։
Այս ընդ՝ յեղկնութ այսպիսեց՝
ուրեք ընդ ուղղականի կցին,
ուրեք ը̅ վերջահոլով տրականի
ո̅պ ցուցաւ ը̅ երկիր, ը̅ եղբօր ։
Իսկ ՚ի յոգնականութն՝ գնին ո̅պ
նախդիրքս՝ ի, յ․ ընդ երկիրս, ը̅
եղբարս։ Տես և յերեսն 395
Ա՛ ոմանք ը̅ միջականք իբր սո-
վորա̅պ՝ տլի առնուն զտրկնն

որք են, դիմել, զօրել, կանխել, առաւօտել, ստահակել, ամբարշտիլ, անիրաւիլ, անօրինիլ, կողկողիլ, բողոքել, կարդալ, աղաղակել, բարեխօսել և այլ. Մարդացին արդարքն առ Տր. աղաղակեցէք առ Ած յակոբայ. բարեխօսեա՛ առ միածին որդին քո, և այլն

Առաջին Գործիականին.

Ընդմիջականքս՝ յագիլ. խայտացնծալ. պնծալ. խնդալ. բերկրիլ. տխրիլ. ախտանալ. համրանալ. պապանձիլ. աշխատիլ. վաստակիլ. արբենալ. զովանալ. Թուլանալ. ժրանալ. զօրանալ. ծերանալ. ջերմանալ. լքանալ. մեծանալ. շատանալ. ծանրանալ. դանդաղիլ. կարկամիլ. աճիլ. սնանիլ. զարդանալ, և այլք բազումք, զգործիականն առնուն։ Յագեցան կերակրովք. Խայտայր ալեօքն ծերութեան և ցնծայր հոգւովն.



Ընդ

### Առումն Արտադրականին.

Ընդմիջականք ոմանք յոյժ սակաւք՝ առնուն զհոլովն արտադրական. Շրջեցան զեզերօքն. Անցին զկրետեաւն. Նըստան զպարսպովն։ Գերազանցեցին զայլ ուսումնակցօքն, եւ այլ.

### Առումն Հայցականին.

Ընդմիջականք ոմանք առնուն թէպէտ զհայցականն, բայց ոչ զայլ բառ, այլ զինքեանս. Որպէս, ախտացաւ զախտն մահու. սրտմտեցաւ զսրտմտութիւն մեծ. կորեաւ զկորուստն յաւիտենից, եւ այլ. Իննին ըստ այսց եւ ոմանք գործիականք. գօտեւորեալ գօտեաւ. զինաւորել զինուք, եւ այլ. Պատանին եւ սակաւք այլ բառից առեալ զհայցականն. գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ։

Եւ ոմանք ընդմիջականք՝ զորպանութիւն ժամանակի հայցակա-

նաւ պահանջէին։ Սաստան շուրջ
զնովաւ զեօթն տիւ և զեւթն գի-
շեր։ Մնացաք առ նմա զերիս ա-
ւուրս։ Ոչ եկն անձրև զերիս
ամս և զվեց ամիս, և այլ։
Իսկ ուրեք՝ միայն զժամանակ՝
և ոչ զորքանութիւն ցուցանեն։
զտիւ և զգիշեր աշխատէաք ։
զօրն ողջոյն և զգիշերն ողջոյն
տառապէաք ։
Այս կերպ՝ և այլ բայից պտհի։
Ներգործական, զտասն օր գործեցիք
՚ի յայգւոջն Արամոյ՝, շինուածս
այս՝ զերիս ամս շինեցաւ, և այլ։

Վասն Պատմականին ։

Ընդմիջականք ևս՝ յոյժ սակաւք՝
առնուն զպատմականն։ Շնոր-
հակալ եմ զքեն սիրելի իմ, զի աշ-
խատեցար վ̃ն իմ ՚ի գալ քո առ իս։
Բայց աղաչեմ զքեզ սէր իմ,
մի ընաւ լինչ երկբայիցես զինէն
թէ սիրեցի զմ արդեօք զքեզ։

Պաղատանամ զոնէ լինել, զի ո՛չ եր
բեք երկմտեցայ զսիրոյ քումմէ։
Յամօթ լեզւին ուրեմն որք քոթ-
ձէջէն զմէնջ ընդ. միմեանս։ Որք
և զընկալեալ բարեացն տրտրն
ջօղք են միշտ։

## Ըառոն Ասլբնոյանին ։

Ընդմիջանկեքս՝ զարթնուլ․ յառ
նել․ դողալ․ սարսիլ․ պակնուլ․
խուսել․ չոքել․ փախչիլ․ զզուիլ․
դարշիլ․ շեղիլ․ ամաչել․ երկնչիլ․
կորնչիլ․ պակասիլ․ հեռանալ․ կաս
կածիլ․ պատկառիլ․ զարհուրիլ․
սարսափիլ․ մոլորիլ․ վրիպիլ և բա
զումք, զսկզբնականն խնդրեն։
Զարթեան 'ի քնոյ կորիւնն ա
ռիւծուն։ յարեան 'ի յերկրէ հո
վիւն հօտից։ յորմէ դողան և սար
սին երկինք և երկիր։ Յայսպիս
եաց և ոմանք՝ անին և զորակնն
զօրութ․ և ուր պիտոյ լինի՝ գնին։
Տես և զայս յերեսն 393 և բաւ է։

## Ուսումն Ներգոյականին.

Ընդ միջականքս՝ կալ. մնալ. նըս-
տիլ. բազմիլ. յամել. ճեմել.
զգնալ. զբօսնուլ. զբաղիլ. ննջել.
հսկել. աղօթել. հանգչիլ. օթել.
օթագայիլ. իջևանիլ. ագանիլ.
բնակիլ. բանակիլ. դեգերիլ.
առանձնանալ. միայնանալ. շրջիլ.
լողալ. զեռալ և այլք, զներգոյա-
կանն առնուն։ Կացաք մնացաք
'ի դպրոցի անդ։ Նստաւ և բազ-
մեցաւ 'ի բարձի իւրում։

Յոլովս այս Ներգոյական, (որ՟
յերեսն 400 ասացաք,) գրեթէ
ա՟մ բայից կարէ պատկանիլ։ զի
ոչ է իրականու՟թ թարց տեղւոյ և
ժամանակի։ Ուստի ուր հարկն
պահանջէ յայտնել զտեղին իրա-
կութ՟ն կամ զժամանակն, դնի
ներգոյական տեղւոյ և ժամանա-
կի. կամ մակբայ տեղական և ժա-
մանակեան. ունօղ զնշանակու՟թ
ներգոյականի։ Որպ՟ մինչ ասի,



ասա

սաստ է գրչոյն մեր՝ մակբայս սա
է 'ի ներգոյական նշանակութեն.
որ է ասել՝ 'ի տեղւոջս յայսմիկ.
Նոյն ուրեք վն զարդարուն բե-
րելոյ զբանն՝ մակբայն և ներ-
գոյականն իմաստին շարադրին.
սաստ 'ի տեղւոջս յայսմիկ է գրչ-
րոյն մեր. Նոյնպէս և զժամա-
նակի մակբայսն իմա.

Նոյ բաղում բայք ընմիջականք՝
առնուն զներգոյականն անե-
րևութին 'ի տեղի մակբայիցս՝
յորժամ, իբրև, մինչ. Որկէն, ստոյգ-
զղջացօղն՝ սարսափի 'ի յիշելն ըղ-
մեղս իւր. զարհուրի և դողայ 'ի
մտածելն զդատաստանն ահաւոր.
Ի խօսելն հառաչէ, 'ի նայելն ամա-
չէ. Որթուն կայ 'ի ննջելն, և
արտասուէ 'ի յաղօթելն.
'Ի տեղի ասելոյ՝ սարսափի յոր-
ժամ յիշէ զմեղս իւր. զարհուրի
և դողայ մինչ մտածէ զդատաս-
տանն ահաւոր. և այլն.

Լինին ըստ այսց և ներգործականք· ՚ի տեսանելն իմ զքեզ՝ ուրախ եղէ յոյժ· Որ է ասել, իբրև տեսի· Նոյն ոճով այսպիսի աներևութք՝ հուպ յինքեանց եղեալ դիմաւոր բային զժամանակն յայտնեն ոչ և ցուցանեն։

Նաև աներևոյթ բայս՝ ընդ ինքեան անկատար է ՚ի բանի · որպէս այս՝ ՚ի տեսանելն իմ զքեզ· և կատարի դիմաւոր բայիւ, ուրախ եղէ յոյժ։ Նոյնպէս է և ընդունելութիւն՝ եալ· տեսեալ Յի զժողովուրդն։ և կատարի՝ ել ՚ի լեառն։ Նոյնպէս են և ստորադասական բայքն · եթէ սիրէք զիս · և կատարի՝ զպատուիրանս իմ պահեսջիք։

Բայց տես, զի ստորադասական բայքն ոչ միայն ըղձիւ կամ երկբիւ կերպիւքն · այլ ինչ ձայնիւ և իցէ մինչ անկատար ժամու բային, կոչի ստորադասական· որպէս ձայնքս՝ յորժամ, իբրև, մինչ, մինչդեռ,



և

և նմանք՝ անկատար Թողուն ըզ
բանն։ Ով աստէղ, յորժամ տեսի
զքեզ. իբրև տեսի զքեզ. մինչ
տեսի զքեզ. մինչդեռ անդ էի.
որք ամենեքեան են անկատարք.
և կատարին դիմաւոր բայիւ.
Յորժամ տեսի զքեզ, ուրախ ե
ղէ յոյժ, և այլն։
Ունէ անկատար զբանն՝ Ադեր-
անունս որ, ՚ի դնիլն ՚ի սկզբան
բանի։ Որ առնէ զպտ̃ուիրանս իմ։
և կատարի՝ նա է որ սիրէ զիս.
Լինի սոյնպէս և յօդիւս՝ այն,
սոյգ խոնարհ այն է, որ ոչ դի-
տէ գոլ զինքն խոնարհ. Փրկէ՝
տր̃ զայնոսիկ, որք մաշեալ են սըր
տիւք։ Նյսպ̃ և զայլ անկատար
Թողող մասունսն իմա։
Եւ յորժամ բայն՝ անկատար Թո
ղող ձայնի հանդիպի, խնդրի
դիմաւոր բայ զի կատարեսցի ան-
կատարն ոպ̃ ասացաւ և ցուցաւ.
Բայց յորժամ նախքան զմասն

զայն անկատարակերտ՝ դնիլ պա
տահիցի՝ ոչ, յայնժամ միով դի-
մաւոր բայիւ տակաւին անկա-
տար մնայ։ Ապ ասելս, ոչ եթէ
դուք ընտրեցիք զիս, որ է տակա
ւին անկատար. և կատարի երկրորդ
բայիւն. այլ ես ընտրեցի զձեզ։
Աստ այսմ է և այն՝ յորում զկնի
անկատարակերտ մասնկանն՝ դնի
աներևոյթ՝ կամ, եալ։ Ապ այսո
րիկ, եթէ խօսիլ պարտ լինիցի
քեզ ընդ նոսա, մի՛ շատաբաներ։
Իսկ եթէ լռել ոչ ինչ խօսիցիս,
զդէմդ մի՛ խոժոռիցես։ Նյպս
և զայլսն իմա։

Եւ ծանիր աստ, զի 'ի սկզբան
հոլովառութեանս՝ յերեսն 368
ասացաւ՝ թէ երեք են որք խնդ
րեն զհոլովս անուանց. այսինքն՝
Անուն, Բայ, և Նախդիր.
Արդ՝ զհոլովառուէ անուան և
բայի՝ անմանրախոյզ քննութ
ասացաւ ցաստ 'ի կարգս. Իսկ ըզ

 նա

նախադրութն հոլովառութի՝ ուսար 'ի նախադրութեան անդ յերրեսն 140։ Բայց այն՝ զի ասացաւ վն ընդունելութն՝ թէ երբեմն առնու կամ առնանի իբրև անուն, և երբեմն առնու միայն իբրև բայ, տես զօրինակդ։

Ունուլ միայն իբրև անուն, Ծնօղն այ մարիամ, մայր է և կոյս. կոյս է և մայր։ Ունուլ և առնանիլ իբրև անուն, զԾնօղն այ զկոյսն մարիամ գովեսցուք և մեծացուսցուք։ Սուրանօր՝ ծնօղ, առաւ՛ թէպէտ 'ի բայիցս՝ գովեսցուք և մեծացուսցուք, բայց և ինքն էառ զսեռականս՝ այ։

Իսկ առնուլ միայն իբրև բայ, խորփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն։ որ է ասել՝ խփեաց զգիրսն և ետ ցպաշտօնեայն։ Ը՛ տես, զի մինչ երկու դիմաւոր բայք ըղկնի միմեանց դնին, իմէջն՝ և պատկանի։ Որպէս այս՝ խփեաց

զգիրսն և եւ ցպաշտօնեայն։
Կամ և այս, եւ ցպաշտօնեայն և
նստաւ․ Իսկ թէ մինն՝ եւս դը
նիցի, ոչ է պիտոյ՝ և․ որպէս այս՝
խփեալ զգիրսն եւ ցպաշտօն”,
«Նաև ուր երկու եւս, կամ եր
կու աներևոյթ չլինի քրերաց
դնին, անդ ևս պարտի դնել ՚ի
միջին՝ և․ Որպ ասել, խփեալ ըզ
գիրսն և առնեալ ցպաշտօնեայն՝
նստաւ անդ․ Կամ այսպէս, ՚ի
խփելն զգիրսն և ՚ի տալն ՚ի պաշ
տօնեայն՝ նստաւ անդ։
Բայց գտանին ՚ի բազում ուրեք
երկու գծմանօք՝ կամ երկու
աներևոյթ՝ և կամ երկու եւս ա
ւանց շաղկապի։ Լացաք Թացաք
ոսս ՚ի մեղս մեր․ Հրամայեաց ե
լանել նստիլ ընդ նմա․ Պատեալ
պաշարեալ պահէին զնա, և այլն․
Իսկ ընդունելութիւն՝ ըստ, ընդ
հական բայիս՝ է, սովոր է կցել․
դառնց է որդին մարդոյ․ Սակայն
թ․



կա

կարէ ուրեք և ո՛չ բայի՟ կատա
րել զբանն. գալոց գիտեմք
զորդի մարդոյ.

Ա՜յլ բաց յերկիցս այսցանէ հոլո
վառուեց անո՟ւան և բայի և
նախադրուէ, Մ՟իջարկուեցն ևս
ոմանք ունին զխնդիր. Երանի՛
հեզոց. վա՛յ քեզ քո՛րազին.

Ա՜յլ ասի ուրեք, երանի՛ է քեզ.
վա՛յ է նոցա. եղո՛ւկ է ինձ, և այլ.

## Յաղագս Արգելեալ Խնդրոյ.

### Գլուխ 17

Ստացեալ 'ի կարծոյ զխնդիրս
հոլովառու մասանցն բա_
նին, ասելի է սակաւ ինչ և զար
գելմանցն նոցին.

Բազում անգամ 'ի բանի՝ հան_
դիպեալ դիմաւոր բայի անե_
րևոյթ բայ՝ արգելու զխնդիրն,
և ինքն դնի 'ի տեղի նորին.

Ո՟պ ասել, յուսամ հասանիլ թո
ղուե մեղաց. Ահա՛ աներևոյթս

հասանել, հանդիպեալ դիմաւոր
բայիս յուսամ, արգել զխնդիրն
նախդրին տրական. և ինքն եղաւ
'ի տեղի նորին: Նաև ինքն բայս
հասանել, էառ զվերջահոլով տրա_
կանս Բողոքին. որ է խնդիր Իւրոյ
դիմաւոր բայութեանն. զի ամ
աներևոյթ առնու զխնդիրն իբր
զդիմաւոր: Որպ այս, յուսամք
'ի տր ած մեր: պարտ է մեզ յու
սալ 'ի տր ած մեր: Իսկ յասելն,
յուսամք 'ի տր ած՝ հասանել թո
ղութ մեղաց, աներևոյթս հասա_
նել, ոչ կարաց արգելուլ զխնդ_
դիր բայիս. զի յետոյ դիպեցաւ
քան զխնդիրն: այսպէս և
զայլսն իմա:

Իսկ բայք ոմանք սովորաբ զան_
երևոյթն պահանջեն: որք են,
ջանամ, փութամ, ճեպիմ, խընդ
րեմ, խորհիմ, կամիմ, ըղձամ, փա
փագիմ, յօժարիմ, սկսանիմ, նայ.
Ջանամ գնալ 'ի տուն իմ.

փութայր առնուլ զքղ̃քն · սկսաւ
խօսիլ ընդ նմա · և այլն։

Նաև սեռականաւոր նախդիրք
ոմանք՝ ընդ սեռականի անե-
րևութին յաճախ շարադրին։
Վասն ուղղելոյ զգնացս մեր ·
յաղագս փրկելոյ զմեզ, և այլ:
Նայց ուրեք այսպիսիք ուղղա-
կանաւ եդեալ կան ։ Ամ̃ 'ի
դիշերի և'ի տուընջեան խօսիլ
մեզ զբան տ̃ն· վս̃ անդատապարտ
կալ մեզ առ"· ըստ" վս̃ զմեզ կե-
ցուցանել· Նստայց է, վս̃ որք
'ի լերինս յայրս և'ի փա"·

Յօրինուածք օրինակ Ներգործական Խոնարհման ·

Շաղկապքս՝ Թէ, Զի, բազում
անգամ պատահել բայից՝ առ
դերլուն զխնդիրսն։ որպէս, Մեք
ծանեաք թէ դու ես ք̃ն ։ յղ̃ս
թէ Զինչ է հոգի ։ ասա տ̃ր զի ըլ
ժըշկեցայց ։ վասն զի մի' ընդ խու-
տանս դտանիցիմք ·

Ա՜յ աՀա՛ շաղկապս՝ Ըէ, պատա-
Հեալ ծանեաւ բայիւ՝ արգել ըղ
Հայցական խնդիրն Նորին. զի աս-
տանօր բայս ծանեաւ՝ է՛ ՚ի Ներգոր-
ծական Նշանակուէ որ զՀայցա-
կանն պաՀանջէ. Ա՜յ շաղկապս՝
զի, արգել զխնդիրն բայիւ՝ ասա.
Ըստ իմա և զարգելմունս սե-
ռականաց խնդրոց՝ Նախադրու-
Թեանցս, յաղագս, վասն.
Արգելեալ խնդրոց Ա՛րդ օրի-
Նակ կալ քեզ զայնս՝ որոց խըն-
դիրն զօրութ իմացեալ լինի.
Որպէս այս, եկ սիրելի իմ, առ զքո
տուեալն. Որ իմանի՝ եկ առիս,
և առ յինէն զքո տուեալն ինձ.
և անԹիւք են այսպիսիք.
Նաև յորժամ բայ իմն խնդրոյն
իւրով լինի Հարցումն, Ներպա
տասխանւոյն՝ զօրութ իմանի խըն-
դիրն. Որպէս այս, տեսե՞ր զպետրոս.
տեսի՛. Որ է առել՝ տեսի զպետրոս.
Ասկ ուրեք բայն ևս ոչ դնի .


ով

ո՛վ եհար զքեզ՝ պետրոսն։ Որ է
ասել՝ պետրոսն եհար զիս։
Չորրորդ՝ լինի արգելումն խընդ-
րոյ՝ յորժամ 'ի տեղի խնդրոյ
բայիս՝ ասել, դնի բան իմն կատա-
րեալ, և ուրեք յոյժ երկար։
Ասէ՝ այն հիւանդութիւն չէ 'ի
մահ, և այլն։ Որ իմանի՝ ասէ ցնս
ըղ բանս զայս։ Ասէ՝ առն միոջ
էին երկու որդիք։ Փնչն 'ի վերջ
առակիս։ Որ իմանի՝ ասէ ցնոսա
զառակս զայս։

Հինգերորդ՝ լինի արգելումն խնդ-
րոյ՝ յորժամ յարաբերական
դերանունս որ, արգելու զխըն-
դիրն անուան՝ կամ բայի՝ կամ
նախադրութեն՝ և կամ ախտակրութեն
որ է միջարկութի։ Որգոն, լցան
անձինք մեր նախատանօք որք նա-
խատէին զմեզ։ Ծագեա՛ զողորմու-
թիւնս քո որք ճանաչեն զքեզ։
վն որք սաղմոսիւք և օրհնու" ։
երանի որ խորհի զաղքատն և" ։

Եւ արդ՝ ՚ի վերջնում աստ հո
լովառութեանց եւ արդելմանց նո
ցին՝ պարտ է գիտել, թէ այն հո
լովառութիւք՝ մանաւանդ բայից՝
որք իբրու կանոնք ինչ մինչեւ ցաստ
եդան, ոչ թէ միշտ այնպէս պարտին
դնիլ ամենեքեան ոչ եւ եդան.
Այլ բազումք ՚ի նոցանէ եւ այլք
նոյնպիսիք՝ այլապէս քան զոր կա
նոնեցանն դնին ՚ի բանի. զի զա
նազան դիտմունք բանից ՚ի շարա
դրութեան՝ զանազան խնդիրս պատ
ճառեն բայից. Զորոց ամենեցունց
իբրու անպակաս կանոնել՝ ոչ է
եղեալ յումեքէ. այլ թէ որ բայք
որոց հոլովից յաճախ են խնդ
րողք՝ զայնցանէ միայն կանոն ե
դեալ են. Իսկ զմանրամասնեայս
նոյին՝ խնամով ընթերցումն հըմ
տացուցանէ. Եւ արդ՝ վասն բո
լոր բայից իբրու հասարակաբար
ծանիր զայս, թէ ներշարադրութն՝
բայն երբեմն թարց խնդրոյ կա

 տա

տարէ զբանն։ Որպէս այս, Ննջէ
ծոյլն և զարթնու՝ և գձ̃ ննջէ ։
Մօրբեմն միով խնդրով կատարէ։
անջք իմ տկարացան յաղքատուէ̃։
Մօրբեմն երկուս առնու խնդիրս։
փրկեցեր զանձն իմ՝ ի մահուանէ։
Իսկ երբեմն երիւք առնուէ՛ ։
վաղեցոյց զձին ․ տես յերեսն 405։
Լինի ուրեք և չորիւք ․ տարաք
զնա յարակցից զկրետեան յէմ։
Իսկ սեռական հոլովն բստորում
է յատկացուցիչ զկնի ա̃մ հոլո-
վոց կարէ շարադրիլ։ Որդին ա̃յ․
որդւոյն ա̃յ․ որդւովն ա̃յ․ զոր-
դին ա̃յ․ յորդւոյն ա̃յ․ և այլն։
Նաև գործիականն բստ որում
զորովն և զորպէսն նշանակէ, ա̃մ
բայից կարէ առադրիլ թէ պիտոյ
լիցի։ Որով, մովսէս էհար զվէմն
գաւազանաւ․ Որպէս, էհար զվէմն
բարկութե̃ Ըստ այսմ և զներ-
գործականն իմա ․ զորմէ յերեսն
400․427 եղև ասացեալ։

Յաղագս թէ որ հոլով յո՞րում տեղիս գնիլ պատշաճի: Եւ թէ վասն է՞ր կոչին Ուղղական, Սեռական, և այլն: Գլուխ 18:

## Վասն Ուղղականին.

Յորժամ զբառն վերայ իւր միայն քննել կամիցիմք, գնել պարտիմք զնա ուղղական: Պետրոս գնաց. պօղոս մնաց. ղուկաս եղև քահանայ: Եւ կոչի ուղղական, զի զբառն ուղիղ և պարզ քննէ առանց այլ ինչ նշանակութե:

## Վասն Սեռականին.

Յորժամ զբառն ոչ վերայ իւր, այլ վերայ իւր եղելոցն քննել կամիցիմք, պարտիմք գնել զնա սեռական. ասելով՝ հայրն պետրոսի. մայրն պետրոսի. և այլ: Եւ կոչի սեռական, զի սեռ՝ ընդհանուր ասել է կամ պարունակօղ: Որպէս սեռականաւն՝ պետրոսի, ամենայն ինչ



որ

որ պետրոսի պատկանի՝ կարէ մը տածիլ ընդհանրապէս․ այսինքն՝ քոյրն, կինն, որդին, ձեռն, ոտն, տունն, այգին, և այլն ամ։

## Վասն Գործիականին։

Յորժամ զերն ոչ վասն իւր, այլ վ̃ն այնր որ նովաւ լինի՝ յիշել կամիցիմք, պարտիմք դնել գործիական։ Մովսէսիւ եղև այս գործ․ գաւազանաւ էհար զվէմն։ Նա կոչի գործիական, որ է գործիքական․ զի այն՝ որով գործ ինչ լինի, գործիք անուանի․ որ է իբրու միջնորդ սպասող գործոյն․ զոր էնչէղ ասեն։

## Վասն Հայցականին։

Յորժամ զերն՝ անդ յիշեցեալ իրակութե̃ն կրող իմանամք, պարտիմք դնել զնա հայցական․ Պետրոս սիրէ զպօղոս․ Մովսէս էհար զվէմն։ Նա կոչի հայցի̃ն,

զի իրակութին ոչ թէ հայցէ զնա զի 'ի նմա կայասցի ։ Զ որ և ոմանք կրողական անուանեն վս̃ զիրակութին կրելոյն ոչ ասացաք։

## Վասն Արտագոյականին ։

Յորժամ զիրն այնպէս դիտեմք թէ 'ի բոլորումն նորին այլ ինչ նշանակիցի, գնեմք արտագոյական։ Որպ̃ ասել, նստան զպետրոսին սիրելիքն իւր․ պատեցին ըզբերդին թշնամիք նորա ։ Եւ կոչի արտագոյական, զի ոչ զինքն զիրն, այլ զարտաքին կողմունսն նորին ցուցանէ ։

## Վասն Պատմականին ։

Յորժամ զիրն այնպ̃ նկատեմք՝ թէ վս̃ նորին զոյց ինչ լինի, պարտիմք գնել զնա պատմական։ Խօսիմ ձեզ զպետրոսէ․ որ պատմէր զխոսուսէ՝ Եւ կոչի պատմական, որ է ասական․ զի ասել ինչ զումեքէ՝ պատմանին պատկանի։

 Վս̃

## Վասն Սկզբնականին.

Յորժամ զիրն այնպէս իմանամք թէ սկիզբն է իրակութեան. այսինքն թէ՝ իրակութիւն անտի՛ սկսի, պարտի դնիլ սկզբնական: Որպէս ասել, ՚ի պետրոսէ առի զայս, ՚ի պօղոսէ ուսար զայդ, յինէ տես. Եւ կոչի սկզբնական, զի սկիզբն է իրակութեան որպէս ասացաք. Ոմանք զայս առողական անուանեն. իբրու թէ իրակութիւն անտի առնանի. Եւ այլք բացառական կոչեն. զնա երն ինքեանք ասասցեն.

## Վասն Տրականին.

Յորժամ իրն այնպէս նկատի, թէ դէպ ՚ի նա դիմէ իրակութիւն, պարտի դնիլ տրական. Որպէս պետրոսի կամ ցպետրոս. Նայիմ ՚ի պետրոս. գնամ առ պետրոս. Եւ կոչի տրական, զի դիմեալ գործն ՚ի նա՝ որպէս թէ տրի՛ նմա.

Վասն Ներգոյականին .

Յորժամ զիրն ոչ վասն իւր, այլ վասն 'ի մէջ նորին կամ 'ի նմա եղելոյն յիշել կամիցիմք, պարտիմք դնել ներգոյական . 'Ի տան նր̃ մնայի . յեկեղեցւոջն ընթերցայ . խորհուրդն մեր 'ի պետրոս մնաց . որպ̃ և նորայն է՛ ընտրոս մեր. Այս կոչի ներգոյական, (զոր այլք ոմանք կացողական անուանեն) զի իրն թէ ներ որոյ գոյ, և կամ թէ ուր կայանայ, զայն նշանակէ.

Վասն Կոչականին .

Յորժամ զոք յանուանէ կոչել կամիցիմք զի ասիցեմք ինչ նըմա, պարտի դնել կոչական. Ադամ ո՞ւր ես . ղա՛զարէ եկ արտաքս . շա՛տ է քեզ պօ՛ղէ . ո՛վ տր̃ տե՛ս զտառապանս իմ . Այս ասի կոչական, զի կոչեմք յանուանէ ոմ̃ ան̃ձաք . Տես և յերեսն 258 .

## Խրատ Ճանաչելոյ զՄասունս Շարադրեալ Բանից ։

### Գլուխ 19

Որ ոք կամիցի կրթել զինքն 'ի շարադրութեան, այսքան ինչ գիտացեալ զզօրութիւնս հոլովմանց, պարտի իբրու վարժարան ինչ՝ 'ի ձեռն առնուլ ըզ շարադրածս այլոց, և ճանաչել զմասունս բանին թէ որն որո՛ւմ պատասխանէ՝ ։ Զի ո՛չ է քեզ բաւական գիտել միայն թէ այս ինչ բառ՝ է այս ինչ մասն բանի ։ կամ թէ ըստ այս ինչ հետեւման՝ է այս ինչ ։ Այլ պարտիս գիտել զզօրութիւն մասանցն 'ի շարադրութեան թէ սա նորա է և նա որոյ ։ Ապա զի զայսոսիկ գիտելով՝ կարիցես և դու առնել շարադրութիւնս ըստ կանոնի քերթողացն որքան և կարն քո բերէ՝ ։

Առ այսպիսի ճանաչման զօր անցի, կա՛լ քեզ օրինակ զհետեւեալդ ։

1 Երանեալ է. 2 այր. 3 որ. 4 ոչ. 5 գնաց. 6 'ի խորհուրդս. 7 ամբարշտաց. 8 'ի ճանապարհի. 9 մեղաւորաց. 10 նա. 11 ոչ. 12 եկաց. 13 և. 14 յաթոռս. 15 ժանտից. 16 ոչ. 17 նստաւ.

Ի մասանցս յայսցանէ 1 ըն, 2 ին կրաւորական յարակ̃ր բայն է. որ ներգործական կերպիւ եգեալ է * 2 ըն, 1 ին կ̃վարօղն է. որ կոչի տէր բայի կամ անուն բայի * 3 ըն, 2 ին յարաբերօղն է. որ 'ի տեղի նորին՝ 5 ին կառավարօղ եղեալ է * 4 ըն, 5 ին բացասական մակբայն է * 5 ըն, 3 ին բայն է * 6 ըն, 5 ին տրական խըն դիրն է * 7 ըն, 6 ին յատկացուցիչ սեռականն է * 8 ըն, 12 ին ներգոյական խնդիրն է * 9 ըն, 8 ին սեռականն է * 10 ըն, 2 ին յարաբերօղն է. որ 'ի տեղի նորին՝ 12 ին տէր եղեալ է * 11 ըն, 12 ին մակբայն է * 12 ըն, 10 ին բայն է *

13 ըն, շաղկապ է բաղհիւսական. որ զբանն 4 ին՝ կապեր է ընդ 14 ին * 14 ըն, 17 ին տրական խնդիրն է. զոր և ներգոյականն ասել ոչ է անտեղի * 15 ըն, 14 ին սեռականն է * 16 ըն, 17 ին բացառական մակ՛՛ * 17 ըն, դարձեալ 10 ին բայն է:

---

1 Երկինք. 2 պատմեն. 3 զփառս. 4 ա՟յ: և 5 զարարածս. 6 ձեռ՟ց. 7 ն՟ր. 8 պատմէ՛. 9 հաստատութիւնն.

Յայտյանէ 1 ըն, 2 ին տէրն է * 2 ըն, 1 ին բայն է * 3 ըն, 2 ին խընդիրն է * 4 ըն, 3 ին սեռականն է * 5 ըն, 8 ին խնդիրն է * 6 ըն, 5 ին սեռականն է * 7 ըն, 4 ին յարաբերողն է. որ ՚ի տեղի նորին՝ 6 ին յատկացուցիչ եղեալ է * 8 ըն, 9 ին բայն է * 9 ըն, 8 ին տէրն է:

1 Որ. 2 աւուր. 3 բղխէ. 4 ըղբան. և 5 գիշեր. 6 գիշերի. 7 ցուցանէ: 8 գիտութիւն:

Սոցանէ 1 ըն, 3 ին տէրն է *
2 ըն, 3 ին երկրորդ խնդիրն է *
3 ըն, 1 ին բայն է * 4 ըն, 3 ին նախ-
կին խնդիրն է * 5 ըն, 7 ին տրն է *
6 ըն, 7 ին երկրորդ խնդիրն է *
7 ըն, 5 ին բայն է * 8 ըն, 7 ին նախ-
կին խնդիրն է.

1 Մի՛ նախանձիր. 2 ընդ չարս.
և 3 մի. 4 ընդ այնոսիկ. 5 որք
6 գործեն. 7 զանօրէնութի՛.

Սոցա 1 ըն, է՛ բայ հրամայական.
բայց ըստ որում երկու է հրա-
մայականն, յանձնառական և հրա-
ժարական, սա՛ ի նախադասիւ՝ հրաժա-
րականն է մակբայիւս՝ մի՛. Եւ տր
սորին զօրութ՝ իմանի. իբրու թէ
առ ա՛մ ոք ասէ, ով մարդ մի՛ նա-
խանձիր ընդ չարս. և մինչև ՚ի
տասն տուն և անդր՝ գնին բայքն
սոյն այս զօրութ՝ իմացեալ ան-
ուանս * 2 ըն, 1 ին տրական խն՛ *
3 ըն, ունի զօրութ՝ զնախկին բայն.

որ իմանի ևս՝ մի նախանձիր *
4 րդն, այն զօրութ̃ իմացեալ բային
խնդիրն է. որ և նախընթաց է հրն
դին * 5 րդն, 4 ին յարաբերօղն է.
որ 6 ին անուն եղեալ է * 6 րդն,
5 ին բայն է * 7 րդն, 6 ին խն".

1 Ոի. 2 որպ̃. 3 խոտ. 4 վաղվա
ղակի. 5 ցամաքեսցին. 6 որպէս.
7 դալարի. 8 խոտոյ. 9 վաղվա
ղակի. 10 անցցեն.

Սոյին 1 րդն, պատճառական շաղ
կապ է. (տես յերեսն 170)
2 րդն, նմանական նախդիր է *
3 րդն, 2 ին ուղղական խնդիրն է.
որ կարէ դնիլ և հայցական *
4 րդն, 5 ին արադ̃ին մակբայն է *
5 րդն, առաջին տանն 2 ին 4 ին և
5 ին բայն է * 6 րդն, դարձեալ նը
մանական նախդիր է * 7 րդն, 6 ին
խնդիրն է. և է՝ ածական 8 ին *
8 րդն, 7 ին գոյականն է. որ սեռա
կան հոլովին՝ նմա իբրու յատկա
ցուցիչ եղեալ է. Բայց պէ̃ այն

պիսիք են՝ զոր յերեսն 372 յիշէ ցաք թէ՝ սեռականն ուրեք այնպ յատկացուցիչ դնի, որ կարէր դը նիլ ուղղական։ զի այս, Շնորհի հօ- րոյ, իմանի՝ Շնորհաւ հօր. կամ ըշ հօր փառօք։ Որ երկուքն իմաստսն մի հայցական խնդիր իմացեալ լինին * 9 ըն, յայտնի է * 10 ըն,
ունի տեղի՝ զտէրն հինն։

1 Ողորմեա։ 2 ինձ. 3 ած. 4 զի։ 5 կոխեաց։ 6 զիս։ 7 մրդ։ 8 զօր հանապազ։ 9 պատերազմունք։ 10 նեղեցին։ 11 զիս։

Ցուցանէ 1 ըն, 3 ին բայն է * 2 ըն 1 ին խնդիրն է * 3 ըն, 1 ին տէրն է * 4 ըն, պատճառական շաղկապ է * 5 ըն, 7 ին բայն է * 6 ըն, 5 ին խնդիրն է * 7 ըն, 5 ին տէրն է * 8 ըն, 10 ին ժամանակական մակբայն է * 9 ըն, 10 ին տէրն է * 10 ըն, 9 ին բայն է * 11 ըն, 10 ին խնդիրն է

1 Կոխեցին։ 2 զիս։ 3 թշնամիք։

 իմ

4 իմ։ 5 զօրհանապազ։ 6 բազումք։
7 էին։ 8 ոյք։ 9 մարտնչէին։
10 ընդ իս։ 11 'ի բարձանց։

Յայսցանէ 1 ըն, 3 ին բայն է * 2 ըն, 1 ին խնդիրն է * 3 ըն, 1 ին տէրն է * 4 ըն, 3 ին յատկացուցիչ դերանունն է ունական և ուղղական. որ իմանի՝ իմ * 5 ըն, 1 ին մակբայն է * 6 ըն, 7 ին իմն" * 7 ըն, զօրութ՟ ունի զտէրն. որ իմանի՝ այնոցիկ, կամ այլ * 8 ըն, զօրութ՟ իմացելոյն յարաբերօղն է * 9 ըն, 8 ին բայն է * 10 ըն, 9 ին խնդ՟" * 11 ըն, 9 ին երկր՟դ խնդիրն է։

---

1 Խոնարհեցո՛։ 2 տ՟ր։ 3 զունկն։
4 քո։ և 5 լո՛ւր։ 6 ինձ։ 7 զի։
8 աղքատ։ և 9 տնանկ։
10 եմ։ 11 ես։

Յեդելոցս այսցանէ 1 ըն, 2 ին բայն է * 2 ըն, 1 ին տէրն է. որ է՛ անուն կոչական՝ զօրութ՟ երկր՟դ դէմ։ տես յերեսն 355։

3րն , 1ին խնդիրն է * 4րն , 3ին յատկացուցիչ ունական դերանուննէ . և է՛ հետ 3ին հայցական * 5րն , 2ին երկ՟րդ բայն է * 6րն , 5ին խնդիրն է * 7րն , պատճառական շաղկապ է * 8րն և ինն՝ 10ին նոյնական խնդիրքն են * 10րն , 11ին բայն է * 11րն , 10ին տրն է ։ Ասացի՝ (նոյնական խըն դիր , ) զի խնդիրք բայից երկու են . նոյնական , այլական ։

Նոյնական խնդիր ա՛յն է , որ առ նոյն իրն նայի որ է տէր բային ։ ո՟պ ասա (աղքատ և տնանկ եմ ես) աղքատ և տնանկ՝ նոյն եսն է ։ Սա՟ այսպիսիք յաճախ ըստ ուղղականին լինին . որոց մեծ մասն էակն բայիւ շարադրի ։ ասեղն է երկաթ , մարդն է բանական , և՟ ։ Նաև ա՛յլ բայիւ , ասեղն երկաթ ճանաչի , մարդն բանական կոչի , և այլ ։ տե՛ս յերեսն 415 ։

Նաև այլական խնդիր այն է , որ

այլ հուլթի է քան զտէր բային․
ոպ̃ յասելն՝ մովսէս եհար զվէմն,
վէմն ոչէ մովսէս․ Իսկ մինչ խըն
դիր բային ուղղական գնի, գը
լով և տէր բային ուղղական,
ասեն ոմանք այնպիսեաց՝ թէ բայն
երկու ուղղական առեալ է․ այլ
ոչ է այնպ̃․ զի մինն է տէր բայի,
և մինն է խնդիր․ որպէս յասելն,
ես եմ ծառայ, եսն է տէր բայի,
և ծառայն խնդիր․ Իսկ խնդիրն
զինչ և իցէ՝ տէր բային գնիլ ուղ
ղական սովոր է․ որպէս՝ մովսէս
եհար զվէմն․ վէմն հարաւ ՚ի մով
սիսէ․ և այլ։

1 Վահեա՛մ․ 2 զանձն․ 3 իմ․ 4 մբ̃․
5 տր̃․ և 6 փրկեա՛․ 7 զծառայս․
8 քո․ 9 ած̃․ 10 իմ․ 11 որ․ 12 ՚ի քեզ
13 յուսացայ։

Ուսուցանէ 1 ըն, 5 ին բայն է * 2 ըն
1 ին խնդիրն է * 3 ըն, 2 ին յատ
կացուցիչ դերանունն է․ որ եր
կուքն իմիասին իբրև մի հայցա

կան են * 4 ըն , 1 ին երկրորդ խըն
դիրն է * 5 ըն , 1 ին տէրն է . որ է
կոչածն անուն * 6 ըն , 9 ին բայն է *
7 ըն , 6 ին խնդիրն է * 8 ըն , 7 ին
ունական դերանունն է . որ է ըն
նմա հայցին * 9 ըն , 6 ին տէրն է *
10 ըն , 9 ին ունկն դերանունն է .
որ երկուքն իմիասին կոչական
են * 11 ըն , 7 ին յարաբերողն է .
որ 'ի տեղի նորին՝ 13 ին տէր ե-
ղեալ է * 12 ըն , 13 ին խնդիրն է *
13 ըն , 11 ին բայն է .

1 Համբարձի . 2 զաչս . 3 իմ . 4 'ի
լերինս . 5 ուստի . 6 եկեսցէ .
7 ինձ . 8 օգնութիւն .

Սոյս 1 ըն , զօրութ ունի զտէրն
իւր՝ ես * 2 ըն , 1 ին խնդիրն է *
3 ըն , 2 ին ունակին դերանունն է
որ է ընդ- նմա հայցական * 4 ըն ,
1 ին երկրորդ խնդիրն է * 5 ըն ,
է՛ տեղական մակբայ , որև 4 ին
յարաբերող եղեալ է . որպէս


և

և այլք կարեն գտանիլ * 6 րդն, 8 ին
բայն է * 7 րդն, 6 ին խնդիրն է *
8 րդն, 6 ին տէրն է։

1 Օգնութ̃. 2 ինձ. 3 'ի տ̃նէ. 4 ե֊
կեսցէ. 5 որ. 6 արար. 7 զեր
կինս. և 8 զերկիր.

Ի սոցանէ 1 րդն, 4 ին տէրն է *
2 րդն, 4 ին երկրորդ խնդիրն է *
3 րդն, 4 ին նախկին խնդիրն է *
4 րդն, 1 ին բայն է * 5 րդն, 3 ին յա֊
րաբերողն է * 6 րդն, 5 ին բայն է *
7 րդն հետ 8 ին, 6 ին խնդիրն է։

Ե՛ս յետ այսքան ինչ օրինակաց
'ի սաղմոսացն դաւ̂թի, տամ և
օրինակ մի այլ՝ որ թուի նորուսից
սակաւ ինչ դժուար ճանաչել.

1 Ջանաց. 2 թէպէտ. 3 յոյժ.
4 փափագմամբ. 5 եղբայրն. 6 մեր.
7 մատթէոս. 8 ներ. 9 դպրատան.
10 ուսանիլ. 11 զարհեստն. 12 պի֊
տանեգոյն. 13 ամ̃. 14 խօսից. 15
զկոչեցեալն. 16 քերթողութ̃.

17 սակայն․ 18 զի․ 19 ո՛չ․ 20 ու-
ներ․ 21 որովք․ 22 ընդր․ 23 ըղ-
մարմնականն․ 24 իւր․ 25 պիտոյս․
26 այնմ․ 27 միայն․ 28 պարապե-
լով․ 29 այսմ․ 30 ո՛չ․ 31 կարաց․
32 հասանել․

Ի մասանցս յայսցանէ 1 ըն, 7 ին բայն է․ ‖ 2 ըն, շաղկապ է թէա-կան․ որ անկատար թողու զբանն։ թէ կամիս տես յերեսն 172․ 173‖ 3 ըն, 4 ին մակբայն է․ որ իբրու ածական անունէ նմա։‖ 4 ըն, 1 ին գործիականն է․ որ իբրու մակ-բայ է նմա․ զսաստկութի՛ւն ջանա-լոյն ցուցանելով․ ‖ 5 ըն, 8 իբրու ածական յարակացուցիչ է 7 ին․ որ երկուքն իմիասին՝ 1 ին կառա-վարօղքն են։ ‖ 6 ըն, 5 ին յարակա-ցուցիչ ունական դերանունն է․ որ ը̃ նմա է՛ ուղղական․ ‖ 8 ըն, տր-ական նախդիրն է սեռ̃կնաւու։ ‖ 9 ըն, 8 ին ինդիրն է․ որ նախ-դրին իւրով՝ 10 ին ներգործական


եղ

ծղեալ է առ՚ի ցուցանել զտեղին ուսման. զի նոյն է ասել՝ ՚ի դըպրատան. ներդպրատան. ի մէջ դըպրատան։ || 10 ըն, 1 ին աներևոյթ խնդիրն է. որ հմ̅րի ևս 7 ին բայ. || 11 ըն, 10 ին հայցականն է. որ է՛ և տէր 15 ին։ || 12 ըն, 11 ին ածականն է։ || 13 ըն, է ածական անուն ընդհանրական ՚ի վերայ 14 ին։ || 14 ըն, 12 ին տրական խնդիրն է։ || 15 ըն, դարձեալ 10 ին խնդիրն է. որև 11 ին իբրու բայն է. զի է՛ ինքն բայաբուն ընդունելութ̅ի կրաւորական. և վասն դիպելոյ նմա բային ոստանիլ, հայցական դընիլ հարկեցաւ. ոպ̅ և արհեստն՝ տէր գոլով սորին, վ̅ս նոյն բային ոստանիլ, հայցին հոլովին եղաւ. || 16 ըն, 15 ին նոյնական խնդիրն է, զի տէր նորին արհեստն է, և իւրն դիւրին քերթողութ̅ի. որ զմի իր նշանակեն. Ո՞ ցասս՝ կէմն է շարագրութեա, 16 մասամբք գոլով

անկատար • որ ունի և 16 առ'ի
կատարիլ: Ա՛ ահա 17 ըն, է՛
այլական շաղկապ • որ զվերջին
բանս այլապէս բերէ իվերայ: ‖
18 ըն, է՛ ևս շաղկապ պատճառա-
կան • որ յայտնէ զպատճառ չհա
սանելոյն: ‖ 19 ըն, 20 ին բացասա-
կան մակբայն է: ‖ 20 ըն, դարձ-
7 ին բայն է • որ զօրութե̃ ունի
զխնդիրն՝ ինչս, կամ փողս ‖ 21 ըն,
զօրութե̃ իմա̃ցլ խնդրոյն յարաբե-
րոյն է: ‖ 22 ըն, ևս 7 ին բայն է ‖
23 ըն, 25 ին ածականն է • որոյ նախ
դիրն, զ, և վերջին նուն՝ 25 ին են
պատկանելիք • իբրու այսպէս,
զպիտոյսն մարմնական: ‖ 24 ըն,
25 ին յատկացուցիչ ունական
դերանուննն է: ‖ 25 ըն, 22 ին խըն
դիրն է • զի 23 ըն 24 ըն 25 ըն իմի
սին մի հայցէին խնդիր են նմա: ‖
26 ըն, 28 ին տրական խնդիրն է •
որ և 20 ին զօրութեամբ իմա̃ցլ
խնդրոյն յարաբերող եղեալ է: ‖

27րն, 28րին մակբայն է։ ‖ 28րն, 7րին աներևոյթ իրակութիւնն է։ ‖ 29րն, 32րին խնդիրն է․ որև 11րին յարաբերող եղեալ է։ ‖ 30րն, 31րին մակբայն է։ ‖ 31րն, դարձեալ 7րին բայն է։ ‖ 32րն, 31րին խնդիրն է․

որ է իրակութեան 7րին։

Ա՛Հ ահա այսպէս զամ̃ մասունսն շարադրութեց պարտիս քննել և իմանալ թէ որն որում պատկանի։ Ո՛ ի անուն բային նայի՝ առ իւր բայն․ նոյնպէս և բայն առ իւր անունն։ Խնդրող հոլո վյն նայի՝ առ խնդրին․ նոյնպէս և խնդիրն առ խնդրողն իւր։ Ն․ յամ̃՝ ածականն առ գոյականն, յատկացուցիչն առ յատկացուցեալն, մակբայն առ բայն, և այլ։ Իսկ շաղկապն ունի նայիլ յառաջ կոյս և յետ կոյս, ըստ որում

զնա շարակցէ յիրեարս։

Ա՛Հ յայտ է ահա՝ թէ ոչ իմն մասն բանի՝ կարէ գտնիլ ըստ

ինքեան՝ եթէ ոչ ունիցի զկապումն ընդ այլում: Եւ այս է պատճառն, զի ո՛չ է բաժանեան մի մասն ըստ ինքեան լինել բան կատարել առ՚ի ասել ինչ ումեք: Ուստի համայն մասունք բանի բաց ՚ի միջարկութենէ՝ ըստ ինքեանց միայնակ՝ անկատա՛ր տան զիմացումն դիտաւորութեն. Ասացի (բաց ՚ի միջարկուէ,) զի այնպիսի միջարկուն որ առանց խնդրո՛յ վարի, միայնա՛կ դնի ՚ի շարադրութե. ո՛չ ունելով կապակցութիւն ընդ այլում. որպ յերբեմն 300 եղև յիշեցեալ: քանզի ինքն միայն բաժանեա՛ն է տալ զիմացումն իւր ըստ որում և իցէ կրից: Որպէս մինչ լսեմք յումեքէ սրտառու ձայնիւ՝ ո՛հ, սոյն մի ձայնիւս միայն՝ իմանամք թէ ունի զտրտմութի կամ ափսոսումն ինչ ՚ի սրտի. կամ և սիրոյ յորդութիւն, այսպէս և այլն.

Իսկ և այն միջարկուն որ խնդ-



րով

րով վարի, միայն այնու խընդ-
րովն՝ տայ կատարել զիմացումն իւր
ըստ կրիցն զոր նշանակէ։ որպէս՝
Երանի՛ քեզ, եղո՜ւկ ինձ, և այլ։
Սո՛ կոչական անուն՝ յորժամ բայ
ոչ ունիցի, նա և այն միայնակ
դնի 'ի բանի. ո՛չ ունելով կապումն
ընդ ումեք. և բան ինչ ոչ բացա-
յայտէ ըստ ինքեան։ Որ 'ի Հար
ցական բանս յայս, (1 պետրոս.
2 ո՞ւր. 3 գնաց. 4 պօղոսն,) 2 ըն,
3 ին խնդիրն է. որ իբրև նախդը
րի՛ տրական է նմա։ 3 ըն, 4 ին
բայն է։ 4 ըն, 3 ին տէրն է։ Իսկ
1 ըն, է՛ կոչական անուն ըստ ին-
քեան. որ 'ի սոյնում շարադրու
թեան ո՛չ նկատի առ այլ մասն։
Իսկ թէ ունիցի ընդ բայ, նայի
առ այն՝ և նա առ այս. Որպէս 'ի
բանս՝ (1 պետրոս 2 եկ 3 առ իս,)
1 ըն որ է՛ կոչական՝ տէր բային է
2 ին։ այսպէս և զայլսն իմա։
Ասացի՝ (իբրև նախդրի՛ տրա-

կան է նմա ,) զի տեղական մակ բայքն՝ երից հոլովոց զօրութիւնս ունին։ Սկզբնականի, Նախդրի՛ տրականի, և Ներգոյականի․

Անտի եկն, աստի գնաց՝ են որպէս սկզբնականք․ Ի վեր վաղեաց, 'ի վայր դիմեաց՝ են նախդրի՛ տրականք․ Սորանօր նստաւ, անդանօր մնաց՝ են ներգոյականք․

Ա՛ռ ոմանք՝ ուրեք տրականի՛ ունին զնշանակութիւն, և ուրեք ներգոյականի․ որոց ճանաչումն 'ի բայէն լինի․ Որպ անտի եկն աստ աստի գնաց անդ, են տրականք։ Աստ ծնաւ, անդ մեռաւ, են ներգոյականք․ Ըստ այսց են, ուր, ուր ուրեք, ուրեք ուրեք, ո՛չ ուրեք, իվերկոյս, իվայրկոյս, և այլ։ Այսպ և 'ի հարցման, ուստի՞ եկիր, է՛ սկզբնական ‖ ո՞ւր գնաց, է՛ տրական ‖ ո՞ւր էիր, է՛ ներգոյա՛․ Որոց և պատասխանին ըստ նոյն մտաց պարտ է դնել որ յայտ է։

 Առ

Ե՛ աստ 'ի կատարել Երկրորդ
Ժամորիս Քերականուե
որ ուսոյց շարակցել զմասունս
բանին ընդ իրերս ըստ կանոնի,
կամիմ դարձեալ սկսանել 'ի սկըզ
բանէ' անուն Քերականութեան
և գալ այլ իմն ոճիւ մինչև ցանդ,
ուր դարձեալ վերստին եղև սկը
սանիլ ճառել զանուանէ զբայէ
և զայլոցն։ Ա՛ յետ այնր ասել
սակաւուկ զկիրառութենէ տառից
և վանկից, բառից և բանից, և
դադարումն տալ բանիս որպէս
և տ՟ր կամեսցի։

Ա՛ թերևս ասիցես, (ընդէ՞ր է
այս յառաջ և յետ ընթացումն.
կամ համառօտ խոստանալ և եր֊
կարել․) Ա՞ զի զշարագրածս
զայս' թէպէտ երկար իմն հաւա֊
քեալ էաք 'ի գրուածոջ, սակայն
մինչ սկսաւ 'ի տպել, զամենայն
համառօտել կամեցայ ոչ և անդ

խոստացաք․ Իբրու զայժ հար֊
կանօրսն ուսման և զդիւրինսն
միայն բերելով ՚ի յիշումն․
Ուստի և զգիրըն փոքր բանեցի
առ՚ի դիւրադիր լինել ՚ի ծոցի․
Որև եդի այնպէս մինչև ցհինգ֊
մասունսն․ Բայց զի ՚ի կամս մեր
չթողին զմեզ, որոց անպատեհ էր
մեզ ընդդիմանալ, երկարեցաք
առաջա՛ն ինչ զմնացեալսն, և եդաք
զեկնս աւելեցութի ինչ դարձեալ
զանուանս և զբայս և զայլ եր֊
կուսն որ զեկնի․ Իսկ մինչ տեսի
թէ թանձրադայն լինի գիրըն քան
զհամեստ չափն իւր, եդի ՚ի մտի
այլ ևս երկարել և երկուս կազ
մել առ՚ի լինիլ դիւ ՚ի ծոցի կրելի․
Իսկ թէպէտ այսպէս, բայց զայս ա̃մ
և զայլն ա̃մ ՚նա որ շարժէ զա̃մ
և ո՛չ շարժի յումեքէ, զվասնէրն
ինքն գիտելով՝ ո՞չ և կամի այնպ
տայ խորհիլ․ Զի նովաւ կեամք
և շարժիմք և եմք․ և Նմա փառք
Յա․ յաւիտեանս Ամէն․ 

Պատմեալ Ս երրորդին Հնչագ.
Քերականութեան ։

Մասն 20

Քերականութեան անուն ՚ի գործոյն է առեցեալ: Զի զօրօրինակ՝ քերէ ճախարակն զփայտն, և խարտոցն զերկաթ և զպղինձ և զայլ, այսպ և քերականութիւն ոչ թէ քերէ զխօսս մեր առ՚ի լինիլ ուղղախօսութի․ Այլ այսէ քերելն քերականութեան զխօսս մեր, որ հանէ զաւելորդն և լնու զպակասն և բառնայ զանկանոն շարամանութիւնն բառից ընդ միմեանս:

Որև լինի ապա ուղղախօսութիւն ըստ կանոնի քերթողացն․

Զի ըստ հոլով յօհաննիսին՝ ասութին հայկական՝ երիս տեսակս ունի․ գռեհկական․ քաղաքական․ քերթողական: Գռեհկական կամ գիւղական՝ այն է, որ է յոյժ ահեր և անկանոն․ զոր գիւղական

և շինական մարդիկ առնուն 'ի
կիր․ որք և գռեհիկ և ռամիկ կո
չին։ Քերթողական այն է, որ է
ամենևին զուտ և կանոնաւոր․
զոր 'ի գործ ածեն հմուտքն գը
րոց և գիտողք քերականութեան։
որք քերթողք և քերականք ան
ուանին։ Իսկ՝ քաղաքական կամ
ատենական՝ այն է, որ չէ ամենևին
կանոնաւոր և ամենևին անկա
նոն, այլ՝ խառն յերկոցունց․ 'ի
կանոնաւորէ՝ և յանկանոնէ՝։
Նա՛ զայս 'ի գործ ածեն քղքկան
մարդիկ և սակաւ ինչ տեղեակք
գրոց։ Նաև քերթողք 'ի յատե
նախօսութեան և 'ի զրուցատրութեան՝
զքաղաքականն ածեն 'ի գործ,
զի դիւրաւ իմասցին լսողքն․ և
զի այնպէս վայելէ խօսակցութեան․
Իսկ՝ յորժամ կանոնաւոր շարա
դրութիւնս կամիցին գրել, ըզ
քերթողականն առնուն 'ի գործ․
որ է ամենևին զուտ, այսինքն

 քե

քերեալ և կանոնաւոր։ Նա՛ զայս քերթողականս որ է ամենեւին կանոնաւոր՝ քերականութիւն ուսուցանէ մեզ։ Աստ զանունն ՚ի գործոյն առեալ՝ կոչի քերականութի։ Ըստ որում անուանի թուականութիւն վասն թուերոյն. բժշկականութի ՚ի բժշկելոյն. և այլ։

Պ. արձ̃լ, կոչի քերականութիւն որ է գրականութի. զի հոմերոս որ գտօղն է քերականութեն՝ ըղ գրելն քերել ասացեր է և զքերելն գրել. ոչ թէ ծայր գրչին ՚ի գրելն քերելով ընթանայ զերեսն թղթին. Նա՛ ոչ ուսանողն հիւսնութեան՝ կոչի հիւսն, և դարբնութեն՝ դարբին, բժշկականութեն՝ բժիշկ, և այլ։ Նոյնպս և ուսանողն քերականութե որ է քերթողութիւն, կոչի քերական որ է քերթող. այսինքն գիտող քերթողախօսութեան.

Ասացի՝ գիտող, և ոչ ասացի՝ ՚ի

գործ ածօղ. զի քերթօղն թէպէտ 'ի զրուցատրելն՝ ոչ միշտ 'ի գործ ածէ զքերթողախօսութիւն, սակայն հմուտ գոլով արհեստին, յորժամ և կամի՝ կարէ՛ քերթողապէս խօսիլ և քերթողապէս շարադրել զբանս իւր ։

Սերտքին Յաղագս Մասանց Քերականութեն ։ Գլուխ 28

Մասունք քերականութեն՝ տառ, վանկ, բառ, բան, ոչ են նման նիւթական մասանց տան կամ նաւի, կամ այլոց սոյնպիսեաց ։ Սո՛ զի մասունք այնպիսիք ոչ բաղկանան 'ի միմեանց ։ զի ոչ բաղկանայ և յոչ գայ փայտն 'ի քարէ կամ քարն 'ի փայտէ՝ և այլն որք են նիւթական մասունք տան ։ Իսկ մասունք քերականութեան՝ առ 'ի միմեանց բաղկանան որպէս ցուցեալ է։

Սուրեմն կերպիւ ինչ նմանին առ



Նիւթ

Նիւթական և կերպաւորն մա-
սանց հացի և այլոց սոյնպիսեաց. Զի որպէս ՚ի ցորենոյ կերպաւորի ալիւրն, ՚ի յալերէ խմորն, և ան-
տի հացն։ Նոյնպէս ՚ի տառէ կամ ՚ի տառից կերպաւորի վանկն. ՚ի վանկէ կամ ՚ի վանկից բառն. և ՚ի բառից բանն։ Այլ յայտ է աս-
տի՝ թէ այլ է մասն նիւթական, և այլ է մասն կերպաւորական. Որպէս ահա նիւթական մասն հա-
ցին է՝ միայն ցորենն, կամ նաև ջուրն. իսկ այլքն են կերպաւո-
րականք. որ ՚ի նոյն նիւթոյ այլ և այլ տեսակօք տեսակաւորին. Նոյնպէս և բամպակն, մանածն, հենքն, և կտաւն։ Այլ որպէս հացն ոչ յարմարապէս կարէ կոչել մասն հացագործութեան, կամ կտաւն կտա-
ւագործութեան, զի կատարումն են արհեստին։ Նոյնպէս թէպէտ ոչ է յարմար կոչել զբանն մասն քե-
րականութեան, զի կատարումն քեր

Թողական գիտութն՝ է՛ բանն.
Սակայն ոչ ինձ թուի վն այն կո չեցին զնա մասն քերականութե, զի է գլխաւոր ուսանելի քերթո ղական ուսմանն: Կամելով ասել թէ՝ չորք են ուսանելիք քերթո ղութե, տառն, վանկն, բառն, և բանն. Նոյն յայտնապէս ցուցաւ թէ՝ նիւթական մասն և սկիզբն քերականութե՝ է տառն միայն. իսկ վանկն բառն և բանն՝ են մա սունք կերպաւորականք ըստ ո րում ցուցաւ.

## Մերատին Յաղագս Տառի:

### Գլուխ 22

Տառն է նիւթ և սկիզբն քե րականութե. Տառն է մար մին՝ յօդաւոր անմարմին ձայնից Տառն է կերպաւորութի յօդա ւոր արտաբերութե. Տառն է բաղ կացուի կամ բաղկացական նիւթ՝ մդկային ձայնաւոր խօսակցութե.

 Նո

Հրց. Զի՞նչ Տառն է պարզ ձայնաւոր
հնչելի. Պտ. Այսինքն՝ յօդելի, որ է
շարելի. Վասն զի զօրութիւն
տառիցն այն է՝ որ շարայօդին ընդ
իրեարս և կերպաւորեն զձայնն
յօդաւոր. Ո՞ր տառքս՝ ք, ա, ր,
յորժամ հեգին և յօդին ընդ
իրեարս, կերպաւորեն զձայնս՝
քար. Հրց. Անձայն պարզ ձայնաւ.
Ո՛չ ի մինչ ասեմք, ուղեղ, հընչ
մունքս, և, ւ, ոչ են պարզ հընչ
մունք, այլ՝ ՚ի յերկուց բաղկա
ցեալ են. Վասն թէպէտ միայնակ
են մի ձևոյն, բայց բաղկացեալք են
ըստ հնչմանն. զի մինն է՝ եչ հիւն
եմ. և միւսն է՝ եթ զա ըղ.
Հրց. Համբակագոյնք (զորս և տե
սեալ եմք) զայսպիսիս ՚ի հեգելն
ասեն, և, ըղ, մեն եչ զա մեզ՝ զմեզ
Ո՞ր պարտ է ասել, եչ հիւն և.
եթ զա ըղ՝ և ղ. մեն եչ զա մեզ՝
և զմեզ. Հրց. Կոչի տառ. այսինքն
տարր. զի ո՞ր տարերքն նիւթք են

ա̃մ տարրնղինաց որք են մրմինք,
այսպէս և տառքն սկզբունք և
նիւթք են ա̃մ յօդաւոր ձայնից։
Ասացի՝ (յօդաւոր ձայնից,) զի
մարդկային ձայնս՝ երկու է. յօդա
ւոր և անյօդ։ Յօդաւոր այն է՝
որ գրով շարագրուգի. ո̃պ ա̃մ ա
սացեալ և իմացլ խօսակցութի̃ք
ա̃մ ազգաց զանազան կերպիւ.
Իսկ անյօդ ասի այն, որ գրով
շարագրուգիլ ոչ կարէ. որ̃պ բնա
կան ձնչմունքն մեր որ ամենայն
ազգաց մի և նոյն է, Այսինքն,
լալն, ծիծաղիլն, հազալն, հեւալն
հառաչելն, և այլ. Նաև ձայնք
տրդայոց մինչ 'ի բարբառիլ լեզ
ուին՝ անյօդք են։ Նաև խօսք
ծանր հիւանդաց՝ և խիստ բար
կացողաց՝ և ծանրալեզու ոմանց՝
և քնով դանդաչողաց՝ կամ 'ի հե
ռուստ զրուցողաց, և այլք այս
պիսիք՝ են անյօդք. Իսկ ցուցա
թէ՝ ոմանք են բնական անյօդ,

ոչ լալն, և այլ։ Կա՛ն ոմանք պա
տահմամբ անյօդ. որպէս հիւ՛ան
դագն, և այլ։ Իսկ տըղայոցն՝
թերութեամբ է անյօդ։

Կա՛ն անյօդից ոմանք յոյժ հե-
ռի են ՚ի տառից, և ոմանք սա-
կա՛ւ ինչ մերձ։ Ոչ թէպէտ ձայնք
թռչնոց և անասնոց՝ և ճնչմունք
անշունչ իրաց ընդ իրեարս բա-
խեցելոց՝ ամենայնն են անյօդք,
սակայն զոմանս ՚ի նոցանէ ոչ թէ
նմանեցուցնելով շարայօդեն տա
ռիւք և գրեն։ Որպէս զռալ.
պոռալ. ճղփալ. չթել. խխնջալ.
կուկուալ. ճլճլալ. ճռճռալ. հա-
ջիւն. ճնչիւն. թնդիւն, և այլ։
Ոչ և ՚ի մեր ձայնից ասի՝ հաղալ,
հեծ՛ալ, փռնգալ, տքտքալ, և այլ։
Զորս ճարտասանքն առնուն ՚ի
կիր վասն բարւոք հասկացուցա-
նելոյ զասացուածսն։

Կա՛ն արդ՝ յօդաւոր ձայնն մեր՝
մինչ ՚ի միտս է, իբր անմարմին է.

զի որպէս անմարմինն ոչ տեսանի , սոյնպէս և սա ոչ լսի ։ Իսկ յորժամ արտաքերի 'ի բերանոյ՝ կամ գրի 'ի թղթի , լինի լսելի և տեսանելի ։ Վասն զի զգեցաւ զտառն իբրև զմարմին , և եղև լսելի և տեսանելի ։ Վասն այսորիկ ասացաւ ի վերոյ թէ՝ տառն է մարմին յօդաւոր անմարմին ձայնից ։

Յօդաւոր , այսինքն շարաւոր՝ որ գրով շարի , քէ , այբ , րէ , քար ։ Իսկ անյօդ՝ այսինքն անշար ։ որ գրով շարիլ ոչ կարէ որպէս ցուցաւ ։ Իսկ ահա՝ յորժամ ասեմք , քար , կերպարանի նորին՝ են տառքս , ք , ա , ր ։ Վասն որոյ ասացաւ , տառն է կերպարանութիւն յօդաւոր արտաբերութեան ։ Իսկ մարդս յորժամ խօսի 'ի սրտի լռութեամբ , ոչ կարօտի տառից ։ իսկ յորժամ արտաքս բերէ զբանն և մարմնացուցանէ , կարօտի զի տառիւք բաղկանայցէ ։ Վասն որոյ ասացաւ՝ տառն է

բաղկացական նիւթ մարդկային
ձայնաւոր խօսակցութեան։
Իսկ անուանքս՝ տառ, գիր, թուղթ
'ի բազում ուրեք 'ի տեղի միմեանց
դնին, բայց զանազանք են յիրե-
րաց։ Տառն զի՝ տառ այն է՝ որ
ճնչմամբ արտաքերի և լսի։ Իսկ
գիրն այն է՝ որ գրչաւ գրի և տե
սանի։ Տառ այն է՝ որ զձայնն կեր
պաւորէ. և գիր այն է՝ որ զտառն
ձևակերպէ։ Զի որպէս տառն է
մարմին ձայնի, այսպէս և գիրն է
մարմին տառի։ Իսկ որպէս տառն
ճառեցաւ վասն ձայնի, այսպէս
և գիրն ճառեցաւ վասն տառի,
որպէս զի տեսութեամբ գրոյն՝ անմո-
ռաց մնասցէ տառն 'ի միտս մեր։
Իսկ կոչի գիր, վասն քերելոյ գրչին
զերեսս թղթին զոր ասացաք։
Նոյն և գիծ, այսինքն նշան. զի
գիրն է նշան տառի որ ասացաւ։
Իսկ տառին երեք ինչ տեսանին.
անուն, ճնչումն, և կերպ։

Անուան, որպէս ամմք, այբ, բեն, գիմ։ Հնչուամ, ա՛։ Իսկ յերրդն է ձև գըրոյն, ա, բ, գ, և այլն։ Այլ ծանիր այսու՝ որ միայն հնչմանն ասի տառ և ոչ անուանն կամ գրոյն։ զի զօրութի տառին՝ միայն հնչումն է որ է տառութիւնն.

Երեք տառքս, է, ո, օ, ըստ անուանն և հնչմանն՝ զանազանին յայլ ձայնաւորաց։ Զի այլոցն ամենեցուն անունն այլ է և հըն չումն այլ։ Այսինքն՝ անունն բազմագիր, և հնչումն միագիր։ Անունն բաղադրեալ, իսկ հըն չումն պարզ։ որպէս այբ, ա՛, և այլն։ Իսկ՝ է, ո, օ, անուն բաղադրեալ ոչ ունին. այլ որ ինչ պարզ հըն չումն է նոցին, նոյն է և անունն՝ է, ո, օ։ Նաև երկու տառքս, ը, ւ, զանուանս իւրեանց այլ տառիւ սկսանելով, եթ, հիւն, զանազանին ՚ի յայլոց։ Զի այն ամ իւրով ինքեամբ սկսանի հեգել

 զա

զանուն իւր. ոպ՝ ա, յ, բ, այբ ‖ բ, ե, ն, բեն ‖ գ, ի, մ, գիմ. եւայլն։ Իսկ ոք՝ ը, ւ, օտար տառիւ սկըսանին։ ոպ՝ ե, թ, եթ ‖ հ, ի, ւ, ն, հիւն։ Այլ երկուքս այսոքիկ՝ ոչ նոյնպէս ՚ի գործ ածին որպէս անուանին։ Ե ի բուն՝ յանուանիլն ինչէ՝ է։ և ՚ի գործ ածի՝ ը։ Նոյնպէս և հիւնն յանուանիլն ինչէ՝ հ. և ՚ի գործ ածի որպէս՝ վ, կամ, ու։

Անուանք տառից մերոց ամ̃ն ըստ նախնեացն սահմանելոյ՝ միավանկ պարտին ինչել. որպ ունիմք ուսեալ ՚ի գրոյ և ՚ի լրոյ. Այլ ոչէ ըստ նախնեացն ասել ինի. լինեօն, կամ լինիւն. ըղատ. ըռա. տինեօն, կամ տինիւն. էրէ. հինեօն, կամ հինիւն. փինիւր։ Այլ այսպ, ին. լիւն. ղատ. ռա. տիւն. րէ. հիւն. փիւր. Եւ վն այն զսոսա միայն յիշեցի, զի վն այլոցն ոչ գոյ կասկած երկվանկ ինչելոյ.

Գիրն առ մեզ 'ի նախնեաց՝ է լը՟ այբն առաջին, քէն վերջին. Իսկ՝ օ, փ, յետոյ հնարեցել են: Քանզի նախնիքն մեր՝ 'ի տեղի գրելոյ՝ օ, գրէին ուրէք, աւ, ուրէք, ով: Ոպ՟ յայտ է 'ի հնագիր գրեանս մեր գրեցել օրն աւր. և սերոբէն սերովբէ: Նոյն 'ի տեղի փէի՝ մինչ պիտոյանայր, գրէին, փ. Վ՟որոյ առաք զսոսա յետոյ 'ի յունաց, զի այլ բարւոք լինիցին գրածքն մեր: Ոպ՟ ահա՛ բարեգոյն է գրել օրէնք, քան աւրէնք: սիօն, քան Թէ սիոն. Իսկ ոմանց՝ Թէ օ, Թէ ով՝ վայելուչք են. ոպ՟ սերոբէ, կամ սերովբէ: յօհաննէս, կ՟ յովհաննէս: Նոյն ոմանց վայելուչ գոլ Թուի ինձ՝ ով, քան Թէ՝ օ: Ոպ՟ մովսէս, յովսէփ, հերովդէս, ղովտ, և այլ: Ասացի վասն փէին Թէ՝ մինչ պիտոյանայր: Զի յայնժամ պիտոյանայ մեզ տառն՝ փ, յորժամ զբաւս



այլոց

այլոց լեզուաց՝ հայկական տա-
ռիւք գծագրեմք. և այսր աղա-
գաւ ունիմք զնա. Իսկ 'ի խօսս
մեր ոչ պիտոյանայ. զի ոչ գոյ բառ
հայկական՝ փէիւ շարայօդելի.
Նանիր ուրեմն թէ՝ գծագրե-
ցեալքն 'ի մեզ փէիւ՝ ոչ են մեր
բառք. այլ՝ յայլուստ եկամուտ
եղեալ, ոպ̃ փարտ, որէ պարսից,
և այլ. Նոյն տէս՝ զի տառն փ,
ամենևին եկամուտ է 'ի մեզ,
թէ ըստ ձայնին, թէ ըստ ձևոյն.
Իսկ տառն՝ օ, ըս̃ ձևոյն միայն է
եկամուտ. զի զձայնս՝ օ, որ է տա
ռուհ̄ նորին՝ ունիմք բնական 'ի
մեր լեզուս. որպէս օր, օրէնք,
և յօժ բաղումք. Իսկ զձևն՝ օ,
ոչ ունելով, այլով զնա ձևարէին.
Ապ̃ և այժմ գրեմք ո, ւ, և հըն
չեմք՝ ու. Վկայ հաստատուն
երգս այս սբ̃յն ներսէսի, Շ̃որհ
նեմք զքեզ հայր անըսկիզբն.
որ ըստ այբբենական կարգին շա
ծ̄ա.

բաղդրեցեալ է. Եւ թէ տառքն
մեր ՚ի բնէ են լծ՞, տամ երկուս
համառօտ պատճառս և բաւ է։
Նախ՝ զի ՚ի համարողական տե-
սութիւն տառից մերոց ասեմք՝
այբն մէկ, քէն իննն հազար. իսկ
զաւելորդսն, օ, ֆ, և, ՚ի թիւ ձը-
գել ոչ ունիմք. Երկ, զի հին
բանաստեղծքն մեր զոր ինչ ըստ
դասաւորութե տառից մերոց են
արարեալ՝ այբիւ սկսեալ՝ քէիւ
դադարին։ Ով այսօր անձանց,
արարչականն, և բազումք.
Յորոց յայտնապէս ցուցանի բը-
նական քանիութիւն տառից
մերոց գոլ լծ՞։
Եւ նշմուանք տառից երկուեն.
ձայնաւոր և բաղաձայն որ ա-
սացեալ է. Եւ ձայնաւորացն եր-
կարքեն՝ է, օ. Սուղքեն՝ ե, ո.
Իսկ միջակք՝ ա, ը, ի.
Երկարքն ՚ի նշէլն իւրեանց ՚ի
քիմս մեր ոչ մտանեն. իսկ այլքն

ընդ այն անցանեն։ Ա՛յ այնք որք ը̃ քմա՛ ոչ անկանին՝ անքմաւք կոչին։ և անքմաւ ասել այն է, որ քիմ՛ ոչ առնու զնոսա։ Իսկ որք ընդ քմա՛ անցանեն, քմաւք անուանին, զի քիմ՛ առնու զնո̃ս։ Ա՛յ այս է պատճառ երկարութե̃ և սղութե̃ նոցին։ Զի որք ընդ քմա՛ անցանեն՝ որպ̃ թէ՝ ի նեղ ճանապարհ մտեալ՝ նուաղ հնչեն ք̃ զայնս որք ը̃ այն ոչ անցանեն։ և յայտ է փորձիւ քննողաց։

Իսկ հնչմունք բաղաձայնից երկու են. ձկտեալ և նստեալ։

Ձկտեալ հնչումն բաղաձայնին այն է, որ բաղաձայնն նախադասեցեալ ձայնաւորին՝ քարշի և ձկտի ըստ զանազան քարշողութե̃ ձայնաւորացն։ Որպ̃ բա, բե, բէ, բը, և այլն։ Ա՛յ նստեալ այն է, որ բաղաձայնն վերջադիր գոլով ձայնաւորին, հնչի և արտաբերի առանց քարշեցման։ Որպ̃ աբ, եբ,

էբ, ըբ, և այլն։ Ի՟ս պարզ որ-
պիսութիւն հնչման բաղաձայնին
որ է տառութ՟ի նորին՝ յայնժամ
յայտնաբար ցուցանի, յորժամ
թարց քարշեցման ի բր զնստեալ
ելուզանի։ զի յայնժամ այնպէս
երևի թէ՝ թարց ձայնաւորի ինքն
ըստ ինքեան արտաբերի. օր՟ աբ,
եբ, էբ, ըբ, իբ, և այլն։

Ի՟ս տես, զի տառս՝ յ, եթէ ձըկ-
տեալ արտաբերի, ի բրով հընչ
մամբն ելուզանի ի բր զկէս՝ հ։
Օ՛րին՟, յոբ, յակոբ, յարութ՟ի,
և այլ։ Ի՟ս մինչ նստեալ արտա-
բերի, այլով հնչմամբ ելուզանի։
օր՟ մայր, քոյր, նայիլ, և այլ։
Ի՟ս հնչումն այս՝ է ը՟դ մէջ ձայն-
աւորին և բաղաձայնին։ այսինքն
ոչ զուտ բղ՟ձյն, ոչ զուտ ձայնա-
ւոր. այլ՝ կերպիւ ինչ ձայնաւոր,
կերպիւ ինչ բաղաձայն։

Սոյնպ՟ արտաբերին նաև՝ ւ, ի,
յորժամ այլում ձայնաւորի


նա

նախադրիցի։ Որգոն, խուղ, խուր, եօթն, եակ, և այլ։ Այլ է երուք նկատես, հաւանիս աստցելոյս։ Քանզի ձկտեալ հնչումն սոյին, և նստեալ հնչումն յիւղ՝ միևնոյն կերպիւ եղուղանին։ Այլ մինչ երկուքն իմիասին արտաբերին, երկու այնպիսութիք հնչեն։
Որդան, հայեաց, հայիւր, նայեց, նայիւր, և այլ։ Այլ զայս հըն չումս՝ ընդմիջական հնչումն կոչեցաք։ Բերու թէ՝ համեմատելով առ ձայնաւորն և առ բաղաձայնն, զմիջինն ունի աստիճան հնչողութեան։ Այլ տառս այս՝ յ, յայնժամ արտաբերի իբրև ըղկես՝ հ, յորժամ սկզբնադիր լինի տառից և ձկտեալ հնչէ։ ոպ յոյ, և այլն։ Այլ յայնժամ նստեալ արտաբերի, յորժամ տառիւք շրջափակի 'ի մէջ վանկի։
Սայցէ՝ ի մէջ վանկի, զի յորժամ 'ի սկզբան վանկին գնիցի և ոչ 'ի

մէջն, յայնժամ թէ և՛ ի մէջ տա-
ռից անկանիցի, հոյական լինի
հնչումն: Որպ բարեյաղթ, յեղյե-
ղուկ, դէմ յանդիման: Իսկ յոր-
ժամ վերջադիր լինի տառից,
անարտաբեր անուանի. զի գնի
և ոչ հնչէ: որպ՝ ծառայ. սեթայ.
երթայ. նոյ. գոյ. նորոյ, և այլ:
Որք արտաբերին որպ ծառա.
սեթա. երթա. նո. գո. նորո:
Զի՛ ի տեղիս այսպիսիս գնի՛ յ,
ոչ զի հնչիցէ, այլ զի որոշիցէ ըզ-
հ՛րկ անուանն ՚ի յատկէն, և այլն,
զոր ՚ի կերպառութեն տառիցն ուս-
ցիս: Բայց քանի մի ձայնից յոյժ
սակաւուց վերջադիր յն՝ արտա-
բերի այնպէս՝ որպ ի մէջ տառից
հնչէ. որ է նստել արտաբերութի:
Որք են, ա՛յ, բա՛յ, հա՛յ, ձա՛յ, նա՛յ,
վա՛յ, անքայքայ, խոյ: Որպիսիք
՚ի լեզուն տաճկաց բաղումք գը-
տանին: Որպէս եայ, աղեղն:
Թայ, քուռակ: սարայ, ապարանք:

 մէյ

ձէյ, գինի. նէյ, փող երգեցո_
ղաց. շէյ, իր. տուլ, իմա. ցյ, փո
րեա՛, և այլք նմանք.

Իմա՛ և զայս, զի յորժամ անար_
տաբեր յիւր այլ ինչ տառ հանդի
պիցի, յայնժամ արտաբերի և լի
նի ընդմիջական ձայնաւոր, որ իբ_
րու թէ անկենդանն կենդանա
նայ. Օ՛րգ՛ն, կայ, կայք, կայուն ‖
արքայ, զարքայն, արքայից ‖ գոյ,
գոյի՛, գոյութիւն, և այլ.

Յորոց գտանին և այնպէս հան_
դիպմամբ ձայնեալ և անարտա_
բեր. որպէս՝ արքայորդի. վերոյե_
դեալ. և այլ. Նոյնպէս և ձկտեալ
ձայնաւոր յիւր՝ թէ և այլում տառի
հանդիպեսցի, զձայնաւորն իւր ոչ փո
խէ. այլ նոյնպէս իւրական հընչ
մամբն արտաբերի. Որպէս յոբ,
'ի յոբ, առ յոբ. յարկ, անյարկ,
մեծայարկ, և այլ.

Հիւնն ևս լինի ուրեք անար_
տաբեր. զի դնի և ոչ հնչէ.

ոպ̃ որդւոյ, հօդւոյ, և նմանք.
Զի ՚ի տեղիս այսպիս ոչէ պարտ
հիւնին թաւանալ և արտաբերել
ոպ̃ վեւ. այլ պարտի ամփոփել և
ծածկել ՚ի ներքոյ ձայնի ոյին.
Մ̃զի գնի անդ ոչ իբրև ձայն-
աւոր կամ իբրև բաղաձայն,
այլ վասն զանազանելոյ զհոլովն
չորրորդ կերպին ՚ի յերրորդէն.
Ուստի ոչ պարտին արտաբերել
որպէս որդվոյ, հօդվոյ, այլ որպ̃
որդոյ, հօդոյ. Իսկ թէ ասիցես,
զիարդ ապա նոյն հիւնն թաւա-
նայ և վեւանայ ՚ի նոյն բառին ՚ի
գործիականում, բարի, ծրեաւ,
և նմանք. Ասեմ թէ՝ հիւնն այն
ոչէ նոյն որ ՚ի սեռականին էր.
այլ այն է՝ զոր պ̃հնջէ ձևն գոր-
ծիականին ը̃ իւրում կերպին.
Իսկ թէ ոչ, զիարդ ապա նոյն թա-
ւացեալ հիւնն գնի և յայլում
բառի որոյ սեռականն ոչ ունէր
զհիւնն զայն. Որպ̃ սրտիւ, հայլ.

 Հիւնն

Հիւնն երբեմն ըստ համութն բանաստեղծից դնի բռնաբա-րելով 'ի տեղի հոյի 'ի սկզբան բա-ռից. Որգոն, ւիւծեալ աղաչեմ, ւիւսել յիս բարիս. որք 'ի տեղի հոյի են. Այլ այս ճնարեցեալ է սակս ամբողջ բերելոյ ղդասաւո-րութն այբբենական կարգին. Այլ դնի ուրեք նոյնպ 'ի սկզբան բառից ըստ ճնչման խուրոյ բաղա-ձայնութեանն 'ի տեղի ւի, առ 'ի կարճելոյ ղտողն տաղական բա-նից. Որգոն, ծընող հօր բանին, հանճառ միածնին. 'ի տեղի ասե-լոյ՝ և անճառ. Ուրանօր զի մ' երկարիցի տողն, ղկէսն դնէ ւին և բառնայ զվանկն. Այց այս-պիսիք բռնութբ են և ոչ ըստ կա-նոնի. Ի հասարակ կանոն է տառիցն մերոց՝ ոչ դնիլ 'ի սկզբ-բան բառից՝ ւ. և ոչ 'ի վերջ նուամն՝ ե, ը, օ.

Գիտելի է և ս, զի բաղաձայնից

ոմանք թաւք են, այսինքն թանձր
և խոշորաձայն. և են սք, թ. ւ. խ
հ. շ. չ. ռ. ց. փ. ք. Փ. Եւ ասին
թաւք, զի թանձր են, և թանձր
կազմելով զձայնն՝ փաչատեն ըղ
բերան հնչողին ուժգին բախե-
լով. Եւ ոմանքեն լերկ. այսինքն
նուրբ և բարակ. և են սոքա, ղ.
ծ. կ. ճ. մ. ն. պ. ս. տ. ր. Եւ կո-
չին լերկ, զի նուրբ են, և նուրբ
կազմելով զձայնն, նօսր և թեթև
հնչեցուցանեն. Իսկ ոմանք են
միջակ. և են սոքա, բ. գ. դ. ժ.
ձ. ղ. ջ. վ. Որք միջակ հնչելով՝
միջակ ձայն երուղանեն.

Իսկ տառս՝ յ, մինչ ձկտեալ առ
տաբերի, է թաւ բաղաձայն, ծոր
դակից հոյին. Եւ երբ նստեալ
ելուղանի, համարեսցի միջակ 'ի
մէջ ձայնաւորին և բաղաձայնին.
ծորդակից գոլով նստեալ հըն-
չեցման եչին և լինոյ. Եւ տես,
զի տառս՝ յ, թէպէտ ը հոյական

 հընչ

հնչմանն նուրբ գտանի ք̃ ղհպ, սակայն ըստ խուրուլ կոշտ ելուղ-մանն որ ՚ի խուճափողէն հնչէ, թանձրագոյն արտաբերի. և յայտ է նկատողաց.

Այս տառս՝ ւ, մինչ բաղաձայն անայ, է միջակ բաղաձայն ըստ հնչման վեհին։ Այս ՚ի ձայնաւո-րին՝ է անկատար ձայնաւոր. զի ըստ ինքեան վանկանալ ոչ կարէ.

Այս արդ՝ որպէս ՚ի հաստ թելից մանածին լինի հաստ կտաւ, ՚ի բարակացն բարակ, և ՚ի միջակացն միջակ. Նոյնպէս ՚ի թաւ բաղաձայնից կազմի թաւ ձայն. ՚ի նրբեիցն նուրբ. և ՚ի միջակացն միջակ.

Պիտելի է դարձեալ, զի բաղաձայնից ոմանք սրաձայնք կոչին, ոմանք բթաձայնք։ Սրաձայն այն է որ ինքն սուր գոլով՝ զհնչումն ձայնաւորին հանդիստ արտաբերէ և ոչ խափանէ։ Որպէս ալ, եղ, էղ, ըղ, և այլն։ Այս բթաձայն է

որ ինքն գուլ գոլով՝ զհնչումն ձայնաւորին խափանէ 'ի հնչելն · որպէս աբ, եբ, ըբ, ոբ, և այլն· Ա՟ սոքա յայնժամ յայտնին, յորժամ նստեալ արտաբերին · Զի թէ սուր է հանդիպեալ բաղաձայնն, հանդիստ հնչէ ձայնաւորն· իսկ թէ բութ է և գուլ, բթի՛ և ձայնաւորն ։ Ա՟ ա՛յն է բթանայն՝ որ սակաւ ինչ թնդիւն հանէ՝ և առժամայն խափանի, ո՟պ ցուցաւ, աբ, եբ ։ Իսկ թէ նախ քան ըղ բթաձայնն սրաձայն գտանիցի, սակաւ ինչ ոդի առնու վանկն մինչև հասանէ 'ի բթաձայնն, և անդէն ամփոփել առժամայն ծածկի · Այսպէս և զմիւս կողմն իմա ։

Ա՟ սուր բաղաձայնք՝ են այսոքիկ, զ · ժ · լ · խ · հ · ղ · մ · յ · ն · շ · ռ · ս · վ · ր · ւ · փ · որք են վեշտասանք ։ Ա՟ բութքն՝ են այսոքիկ, բ · գ · դ · թ · ծ · կ · ձ · ճ ·

չ. պ. ջ. տ. ց. փ. ք. որք են հըն-
դետասանք։ Բայց տես, զի թէ
սրաձայնքն և թէ բթաձայնքն՝
ոչ ամենեքեան են 'ի միում աս-
տիճանի. այլ՝ միքան զմի առնել
և նուաղ. և յայտ է նկատողաց։
Եւ բաց յայսպիսի զանազանու-
թեանց՝ ութ բաղաձայնք կըրկ-
նակք կոչին. և են սոքա, զ. լ. խ
ղ. ճ. ջ. ռ. ց։ Եւ կոչին կըրկ-
նակք, զի երկուց բաղաձայնից
ունին ազդումն։ Զայս ոմանք ա-
սեն. և ես բարւոք ոչ իմանամ.
և այլ ինչ ասել ոչ ունիմ.
Եւ չորքս՝ զ, մ, ն, ր, նոյնք կո-
չին. իբրու կակուղք։ զորոյին ես
ոչ գիտեմ զպատճառն ոչ պարտ է
գիտել. Եւ յսքան միայն 'ի գե-
րապատուելոյ վարժչէն իմմէ լսե-
լով՝ թէ վ՟ զի 'ի հնչելն դժուարա-
կարեն անյայտանալ։ Եւ այլ ոմն
ասէ թէ՝ նոյն ասելն՝ ընդունակ
բնուին ասելէ կակղութեան և

կարծրուն։ Այլ մոմն ընդունակ գոլով ջերմին և ցրտոյն, կակղանայ և կարծրանայ։ Նոյնպէս և սոքա՝ գ, մ, ն, ր, ուր զկնի բաղաձայնի դնիցին, սակաւ ինչ թանձրագոյն հնչեն քան զդնիլն հուպ զկնի ձայնաւորին. Որպէս, կող, կոճղ. և այլն։ Նայց և այսու ոչ հանդչին մտաց քննասիրաց. զի ոչ միայն այսոքիկ են այսպիսիք, այլ և ամենայն բաղաձայնք. Որք նաև հարկ ունին զայս՝ թէ ՚ի ձկտիլն սուր հնչեն քան զնստիլն։ և պատճառն յայտ է քննողաց։

Դարձեալ հասարակաւ խօսելով՝ բաղաձայնից ոմանք շրթամբք ելուզանին. որպէս աբ, եբ։ Այլ ոմանք առանց շրթանց. որպէս ադ, եդ։ Ոմանք լեզուի տակովն հնչեն, ոմանք միջովն, և ոմանք ծայրիւն։ Է՛ որ յոյժ շարժէ ըզլեզուն, է՛ որ սակաւ, և է՛ որ միջակ։ Է՛ որ ՚ի շնչափողէն է

լանէ, և է՛ որ ՚ի խաչափողէն։
Ոմանք զծայր լեզուին յատամունսն հարկանեն, և ոմանք ոչ։
Զ որոց գոն և այլ տեսութիւնք որք զքննելն սիրեն։

Հարց՝ զ, երբեմն արտաքերի ոչ՝ ս։ Որգոն, զգաստ, զգեստ ազդումն, զգայուն, և այլ։

Հարց՝ է, եդեալ կայ բռնաբարելով վս՟ հարկաւորութն ՚ի տեղի եչի ՚ի բանս սբյն Ներսէսի շնորհալւոյ։ Էրևեցար մարմնով յերկրի։ Էլեր յեր՟դ ժամ ՚ի խաչին։ Էրկինք և երկիր, էկայք ողբացէք, էղկելի զանձն իմ։

Հարց՝ լ, երկուս հնչմունս ունի։ հաստ և լերկ։ Հաստ հըն չումն լինին այնէ, որ ծայր լեզուին հարկանէ զյետին երեսն ատամանց վերին կողմանն։ որպ լարել։ Եւ լերկն այնէ, որ ծայր լեզուին հարկանէ զծայր ատամանցն։ ոպ նշոյլ։ Եւ յոյժ սա-

կա՛յ է զանազանութիւն։ Այ՛լ ՚ի տե
ղի լերկ լինին՝ գրեն զտառս՝ ղ,
և գնեն թվերայ զմակակէտս՝.
որպէս նշոյղ՝. այսինքն նշոյլ՝
Այ՛լ այս՝ իմ խակ մտացս ոչ թուի
բարւոք . քղի բազումք շփոթե-
լով զձայնն՝ զլինն զատ ընթեռ-
նուն։ Այլ թէ հաստ թէ լերկ,
պարզագոյն է գնել, . որ և
վնաս ինչ ոչ ունի։

Արդ լծորդատառքս իրերաց,
կ, գ, ք, յորժամ ձկտեալ ար-
տաբերին՝ առ զանազան ձայնա-
ւորս երկուս ձևչմունս ունին.
այսինքն, ձիգ և թոյլ.
Ձիգ, որգոն, կա, կը, կո, կօ, կու,
Այ՛լ թոյլ, կե, կէ, կի, կիւ,
կեայ, կեօ. այսպէս և միւսքն.
Տես ՚ի լեզուն կործէից՝ ձիգ հըն
չումն մեր ևս թոյլ արտաբերեալ.
Այսինքն, կաղմեն կեաղմել.
գալուստն գեալուստ . քաղաքն
քեաղաք, և այլք սոյնպիսիք.

 Աւ

Նաև այսպիսի հնչմունք թիւրեն երբեմն զբառն։ որո՞վ ոչ է նոյն, կալն ցորենոյ և կեալն կենդանի։ գողն և գեռողն, և այլ։ Նաև այս լինի՝ յարտաբերելն ձկտեալ ո՞վ ասացա՞։ Իսկ մինչ նստեալ ելու զանին, առ ամենայն ձայնաւորս միապէս ձիգ արտաբերելին. որպէս ակ, եկ, էկ, ըկ, իկ, ոկ, օկ. որոց ամենեցուն անզանազան մի և նոյն ձիգ հնչումն է. որ բացագոյն է փորձողաց։

Վերջապէս ծանիր և զայս, բաղաձայն տառն՝ միայն տառ է և ոչ այլ ինչ։ Իսկ ձայնաւոր տառն՝ տառ է և վանկ։ Տառ ըստ այնմ որ լինի մասն վանկի, որո՞վ գամ։ Նաև վանկ ըստ այնմ որ լինի մասն բառի. որո՞վ ա, գամ։ Այսպէս և միւս ձայնաւորքն։ Իսկ երկուքս է, ", բաց՝ի գոլոյն տառ և վանկ, են և բառք։ Վասն զի՞ է, լինի երբեմն անուն, երբեմն բայ.

Նոյն՝ է, էի, էին. էք, էից, էիւք

Այլ բայ՝ եմ, ես, է. եմք, էք, են.

Նոյնպէս և՝ ո, լինի անուն հար ցական. ո՞ է հար զքեզ: Դերա նուն յարաբերական ՚ի տեղի ոյր. և յոյս նոր ՚ի տէր ած է. ո արար զեր կինս և զերկիր և զամ որ ՚ի նս։

Լինի և ախտակրութի զարմա ցական. ո՛ որ բան բաղդատեսցէ զքեզ կայսերջանիկ. Նաև նախ դիր կոչականի, ո՛ տր. ո՛ մարդ։

Այլ վն Տառից այսքան.

## Յաղագս Անուանն Մասին։

### Գլուխ 23

Վանկին երեք անուն դնին. հեգ, վանկ, փաղառութ. Հեգ կոչի շարայօդութիւն տա ռից ՚ի միում վանկի. Այլ վանկ կոչի հնչումն և արտաբերութի ձայնին. Իսկ փաղառութի այն է՝ որ ձայնաւորն իմէջ բաղաձայնից փաղառեցեալ լինի. այսինքն շրջա

փակեցեալ․ որ յերկու կողմն ևս բաղաձայն ունիցի․ որպէս՝ քար, բեր, դիր, և այլ։ Մորդ՝ վանկն հասարակ անունն է սոցա․ զի թէ հեգ լինի և թէ ոչ, թէ փաղառութիւն և թէ ոչ, կարէ կոչիլ վանկ, զի է ձայն յօդաւոր․ որ է շարաւոր կամ գրաւոր։ Ուրեմն է վանկ՝ որ հեգ է․ և է որ ոչ է հեգ․ որպ՝ ա զի։ Պորձ՝ է վանկ որ փաղառութն է, և է որ ոչ է․ որպ մարթա։ Նաև պատճառք հրն չելոյ վանկից՝ են ձյնաւոր տառքն․ զի բաղաձայնքն՝ թէ և բաղումք իմիասին լինիցին՝ ձնչել ոչ կարեն որպէս ուսար իսկ․ Մայլ դնին բաղաձայնքն վս զձայնսն զանազանելոյ․ որովք միևնոյն ձայնաւոր՝ զանազան տեսկս զգենու․ որպ՝ ար, քար, արդ, վարդ, վարդք։ աղ, ախտ, բանտ, դանձք, և բազումք․ այսպէս և միւսքն։

Նաև աստի իմանի թէ՝ վանկն եր

կուս կերպաւորութիւնս ունի. ներքին և արտաքին. Ներքին են ձայնաւորքն, և արտաքին՝ բաղաձայնքն. Ու՞ է՝ զի 'ի միում հնչման՝ բազում արտաքին կերպաւորութիք գտանին մի իմէջ միոյ Ոպ 'ի հնչիլն՝ փոփոխ, բայց 'ի ներքին կերպաւորութէն՝ ա, հնչին ևս իմասին՝ ար, արդ, վա, վար, վարդ. Որք ամենեքեան գոն իմէջ վանկիս վարդք. Ասացի (բղձնքն ըստ ինքեանց հնչել ոչ կարեն.) Ու՞ թէպէտ յասելն՝ փոխից, երևի թէ՝ վանկս էր, թարց ձայնաւորի հնչեաց՝ բայց ոչ է. զի ունի զօրութիւն յինքեան զձայնաւորս՝ ը. Որ թէպէտ ոչ գնի ըստ սովորութեն, բայց 'ի հնչելն էր, երևի: զի էր, հնչէ որպէս էըր. Այսպէս սովորու, հնչէ ոպ ըստըն տոս. զորպիսեաց 'ի հեգակապմութեան սակաւ ինչ երկար լուծես.

Պրձ գիտելի է, զի է՛ վանկ որ
միաձայն կամ պարզ կոչի, և է՛
որ երկձայն կամ բաղադրեալ կոչի։
Միաձայն կոչի այն, որ մի ձայն-
աւոր ունելով՝ մի պարզ հնչումն
ելուզանէ․ որպէս բա՛րե՛սէր․
Իսկ երկձայն կոչի այն, որ 'ի վր
պարզ հնչմանն՝ ունի եւս ընդմիջա-
կան հնչումն, և լինի այս ը հնգ-
կերպիւ․ եա՛, եօ՛, իւ՛, այ՛, ոյ՛․
Օրգն, կեանք․ գեօղ․ սիւն․ ձայն
գոյն․ Նայց տես, զի՝ եա, եօ, իւ,
զընդ միջական հնչումն 'ի սկզբանն
ունին․ իսկ՝ այ, ոյ, 'ի վերջնումն․
Իսկ այս այն է՝ զոր յերես 484
անցաք թէ՝ ձկտեալն՝ ե, ի, և նըս
տեալն՝ յ, միապէս հնչեն։
Յորդ ուրեմն որք 'ի սկզբանն ու-
նին զհնչումն ընդմիջական՝ եա,
եօ, իւ, կոչեսցին սկզբնաւոր
երկձայն․ Իսկ որք 'ի վերջնումն
ունին, այ, ոյ, վերջաւոր երկձայն․
Երկձայն վանկն՝ յայլոց երկ-

բարբառ կոչի · և ինձ բարւոք
թուի երկձայն ասել, ք̃ երկբար
բառ: Զի բարբառն թուի թէ՝
բառի՛ է նշանակութ̃ի · այսինքն
իմացուածոյ: Իսկ ձայնն նախ է
բնութ̃ քան զբառն · զի ձայնիւն
զբառն իմանամք: ըստ այնմ, ձայն
բարբառոյ յանապատի:

Արդ՝ թէ երկձայն, թէ երկբար
բառ, ո՛չ թէ երկուս որոշեալ
ձայնս ունին յինքեանս և վ̃ այն
կոչին այնպէս, քանզի մի վանկն
մի ձայն է, այլ զի երկու այլատե-
սակ հնչմունք ՚ի միում վանկի
բաղադրեցեալք՝ իմիասին հնչեն
միով հնչմամբ · Զի ասելն՝ երկ
ձայն, ո՛չ է ասել երկու ձայն, այլ՝
ունօղ երկուց ձայնից · այսինքն
մի և նոյն վանկ՝ ունօղ երկուց բա
ղադրեցեալ այլատեսակ հնչմանց
մի վ ելուզմամբ: Բարւո՛ք իմա
ինձ զունօղս զայս յինքեան ըղ
մեծն խորհուրդ: Յոհան 1 · 14

 Իսկ

Արդ ծանի՛ր աստ, զի հիւնն առաջի իւրոյ՝ երկու կերպիւ գնի. կամ իբրև բաղաձայն, կամ իբրև ձայնաւոր։ Եթէ գնի իբրև բաղաձայն, լինի վանկն միաձայն. որպէս թիւ, բանիւ, և այլ։ Արդ թէ գնի իբրև ձայնաւոր, լինի վանկն երկձայն. որպէս սիւն, ձիւն, և այլ։ Արդ վանկս ու, ՚ի կարգս ձայնաւորաց՝ է միջակ ձայնաւոր. իսկ ոմանք երկար անուանեն։ զկատարեալն երաժիշտն գիտէ։

Արդ ըստ այսմ տեսութեան՝ լինին պարզ ձայնաւորքն ութ, ա, ե, է, ը, ի, ո, օ, ու։ Իսկ երկձայնքն լինին հինգ. եա, եօ, իւ, այ, ոյ, որպէս ասացաւ և ցուցաւ։

Ոմանք զայսոսիկ ևս՝ աւ, եւ, էւ, ըւ, իւ, երկձայն համարին, և կոչեն հիւնական երկբարբառ. ընդ որ հաճիլ ոչ կարացի զպատճառն ոչ գիտելով. թէ հիւնն բաղաձայն զիա՛րդ չինէ երկբարբառ։

Եւ արդ՝ սկիզբն և սեռ ամ̃ ձայնից՝ է՛ հնչումն. որ է երկու. մինն կոչի ձայն, և միւսն հնչումն ոչ ձայն: Ձայն կոչի այն, որ ՚ի բերանոյ շնչաւորացն ելանէ.

Եւ հնչումն ոչ ձայն, կոչի այն, որ յանշնչիցն ելանէ:

Եւ ձայնն է երկու. յօդաւոր և անյօդ. կամ գրաւոր և անգիր. գիր՝ զտառն իմանալով. Յօդաւորն է երկու. նշանական, և աննշան. Նշանականն ևս է երկու. յօդաւոր, և անյօդ. Արդ՝ ըստ այսմ բաժանման՝ չորք լինին ամ̃ հնչմունք. Յօդաւոր նշանական, ոպ̃ քար: Յօդաւոր աննշան, ոպ̃ փա: Անյօդ նշանական, որպէս կոչնականն ձայնն: Անյօդ աննըշան, բազում հնչմունք:

Բայց գիտելի է, զի յօդաւոր նըշանականն որ է բառ, յորժամ որ ոչն հասկանայ՝ պատահմամբ աննշան լինի: ոպ̃ յունացն մեզ՝ և մերսն̃ջ

Սամ՛ յթէ և մերն այն զոր տակա ւին ոչ գիտեմք, է՛ մեզ իբրու աննշան։ Իսկ ոմանք 'ի ձեռն անհմուտ գրչաց 'ի գրիլն լինին աննշանք, չճանաչելով ըղձորդա տառսն։ Ոչ բառս ցանկէ, եթէ գրի ցոյիլ, գրի իմացումն և լինի աննշան։ Իսկ վանկն միատառ կոչի միագիր. և երկատառն երկագիր. այսպէս եռագիր. քառագիր. հնգագիր. վեցագիր. Իսկ վեց վանկին շատ լինի այսքան։ Որոյ զերկարն և ըղսուղն թէ դէպ լինի՝ յայլում տեղւոջ մինեսցուք։

## Յաղագս Բառի Սեռոյին.

### Գլուխ 24

Բառից ոմանք հոլովականք են, ոմանք անհոլովք։ Հոլովական ասի այն, որ այլ և այլ ձևով 'ի կիր արկանի. որպէս անունն, և բայն, և նմանք։ Իսկ անհոլով

կոչի այն, որ միշտ նովին ձևովն
'ի կիր արկանի. որպէս նախդիրն,
մակբային, և շաղկապն, նաև միջար
կութիւն. Այն որ հոլովական է,
ունի անուանս այլ և այլ ձևով.
ոպ̄, սիրտ, սրտի, սրտիւ, և այլն.
Սրբեմ, սրբես, սրբէ, և այլն.
Իսկ անհոլովն՝ անուանութիւն
ոչ ունի. Ոպ̄ ձայնքս, վասն, այսօր,
ժամնչի, ոհ, միշտ մի և նոյն ձևով
գտնին 'ի շարադրութեան որպ̄ և
յայլ ուր ասացաք յերեսն 181.
Այս թէպէտ կարէ ասիլ, (զվ̄
մեր զայսօր խաչեցին դիցուք 'ի
մտի,) բայց ասատանօր նախդիրս՝
զ, ոչ է վասնին և այսօրին, այլ՝
զկնի եկեալ բառին, խաչեալ.
Զոր պարտիմք այսպ̄ իմանալ,
զխաչեալն այսօր վ̄ մեր, դիցուք
'ի մտի. Նոյնպէս և զայլ այսպ̄ի
եղեալս իմա.
Պարծ՝ մեծ բարունին և քաջ
քերթողն մեր Սիմէօն Ջուղայեցի՝


աս.

առեալ յարիստոտելէ՝ երկու ա-
սէ զըւառն. նշանական և աննշա-
նական: Նշանական ասէ զայն՝
որ խորով ինքեամբ բաւական է
տալ զնշանակումն ինչ. որպէս քար,
փայտ. շինել, տընկել, և նմանք։
Իսկ աննշանական կոչէ զայն,
որ խորով ինքեամբ իբրու թէ-
րի՛ նշանակի. որպէս այսոքիկ՝ վասն.
առանց. մինչև. մինչդեռ. որպէս.
իբրու, և նմանք. Իսկ կոչին ան-
նշանականք, իբրու թէ առ նոսա
դնին և նոցա միշտ հետևին.
այսինքն նշանականաց: Որպէս,
վասն փառաց. առանց մեղաց. մինչև
ի տուն. մինչ դեռ ուտէին, և այլ.
Նշանական ասացեալքս՝ կերպիւ
ինչ նմանին տառից ձայնաւորաց,
և աննշանականքն բաղաձայնից.
Զի որպէս ձայնաւորք տառքն ըստ
ինքեանց հնչեն, այսպէս և նշանա-
կան ասացեալքս ըստ ինքեանց
իմանին. Իսկ որպէս բաղաձայնքն

Թարց ձայնաւորի ոչ կարեն կա_
տարեալ ձնչել, այսպէս և առնշա
նականքն Թարց նշանականի կա_
տարեալ ոչ բացայայտին․ որպէս
ցուցաւ՝ վան փառաց, և այլ։
Իսկ Հոլովական նախդիրքս՝ ի,
ըն, ոչ նշանական կարեն կոչիլ՝
ոչ առնշանականին․ զի ոչ են բառք,
այլ՝ մասունք բառից։
Բաց այսց է և՝ ընդ, 'ի յենիլն Հոլո
վական նախդիր։ Իսկ 'ի յենիլն
զատական, է բառ առնշանական։
Նոյնպէս և այնք՝ որք երբեմն բա
ղադրին և երբեմն զատ դնին։
Տես յերեսն 151 և 395։
Դարձ՝ 'ի բառից ոմանք են միա_
նշանք, և ոմանք բազմանշանք։
Միանշան ասի այն, որ բնականաւ
զմի ինչ նշանակէ․ որպէս քար, փայտ,
լինել, անկել, և բաղումք։
Իսկ բազմանշան ասի այն, որ բը
նականապէս երկուս կամ երիս
կամ այլ աւելի իրս նշանակէ։

Որպէս միեւնոյն ձայնս՝ այր, նշանակէ զլիահասակ մարդն արու. եւ ըզ քարայրն կամ զհողայրն ծուշարայ: Այս ձայնս՝ ակն, նշանակէ զտեսա զականն, զմատանւոյ ակն, եւ ըզ ջրոյն. Այս սակաւք են այսպիսիք ՚ի մեր լեզուս. Այն են եւ ոմանք՝ որք բազում ձայնիւ զմի իր նշանակեն. որպէս գառն, լեղի || քաղցր, անոյշ, համեղ || զատել, մեկնել, անջատել, բաժանել, որոշել, անջրպետել, եւ այլն: || Արդ՝ որք միով ձայնիւ զմի իր միայն նշանակեն, են միանշանք. եւ որք միով ձայնիւ զայլ եւ այլս ցուցանեն, են բազմանշանք. եւ որք բազում ձայնիւ զմի իր երեւոցեն, են բազմաձայնք. Այս տես, զի բազմանշանքն եւ բազմաձայնքն հակադրեցեալք են իրերաց: Վասն զի միոյն ձայնն մի եւ նշանակութիւնն այլ եւ այլ. եւ միւսոյն նշանակութիւնն մի՝ եւ ձայնն այլ եւ այլ:

Բազմանշան բառից ոմանք հիմ-
նական և արմատական ձայնիւն
իւրեանց նշանակեն այլ և այլ.
և ոմանք հոլովեալ և փոփոխեալ
և աճեալ ձայնիւն։ Հիմնական և
արմատական ասեմ զեզական ուղ-
ղականն անուան պարզ և նախա-
տիպ։ և զնախատիպ աներևոյթն
բային։ Բայց յորոց՝ այլքն անուան
և բայի՝ կոչին հոլովեալ, փոփո-
խեալ, աճեալ, կամ ծնեալ.
Արդ՝ որք հիմնական ձայնիւն նը-
շանակեն այլ և այլ, ՚ի մեր չեղուս
սակէք են։ Իսկ որք հոլովմամբն
նշանակեն, բազմամք են։
Այս տես՝ զի աստ զանուն և զբ-
բայ միայն յիշեցաք, զի նոքին
միայն են հոլովականք։ Անուն
իմանին աստ՝ որք հոլովին ուղ-
ղական սեռական, և այլն։
Պարզեալ՝ բազմանշան բառից
ոմանք ըստ նոյն մասին բանի
նշանակեն այլ և այլ. Որպ՛ այր՝



ու-

ունի երկուս նշանակութիւնս,
և այն երիս, և ամենեքեան են
անուանք։ Որ ձայնս՝ ագանիլ,
նշանակէ երկուս բայս, այսինքն
զգենուլ և օթագայիլ։ Եւ սա-
կաւք են այսպիսիք։ Որ ոմանք
ըստ այլևայլ մասանց՝ նշանակեն
այլևայլս։ ոպ̃ ձայնս՝ է, անուն է
և բայ։ է, էի, էիր։ եմ, ես, է։
Այրի, է անուն՝ այրի, այրւոյ։
Որ բայ, այրեա, այրի։ և բ̃զումք
են այսպիսիք։ Կամ, լինի անուն.
կամ եղև լինձ։ որ 'ի շարագրու-
թիս մեր՝ սովորապէս յոգնակին 'ի
գործ ածի, կամք, կամաց, կամօք։
Իսկ ըստ եզականին՝ գործիակին
յաճախ գտանի, կամաւ։ Լինի
և բայ իբր էական, կամ, կաս, կայ
'Ի, և շաղկապ տրոհական. կամ
ես գնացից կամ դու։ զորոց և՛ի
ստուգաբանութենէ բառից անցցի։
Պարզ՝ ոմանք 'ի բառից միա-
վանկ են, ոմանք բազմավանկ

որ ասացեալ է․ Բայց միավանկն
որ ըստ ինքեան բառ է՝ լինի ու-
րեք մասն այլում բազմավանկ բա-
ռի․ կամ մնալով նշանակութեն
կամ կորուսմամբ․ Մնալով՝ որպէս
աղ, աղցան, աղքար‖ հաց, հացկե-
րոյթ, հացագործ, բազմահաց․‖
Իսկ կորուսմամբ, աղ, աղքատ,
աղտոր‖ հաց, շնորհաց, խոնար-
հաց‖ քար, քանքար, քարտուղար
և այլ․ Գտանին և յերկավան-
կից․ որպէս բարի, ամենաբարի‖
ցորեանն ՚ի շտեմարանն ամբարի․
Որ և ամբարի, ոչ նշանակութիւնս
ունի․ բայ, սեռական, ամ բարի․
Այն է բառ, որ անջատեցմամբ
վանկիցն՝ այլևայլս նշանակէ․
ո՛չ աղտեղի, աղ, տեղի‖ աղբիւր,
աղ, բիւր․ աղբ, իւր․ և այլ․
Դարձեալ՝ բառից ոմանք ըստ բը-
նութեն այլ ինչ նշանակեն, և
ըստ սովորութեն այլ․ Ո՛ր հայելի,
ըստ բնութեն նշանակէ ղառարկայն

հայեցողին, այսինքն՝ ինչ և իցէ տեսանելի։ Իսկ ըստ սովորութե նշանակէ զպատկերացոյց ապիկեղէնն. և բաղումք են այսպիսիք. Նա՛ ոտք վանկն լինին և ասի միագիր երկագիր և այլն, այսո՞ք և բառն միավանկ, երկավանկ կամ երկվանկ, եռավանկ, և այլն։ Զբառից թէպէտ և այլ իմացք կարեն մտածիլ բայց վ՞զի կարճ՝ երկարի, որոց և չեմք իսկ բաւական, եղերուսն եղիցի աստ։

## Մերոյն Տեսութեան
## Յաղագս Բանին։
### Գլուխ 25

Բանն է շարամանութի բառից յայտնօղ տրամախոհութե։ Իսահմանէս յայսմանէ պարտիմք գիտել՝ թէ առ՚ի գոլ բան՝ երկու ինչ են հարկաւորք. այսինքն տրամախոհութի և հասկացութն. որոց ոչ գոլոյ՝ ոչ կարէ գոլ բան։

Ծբ։

Զի տրամախոհութին որ է դի-
տաւորութին որ է խորհելն որ է
մտածումն՝ որպ հիմն է բանին ·
և հասկացումն ոպ շինուած ։
Որոց միոյն պակասելոյ՝ ոչ կարէ
գոլ բան ։ Որպ ՚ի խօսից ոմանց ՚ի
քուն եղելոց, կամ խելագարից,
և կամ կարի՛ արբելոց՝ թէպէտ լի-
նի հասկանալ ինչ, բայց զի ոչ ու-
նին մտածումն՝ ոչ են բանք։ ըստ
այսց և խօսքն թութակին ։
Նա՛ և որք լեզու ինչ նոր ուսանին,
կամ և արբեալք ոմանք, և թէ-
րախօս մանկունք, թէպէտ մտա-
ծեն ինչ և կամին ասել, բայց վս
զի խանգար խօսին՝ ոչինչ իմանի ·
վասն որոյ և ոչ են բանք ·
Նա՛ ահա յայտ եղև՝ թէ այն է
բան, որ ունի զդիտաւորութին և
հասկացումն իմիասին ։ Իսկ թէ
յոճին եղեալ բան ինչ՝ վս խո-
րին գոլոյն ոչ հասկանիցի, լո-
ղին է թերութին և ոչ բանին ։

Բանից ոմանք տաղականք են և
ոմանք անտաղականք։ Տաղա-
կան կոչի այն, որ չափաւոր վան-
կօք շարադրեցեալ է։ Որպ̃ յա̃ որդին
և այլ երգական բանք։ Իսկ ան-
տաղական է այն, որ ոչ ունի զչա-
փաւորութիւն վանկաց. որպ̃ մ̃ե-
ա̃տրնն, և այլ։ Նախկին տեսակն
ասի և ոտանաւոր, և երկրորդն
Թիւ ասացուած։ Այս երկո-
ցունցս այսոցիկ՝ տաղականին և
անտաղականին՝ զանազան տեսակք
գտանին։ Զ տեսակսն տաղակա-
նին՝ տաղաչափութ̃ արհեստն ու-
սուցանէ որ այժմ նուաղ է 'ի մեզ։
Իսկ զանտաղականին տեսակսն՝
Ճարտասանութիւն գիտէ։
Պարզ՝ բանն 'ի հինգ տեսակս
որոշի. որք են որակքն բայից։
Սահմանական. Հրամայական.
Ըղձական. Ստորադասական.
Աներևոյթ. Վասն զի՝ սահմա-
նական բայի եղեալ բանն՝ սահ

մանական կոչի. հրամայականաւն հրամայ՛ին, և այլն. Ո՞ւ է բան որ յայլևայլ որակութեց շաղաշարի. Ո՞պ այս՝ (քե՛ղ ասեմ լուր ինձ,) է՛ 'ի սահմանականէ և 'ի հրամայականէ.

### Յաղագս Մասանց Բանին այլ ինչ ասութի: Գլուխ 27

Մասունք բանին թուով ութ են ըստ նախնեաց, և ինն ըստ ոմանց, սակայն (ոպ արիստոտէլ ասէ) հարկաւորքն երկու են անուն և բայ. Որովք իմանին նաև այլ միւս հոլովական մասունքն. այսինքն ընդունելութիւն, դերանունն, և յօդն. Զի ընդունելութիւն ուրեք իբր անուն վարի, ուրեք իբր բայ. Իսկ դերանունն և յօդ՝ են որպ անուն. զորոց ասացաւ յերեսն 353. Իսկ միւս անհոլով մասունքն՝ նախդիր, մակբայ, շաղկապ, և միջարկութիւն՝ ոչ են հարկաւորք


առ

առ՚ի գոլն բան, այլ՝ հետևողք են
հարկաւորութեան. Զի թարց անուան
և բայի՝ այնոքիւք բան ոչ լինի.
Իսկ միայն անուամբ և բայիւ՝
լինի բան բաղակատար.
Այս աչաւ յայտ եղև թէ՝ հար-
կաւոր մասունք բանի՝ են անուն
և բայ. Ըստ դերափայլ վար-
դապետն մեր Սիմէօն Ջուղայեցի՝
յերկրորդում հատորի տրամա-
բանութեան յերեսն 91, առեալ
յարիստոտէլէ ասէ, (Նշանական
և յօդաւոր ձայնից ոմանք են ան-
ուանք, ոմանք բայք, և ոմանք
բանք. Ցանգլի գերանունն՝ ընդ
անուան է. և ընդունելութիւն՝ եր-
բեմն ընդ անուան վարի և երբեմն
ըստ բային. Իսկ այլքն ոչ են նը
շանականք. այլ՝ առ նշանականք.
Իսկ շարամանութիւն անուան և
բայի՝ է բան. Ապա ուրեմն յօ-
դաւոր և նշանական ձայնն՝ կամ
անուն է, կամ բայ, կամ բան.)

Ուստի պարտիս գիտել թէ՝ որ
հաղ. քան զանուն և զբայ, բան
ոչ լինի. զի ուր ոչ յայտնի իրա-
կօղն և իրակութին, այն ոչ է բան.
Հարկ է ուրեմն լինիլ անուն ը-
րով յայտնի իրակօղն. պիտոյ է
և բայ՝ որով յայտնի իրակութին.
Թէպէտ պարտի լինիլ և խնդիր
բային, բայց բազում բայք կա-
րեն դնիլ թարց խնդրոյ. ուր ա-
սացեալ է 439. Մարթ է և գտանել
բան, յորում կամ անունն կամ
բայն չիցէ եդեալ, բայց զօրութ
իմացեալ՝ իբրու եդեալք են. որպ
ասացաւ յերեսն 366 և 367.

Ի՞նչ էական բայքս՝ է, գոյ, կայ,
թէպէտ իրակութ ինչ ոչ յայտ-
նեն ըստ ինքեանց, բայց կերպիւ ինչ
և այն իրակութիւն է նշ. յայտնելն
զգոյն ուրուք և իրիք. Որգոն,
է ամ. գոյ դատաստան. կայ հա-
տուցումն գործոց. Նստի, ըստ
ինքեանց. զի մինչ կցին ընդ այլում,

 յայտ

յայտնեն զկրակութիւն ինչ։ Որպէս ասէ՝ հակառակ է. հնազանդ գդ. յոտին կայ, և այլ։

## Յաղագս Հետևմանց Մասանցն Բնին. Գլուխ ԻԳ

Հետևմունք մասանց բնին՝ են պարագայք և յատկութիւնք նոցին. զի իւրաքանչիւր իր՝ պարագայիւքն որոշի և յատկանայ յայլոց. Օրօրինակ՝ այլ է յատկութիւն ջրոյ, և այլ հրոյ. այլ քարի, և այլ փայտի. այսպէս և այլն. Նոյն պարագայք իւրաքանչիւր իրի՝ են հետևմունք և յատկութիք բնութե նորին. Որպ հետևի ջրոյն գնալն ՚ի խոնարհ, մարել զհուր, մաքրել զաղտ, և այլ։ Նոյն ոչ եթէ ամէն պարագայք իրին՝ զատ զատ առեալ՝ են յատկութիւնք նորին. այլ՝ ժողովումն նոցին՝ է՛ յատկութի իրին. Օրօրինակ՝ հե-

տեւի ջրոյ լինիլ ընդունակ ջեր-
մութե̃ և ցրտութեան. և ոչ է յատ
կու̃ն նորին. զի և այլք ունին զնա.
այսինքն, օդ՝ երկաթ՝ և այլ:
Իսկ հաւաքումն պա̃րդայից միոյ
իրի՝ ոչ հետեւի այլումն իրի. վ̃ս
ասի այն յատկութիւն նորին.
Որպ̃ հետեւմունք և պարագայք
անուան՝ են վեցեքինս, քանակ,
սեռ, ձեւ, թիւ, տեսակ, հոլով:
Եւ ժողովումն վեցից հետեւ-
մանցս այսոցիկ՝ է՛ և ասի յատ-
կութի̃ անուան. զի ոչ այլ մասն
բանի ունի զհաւաքումնս զայս.
Նաև քանակն միայն՝ է՛ յատկու̃ն
անուան: Այսպէս և զայլ միւս
մասանց զհետեւմունսն իմա:
Եւ արդ՝ հասաք ահա յայն տե-
ղին, ուր անդրէն սկսաք ասել
զանուանէ յերեսն 187.
Եւ ծանիր աստ, զի որպ̃ ՚ի կիր
առնլի, այսինքն ՚ի գործ ածելի
մասունք քերականութե̃ են չորք.

տառ, վանկ, բառ, բան։ Այսպէս և կիրառութիւնք նոցին՝ այսինքն գործածութիւնքն՝ լինին չորք։ Այս է՝ կիրառութիւն տառի. կիրառութիւն վանկի. կիրառութիւն բառի. կիրառութիւն բանի։ Զորոց սակաւ բանիւք անցանելի է։

## Յաղագս Կիրառութեան Տառի։
### Որ չորք Յարմարագրութեան։
### Գլուխ 29

Ի կիրառութեան տառի՝ նախ առնելի է զձայնաւորացն, ապա զյիոյ, ապա զբաղաձայնիցն, և ապա սակաւ ինչ և վասն պատուոյ.

### Յաղագս Ձայնաւոր Տառից.

Ի փոխիլն եւթից 'ի կերպէ 'ի կերպ՝ բաց յայնցանէ որք կան եդեալ և ոչ շարժին՝ այլ ձայնաւորքն ըստ երից 'ի գործ ածին.

Ըստ դրման. Ըստ բարձման. Ըստ փոխարկման։ Այսինքն, ուրեք

գնէին ուր ո՛չ գոյին. ուրեք բառ-
նին ուր գոյին. և ուրեք բառնի
միևն և գնի միւսն.

(Դ.) Ըստ դրման՝ հիմն, հիման, հիմնադիր. Ըստ բարձման՝ աստուած, աստուծոյ. բարձրեալ, բարձրելոյ. Ըստ փոխարկման՝ Թանալ, Թանիլ. լուանալ, լուանիլ.

(Ե.) Ըստ դրման՝ Թողուլ, եԹող. չորք, չորեքդիմի. Ըստ բարձ", սիսեռն, սիսռան. Թիթեղն, Թիթղունք. Ըստ փոխ", դէմ, դիմի. գրել, գրիլ. տեարք, տերանց.

(Զ.) Ըստ դրման՝ հանել, եհան. սիրտ, ՚ի սրտէ. Ըստ փոխարկ" սէր, սիրոյ. էգ, իգի. սէԹ, սեԹայ. տէր, տեառն. Նունէ, Նունեայ.

Այսպէս և ոչ այլ ձայնաւորք տառս իմա.

«Եւ երկու բաղաձայնքս՝ ռ, ր, փոխարկեն յիրեարս ՚ի հետևեալսդ. Դուռն, դրան. լեառն,

ըերին ‖ այր, առն. տէր, տեառն ‖
բառնամ, բարձի. դառնամ, դարձայ

Սա՛ յայտնանէ ամենեւնց պարտիս ճանաչել զտառսն բառից՝ թէ զձայնաւորսն թէ զբաղաձայնսն՝ թէ որ տառ բնական է այնմ բառի, և որ եկամուտ: Կամ թէ որ տառ անխախտ մնայ, և որն բառնի կամ փոխարկի.

Այն որ անխախտ մնայ, անշարժ անուանի. Իսկ այն որ բառնի կամ փոխարկի, շարժական կոչի: Դարձեալ՝ այն որ բառին բուն է ըստ արմատոյն, սեպհական կամ բնական կոչի. Իսկ այն որ ՚ի փոխակերպին եղեալ է ՚ի յարմատոյն, եկամուտ իւրացեալ է նմա: Որ և ըստ նոյն փոխել կերպին իբրու սեպհական է նմա:

Յաղագս Ըէ Սրոյ վերջին Յեռլ տնիլ տալոյ է. Գլուխ 30

Ը վերջնում բառից դնիլ յի՝

երկուց ձայնաւորաց միայն պատ
կանի. որք են, ա, ո: Սակայն դի
տելի է, զի ամենայն յատուկ ան
ուանց՝ որոց վերջն այբին եզերի՝
ուղղականն և ուղղականավերջքն
որք են սկզբնահոլովք՝ յի ոչ ը̃ու
նին: ո̃պ Աննա. զաննա. ցաննա.
ո՛վ աննա: Յուդա. զյուդա. 'ի
յուդա. ո՛վ յուդա: Ազարիա.
զազարիա. յազարիա. ո՛վ ազարիա
Գաղատիա. զգաղատիա. 'ի գա-
ղատիա. ո՛վ գաղատիա. և այլ:
Իսկ վերջահոլովք այբին եզե-
րեալք՝ յիով պարտին կերպանալ:
որպէս Եսուայ. զեսուայ. 'ի յես
ուայ: Սեթայ. զսեթայ. 'ի սեթայ
Նաև՝ աննա, յուդա, ազարիա,
դնին ուրեք յիով՝ այ. լինելով
սեռական 'ի տեղի դնիլոյ՝ այլ:
զոր յերեսն 244 յիշեցաք:
Իսկ հասարակ անուանք՝ այբին
եզերեալք՝ թէ ուղղականք
թէ հոլովեալք՝ յիով կերպանան:

 ո̃պ

որպէս Որքայ · զորքայ · ցորքայ · ամ որքայ · Ծառայ · զծառայ · 'ի ծառայ · ամ ծա̃յ, և բազումք:

Իսկ այնոքիկ՝ որոց վերջին լինի՝ ոյ, թէ հասարակ թէ յատուկ՝ թէ ուղղական թէ հոլովեալ՝ յիւմ պարտին կերպանալ ա̃մքն · որպէս՝ Գոյ · զգոյ · 'ի գոյ · ամ գոյ, Խնձոյ · զխնձոյ · 'ի խնձոյ · ամ խն՛՛ · Նոյ · զՆոյ · ցՆոյ · առ Նոյ · ամ Նոյ · Եւ այլ ոչ ոյ կարծեմ յատուկ, որոյ վերջին իցէ՝ ոյ · Եւ պատկանեալքն ևս կերպիցս հոլովմանց՝ ոյ, ւոյ, յիւմ պարտին եղերիլ ոպ և եղան · Յորոց են և ընդունելութիւքս՝ եալ, ելի · բացեալ բացելոյ · բանալի բանալւոյ ·

Դերանուանքն ևս՝ ոյ, և յօդքն յիւմ են · Բայց՝ ս՛, եթէ իցէ ուղղական՝ յի ոչ ունի · Իսկ թէ իցէ սեռական՝ յիւմ գնիլ ասեն հինքն · սակայն այժմ զոր և իցէ՝ ս՛, առանց յիոյ գծագրեն ·

Բայից հրամայականքն մի ոչ ու-
նին. գնա՛, գրեա՛, դարձի՛, և այլն:
Իսկ այլքն յոլով են. եթէ գնայ,
երբ գնայ, յորժամ գնայ, և այլն:
Այլ միայն անհոլով մասանց թէ
որն է յոլով և որն ոչ, յեղելոցն
'ի կարգին բանաւոր ծանուցանի:
Այլ տառս այս՝ յ, որովհետև
հաղորդութիւն ունի ընդ ձայն-
աւորացն, նոյին նման ուրեք գնի,
ուրեք բառնի, ուրեք փոխարկի:
Գնիլ, նա՝ նայն: նորա՝ նորայն:
սա՝ սայս. սորա՝ սորայս:
Բառնիլ, այր՝ արք: հայր՝ հարք:
մայր՝ մարք: եղբայր՝ եղբարք:
քոյր՝ քորք. Փոխարկիլ, լոյս՝ լու-
սոյ. լուսաւոր: լոյծ՝ լուծել.
լուծումն, և այլն:
Այլ այս գրմունք ձայնաւորաց՝
աա. աե. աէ. աի. աո. աօ: ոա. ոե.
ոէ. ոի. ոօ, որք այբբէն կամ ոյն
սկզբնաւորին, ուր ոչ ունիցին
բաղաձայն 'ի մէջի, յոլով ճնարին


Հա

շարակցել և երկվանկանալ ։ Ապ
կայանք · վայել · 'ի բայէ · բայի ·
այո · նայօղ ։ գոյակ · շոյել · 'ի նոյէ
նոյի · քոյր · գոյօղ , և նմանք ·
Ո՛րպիսեաց ունիմք ասել ինչ
և 'ի կիրառութե̃ն վանկի · վ̃որոյ
առ այժմ այսքան ։

## Յաղագս Յարմարագրութեան ։

### Գլուխ 3։

Յարմարագրութի̃ է՝ զբառն՝
իւր սեպհականն գրովն գրել
և տառ ինչ օտար ոչ խառնել 'ի նա
Ո՞ լինի այս՝ ճանաչելով զհընչ
մունս լծորդացն բաղաձայնից
կամ և ձայնաւորաց ։ Ո՞ սեպ
հական գիրն բառին այն է , որ ոչ
միայն արտաբերմամբ ճանաչի ,
այլ և հաստատ տրպաւորմամբ 'ի
մտի ։ Թէ այս ինչ բառ՝ այս ինչ
գրով կերպաւորի և գրի ։
Ո՞ կարի յոյժ հարկաւոր է գի
տել զայս ։ առանց որոյ թէ և բա

զուամ գիտութիւնս ունիցիս, ո՛չ ես տակաւին գրոց աշակերտ. Զի եթէ ոք զսեպուհ տառսն բառից ոչ կարիցէ ճանաչել, թէ և բազում ինչ գիտիցէ ՚ի գը-րոց՝ ոչ ասի գիտուն. զի զգիտե-ցեալսն սխալ գծագրէ. Ա՛ռ զի՛նչ օգուտ նմա ՚ի շատ գիտելոյն. և թէ ոչ գիտելով զնշմունս լծոր-դացն՝ զգողն կող գրիցէ կամ ըզ կողն գող ‖ ըզ հոտն հօտ գրիցէ կամ զհօտն հոտ. Նոյնպէս ըզ պարկն բարկ, կամ զբարկն պարկ ‖ զբադինն պադին, և ըզ հաճելն հաջել. Որև զծախն՝ զձախն՝ և զցախն անզանազան դնելով խառ-նարիցէ զբանն. Ուրեմն ապա բազում ջանս պարտիս ունիլ առ-այս. զի մի՛ յորժամ գրիցես ինչ՝ կատակ և խաղալիկ լինիցիս. Որ թէ և ոչ կատակիցիս՝ զի՛նչ օգուտ. մինչ դու ինքնին յարակ թիւրիս ՚ի գրելդ. Ո՛չ զայն ասեմ



որ

որ սխալմամբ ինչ թիւրի․ զի սը-
խալին ամենեցուն պատահի․
այլ այն է խոտելի որ ոչ գիտիցէ։
Եւ թուի ինձ՝ թէ համբակաց և
գիտնոց՝ այլ մեծ նշան քան զայս
ոչ գոյ․ այսինքն գիտելն և ոչ գի-
տելն զտառսն բառից։ Որ թէ
բարւոք մտածես, զայս վճիռ
ոչ եղծանես․ Զի զոր ինչ ոք գի-
տիցէ կամ սերտեալ իցէ, զնոյն
թէ անսխալ գրիցէ՝ է գիտուն․
Եթէ ոչ, համբակագոյն է․
Որպէս թէ՝ սերտեալ իցէ, (խոնար-
հեցո՛ տր զունկն քո) որ է ականջն․
Եթէ գրիցէ՝ շունգն, որ է նօսր թե-
փուկն ցորենոյ․ Սերտեալ իցէ,
(համբարձի զաչս իմ 'ի լերինս) որ է
աչքն․ Եթէ գրիցէ՝ զաջս իմ․ որ է
աջ ձեռն․ Կամ թէ 'ի տեղի գրե-
լոյ համբարձի, որ է նախկին դէմ
կատարելոյն ներգործականն․ գրիցէ՝
համբարձցի, որ է երրորդ դէմ ապառ-
նոյն կրաւորականն․ Նոյնպէս
Ճգ։



և

և զայսն իմա։ Լորդ՝ որ զեւրսն այսպէս խառնակ գրիցէ, զայլոց գրեցեալսն բարուոք գիտել ոչ կարիցէ։ Նաև եղերուն առցէ աստ՝ բաղում բանից պատկանաւորս և երկարեցիս ։

## Յաղագս Պատահարութեան ։

### Գլուխ 32

Պատիւն որ դնի ի վր̃ բառից՝ է՝ առ ի բառնալ զտառս զ մանս և կարճել զգրուածն։ ոպ՝ ա̃ծ, ա̃յ, ա̃վ, և այլ։

Նայց գիտելի է, զի ՚ի բառիցն որք պատուովք սովոր են դնիլ, բառնայ պատիւն ոչ միայն ըզ ձայնաւորսն, այլ և զբաղաձայնսն։ Ոպ՝ ա̃ծ. ք̃ս. ա̃մ. ի̃էլ. սրբութի կամ սրբուի, կամ սրբւի, և այլ։ Իսկ ՚ի յայլ բառից որք ոչ են յոյժ սովոր պատուով գծագրիլ, միջին ձայնաւորքն միայն բառնին. ոպ՝ դտ̃աւն, իմս̃տուն, և այլ։

ԺԵ.

Ասացի՝ (միջին ձայնաւորքն,) զի ոչ է պարտ բառնալ կամ զառաջին կամ զվերջին գիրն բառից, թէ ձայնաւոր թէ բաղաձայն. Որ թէ և հոլովման նախդիր ունիցի, ոչ ինքն է բառնալի և ոչ նախդիրն. զի աւեր լինին այնպի գրուածք. այսպ և զվերջսն իմա. Եւ այն բառք՝ որոց բաղաձայնքն նոյն են ընդ այլում ըստ նոյն գրութեն՝ ոչ են գնելիք պատուով զի մի՛ շփոթեալք լինիցին. Որպ հատորն՝ թէ գրիցի՝ հոր, կարէ՛ իմանիլ և հատեր. այսպ և այլք. Նաև այն բառ որ ոչ է ծանօթ բազմաց՝ ոչ է բնաւ պատուագրելի. զի ինքն անյայտ գոլով՝ կրկին անյայտանայ և ոչ ճանաչի. Եւ թէպէտ բազում խրատք պիտոյանան պատուագրութեն՝ առ՚ի բարւոք գծագրել՝ ըստ զանազան բառից հանդիպման, սակայն զայս միայն ծանիր և բաւ է, թէ ՚ի հա

մառօտել քո զբառսն՝ այնպիսի
կերպիւ պարտիս գծագրել՝ որ
ծանօթ լիցի ընթերցման և կամ
իմացման։ Սա՞ կոչին պատիւ՝
թուի ինձ թէ նախնիքն զայս՝ վ̃
տէրունեկն անուանց միայն իցեն
սահմանեալ առ՚ի որոշել յայլ ան
ուանց. ոպ̃ թէ մեծարութ̃ն ան-
ուանցն այ̃։ Իսկ յետոյ սովորու-
բար եդին և յայլոց վերայ։
Սա՞ այս ոպ̃ ասացի՝ է՛ կարծիքն
մեր. և ո՛չ իբրու վճիռ թէ այսէ
ստուգապէս։ Սա՞ դոյ այլ միւս
նըշան համառօտիչ գրուածոյ՝
երկորեակ անուն. որ է այս "։
Սա՞ դնի սա՛ ՚ի տեղի միայն միոյ
ձայնաւորի։ Որպէս բ"րբառ.
կամ բարբ"առ. կամ բ"րբ"առ.
Սա՞ այս որ ՚ի ներքոյ երկորեա-
կաց ոչ են կցեալ բաղաձայնքն,
՚ի տպմանէնէ պատճառեալ. և ո՛չ
եթէ այնպ̃ բացատ պարտի դնիլ՝
Դնի այս նիշ" և ընծայլում

կիսատ գրուածոց՝ 'ի տեղի մնա-
ցելոցն. Երանեալ է այր որ":
Իսկ ուրեք 'ի բոլոր գրուածս մինչ
տեղին նեղ հանդիպի՝ դնեն 'ի
տեղի այբի զմի միայն ձիւղն նո-
րին որ է այս ։ որև ձիւղ այբ
է սուղակ կոչի. Իսկ ոչ պատիւն
ոչ բառնայ զառաջին և զվերջին
տառսն բառից, այսպ և սա ոչ դը-
նի 'ի նոյն տեղիս. այլ 'ի մէջն. ոպ
արգր, ատց, աղրիա, և այլ.
Առ նախնեօքն մերովք՝ էին և նը-
շանագիրք առ 'ի յոյժ համառօ-
տել գրուածսն. բայց այժմս
սակաւք ոմանք 'ի նոցանէ ածին
'ի գործ. որպէս Տ և այլ.
Բայց ասացեալս նշանագիրս՝ եր-
կուս տեսակս ունին. գրաձև,
այլաձև. Գրաձև այն է, որ 'ի գը-
րոցն մերոց ձևացեալ է. որպէս՝
Ծ, և այլ. Իսկ այլաձև այն է,
որոյ ձև այլ է 'ի գրոցն մերոց.
որպէս Տ, և այլ.

## Յաղագս Հեգակազմութեան ․
## որ է Միաւորութիւն Մասանց ։
### Գլուխ 33

Եւ ծանիր աստ, զի վանկն՝ է՛ որ ըստ ինքեան բառ է, և է՛ որ մասն է բառի․

Այն որ ըստ ինքեան բա՛ռ է, ըզ տառսն նորին դիւրա՟պս հեգեն ամենեքեան․ ո՛չ փեռեկտելով 'ի միմեանց․ բայց թէ կարի՛ համբակագոյն իցէ․ Իսկ զտառսն այնոցիկ որք մասունքն են բառից, բազումք փեռեկտեն անհմտութ՟ 'ի հեգելն կամ 'ի գրելն․ ո՟պ որ գէտ մսագործ զանդամսն յօշել ըստ տեղւոյն ո՛չ գիտելով․ այսինքն ո՛չ գիտելով բաժանել զբաղաձայնսն իւրաքանչիւր ձայնաւորի․ զի ուղղութ՟ և թիւրութ՟ հեգակազմութեան՝ ի բաժանումն բաղաձայնից կայանայ ։ Եւ այս է կանոն հեգակազմութեան, զի 'ի

 կաղ

կողմէն զվանկս բազմավանկ բա-
ռից, պարտիմք նայիլ թէ քանի՞
բաղաձայնք գտանին անդ ի մէջ
երկուց ձայնաւորացն.

Եթէ մի միայն գտանի, պարտիմք
կցել զնա ը՟ հետագայ ձայնաւո-
րին և ոչ ը՟ առաջնոյն. Որգ՟ն, ա-
նուն, բարի, և այլ։ Իսկ թէ եր-
կուք կամ այլ աւելիք լինիցին,
պարտիմք նոյնպ՟ զմինն տալ հե-
տագայ ձայնաւորին՝ և զայլն բա-
ղադրել ընդ առաջնոյն. ո՟պ, դար-
ձիր, դարձ ցուք, և այլ.

Իսկ այսպս յամենայնում հեգի
մի միայն բաղաձայն տալի է յետին
ձայնաւորին, որպէս ցուցաւ.
և ոչ սկսանիլ զվանկ թարց բա-
ղաձայնի. Եթէ ոչ՝ զի ոչ իցէ անդ
բաղաձայն. ո՟պ որակ, էակ, և՟.

Բայց զմէջն բարդեալ բառից
որով լինի կցումն՝ ոչ է պարտ
հեգել ըստ ասացելոյ խրատուս.
զի մի՛ տառ ինչ ՚ի միոյ բառէ առ-

միւսն անցանիցէ։ Այլ թէ հեգել՝ մարդաս պան. հոգեւս պան. եօթ նարփեան։ Ո՛ւ ի որպէս զտառս միոյ վանկի ո՛չ է պարտ կտրատել և տալ միւսումն, այսպէս և՛ի մէջ բառիցն է նկատելի։ Ուստի պարտ է 'ի հեգելն՝ բաժանել մարդա սպան, և յարտաբերելն հնչել՝ մարդասպան։ Նոյնպէս և այլքն։

Նոյնպէս և՛ի մէջ երկձայն վանկից զայսոսիկ գրուխս, եա, եօ, իւ, այ, ոյ, ո՛չ է պարտ բաժանել 'ի միմեանց։ զի մինչ բաժանին այսպիսիքս, անկանի վանկն յերկձայնութէ։ Սերջաւոր երկձայնքս այ, ոյ, յորժամ ձայնաւորի հանդիպեալ իմիասին հնչիցեն, երկձայնութիւն որ է 'ի վերջնումն առաջին վանկին, երբեմն 'ի սկզբան յետին ձայնաւորին. վասն զի այնպ վայելէ արտաբերել։ Այլ ահա, կայանք՝ արտաբերի ո՛չ կայ եանք. գոյակ՝ ո՛չ գո եակ. կայուն՝ ո՛չ



կա

կախուն․ գոյանի՝ ոպ̃ գոյութիւն․
Ո՛ր յապախտքս ուրեմն ՚ի հեգիլն
այլայլ ընթերն և՚ի հնչելն այլայլ․
Ի հեգիլն՝ կայանք, և՚ի հնչելն՝
կանանք․ այսպ̃ և միւսքն․
Սոցին նման և սոքին, աւ, եւ,
իւ և այլն՝ յորժամ ձայնաւորի
հանդիպիցին, այլապէս հեգին
և այլապէս հնչեն․ Ոպ̃ զաւակ՝
հեգի զաւ ակ, և հնչէ զա՛ւակ․
Ո յսպ̃ թեւատ, հիւանդ, և այլ․
Իւ՛ ոչ է պարտ հեգել զա՛ւակ,
թե՛ւատ, հի՛ւանդ․ զի հիւնին
ոչ է պատկան սկզբնադիրը լինիլ
տառից ոպ̃ ասցի յեր՛՛ 488։
Ն՛ոյնանք այբի՛ն եզերեալք ա-
ւանց յիոյ՝ մինչ հանդիպին այլում
տառի, յիով կցին ը̅ նա̅ և լինին
երկձայն․ Սրգոն, նա, նայն․ զնո-
րայն․ զասաւայն․ զեւային, և այլ․
Իսկ այս այն է, որ յերեսն 525։
ըստ դրման յի ասացաւ․
Յորժամ իմէջ երկուց վանկից

բաղաձայն ոչ գտանի, ի մէջ նոյին երկձայն ձնչուածն մտանէ. ոչ գըրմամբ, այլ՝ ձնչմամբ. Որպէս էակ, արտաբերի որպէս եակ, և ոչ որպէս էակ. Էի, որպէս էյի. և ոչ էի. Ասիա, որպէս ասիեա. և ոչ ասիա. Ասիոյ, որպէս ասիեոյ. և ոչ ասիոյ.

ըստ այսմ և այլք այսպիսիք:

Եւ ծանիր աստ, զի գիտելն ըզկանոն հեգակազմութեն՝ պիտոյանայ մանաւանդ 'ի գրագարձուած գրուածոց 'ի տողէ 'ի տող: Զի 'ի գրելն մեր ինչ՝ թէ մնացեալ ծայրիկն տողին չկարիցէ տանիլ զբոլոր բառն բազմավանկ, պարտիմք բաժանել զվանկան նորին ըստ ասացեալ խրատուդ:

Եւ տեսանել՝ թէ զմին վանկն կարէ տանիլ տեղին՝ դնել զնա անդ, և զմնացեալսն 'ի միւս տողն անցուցանել: Որգոն, ղազարոս բարեկամ մեր ննջեաց:

Եւ թէ զերկուսն կարէ տանիլ



տե

տեղին, նոյնպ̃ պարտիմք գրել զեր
կուսն անդ, և զայլն 'ի միւսումն
սկսանիլ: Ո՛րգոն, ղազարոս բարե
կամ մեր ննջեաց: Նոյնպ̃ և այլն:
Ա՛յլ ոչ է պարտ ամենևին զտառսն
վանկին փեռեկտել 'ի միմեանց.
այսինքն զմի բաժինն գրել աստ
'ի ծայրն տողին, և զմնացեալսն
'ի միւս տողն անցուցանել: զի
տառ իմն միոյ վանկին ուր և դը
նիցի, և այլքն նորին անդ 'ի նոյն
տեղւոջ պարտին գտանիլ: զի որպ̃
միոյ վանկին մի է հեղումն, այսպ̃
և տեղին պարտի լինիլ մի:

Ս՛ արդ ուրեմն որ ոչ գիտիցէ
բաժանել ըստ արհեստին որպ̃
ասացաք՝ զմասունս բազմավանկ
բառից, բարւոք գրադարձութի̃
ոչ կարէ առնել: Որպիսեաց թէ
և գտանիցին ինչ ըստ արհեստի,
որպէս և բանք շարադրանաց,
ոչ են գովելիք. զի ոչ զարհեստն
դիտելով առնեն զայն, այլ ըստ

հանդիպման, կմ ճանաչմամբ իմն
առանց արհեստի։ Այն այսու է
յայտ, զի ըստ հարցման ուրուք
առստուգել ոչ կարեն։ Ո. ժլոր
տոհմօղն է իմաստից՝ ցցէ՛ զԹե–

րութիւնս մեր ամէն։

Իսկ արդ՝ դիմելով անդրէն 'ի
յոճն մեր՝ ծանիր ևս, զի վանկքն
որք՝ ը՛ ձնչեն, ոչ յամենայնում
հարկաւորին ունել դրմամբ ըղ–
տառն եր. այլ զօրութ՟բ ունիլ
ցուցանին։ զի այս տառ՝ ը, 'ի սկըզ–
բան ձայնից ոչ սկսանողաց սէին
կամ զային, կամ և շային, դնի և
արտաբերի ը այլ ձայնաւորացն։
ո՛պ՝ ընդ. ըմբիշ. ըղձալի, և այլ։
Իսկ իմէջ ամենայն ձայնից՝ և 'ի
սկզբան սէին, զային, կամ շային
սկսանողաց՝ ոչ դնի ներգործութ՟բ.
այլ՝ զօրութեամբ իմացեալ լինի
ըստ սովորութեան նախնեաց.
բայց արտաբերի որպէս եդեալ։
Օ. որօրինակ՝ գ՟ալ, արտաբերի

 որպէս

որպէս Գըմաւ· Փոքրն, ով փոքրն ·
Մոփփին, ով բոփոփին։ Օ գաստ, ով
ընգաստ ։ Շ աստ, ով ընշաստ ։

Եւ զայսոսիկ թողց յիշման ետ՛
ոչ է պարտ հեգել. զի թէպէտ
'ի գրելն ոչ գնի, բայց 'ի հեգելն
պարտի գնիլ, այսինքն յիշիլ ։
քանզի առանց ձայնաւորի վանկ
հեգել անհնարութիւն է։ որպէս և
յերեան 472 եղև յիշեցեալ ·
Ո՛ր կերպ և յերեան 499 ինք
ընչմար լինչ եղաք սահմանեալ։

Իսկ 'ի գրելն մինչ հասանիմք 'ի
ծայր տողին՝ ուր զօրութեամբ
եթէ՛ ծնչելի վանկ հատել 'ի բա
ռէ՛ հարկաւորիցի գնել միայնակ,
զօրութիւ ծնչելի տառս՝ ը, անդ
ներգործութեամբ պարտի գնել
զի ընթեռնլի լինիցի։ Որգոն, վեր
կիչն մեր յիսուս ամենակարօղ դը
նաց առ հայր և առաջի զհոգին ըս
փոփինչ տրտմեցելոցն յաւիտեանս։
Ասացի՝ (զի ընթեռնլի լինիցի,)

զի թէ փաղառուն լցէ վանկն,
կարէ թէպէտ ընթեռնանիլ ա-
ռանց եթի. ոպ՟ կր. բայց թէ լցէ
միաբաղաձայն՝ թարց եթի, ոչ ըն-
թեռնանի ը՟ ինքեան. լբրու՝ գ-
նայ: որ է անոճ և անտեղի: և վս՟
վանկանայոց եղին այսքան:

Արդ՝ զկնի հեդաւկազմութեան՝
դարձեալ զվանկաց գիտելի է, զի
Վանկս՝ ոյ, մինչ ըստ ինքեան
լինի երկձայն, արտաբերի մէջն
ըստ իւրում յատուկ ձայնին՝ ո:
Ոպ՟ խոյ, որ է անուն արու ոչխա-
րի և քաղաքի: Նաև յորժամ
ձայնաւորի հանդիպի՝ զնոյն հըն-
չումն ունի. ոպ՟ խոյոց, դղից, և"
Իսկ յորժամ բաղաձայնի հանդի-
պիցի՝ արտաբերի որպէս ու.
Որգոռ, խոյս, լոյս, բոյն, գոյն,
թոյն, դժոյդ, և այլ.

Նյսպ՟ իւ, յորժամ երկձայնու-
նայ՝ արտաբերի հիւծն իբրև՝ ու:
սակայն ոչ պարզ՝ ու, այլ սկըզբ-

նաՙոր երկձայն ոչ եու. Որգոն
իւր, Թիւր, եղջիւր, և այլ.
Սանկս՝ ով, ՚ի սակաւ ուրեք
հնչէ ոչ օ. իսկ ՚ի բազում ուրեք
արտաքերի մերձ հնչմանս՝ օվ.
Ոչ ծով, ով ծով. ջրով, Թղթով,
կնքով, և այլ. Նաՙ հնչումս այս՝
է՛ ի մէջ հնչմանցս՝ ո, օ: Նկատեա՛
փորձառութե՛ և յայտ է.
Սանկս՝ ու, երբեմն լինի պարզ
ձայնաւոր. որպէս Թուր, սուր, ա-
մուր, և՛՛. Երբեմն լինի մի պարզ
բաղաձայն, վ. որպէս շինուած,
արուեստ. որք արտաքերին որպէս
շինված, արվեստ. Երբեմն լինի
ըվ. որպէս նուաստ, շուայտ. որք
հնչեն ոչ նըվաստ, շըվայտ.
Յորժամ լինի՝ ըվ, հեգի՝ ու. և
հնչէ՝ ըվ. զի հեգի՝ շինուած,
և հնչէ շինված. Հեգի նուաստ
և հնչէ նըվաստ: Նաՙ Թէպէտ ո-
մանք գրեն շինաՙծ, նաՙստ,
բայց ո՛չէ պատկան. Զի ո՛չէ

պարտ հիւնին բաղաձայնանալ ըղ
կնի բաղաձայնի, կամ լինիլ սկըզբ
նագիր տառից որպ 'ի վերոյսն ա-
սացաք։ Իսկ գտեցլն այնպ յայսմիկ
տպեցման, վն հարկին պահանջելոյ
եդեալ է. զոր ոչ կարեն գիտել
անծանօթքն տպագրարանի։

Մանկս՝ օղ, ընդունելութեան՝
ուր ոչ ունիցի զտառ ինչ զկնի,
կամ թէ ունիցի բաղաձայն՝ օղ
դնիլ պարտի։ որպ ծնօղ. ծնօղն.
ծնօղք. զծնօղսն։ Իսկ 'ի հանդի
պիլն ձայնաւորի, ող դնիլ կանո-
նեցեալ է. որպ ծնողի. 'ի ծնողէ.
ծնողաց. ծնողօք. ծնողուհի, եւայլն.

## Յաղագս Ստուգաբանութեան։
## Որ է Ստուգութիւն Բառի.

### Գլուխ 34

Ստուգաբանութիւն է՝ գիտել զզանազան զօրութիս այն-
պիսի բառից՝ որք այլ և այլ նշա-
նակութիւնս ունիցին.

Եւ ունողք այլ և այլ նշանակութեանց՝ են նոյն հոմանունքն ։ Ոպ̃ այր՝ նշանակէ զմարդն և զըղմաղարայն։ Մայր՝ նշանակէ զծընօղն և զծառ։ Ակն՝ է տեսողականն, մատանոյ ակն, և ջրոյ ակն։ որք մտերմք են։ Սոյն և՝ ակն ունիլ. որ է ուժէտ ունիլ։ Որոց պէս ՚ի մեր լեզուս սակաւք գոն։

Ըստ այսց են և համաբայքն . որք երկուց բայից նշանակութիւն ունին ։ Ոպ̃ կոչել՝ է՛ անուանել, և հրաւիրել ։ Ըստ առաջնոյն առնու հոլով ոպ̃ յերեսն 390 ։

Ըստ երկրորդին որպէս 393 ։ Ըզգանիլ՝ նշանակէ զօթևանիլն և զզգեցումն ։ տես յերեսն 285 ։ Այնպիսիք են, պահել. ձգել. մեկնել. կարել. վարիլ, և այլ։

Երկրորդ՝ այլ և այլ նշանակութիւն ունօղք՝ են հասարակ բայքն՝ և այնք որք ըստ հնարկաց վարին. ունելով մի և նոյն ձայնիւ վնշածն.

նակու̄թ ներգործականի և կրաւո րականի․ զորոց պատմի յերեսն 49․96․97․112․263․412, և այլ։

Ս[illegible]՝ այլ և այլ նշանակութիւ ունողք՝ են այսմ̃իկ․ ջրաբեր․ մեծագործ․ մշտալուր․ անտես․ անգործ․ և այլ։ Ջ̃րաբեր՝ է՛ այն որ բերէ՛ զջուրն․ և այն՝ որ ՚ի ջրոյ բերեալ լինի․

Մեծագործ՝ է՛ այն որ զմեծ ամեծս գործէ՛, և այն՝ որ զինքն մեծ ոմն գործեալ է․ Մշտալուր, է՛ այն որ միշտ լսէ․ և այն, որ միշտ լսի․ Անտես, է այն որ ոչ տեսանի․ բայց կարէ՛ և նշանակիլ այն՝ որ ոչ տեսանէ․ Այսպիսիք ամենեքեան՝ են ըստ ներգործական և կրաւո րական նշանակութեան․

Անգործ, է՛ այն որ ոչ գործէ թէ պէտ ունի զգործ․ է և այն որ ոչ ունի զգործ․ Այս երկուքս՝ են ըստ ներգործական նշանակութ̃ն․ Նշանակին երկուքեա ը̄ կրաւո

րական նշանակութեան․ ա̃ այն՝
որ չի՛ գործըլվիր․ և երկու այն՝
որ տակաւին չէ՛ գործըլվեր․
Նոյնպէս իմա և զայլսն։
Զուգորդք՝ այլ և այլ նշանակութիւն
ունողք՝ են համաբառքն․
Որպ̃ այսի, է՛ անուն ուղղական․ և
երրորդ դէմն բայիս՝ այսմ։
(Գան) գան գանի գանիւ‖ գա
նիմ գանիս գանի՛․ և ք̃զումք են
այսպիսիք․ Ըստ այսց են և եզա
կան հրամայականք ոմանք կողմ
նական բայից․ որպէս լուր՝ լսեմ
լուայ լո՛ւր‖ լուր լրոյ զլուր։
Ըսկի (եզական հրամայականք,)
զի ձայնս՝ լուր, մինչ ըստ բային լի
նի յոգնական՝ լուարուք, բայց է
միայն և ո՛չ անուն․ Իսկ ըստ ան
ուան՝ լուր, անուն է միայն և ո՛չ
բայ․ Ըստ այսմ են՝ Բեր, մի՛ բե
րեր‖ բեր բերոյ․ Տես, մի՛ տե
սաներ‖ տես տեսոյ, և այլ․
(Օրհնեա) թէպէտ է՛ բայ՝ օրհնեմք

օրհնէք օրհնեն, Սակայն նշանա_
կի ևս օրհնութի։ Ըստորում և
ասի՝ խաղօրհնէք, Ջրօրհնէք։

Հերու ՚ի սոյնում ա̂նուր դուռն
բացէքիս՝ եղև հիմնարկէքն ե_
կեղեցւոյս։ Բայց՝ Ջրօրհնէք,
դռնբացէք, վ̄ս բարձման ձայն_
ա̂նորին անո̂ւանցս՝ Ջուր, դուռն,
անկանին ՚ի բայութէ. և անուն
միայն նշանակին. Իսկ՝ խաղօր_
հնէք, հիմնարկէք, կարեն բայա_
նալ և անո̂ւանանալ։ Մ՛րգս,
Յորժամ խաղօրհնէք, լինի խաղօր
հնէք։ Որի՛ք եղբարք, հիմնար_
կէք եկեղեցւոյս. կատարելով ըզ
հիմնարկէքն. Նա̂ տես, զի ՚ի
հայցականս սոցին և յայլն՝ վեր_
ջին տառս՝ .ք, ո՛չ փոխարկի ՚ի ս.
որպէս այլոց յոգնականաց և
յոգնակերպից.

Ս(իրելոյ) է սեռ̃կն ը̃ունելուհս՝
սիրեալ, և աներև ոյթ բայիս՝ սի
րել։ Որոց երկուցն ևս սեռ̃կն

լինի՛ սիրելոյ: Փրկիչդ, է վերջին կերպն ընդունելութեանց, փրկող. փրկիչ. փրկեալ. փրկելի. փրկելոյ: Լինի եւ սեռական. փըրկեալք, փրկելոյ.

Այսր, այդր, են սեռականք յոգնոյն՝ այս, այդ. Այն եւ տեղական մակբայք. որք եւ յերեսն 166 յիշեցան.

Ամն, է՛ անուն ընդհանրական. ամէն մարդ բանական է.

Ա՛ եւ մակբայ հաստատական. ամէն ասեմ ձեզ: Լինի եւ միջարկութիւն մինչ սրտառուչ արտաբերի, ամէն եղիցի՛ եղիցի.

Որ եւ եղիցի եղիցի՝ միջարկութիւն լինի աստ. վա՜ կրկնեալ եւ սրտամուտ ճնչելոյն. տես յեր՛՛ 302.

Այսպէս եւ՝ Թող, է բայ հրամայական մինչ այսպէս արտաբերի, թող զգիրքդ աստ. Մեք պահեմք զդա. Այն լինի միջարկութիւն յայնժամ, մինչ ոք չլսելի ինչ

պատմիցէ․ և զզուեալ ոք ասիցէ
սրտառու ճնշմամբ՝ Թո՛ղ։

Ըստ այսոց իմա և զայնս՝ որք ուրեք նախդիրք են և ուրեք մակբայք․ կամ ուրեք մակբայք և ուրեք շաղկապք․ կամ ուրեք անուն և ուրեք մակբայ, և այլն․ Այլ բառք բազմանշանք կարի բազումք են․ որոց այնք հմտանան որք զկրթիլն սիրեն․ Ընթերցի՛ր և զերեսն 507 մինչև ՚ի 511․

## Յաղագս Կիրառութեան

### Դասք․ Գլուխ 35

Կիրառութիւն բանից է շարամանութիւն մասանց բանին ընդ իրեարս ըստ կանոնի քերթողացն․ Որ ունի երկուս գլխաւոր տեսակս, համաձայնութիւն և հոլովառութիւն․ զորս ուսար ՚ի յերկրորդում հատորիս․ Բայց սակայն որք կամիցին կրթել զինքեանս ՚ի շարադրութիւն պարտին ջանալ և կրթիլ՝ զի ըղ-

 դի

դիտաւորութիւն իմն այլ և այլ շա-
րադրութեամբ կերպաւորիցեն.
որք զանազան շարադրութեամբ
զնոյն իմացումն ունիցին.

Ո՜ եղիցի մեզ օրինակ տառացեղոյս՝ չիա-
տունս այս. Երանեալ է այր, որ ոչ
գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց.
որ 'ի խորհրդս ամբրշտաց ոչ գնաց.
որ ոչ գնաց 'ի յամբշտաց խորհրդսն.
որ յամբշտաց խորհրդսն ոչ գնաց.
որ ոչ կամեցաւ գնալ 'ի խորհդս ամբշտաց.
որ 'ի խոր" ամբ" ոչ կամե" գնալ.
որ յամբ" խոր" գնալ ոչ կամեցաւ.
որ ոչ կամե" 'ի խոր" ամբ" գնալ.
որ գնալ 'ի խոր" ամբ" ոչ կամե".
որ յամբ" խոր" ոչ կամեցաւ գնալ.
որ ոչ եղև խորհրդակից ամբշտաց.
որ ամբրշտաց ոչ խորհրդակցեցաւ.
որ խորհրդակցիլ ամբ" ոչ հաճեցաւ.
որ զխորհրդս ամբ" ոչ ընկալաւ.
որ զամբշտացն ոչ ընկալաւ զխորհդս.
որ ոչ գնաց խորհրդակցիլ ամբրշտաց.

որ 'ի խհդակցուն ամբ'' ոչ գնաց·
որում խհդն ամբ'' ոչ հաճոյացի·
որում չեղև գնիլ ընաւ 'ի խոր' ամ·
որում գարշելի է ամբշտացն խոր''·
Նա՛ այլ բզւմ կարէ լինիլ այսպ
այլ և այլ ձևով զնոյն մի դիտա-
որութիւն ցուցանել· Կամ զ
բառսն յետ և յառաջ դասելով·
կամ դրմամբ այլ ևս բառից· կամ
փոխարկմամբ բառից և կերպից·
և կամ թէ իսկ բառնալով զբառ
ինչ· Պահելով սակայն զնոյն
իմացումն դիտաւորութե·
Որպէս այսպէս, Երանեալ է այր,
որ ոչ գնաց երբէք 'ի չար խոր-
հուրդս ամբարիշտ արանց·
Փոխարկմամբ այսպէս, Երանի առն,
որում չեղև ընաւ երթալ 'ի ժո
ղովս չարասիրաց· Իսկ բարձմամբ,
յորժամ կերպս (ոչ գնաց երբէք
'ի չար խոր'' ամբարիշտ արանց,)
առն, որ ոչ գնաց 'ի խոր'' ամբշտց·
Իսկ զբառսն յետ և յառաջ դա-

 սե

սելով՝ եղաւ ահա իմերոյ զանա-
զան կերպիւ ։ Այսպէս իմա և
զայլոց բանից զանազան դրուեց
և պէսպէս կերպից իմ̅ նոյն մի
դիտաւորութեան ։

Սա աստ գիտելի է, զի որպէս
այլ է շինել զնաւն, որ է նաւա-
րարութիւն. և այլ է վարելն զնաւ,
որ է նաւավարութիւն. և երկոքեանն
ևս են կիրառութիւնք նաւին ։
Այսպէս այլ է կիրառութիւն բա-
նին ըստ շարադրելոյ՝ որ մինչև
ցայժմ ասացաւ ։ և այլ է կիրա-
ռութիւն նորին ըստ վերծանելոյ՝
որ դեռևս ասելի է ։

## Յաղագս Վերծանութեան ։

## Գլուխ 36

Վերծանութիւն է՝ անսխալ
ընթերցումն արհեստա-
ւոր շարադրածաց ։
Այսինքն՝ այնպէս ընթեռնուլ
ըղ շարադրածսն քերթողաց, որ

յարտաքերելն զնա՝ սխալումն ինչ
ոչ լինիցի։ Ո՞ր ասի վերծանուն.
զի որ բարուոք ընթեռնու զշարա
գրածն, վեր առնու և ծանի՛,
այսինքն իմանայ և ճանաչէ ըզ
միտն բանին։ Ո՞ր որովհետև բանն
է՝ ևս բառ և վանկ և տառ, յը
րոց է ինքն բաղկացեալ, լինի սխա
լումն յարտաքերութեան բանին՝
կամ 'ի տառն և 'ի բառն, կամ 'ի
վանկն, և կամ 'ի բանն։

Լինի սխալումն արտաքերութե
'ի տառն և 'ի բառն, յորժամ ըզ
Ջուրն ճուր ասես, և զբանտն
պանտ ‖ զգետն գէտ ասես, կամ
զգէտն գետ ‖ զինչիւնն ինչի՛ն
ասես, և զբանի՛ն բանիւն։‖
Կմ թէ զտառսն աւելի և պակս ա
սելով՝ հանցես զբառն 'ի կէրպէն։
Լինի սխալումն 'ի վանկն, յորժամ
զտառ ինչ 'ի վանկէն, կմ զվանկն
'ի բառէն կրճատել լինիցի. Թարգ
մանի և շուտափոյթ ասելով.

Որպ՜ բազումք առ՚ի կատարել
զթիւն միայն, որպ՜ հարկ ինչ բըռ
նութ՜ եդեալ ՚ի վերայ, այնպէս
շուտափոյթ ասեն զսաղմոսն ս՜բ,
մինչ զի ո՛չ միայն նշանակութ՜իք
բառիցն անյայտանան, այլ նաև
գրեթէ՝ իբրև անյօդ արտահընչ
մունք զօդն բաբախեն։ Ըստ ո
րում և արբեալք և կամ քնով
ծանրացեալք՝ յերեկոյին ժամուն
զննջելոյն պաշտօն որպ՜ թէ ասելով
իբրու կատարեն։ Զոր կերպ՝
շատ լաւ լինէր թէ բնաւ ո՛չ ա
սէին. քան թէ իբր զպատարագն
նախաշաւիղ սպանչին՝ ջուղիղ սըր
տին անընդունակ ընծայեն ան
կարօտին. յորոց գատիլց արժա
նեաց՝ մի և գատօղս է.

Ե՛ւ արդ՝ ասացեալ սխալմունքդ
տառից վանկից և բառից՝ թպ՜տ
են և բանից. ըստ որում բանն է
և բառ և վանկ և տառ։ Սակայն
յատուկ սխալումն առ բանն այն է

յորժամ ոք թարց արհեստի առո-
գանութե̃ և տրոհութե̃ ընթեռնը-
լով՝ զարհեստաւոր շարագրածն
խանգարէ արտաբերելոյն․ իբրու-
եղծանելով զիմացումն գրեալ
բանին անդ․ Ո՛ ի որպ̃ ՚ի ձեռն
անհմուտ նաւավարին՝ անվայել-
չանայ կազմեցեալն ՚ի հմտագոյն
նաւարարէն․ Նոյնպ̃ և ՚ի ձեռն
անհմուտ ընթերցողին՝ աւեր է-
րևի արհեստաւոր շարագրածն
քերթողին․ Նա՞ ոչ̃ այն որ խոր
տակէ զնաւն՝ ոչ է նաւավար,
այլ՝ նաւաւեր․ Նոյնպէս անհը-
մուտ ընթերցողն ոչ է վերծանող՝
այլ եղծանող կամ կործանող․
Որդ ուրեմն յետ գիտելոյ զշա-
րադրութ̃իս մասանց բանին ը̃ ար-
հեստին, հարկաւոր է գիտել և
զայնս՝ թարց որոց տգեղանայ բա-
նաք գրուածն քերթողին․ որք են
Առոգանութիւն և Տրոհութիւն․
զորոց այժմ ասելի է․

## Յաղագս Առոգանութեան։

### Գլուխ 37

Առոգանութիւնն է կառավարող արտաբերութեան․ որով կարէ՛ ասել՝ համաստացուածոյ․

Ասացաւ՝ կառավարող․ զի Թարց առոգանութեան ընթերցուածն, է՛ ոչ ձէ՛ սանձարձակ առանց կառավարողի․ կամ ոչ նաւ ինքնաշրջիկ առանց հմուտ ղեկավարի ոչ նշմարեցեալ խիբերոյ․ Որպէս և զհամն իմա․ Նշանք առոգանութեց՝ են չորք․ Ոլորակ․ Ժամանակ․ Հագագ․ Կշանակ․

Ոլորակն է երեք․ շեշտ՛․ բութ՝․ պարոյկ՞․ Ժամանակն է երկու․ երկար․ սուղ․ Հագագն է ևս երկու․ թաւ․ սոսկ․ Կշանակն է երեք․ մակակէտ՝․ ենթամնայ ‿․ ընդգծաձև (   ) որև միջառութեան կամ պարփակութեան ասի․

Նշ՛ ահա զնշանադրութեան իւրա‿

քանզի բուրոյ եդեալ զնի անճանցն բաց ՚ի սոսկեն ։ զի այն ոչ գոյր ձուլեցեալ ընդ այլոց կապարեայց տպագրարանի տպեցման այսր գրգուկի ։ Իսկ է սոսկն գիծ խմն չեշտանշան ։ առեալ ՚ի գլուխն բութ ։ զոր կերպ ՚ի յայլոց գծիցն կամ ՚ի տպեալսն տեսցես։

Յաղագս Ստորակաց ։

Շեշտն որ է ասել սուր, է նշան զվանկն սուր հնչելոյ ։ այսինքն ՚ի վեր ստատելոյ։ որգոն, զմարդ՝ արի՛ եկ արտաքս ։ ով մարդ՝ գրեա՛ զոր տեսանեսդ։

Ս̂ ուրեք էական բայն ը ան-ուան որ է բան, ՚ի բայէ՛ կամ յանուանէ՛ սղեալ որոշիւ ։ որգոն, այն որ վարժ է գիտունն՝ վարժէ՛ և զայլս ։ Ն̂ որ միշտ ՚ի վարժ-ման է, գիտէ՛ նա՝ թէ որչափ ինչ շահի ոք ՚ի վարժմանէ՛ ։

Բութն՝ որ է ասել ծանր կամ գուլ, է՛ նշան զվանկն ցած հրն

չելոյ․ այսինքն 'ի վայր հարթելոյ։
որպէս ղա՛ղարէ՝։ ո՛վ մարդ՝։
Սակայն կիրառութիւն սորին 'ի սոյն_
պիսի տեղիս՝ աղօտացեա՛լ է այժմ
'ի մէնջ․ Ուստի այժմ առ մեզ
ո՛չ այնքան 'ի գործ ածի բութն
վասն զվանկն ցած ձայնելոյ 'ի մէջ
թիւ՛ ասացուածոց, որքան առ 'ի
տրոհել զբան՝ ը̃ կիտիցն եդեալ
լինի․ զոր ը̃ նմ̃ տեսցես անդ․
Պարոյկն՞ որ է ասել ելև էջ,
է՛ նշան զվանկն 'ի սկզբան խվեր
սաստելոյ, 'ի վախճանի խվայր հար
թելոյ․ ոպ̃ 'ի հարցական բանս է
տեսանել․ զի՞նչ․ ընդէ՞ր․ ո՞ւր․
քանի՞։ Օ ի այսպիսի ձայնք 'ի
միում ձայնման ելև էջս առնեն․
այսինքն խվեր սաստիւն և 'ի վայր
հարթիւն ըստ ալեացն 'ի վէմ հա_
րելոյ։ Որպէս ահա պարոյկն՞ է՛
շեշտ և բութ․ զի 'ի ներքին ծայ_
րէ՛ անտի մինչև ցկէսն է՛ շեշտ՛․
և անտի մինչև ցկատարն բութ՝․

Պարոյկն և շեշտն զբանս զայս-
պիսիս՝ դու նստար, այսօր տնտնք,
'ի չորս ձնչմունս փոխակերպեն.
Որգոն, դո՜ւ նստար. դու նստա՜ր.
դո՛ւ նստար. դու նստա՛ր։
Նոյն այսոքիկ չորեքեան կերպքս՝
չորս այլ և այլ իմացմունս ունին։
Յառաջնումն՝ զա՛նձն հարցանէ
նստողին. նա՜ էր թէ այլ ոք.
Յերկրորդումն՝ զնստիլն հարցանէ
և ո՛չ զանձն. Յերրորդումն՝ զա՛նձն
ստուգէ նստողին թէ նա՛ էր.
Իսկ 'ի չորրորդումն՝ զնստի՛լն ստուգէ.
իբրու ասելով, գիտեմ որ նստա՛ր։
Պարոյկս այս՜ 'ի բազում ուրեք
զստորասականն բացասականն շինէ,
և զբացասականն ստորասական.
Ստորասականն բացասականն որգոն,
ասացի՞ քեզ թէ մի գնար։ Որ է
ասել, ո՛չ ասացի. Իսկ բացասա-
կանն ստորասականն որպէս, ո՞չ ասացի
քեզ թէ մի՛ տար։ որ է ասել, ասացի։
Նոյնպէս և զայլսն իմա.



Որդ

Երորդ՝ Երիցս այսոցիկ՝ ՚Բ ոլորակ
ասացաւ. որ է ասել ել և էջ.
զի շեշտն ելանէ և բութն իջա-
նէ՝. և պարոյկն է՝ ՚ի նոցանէ՝ և
ոչ այլ. զի ՚ի նոյն ՚ի միում վանկի
ելանէ և իջանէ ոպ և ցուցան:
Բայց տես, զի որովհետև ոլո-
րակն՝ է՝ ասել ել և էջ, շեշտն
ըստ ինքեան և բութն ու ինքեան
ոչ կարեն կոչիլ ոլորակ. զի մինն
ելանէ միայն և միւսն իջանէ միայն
Բայց կոչին ոլորակ այնու, զի
մասունք են ոլորակին. զի մինն
ելանելով և միւսն իջանելով՝ եր
կուքն մի ոլորակ լինին ոպ և է՝
իսկ պարոյկս. որ զերկուսն եւս ու-
նելով՝ կարէ՝ ըստ ինքեան կոչիլ
ոլորակ ոպ և ձևն վկայէ. վոյ պա
րոյկն՝ պարոյկ կոչի կամ ոլորակ:

Յաղագս Նմանաձայնաց.

Երկարն՛ է՝ նշան զվանկն եր-
կար հնչելոյ. որպ ՚ի միջարկու-
թեան, ո՛՝ թէ որքան ներբես տր.

ա՜ա՛ղ՝ զի ո՛չ լու՛այ քեզ։ Եղու՜կ՝
Թէ զէ՞նչ լինիցիմ։

Սուղն՞ որ է ասել կարճ, կամ
շուտանց, 'ի տաղական բանսն՝
գնի իվր թուականելեաց՝ վասն
միաչափ բերելոյ զտողսն․ Որպ
ես, Ծ իմ գործոյս զոր գրեցի․
չեմ այլ մընար Թէ՞ այդ ինձ լինի․
Յորում Բէ՞այք, արտաքերի որպ
Թայդ․ զի երկու տողքն միաչափ
գայցեն ութ ութ վանկ․

Լ՜ երկրդբին սղքա՞ ամանակ
ասացան․ զի այս յայտ է ամենուն,
որ երկար և կարճ ելումն շնչոյ՝
ժամանակաւ ճանաչի․ զի յերկար
ելումն շնչոյ՝ երկար ժամանակ
ներմուծանի, և՛ 'ի կարճն կարճ։

Հոգագն Թուաւ և Այուլ․

Թուա՜ն՞ է՝ նշան թա՜ բառա-
ձայնից․ առ 'ի ցուցանել զթանձ
րութի նոցին։ որպ Թ՜․ Լ՜․ Խ՜․
Սակայն ոչ գոյ այժմ այս սովո
րութիւն․ այլ գնի միայն 'ի վր
Ժէ․  բա

բաղաձայն հիւնի առ 'ի ցուցա-
նել թէ՝ է՛ հագա՛գ և ո՛չ հնչումն։
ո՛պ սրտի՛ն. բանի՛ն. դանի՛ն, և այլ։
Մա՛ցի՝ (է՛ հագագ և ոչ հնչումն։)
զի թէպէտ ելուզման թէ ձայն-
աւորաց թէ բաղաձայնից՝ կարէ՛
ասիլ հնչումն։ Սակայն առ 'ի զանա-
զանել 'ի միմեանց զերկուս հընչ
մունսն՝ ելուզման ձայնաւորաց
ասի հնչումն, և բաղաձայնից հա-
գագ. զի 'ի հնչման ձայնաւորացն
հագագ ո՛չ երևի։ Իսկ թէ՞ զինչ է
հագագ, նկատեա՛ զհնչումն բաղա-
ձայնին և ա՛յն է. Իսկ տես այսու,
զի ձայնաւորքս՝ ե, ի, յորժամ լի-
նին՝ եա, եօ, իւ, իբր զհագագ
հնչեն և ո՛չ իբր զպարզ ձայնաւոր.
զի հնչումն ընդմիջական, հագագ-
յաւէտ ասի քան պարզ ձայնաւոր։
Ուստի է նշան նուրբ բղձյնից.
բայց և այն այժմ 'ի գործ ածի-
ո՛չ ունի. և սոյն այս է պատճառ
ո՛չ գոլոյն նր՟ ասա 'ի կապարեայս.

## Յաղագս Կշռանչայ.

Մ՛ակակէտն որ է ասել վերնակէտ, ի վերքան զտողն դնի յետոյս նախդիր ինոյ. առ՚ինըշանակել թէ տառս այս՝ ի, ոչ է բնական տառ բառին, այլ եկամուտ. որ և սակաւ ինչ՝ միջոցաւ դնի: ո͞պ ՚ի սիրտ. ՚ի սրտէ. և այլ.

Զայս՚ ոմանք ի վ͞ր ա͞մ միատառ նախդրաց՝ և յօդից եզատառից դնել կանոնեն. առ՚ի ցուցանել (ո͞պ ասացի) զգրական գոլն տառին այնորիկ և ոչ բնական.

Որոց և ես թէպ͞տ ունիմ հաճանիլ, սակայն զի չէ եղեալ սովորութիւն՝ ՚ի բազմացն տարաձայնիլ չէ՛ բարւոք.

Ենթամնայն որ է ասել ՚ի ներքոյ դնելի, է՛ կցող երկուց ծայրից ո͞պ սղմնգր որ է քինէտ. Զի յորժամ ՚ի ծայր տողին կիսատ մնայ բառն, դնի ենթամնայն ՚ի ներքոյ, առ՚ի ցոյց՝ թէ մի՛ յա-

Մենար 'ի վանկիդ զի կիսամտ է . այլ ա՛նց փութով 'ի միւս տողն կցել զերկուսդ իմիասին և այնպ կցմամբ ընթեռնուլ որպ 'ի միում տողոջ: Ոմանք զենթամնայն՝ ձայն աւորաւ եղերճել կիսատից միայն դնել կանոնեն. Իսկ ինձ՝ ամենայն կիսատեաց դնել բարւոք գոլ թուի . հետևելով յունաց յորոց առեալ եմք .

Դնի և Ընթամնայն 'ի ներքոյ բարդեալ բառից որք ոչ այբիւ և ոչ փոխարկմամբ լիցեն բաղկացեալք : Որոց լինի ենթամնայն սղղմնդր կամ շաղկապ 'ի տեղի այբի . որպ մեծ_ակն . լայն_երես . նեղ_սիրտ . և այլ . Ը՛ վասն զի այսպիսիքս կարեն լինիլ և չբարդ որպէս ձիշեալ եմք յերեսն 202 , դնի ենթամնայն 'ի մէջ երկուցն լինելոցս , առ'ի ցուցանել զգոլն բարդեալ: Որ և'ի բարդին այլ ձնշում ունի , և յո՛չ գոլն՝ այլ:

Սղնկաձեւն (      ) որ և միջա-
ւումն կամ պարփակումն ասի,
է՛ նշան՝ թէ այս բան զոր միջա-
ւեալ պարփակեմք՝ ոչէ 'ի կարգէ
շարադրութեանդ. այլ ո՛չ արտաքոյ
ինչ մտումն 'ի ներքս. որպէս այս,
Ես զքեզ ստուգիւ ով սիրելի՝
(թէ և ոչ հաստատաս բանիւ)
անձնակից գոլ գիտեմ ինձ.

Որկերպ մինչ ընթեռնու ոք,
'ի մտանելն 'ի միջաւումն՝ ոչ թէ
խոտորի՛ 'ի շարադրածոյն. Իսկ
մինչ թողու զայն 'ի բաց և ասէ
այսպէս, Ես զքեզ ստուգիւ ով սի
րելի՝ անձնակից գոլ գիտեմ ինձ,
անխոտոր ընթանայ շարադրութիւն.
Եւ թէպէտ այսէ զօրութիւն երկոցն
գաձեւ նշանացս դէմ առ դէմ,
սակայն դնեն ուրեք զմինն միայն
մօտ 'ի ծայրս տողից առ 'ի որոշել
ինչ, զի պարզադոյն լիցի իմաց-
ուածն. տես յերեսն 153.
Իսկ և դէմ առ դէմ կարեն առ

 դնել

դնիլ ըստ հաճութն շարադրողին
առ՚ի որոշել կամ զգիծ ինչ կամ
ըղձանք կամ զբառ կամ զբան
զի դիւրիմաց լինիցի. Աստի ե֊
րևի թէ կոչեցեալդ Գծուոուն,
մեծ օգտութին ունի շարադրութն
յայսպիսի տեղիս, ուր զինչ և իցէ
որոշել հարկաւորեսցի.

Նաև արդ՝ ասացեալ նշանագիծքս
չեշտ, և այլն՝ թէպէտ շատ կա
րեն ՚ի կիր արկանիլ, սակայն պի
տանութիւն սոցին յայնժամ ե֊
րևի, յորժամ ՚ի հարկաւոր տե֊
ղիս ՚ի գործ ածիցին: Նաև հար֊
կաւոր տեղին այն է, ուր եթէ
ոչ դնիցին՝ չփոթի՛ բանն.

Օրօրինակ ՚ի բանս, (ո՞վ մարդ՝
գրեա՛ զոր տեսանեսդ,) թէ դնի
չեշտն թէ ոչ, ՚ի հարկէ սովորեն
չեշտանան երկուքս՝ ով, գրեա.
Իբրու թէ բնութեամբ ունելով
յայսպիսի տեղիս զհնչելն սուր.
Իսկ մինչ ասի՝ (պետրոսն վարդա

պետք.) Երկուս ունելով իմաց-
ուածս, եթէ ոչ գնիցի շեշտ՛,
շփոթումն լինի բանին։ Ո՛չ կարէ՛
ասել, պետրոսն վարդապետ է.
պետրոսն վարդապետէ՛. Որովք
ահա պիտանութիւն շեշտին երև-
եցաւ աստ. առ՚ի որոշել զիմաց-
ուածսն. Իսկ թէ այլում բա-
ռի հանդիպեալ՝ ըստ յարմար հընչ-
մանն պահանջելոյ՝ վարդապետէն
ոչ շեշտանայ. Յայնժամ եչին
շեշտանալն՝ էին բացատ գրմամբն
որոշի, և միւսն կից գրմամբ.
Որգոն, պետրոսն լաւ վրդ՟պտ է.
պետրոսն լաւ վրդ՟պտէ.
Լյստ և Թաւս՛ յայսպիսի տե-
ղիս, (լծաւ թիւ գրուածոցն,)
թէպէտ յարմարէ գնել, սակայն՝
թէ գնի թէ ոչ, իբրու բնութ՟
ունելով զնոյն ձևչումն՝ այլադ՟
ձևչել ո՛չ կարեն. Իսկ ձայնս,
(տինն) որ է վանկն միաձայն և
բառն ցերեկ, եթէ ոչ ունիցի

զթաւն, լինի վանկն երկձայն, և
բաւն անուն գրոյ · ունւն, որէ, ցոյ·
Նոյնպէս և զայլոց զհարկաւոր
տեղիսն իմա ։

Դարձլ գիտելի է, զի Ճ նշանա-
գիծքդ առոգանութեց որք եդան,
ոչ եթէ ըստ պատահման ինչ նշա-
նագծեցեալք են · իբրու թէ ոմ
և հանդիպեալ իցէ · այլ ամենե-
քեան յարմար ըստ այնմ նշանա-
կուե զոր նշանակեն՝ ձևակեր-
պեալք են · զորօրինակ՝

Շեշտն՝ ըստ այնմ զի սուր հա-
նել նշանակէ զձայնն, սուր է և
ձև նորին · Թաւ զի խոտոր գնի
դէպ յընթեռնլիսն, նշանակէ զո-
լորելն դէպ առ բութն՝ զի յետ
ելման իջումն է ։

Բութն՝ ըստ որում տըկար և
վայրահակ նշանակէ զձայնն,
ծանրաձևէ և ինքն։ Սորա ըսկը-
զումն 'ի վերուստ՝ է՝ 'ի խոտոր կող-
մանէ շեշտին · ելումն ընդ իջման

նշանակելով ունիլ զաւրնչուն·
Պարոյկն ասացեալ է. թէ կէսն
շէշտ է և կէսն բութ:
Երկարն՝ յոյժ յայտնագոյն է.
որև յերգկն բանսն դնի առ՚ի
յամեցուցանել զշունչն:
Սուղն՝ ծայր ինչ ոչ ունելով՝ նը
շանակէ ամփոփ գոլ առանց եղ
ման. որպէս է՛ և վանկ նորին
կարճ և խափան:
Սակաւկէտն՝ յետ կոյս նայելով
զնախդիր տառն ի՛ իբրու թէ
զկնի իւր քարշէ. նշանակելով՝
թէ բացյա դնիլ պարտի սակաւ
ինչ ՚ի բառէն որ իվեր ասացաւ:
Որև որքանիկ ինչ ունի զատումն
տեղեաւ, այնքանիկ ինչ և շըն
չովն պարտի գոլ:
Ընթամնայն եւս ‿ յայտնագոյն
իմն ունի զձևն ըստ իւրում նշա
նակութեան. զի որով ասմնդըն
զոր քինէտ անցաք որ է շաղկապ՝
ընթանիլ ծայրկունս ունի առ
 եր

երկուս կողմունս ։ Այսպէս և
ենթամնայն զնոյն ունելով նշա-
նակութ̃ որպ̃ ասացաք, ըմբռնողն՝
ունին զձև ՚ի ներքուստ ՚ի վեր։
Միջառումն ( ) այնքան յայտ-
նագոյն ունի զձևն ըստ իւրում
գործոյն, մինչ զի ինքնին իսկ ձևն
իւր՝ թարց մեկնութե̃ լինիք վար-
դապետէ թէ առ ինչ գործ ՚ի
կիր ածի։ Իսկ զձևոց թա՛նին
և սոսկին՝ (թ̃պտ և նոքին յար-
մար են ձևագծեցնել,) չունիմ
սակայն ասել ինչ ։

Ոմանք առոգանութիւն՝ միայն
զայնս ասեն, որք ել և էջս ու-
նին ձայնի․ որք են ոլորակքն։
Եւ այլք զերկարն և զսուղն ըզ-
հեծ առնուն․ որք երկարել
կամ նուաղել ունին զձայնն ։
Իսկ մեք ըստ այլոց ևս ոմանց ,
զտասն նշանագիրսն ևս ՚ի մի փա-
կեալ՝ առոգանութ̃ անուանեցաք
վ̃ս գոլոյն միա̃պ յօրինիչք բանին։

Սաւորդ՝ թէպէտ յոյժ հարկաւոր է գծագրողին գիտել զայսոսիկ զա՟մ և ածել ՚ի գործ ըստ տեղւոյն։ Սակայն ևս առաւել ընթերցողին է գիտելի քան գծագրողին։ զի թէ ընթերցօղն տգէտ է սոցունց, թէ և բարւոք գրեցեալ իցէ, աւերք՛ ընթերցուածն որ՟պ ասացաք։ Իսկ թէ հմուտ է վերծանօղն, թէ և ոչ գրեցեալ իցէ ըստ ոճին, նա ըստ ոճին ընթեռնու։ Զի այն է հըմուտ ընթերցօղ՝ որ ոչ միայն ՚ի գրմանէ առոգանութ՟եցն՝ այլ ՚ի նոյն ՚ի բանէն ճանաչէ զյարմար կերպն արտաբերութ՟ե։ Քանզի գրմունք առոգանու՟եցն թէ՟պտ հարկաւորք են որպէս ասացաւ, սակայն համբակացն վասն են և ոչ գիտնոցն։ զի գիտունքն ո՟չ թէ ինքեանք են առոգանութիւնք։ զի և առոգանու՟թքն՝ ՚ի գիտնոցն սահմանեցեալք են։ Եւ այս բաւ։

## Յաղագս Տրոհութեան ։

### Գլուխ 38

Տրոհութիւն որ է կէտադրութիւն՝ է այն, որ ցուցանէ զտեղիս շնչառութեան ՚ի ընթերցուածսն։ Եւ ունի նշանս երիս։

Ստորակէտ , ‖ Միջակէտ ․ ‖

Վերջակէտ ։ ‖

Ստորակէտ ասի, կամ ստորատ, զի տեղեաւ և ձևով և գործով ստորնային է․ այսինքն ներքնային։ Տեղեաւ, զի սակաւ ինչ ի ներքոյ դնի քան զտողն։ Ձևով, զի կիսատ ձև ունի և ոչ բոլոր։ Իսկ գործով, զի գործ ստորատին այն է՝ նշանակել զբանն գոլ անկատար։ զի առ այն սահմանեցեալ է՝ թէ զկնի անկատար բանից դնիցի․ Իսկ անկատարն՝ յայտ է զի ստորև է կատարելոյն․ վասն որոյ ասի և գործով ստորնային։

Միջակէտ ասի․ զի ձևով և գոր

ծով 'ի մէջ է ստորատին և վերջա-
կէտին ։ Զնով, զի ստորատն է
կէս , վերջակէտն երկու ։ Իսկ
միջակէտն մի • որ լինի 'ի մէջ կի-
սոյն և երկուքին։ Իսկ գործով,
զի գործ միջակէտի այն է՝ գտնել
զկնի այնպիսի բանի՝ որ ոչ անկա
տար իցէ և ոչ եղերեալ ։ Որ լի
նի 'ի մէջ երկոցունց • այսինքն ան-
կատարին և ծայրացելոյն •
Վերջակէտ ասի ։ զի գտնի ըզ-
կնի վերջացեալ բանից • որք ա-
սին եղերեալք կամ ծայրացեալք •
Սո՛ օրինակ երից կիտից տես
զայս և բա՛ց է • Եթէ պահես
զպատուիրանս տն, ճշմարիտ սի-
րող ես նմա • և նա՛ իսկ սիրեսցէ
զքեզ։ Իսկ եթէ ոչ պահես զպատ
ուիրանսն, մի՛ պարծիր գոլ սիրող
զնա • զի և նա՛ ոչ սիրէ զքեզ։
Իսկ թէ անկատար զկնի անկա-
տարի հանդիպիցի , քանի և իցէ՝
գտնելի՛ է անդ ստորատն։ Որգոն,

Այն որ ջանայ ուսանիլ և ոչ կա-
րէ, և այն որ կարէ և ոչ ջանայ,
մի և նոյն են երկոքին. զի երկո-
քինն ևս անուսք մնան։

Այսպէս և տեղիք միջակիտուց՝
ուր զկնի միմեանց գայցեն, գնե-
լի՛ է միջակէտն. օրին., Այր՛ այր՝
որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբ՛.
'ի ճանապարհի մեղ՛ նա ոչ եկաց.
և յաթոռս ժանտից ոչ նստաւ.

Այսպէս և այլ քանիք և իցեն
թէ ստորակէտ թէ միջակէտ.

Ան տես, զի չնչավէրջութիւնք
միջակէտին եւ՛ վերջակիտին՝
յոյժ սակաւ՛ զանազանին 'ի մի-
մեանց. զի երկոքին ևս զկնի կա-
տարեալ իմացուածոց են գնելիք.

Սակայն միջակէտն դնի զկնի այն-
պիսի իմացուածոյ, որ թէպէտ
կատարեալ բան է ըստ ինքեան,
սակայն դ՛ոյ ևս այլ ինչ ասելի
մինչև ցեզերիլ պարագրութեն։

Իսկ վերջակէտն զկնի եղերեալ

պարագրութիւնն է դնելի․ որ հա-
սարակօրէն թուն ասեն․ և քեր-
թողք և հռետորք՝ պարագրութի։
Իսկ միջակիտիւ եդեալ բանն
որ է ևս կատարեալ քան զինքեան,
կոչի անդամ պարագրութեան։
Իսկ անկատար իմացուածն որ
ստորատիւ վերջանայ․ կոչի
կիսանդամ պարագրութ․
Զմանք ՚ի բաղումուրեք (որպէս և
ոսկան վրդպան) վասն յոյժ կա-
տարեալ գոլոյ բանին՝ ՚ի տեղի
միջակէտի զվերջակէտն դնեն։
Այլ չէ թէպէտ խոտելի, սակայն
քան զնոյն այն է յարմար, զի վերջա-
կէտն ՚ի յեզերման պարագրու-
թեանն դնիցի․ որպէս և անուն իւր
յայտ առնէ փերիոդոս․ Զօրոյ և
ջուխտակ գոլն՝ նշանակէ զմիջա-
կուումն՝ այսինքն զպարագրելն ըղ-
վերջն բանին։ Զորոյ զկնի ոչ է դը-
նելի փոքր գիր․ այլ՝ մնագլուխ․
որ է Գլխագիր։

Եւ թէպէտ գնեն ուրեք ի մէջ
պարագրուն զվերջակէտն՝ չէ՛ ինչ
խոտելի ըստ այնմ ենթադատման
զոր ասացաք, նկատելով զայժ-
կատարեալ զօրն բանին: Բայց
՚ի գլուխ պարագրուն՝ այսինքն
՚ի յաւարտումն տան՝ միջակէտ բը-
նաւին ոչ է գնելի. ոչ և ոչ դը-
նեն: եթէ ոչ համբակագոյնք:
Եւ արդ՝ ստորակէտն այնպէս
պարտի ընչահատիլ, որ ցուցա-
նիցէ թէ անկատար է իմացուածն:
Եւ միջակէտն այնպէս պարտի
ընչահատիլ, որ ցուցանիցէ թէ՝
կատարեալ է թէպէտ իմացուածն
ըստ ինքեան, սակայն գոյ տակաւին
այլ ինչ ասելի մինչև ցեզերումն
տան: և լինի այս՝ հատումն ըն-
չոյն սակաւ ինչ շեշտանալով:
Իսկ ընչահատիլ վերջակէտին՝
բթանալով պարտի վերջանալ.
որ ցուցանիցէ թէ՝ եզերեալ է
իմացուածն:

Իսկ աստ 'ի կարգս կէտից ասե֊
լի է և բութն՝ • զորմէ ասել
աստ՝ անդ 'ի յառոգանութեն խոս֊
տացաք • Յորժամ կէտադրելի
տեղին յոյժ սակաւ իցէ շնչահա֊
տելի, անդ 'ի տեղի կէտի բութն
դնել սովոր է • Ո՟պ այս, (որ խընդ֊
րէ՝ առնու •) Որ տեղի ոչ է այն
քան շնչահատելի՝ թէ ստորակէտ
դնիցի • Իսկ այս փոքրիկ շնչա֊
հատիւս՝ 'ի տեղի ուրեք այնքան
յոյժ հարկաւորի, մինչ զի յոչ դը֊
նիլն բութ՝, շփոթութն լինի բանն •
Ո ի տեղիք կիտից թէպէտ պա֊
հանջեն զկէտսն, սակայն ոչ են
այնքան յոյժ հարկաւորք, թէ
թարց նոյին նաև գիտունն ա֊
երիցէ զընթերցուածն • Նոյն
որպ յառոգանութեն ասացաք,
գիտունքն 'ի բանին ճանաչեն ըզ֊
յարմար ընթերցումն և ոչ 'ի նը֊
շանացն • Բայց սակայն յայտնի
տեղւոջ (զաղմուսն քո գրադրին

եսու) թէ բութն ոչ գնիցի, վն երկգծիմ՝ գոլոյ բանին, լինի թէ՝ և գիտունքն իսկ չկարիցեն որոշել։ Ո՛չ կարէ իմանիլ թէ (զսաղմոսն քո՛ գրագրին եսու։) կամ թէ, (զսաղմոսն՝ քո՛ գրագրին եսու։) Ըստ այսմ է (յագք և լեք հացիւ՝ նուաղեցան։)

Ո՛ւր եթէ ոչ գնիցի բութն՝, կարէ իմանիլ ևս թէ, յագք և լեք՝ հացիւ նուաղեցան. որ ո՛չ է այնպ. և այսպիսիք բազում գտանին։ Մծ յոյժ հարկաւորութի ունի բութն յայնպիսի տեղւոջ. զոր կերպ և յայլ տեղիս ոմանս յիշել եմք. տես յեր՛՛, 325, 333, և այլ. Եւ թէ վասն էր բութն գնի յայսպիսի տեղւոջ՝ պատճառն այս է. Բութն՝ (որպէս ասացաւ) ՚ի գոլն ոլորակ՝ խզայր հարթէ ըղ ձայնն. և երբ ձայնն խզայր հարթի, նուաղի ելումն շնչոյն. և անտի (որպէս յայտ է նկատողին)

նուաղ իմն շնչահատիլ ծնանի. և
լինի այն կէտ նուազ քան զստո-
րատն։ Զի՞ այսէ պատճառ լինե-
լոյ բթոյն ոլորակ և կէտ.
Ուրե՞մն վ̄ս զձայնն 'ի վայր բերե-
լոյն. ո՞չ համայն դրմունք նորին
'ի շարակնոցին. Զի՞ չէ՞ վ̄ս տա-
լոյն զասացեալն 'ի վերոյս ըզ-
նուաղն զայն շնչահատումն.
Զի՞ որովհետև կէտութիւն ևս
ունեցաւ՞ բութն՝, դնեն զնա
'ի բ̄ղմուրեք և'ի տեղի ստորա-
կէտի. կամ և զստորատն 'ի տեղի
նորին. որգոն, Որ ո՞չ է ընդիս՝ հա-
կառակ իմ է. և որ ո՞չ ժողովէ
ընդիս, ցրուէ՛. ղուկ 11. 23.
Ի հաստ բութն՝ և ստորակէտն,
անխտրաբար 'ի տեղի միմեանց ե-
դեալ են. Զի՞ տես, զի միջակէտն
և վերջակէտն միշտ 'ի տողին նըս-
տին. Բութն՝ ի վերոյ դնի քան
զտողն. Իսկ ստորակէտն, մերթ
ի վերոյ դնի և մերթ 'ի ներքոյ.

զի մերթ լինի մակակէտ՝ և մերթ ստորակէտ,։ Սերջանս և զայս ծանիր, յորժամ ՚ի տեղի ստորակէտի կամ միջակէտի (և) հանդիպիցի, կարելի՛ է թէ ոչ գնիցին կէտքն. վ՟ զի շաղկապս այս և՝ առաւել տրոհէ զիմացուածսն ՚ի միմեանց քան զկէտսն։

Ս՟ արդ՝ յետ գիտելոյ զզօրութիս առոգանութեանցն և կէտիցն, պարտ է գիտել և զընթադատութիւնն բանից. և թէ զինչ է ընթադատութի, ասելի՛ է.

### Յաղագս Ընթադատութեան.

### Գլուխ 39

Ը՟նթադատութիւն բանից՝ է՛ ճանաչել զմիտս բանին, թէ որպիսի եղանակաւ պատկանի արտաբերիլ. Օ՟րօրինակ, այլ եղանակաւ պարտ է արտաբերել զպատմական բանն, և այլ եղանակաւ զհարցականն։ Ն՛մ

եղանակաւ զաղաչականն, և այլ զսպառնականն: Ա՛յլ կերպիւ զորոմանքն, և այլ զխնդականն: Ա՛յլ զհիացականն, և այլ զզարհուրականն: Ա՛յլ զյորդորականն, և այլ զհրաժարականն: Ա՛յլ զերատակինն, և այլ զպատուիրականն: Եւ այսպէս զամ տեսակս բանին պարտ է ենթադատել, այսինքն ճանաչել և իմանալ, և այնպէս պատկին եղանակաւ արտաբերել՝ որ յարմար լիցի մտացն բանին:

Որ թէ զայսպիսիս ոչ ճանաչիցես, առոգանութիւնքն ոչ կարեն ըստ տեղւոյն ՚ի կիր արկանիլ:

Զի գործածութիւնք առոգանութեանց՝ յընթադատումն երևին բանին. զի մինչ ոչ գիտիցես զմիտս բանին, զիարդ կարիցես շեշտել զվանկն կամ բթել, կամ ոլորակել, և այլն: Եւ մինչ այսորիկ ոչ ածիցն ՚ի գործ ըստ տեղւոյն, ոչ լինի վերծանումն ուղիղ ասացաւ:



Եւ

Եւ ծանիր աստ, զի ՚ի վերծա-
նութեն տաղական բանից՝ յետ
գիտելոյ զայս ա՟մ որ մինչև ցաստ
ասացաւ, պա՛րտ է գիտել և ս ըղ
չափն նոցին թէ քանոտնեա՞յ է
կամ քանավանկեա՞յ. և այնպ՟ վեր-
ծանել ըստ իւրում չափուն.
Եւ չափն տաղից՝ են ոտքն նո-
ցին. որք կոչին և ս անդամք.
Արդ՝ տաղն բաղկանայ յոտից,
և ոտքն ՚ի վանկից. և երեքին մ՟ք՝
տաղ, ոտք, վանկ՝ են երկուերկու.
զի Տաղն լինի հանգէտ և ան-
հանգէտ. Ոտքն պարզ և բարդ.
և Վանկն երկար և սուղ ըստ
հնչմանն. զորոց սակաւ բանիւք
տալով նշմարինչ՝ անցանելի է.

## Յաղագս Երկար Վանկի.

## Գլուխ 40

Երկար վանկն կրկին է. բը
նութեամբ և դրութ՟.
Բնութեամբն՝ է՛ ըստ երից.

Նախ՝ բնուբ̄ երկարք են երկար
ձայնաւորքն. ոչ ունելով 'ի վերջն
բաղաձայն. որպ̃ է՛, ո՛. կամ բէ՛, բո՛.
Երկրորդ՝ բնութբ̄ երկարք են
վերջաւոր երկձայնքս՝ ա՛յ, ո՛յ.
որպէս՝ ձայն, դոյն, և նմանք.
Երրորդ՝ ասի բնութեամբ երկար
ո՛ և իցէ ձայնաւոր, մինչ զկնի իւր
ունիցի բաղաձայն 'ի սրաձայնից.
որպ̃ խաղ, դեղ, և նմանք.
Իսկ դրութեամբ երկար այն է,
որոյ ձայնաւորն զկնի իւր երկու
կամ երեք բաղաձայն ունիցի.
որպ̃ մարդ, ոսկր, և նմանք.
Որ լինի և ս 'ի մէջ երկուց վան-
կից, կամ երկուց բառից. որպ̃
տատրակ, մեծ սաղ. անդրէն,
երկձայն, և նմանք. Որոց նախկին
վանկքն թէպէտ են միաբաղա-
ձայնք 'ի վերջն, սակայն զկնի ե-
կեալ վանկից սկզբան բաղձ̃յնքն
կից գալով նոցա 'ի հնչելն, նոքին
առաջին վանկքն երկար համարին.

## Յաղագս Սուղ Ձայնից.

### Գլուխ 4։

Սուղ վանկն ևս կրկին է. բնութեամբ և գրութ՟. Բնութ՟ն ևս կրկին է. Նախ՝ մինչ աներկար ձայնաւորքն 'ի վերջն բաղաձայն ոչ ունիցին. ոպ՟ աննա. այրի. դարձո՛, և նման. Երկր՟դ՝ մինչ ա՛ և իցէ ձայնաւոր՝ զկնի իւր ունիցի բաղաձայն 'ի բթաձայնից. որպ՟ գաբ, մեգ, և նմանք։ Իսկ գրութ՟ սուղ այն է, որ մինչ երրորդ կերպիւ բնութ՟ երկար վանկն՝ ձայնաւորի հանդիպիցի. որպէս խաղ, խաղել, և նմանք։ Սա տես, զի ոպ՟ սրաձայնիւ եղեալ երկարն՝ ձայնաւորի հանդիպեալ՝ գրութ՟ սուղ լինիլ ասի. ոպ՟ այժմ, խաղ, խաղել։ Նոյնպէս և բթաձայնիւ եղեալ սուղն՝ բաղաձայնի հանդիպեալ, ասի գրութ՟ երկար լինիլ. ոպ՟

գաբ, գաբրիէլ. Որպէս են և՛
տատրակ. մեծ սագ ։ Զի տառ
ըստ ինքեան, և Թծ ըստ ինքեան,
են սուղք ըստ երկրորդ կերպին.
Իսկ աստ հանդիպմամբ միւս բա
ղաձայնիցն, դրութ̃ երկար լինին
ոպ̃ ի վեր ասացաք. Բայց տես,
զի հանդիպեալ բաղաձայնքն ե
թէ ՚ի բլթաձայնիցն լինիցին, ոչ
այնքան երկարեն զսուղն որքան
երկարեն սրաձայնքն. այլ ոչ թէ
միջակ առնեն զսուղսն ի մէջ եր
կարոց և սղից. որք սակայն դար
ձեալ ՚ի կարգս երկարացն են հա
մարթուելիք. Որպէս իմա և
զերրորդ կերպին բնութ̃ երկարն
՚ի հանդիպելն բթաձայն բաղա
ձայնի. Իսկ թէ դարձեալ սրա
ձայնի հանդիպիցի, լինի երկար
բնութեամբ և դրութեամբ.
Բնութ̃ վ̃ս նախկին բաղաձայնին
՚ի վերջնումն. և դրութ̃ վ̃ս ենդին.
ոպ̃ խուղ խաղմ, թղ թղր, և այլք.

## Յաղագս Պարզ Ոտից.

### Պրակ 42

Պարզ ոտքն լինին երկոտասան. որոց չորքն են երկավանկ, և ութն եռավանկ։

Յերկավանկից առաջինն է համբուրն. որ է յերկուց երկարից։ պայծառ։ Երկրորդն է Դծաւորն. որ է յերկայնէ և ՚ի սղէ։ վայրի։ Երրորդն է Դծավէրջն. որ է ՚ի սղէ և յերկայնէ։ տաճար։ Չորրորդն է անգայտն յերկուց սղից։ ծաղիկ։

Յեռավանկից Առաջինն է տուեղն. որ է յերկայնէ և յերկուց սղից։ մարգարիտ։ Երկրորդ վերջատեղն. յերկուց սղից և յերկայնէ գերագոյն։ Երրորդ փօղաբոլբն. ծայրքն երկայն, մէջն աղօտ. քաղցրաձայն։ Չորրորդն է փօղաղօտն. ծայրքն սուղք, մէջն երկար։ համարձակ։ Հինգերորդն է հանեղն, յերկուց երկայնից և ՚ի սղէ. եր

ջա՛նկի՞։ Վեցերորդն է ահաւորուեգն,
’ի սղէ՛ և յերկուց երկարաց․
Ֆո՞վայի՛ն։ Եօթներորդն է նեյ
գեն, յերից սղից․ Նա՞զելի՞։
Ութերորդն է սմնջն, յերից եր
կարաց․ Եօթնարփեա՛ն։

Արդ տես, զի որովհետև երկար
և սուղ ելումն ընդ՝ ժամա
նակաւ Ճանաչի որպ՟ յերեսն 561
անցաւ, զերկար վանկն առ սուղն
համեմատեալ՝ զերկարն երկամա
նակ անուանեն, և զսուղն եզա
մանակ։ Իբրու թէ երկարն կրկ
նապատիկ առ ամտ ինչէ քան ըզ
սուղն․ և որպ՟ երկու քան զնա
յամէ ինչումն նորա։ Վասն որոյ
զանդգայտն պարզ ոտից՝ երկամա
նակ անուանեն․ վ՟ գոլոյն յեր
կուց սղից։ Զմեծասարն և ըզ
մեծավերջն անուանեն եռամա
նակ․ վ՟ ունելոյն զմի երկար և
զմի սուղ։ Իսկ զհամբոյրն կոչեն
քառամանակ․ վ՟ գոլոյն յերկուց


եր

երկարաց։ Նոյնպէս իմա և զեռավանկսն, քառամանակ հնգամանակ, վեցամանակ։

## Յաղագս Բարդ Ոտից։

### Գլուխ 43

Որպէս պարզ ոտքն ՚ի վանկից բաղկանան, այսպէս և բարդքն ՚ի պարզից բաղադրին։ Արդ որպէս վանկքն պարզ ոտից՝ ասին երկար և սուղ. երկարն երկամանակ, և սուղն եզամանակ։ Նոյնպէս և պարզ ոտքն բարդ ոտից՝ ասին երկար և սուղ. երկար ասի եռավանկն, և սուղ երկավանկն։

Արդ որպէս պարզ ոտքն ասին երկամանակ, եռամանակ, և այլ։

Նոյնպէս և բարդ ոտքն քառավանկ, հնգավանկ, և այլ։

Արդ որպէս պարզ ոտից չորքն են երկավանկ, և ութն եռավանկ։

Նոյնպէս և բարդ ոտից չորքն են երկոտանիք, և ութն եռոտանիք։

Երկոտասանեցն բարդ ոտից՝ Մաջինն է համբոյրն . յերկուց երկայնից փոխացավանք. եօթնարփենն՝ շնորհօք լի: Երկրորդ՝ մեծասարն . յերկայնէ՛ և՛ի սղէ՛ հնգավանկ . անեղին՝ տաճար : Երրորդ՝ մեծավերջն . 'ի սղէ՛ և յերկայնէ՛. կուսից՝ երջանկի. Չորրորդ՝ անգայան . յերկուց սղից :

Պխտօղք՝ արթունք .

Եռոտանեցն բարդ ոտից՝ Մաջինն է սաեղն . յերկայնէ՛ և յերկուց սղից եօթնավանկ . քաղցրաձայն՝ տատրակ՝ վայրի. Երկրորդ վերջատանջն . յերկուց սղից և յերկայնէ. ծաղիկ՝ պայծառ՝ ծովային: Երրորդ քողաբորբն ծայրքն երկայն, մէջն սուղ. գերագոյն՝ գովեալ՝ տիրամայր . Չորրորդ քօղազօտն . ծայրքն սուղ, մէջն երկայն: ով տէր՝ կենսատու՝ նշան . Հինգերորդ համեղն . յերկուց երկայնից և յաղօտէ՛.



մար

մարգարիտ՝ լուսափայլ՝ անգին ։
Մեջեր̃դ՝ աւարտեղն ․ ՚ի սղէ և
յերկուց երկարաց ․ ով դու՝ հա
մրձիկ՝ բարեխօս ։ Յօթնր̃դ՝ ներ
գևն ․ յերից աղօտից ։ քարոզք՝
բանին՝ կենաց ․ Ութր̃դ՝ սոնքն ․
յերից երկարաց լինավանկեան ։
Մբ̃ ոսկի՝ քահանայդ՝ նաղելի ։
Ա՜ստ գիտելի՛ է, զի բարդ
ոտից ոմանք են տողք ․ յորոց
անմիջապէս բաղկանայ տաղն ։
Իսկ ոմանքն են կիսատողք ․ յո-
րոց չինի տողն, և անտից տաղն ։
Օրօրինակ՝ եռատանի բարդ
ոտքս վերջատանջ, ( յայնժամ՝
սիրով՝ տիրական, ) է՛ ևս տող ․
որոյ ՚ի չորիցն բաղկացե̃լ է տաղն ։
Իսկ բարդ երկոտանի ոտքս մե-
ծավերջ, (եկեալ՝ մարիամ, ) է՛
կիսատող ․ որոյ յերկուցն եղե̃լ է
տողն ․ և յերկուցն տողից տաղն ։
Ա՛յսպիսի տողք՝ կարեն կոչիլ
նաև՝ յարաբարդ ոտք ։

Տաղն ոպ՟ ասացաք՝ լինի համ-
գէտ, կամ անհամգէտ։
Համգէտ ասի այն, որոյ տողքն
միաչափ են. ոպ՟ այժմ իսկ ի մերոյ
եդեալքդ։ Իսկ անհամգէտ ասի
այն, որոյ տողքն ո՛չ են միաչափք։
ոպ՟ այս, (արթունք զը՟արթունք.
բանին բանաւո՛ր ծիծուունք։)
Որոյ առ՟ջին տողն է վերջատանջ
ձնգավանկ. իսկ յետինն քօղաղօտ
եօթնավանկ։ Գո՛յ և անհոնգէտ
այսպիսի։ (դասքըն հրեշտակին. էին
պահապան. սբ՟ գերեզմանին յոր
էդաւ. մարմինն անըման։)
Որոյ երրորդ տողն ունի աւելի
պարզ ոտք մի եռավանկ որ է այս,
յոր եդաւ։ Աստայսց և զայլսն իմա։
Նաև ծանիր յասացելոցս, թէ
տաղից ոմանք են երկտողեան.
ոմանք երեքտողեան. և ոմանք չո
րեքտողեան. և յայտ է նկատողացն։

 Նա՟

Արդ՝ ՚ի չափելն ուրուք տաղս՝ այսինքն ՚ի շինելն, ոչ է բաւական գիտելն միայն զչափս քանավանկութն, այլ նաև՝ թէ յո՛ր տողս որ ոտք պատկանին դնել ։

Սակայն այս՝ և այլք ՚ի սոյն գիտուէս՝ ոչ գտանին այժմ ՚ի մեզ ։ Ուստի զայսքանս ինչ միայն (ոպ և այլք) եդաք աստ, զի թէ և լրութեն ոչ եմք հասու, գոնէ մասնաւորին իբրու ծանօթ լինիցիմք ։ Նա զի՝ թէ և ոչ կարիցեմք չափաբանել ՚ի մէնջ տաղական բանս, գոնէ զշինուածս բանաստեղծից՝ կարիցեմք վերծանել չափաբանապէս ․

Եւ զանուանս ոտիցն՝ համբոյր, ոեղ, և այլն, կարելի՛ էր թէպտ մեկնել աստ ․ թէ հիմ այսպ անուանին ։ Սակայն՝ ոչ գոլով հարկաւոր այժմիս որպէս ասացաք, այժմ աստէն առ այս ժամանեալ՝ բանիցս վերջ արասցուք ․

Բայց արդ՝ 'ի հասանիլն մեր յայս
կէտ, զոր օրհնութիւն՝ կամ
զոր գոհութի մատուսցուք ա-
մենատն՝ և հատուսցուք զփոխա-
րէնն գթութե ամենաքաղցր բա-
րերարին ։ Որ ըստ իւրում բա-
զում գթութեանն՝ արժանացոյց
զանարժանութիս իմ՝ տեսանել
զաւարտումն տպեցման սորին,
Որ յերաւէի (առ այն՝ զի անհաւ-
աստի է կեանքն մեր,) միշտ յերկ-
բայս էի թէ տեսանիցեմ ։
Սորոյ Փառք և Գոհութի.
օրհնութի և փառաբանութի.
Երկրպագութի և ծառայութի.
Պաշտօն և պատիւ ամենակա-
Տէրութեն Գերագոյականն էութե
Ամենաբն Երրորդութե և միա-
բուն Գոյութեն և Միութեան
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ.
Այժմ և միշտ և յանզրաւ
յաւիտենից յաւիտեա
Ամէն ։

## Վերջաբանութիւն Գրքոյս առ Բարեմիտ Ընթերցօղս:

Ուսումնասէր սիրելեացդ իմոց յայտ լիցի. զի յայտնագոյն իմն է ամենեցուն՝ թէ գիտութիւնք ածային և մարդկայնոց իրողութեանց գրով աւանդեալ են մեզ. Որոց ոչ այլով իւիք՝ քան թէ գրոց ընթերցմամբ առ ծանօթանամք. Իսկ կէտ և քանոն ուղիղ ընթերցման և լաւ իմացման՝ է արհեստս այս քերականութեան. Զի որպ՟ ամ՟ արհեստ թէ ծառայական թէ ազատական՝ ունի յինքեան քանոն իմն անսխալ որ ուղղէ՝ զնա և կարգաւորէ՝, Այսպէս որ ինչ գիտութի՟ գրով վճարի՝ ուղղիչ նմա և կարգաւորիչ նախառաջին՝ է քերթողութի՟ն, ապա իւրաքանչիւրոյն յատուկ քանոնն: Այլ եթէ այսպ՟, հարկ և պարտ է ուրեմն ընթեր-

ցասիրաց՝ նախ զուղղութիւն ըն
թերցմանն ուսանիլ, և ապա նո-
վաւ առ այլս դիմել: Եւ այսու
ծանիր զպիտանութ̃ի այսր ար-
հեստի, որ քանոն ասացաւ ա̃մ
ուսմանց. այսինքն՝ թէ ա̃ծաբա-
նականաց՝ թէ փիլիսոփայականաց՝
և այլ: Որոց հետևողքն թարգ
քերթողութ̃ե՝ ուղիղ և հաստատ
քայլել ոչ կարեն: Ուստի որ ոք
'ի գիտութիւն գրոց այսու գրա-
նովս ոչ մտցէ, թէ և բազում ինչ
ուսանիցի և գիտիցէ, գրոց աշա-
կերտ ո՛չ անուանի. իբրու ո՛չ մը-
տեալ ընդ դուռն գիտնոց և ո՛չ
համաթուեցեալ ընդ նոսա ըստ
իւրում չափուն: Եւ թէպէտ
քերթողութիւն առ ա՛յլ մեծամեծ-
ուսմունս համեմատեալ՝ է փոքր
և նուաղ գիտութ̃ ըստ ինքեան,
սակայն զի դուռն է մտից մեծա-
մեծ ուսմանց՝ է պատուական և
գեր յարգելի, և յո̃ջ քան զայլսն


Նախ

նախստանալի՛։ Որպէս բանալին թէպէտ է՛ փոքր մասնիկ իմն երկաթոյ, բայց առանց նորին՝ համայնքն 'ի գանձին՝ անվայելք մընան։ Նոյն առանց քերթողութեան որ է բանալի ամ̃ գրոց, իմաստութիւնքն 'ի նմ̃ թէպէտ ոչ ծածկին իսպառ, բայց համայնքն՝ հաստատ բացայայտիլ ոչ կարեն։

Սուտի որովհետև այսքան հարկաւորութի ունի արհեստս այս, և ամ̃ ընթերցասիրաց է ուսանելի, կարեւոր վարկայ տալ զանձն իմ յաշխատանս, և շարադրել զգըքոյկս զայս 'ի շահ ուսումնասէր եղբարց, և՛ 'ի փառս անուան փրկչին մերոյ Յի՛ Քի՛, և մօր իւրոյ միշտ կուսին Մարիամու։

Գիտելի է սակայն, զի ըստ ամից ումեմն հանճարեղի, հայն ոչ է նկատելի թէ ազնուական ոք արդեօք շաղեաց զնա կամ եփեաց, թէ ռամիկ ոք անազգի՛ այլ յայն

միայն է նայել՝ զի զքաղցն բժըշ-
կիցէ ։ Որպէս և այս գրքուկ
մի՛ նկատիցի թէ յումմէ՞ է շարա-
դրեցեալ ։ որ յետնադոյնն է հե-
տևողացն դրոց, և աշակերտացն
աշակերտ ։ Այլ յայն միայն նը-
կատիցի՝ թէ զինչ արդեօք 'ի սմա
օգուտ ինչ լսելոյ և ուսանելոյ ։
Եւ որպէս հաց իմն մինչ ունիցի
զտեղի ինչ այրեցեալ 'ի յեփիլն,
ոչ այնր վասն ջուտեն զնա բնաւին
որք զքաղցն ունիցին ։ այլ զայն
մասնիկն ի բաց հատեալ՝ ուտեն
զմնացեալն ։ Այնպէս և 'ի յայսմիկ
շարադրութեն թէ անօգուտ ինչ
խօսեցայ, կամ թէ սխալեցայ և
ոչ իմացայ, 'ի պատճառս այնց՝ ոչ է
պատկին զբոլորն ի բաց ընկենուլ ։
զի 'ի բոլորումն գտանի՝ թերևս
և օգտակար ինչ ։ Ուստի պարտ է
մնաւորաց՝ զանպիտանն ի բաց ըն-
կենուլ և զօգտակարն առնուլ
որ պիտոյն իցէ ։

Ընդ՝ մինչ տեսանիցես այնպի
ինչ յայսմ գրքուկի զոր և այլք
խօսեալ իցեն հնագունից յետոյ,
զայնպիսիսն զամ՝ յայնց մտածել
գոլ գիտիցես և ոչ 'ի մէնջ. թէ և
կարելի է՝ զի զոմանս 'ի նոցանէ
դու և ես խորհեալ իցեմք:

Ասացի՝ (յայնց մտածեալ գոլ
ծանիցես և ոչ 'ի մէնջ,) սակայն
ոչ յայնցն է յայնց, և ոչ 'ի մէնջն
'ի մէնջ. այլ 'ի միոյն է ամ և նո-
րին է սեպհական: Որ պարգևէ
և տայ որում և կամի, յորժամ
և կամի, որքան և կամի:

Ըրդ՝ այնք որք յայլ և այլ տե-
ղիս յիշին, կամ վս այլ ինչ և
այլ ինչ մտաց, յայլ և այլ տեղիս
յիշեցան: Կամ թէ՝ յորոյ վերայ
ասելի ինչ մտածն, և կամ յետոյ
մտածեալ, զայն 'ի պատկին տեղւոջ
դրժլ յիշեցաք: Որ յերեսն 137
մոռացաք ասել յոյսյանէ կմ յայսյ.
որոյ պէս և այլք գտանին:

Նա՛ արդ՝ ո՛վ ընթերցասէր որ-
դիք սիօնի. մինչ օգնութբ ան
օգտեսջիք ինչ 'ի սմանէ, զանձան
ձիր վարժապետն իմ հեզահոգի,
զածաբան ածատուր վարդպն
ջուղայեցի, 'ի սուրբ աղօթս ձեր
յիշեսջիք 'ի տր. վարձս բարեաց
խնդրելով նմա 'ի տնէ. Որ 'ի 1155
թվին հայոց՝ նախախնամութբն այ
եկն 'ի կոստանդնու պօլիս, ծայրա-
գոյն նուիրակ ածաէջ գահին և
մօրն մրոյ սբ Էջմիածնի.
Նա՛ աստ 'ի կոստանդնուպօլիս ը
ամրոց եղբարց՝ առ 'ի վարժել զան
վարժ խակուն տհաս հասակիս,
բազում աշխատանս աշխատեցա՛.
Որև գաս ասելոյ այնքան ունէր
փոյթ, մինչ զի թէ 'ի ժամ ճաշոյն
հանդիպէր, թողոյր զուտելն և
վճարէր զխրատն. որոյ զհոգին
լցցէ տր ողորմութբն իւրով.
Դ. տցէ յողորմութե տն և վարժա
պետն նորին և վարժապետն վար
ժա

ժապէտին մինչև ցա՜ջին սկիզբն
նոցին • զի առատ է տ՟ր 'ի տուրս
բարեաց առ ամենեսին:

Յուսկ յետոյ զյետնագունեղ
վարժեցեալս յիմաստից նոցին
զպաղտասար դպիր կոստանդնու-
պօլսեցի, և զհայրն իմ կեսարացի
գրիգոր հիւսն, և զմայրն իմ ըղ-
թուրվանտայն՝ ընդ այլ ննջեցելսն
մեր յիշեսջիք 'ի քս՟ յս՟՝ քաւու-
թեան մեղաց հանդիպիլ • ամէն •

### * Յիշատակարան Տպեման.

Եւ արդ՝ վերստին տպեցաւ
գիրքս Քերականութեան
'ի թվին ռ՟ մ՟ ի՟ • 'ի Հայրապետութե՟ն
Գ• երահռչակ Ա• թոռոյն և մօրն
մերոյ սբ՟ Էջմիածնի՝ Յաջորդի
երբեմն երանելւոյ սբ՟ հօրն մերոյ
Գ• րիգորի լուսաւորչին՝ Տեառն
Սիմէօնի Սրբազան Կաթողիկոսի
ամենայն Հայոց •

Առ ՝ի Պտրրգւե սրբոյն Էջմի սուրբ Տնօրինական տեղեացն ԳՐԻ, և Կոստանդնուպօլսի մեծի քաղաքիս՝ ՏԵռն Գօղոսի և Տն Գրիգորի Արքեպսն և Նծաքան Վարդապետացն երջանկաց ։

՝ի Կոստանդնուպօլիս Քաղաքի ։

Ըստ խնդրոյ ուսումնասէր մանկանց եկեղեցւոյ։ Նորոգեմք և գոյիւք նուաստ գասպարիս Սուքաթեան, և հայրապատին Աղբօրն իմոյ Պաղտասար ամիրային. իբրու տրխուր լուսահոգի պատուելի մեծ վարժապետին՝ հեղինակի գրքոյս և բազմերախտին հայկական ազինս. և մանաւանդ իմս անարժանումն. երկասիրութեամբ Թոռան նորին՝ գեռաբողբոջ հեղաբարոյ մեսրոպ դպրի ։ ՝ի Տպարանի հանդուցեալ մհտսի Ածատուրի որդւոյ յօհաննիսի բարեմիտ դպրի. և



որ

որդւոյ նր̃ տէրայու կարապետի։
Աշխատակցութ̃բ մշակաց նոյին՝
գալստին, պօղոսին, և Նիկողոսին։
Ուրեմն խնդրի ՚ի վայելողացդ յի
շել զհոգի նոյին և մեր և ծնո
ղաց և զաւակաց և մերձաւորաց
մերոց՝ միով ա̃ծողորմեայիւ.
Որ և յիշողքդ յիշել լիջիք ՚ի տ̃նէ
մերմէ Յ̃սէ Ք̃սէ. որ է օրհնեալ
ընդ հօր և ընդ ս̃բ հոգւոյն.
այժմ և յաւէտ և յաւիտեանս։

Եւ աստ ՚ի վերջնում գիտելի է
զի յոմանս տեղիս սխալմունք
գրոց պատահեալք ՚ի շարելն ըղ
կապարեայս, և զկնի սակաւ ինչ
տպեցման թղթոյն տեսեցեալք՝
ուղղեցան։ Ուստի ժտեմք ՚ի կա
րեկցացդ՝ ՚ի հանդիպելն ներել
մեզ տկարացս։

Միտ մարգինային գոլով տղայ՝ ալրեալի,
Զի անպիտան՝ ձեռին ձայն գրոանի։
Որում փառք յաւ̃տ̃նս ամէն.

## Ցանկ Նշանաւորաց Պիտանաւոր Բանից Գրքոյս։


Ախտակրութիւն որ ըստ այլոց միջարկութիւն ասի 300
Ածանցելոց եղերմունքն 42
Ածանցելոց ի̅ն կերպքն 206
Ածանցելոց վերջից խ̅րան 213
Ածանցելոց վ̅ խորանք 228
Ածանցեալ բայից խորան 287
Ամենեքեանին հոլովն 130
Անդէմ բայքն 108. 276. 418
Անունն 18. 187. 289
Ապրման ձայնաւորքն 482
Աղդեցութ̅ի վերստին 186
Առոգանութիւնքն 556
Արգելեալ խնդիրքն 434
Բաղադրական նախդիրքն 150
Բաղաձայնից ծնցմունքն 482
Բաղաձայնք՝ սուր և բութ 490
Բայն 48։ խորանք 80. 260. 279
Բայք առաջին կերպին են 87
Բայք երկրորդ կերպին ամ 90

Բայք երրորդ կերպին ամ 92
Բանն 14. նաև յերեսն 512
Բառն 13. նաև յերեսն 504
Բղխմունք ձայնից բայից 270
Բնադէմք և դրադէմք 260
Բնական կարգ շարադրութ 405
Գոյական և այլն մասնին 208
Գրեսցէք լուծացէք և" 274
Դերանունն 118. 295
Դերանուանց հոլովքն 172
Եզական և յոգնականն 382
Ենթադասութիւնն 580
Ենթակայականն և մակա" 188
Երանեալ է. 2 այր. 3 որ 447
Երկատեսակ ներդրծկնքն 82
Երկոքեան երեքեան չոր" 131
Էական բայքն և հոլովքն 100
Էին բայից եղևլ բայքն 260
Է, օ, են տառ, վանկ, բառ 496
Ընդմիջակն բայից քանիքն 80
Ընդմիջականն ներդրծկն 283

Ընդ միջինն կրակ" լինի 283. 412
Ընդունելութեանն 110. 291
Ընդունելութն բղխմունքն 115

Թանձրք նուրբք և միջակք 488
Թիւն անուան յերեսն 203

Կիրառութիւն տառին 520
Կիրառութիւն վանկին 533
Կիրառութիւն բառին 543
Կիրառութիւն բանին 549
Կրաւորկնն ընդ միջ" լինի 283. 411
Կրաւորկնի պէս ներգոր" 264
Կրկնակքն և նոյնքն տառից 492

Համաձայնութիւն և հոլովառ" 307
Համաձայնութի ան" ընդ ան" 308
Համաձայն" գերան" ընդ ան" 328
Համաձայն" մասնկն ան" ընդ" 339
Համաձայն" յօդի ընդ ան" 345
Համաձայն" պտխնոյ ընդ հարց" 351
Համաձայն" բայի ընդ անուան 353
Հասարակ բայքն 96. 263 412
Հարցկն անուանց հոլովքն 128

Հարցկնն յարաբերկն լինել 352
Հեգակաղմութիւնն 533
Հետևմունք մասանց բանին 518
Հիւանդ էի և տեսէք զիս 268
Հիւնն բացայայտի 9. 486
Հնչումն է սեռ ամ ձայնից 503
Հոլովառութիւնն 307. 368
Հոլովառութ անուան 369
Հոլովառուի ածկն անուանց 379
Հոլովառութ ներդր՛ բայից 389
Հոլովառուի կրաւորկն բայից 407
Հոլովառութ հնրկ բայից 412
Հոլովառուի ը՟միջակն բայից 414
Հոլովառութ ը՟ունելուն 432
Հոլովառութ միջարկուն 434
Հոլովք անուանց 22. 24. 233
Հոլովք առանձնականաց 36
Հոլովք ածանցելոցն 43
Հոլովոց մեկնութիւնքն 441

Ձևն անուան՝ յերեսն 200
Ձևափոխել կողմնականքն 98
Ձևակերպուէք հոլովմանցն 252

Ճանաչել զշարադրել մաս" 446
Ճանաչումն ընդ հետևմանց 46
Ճգնեմ, կամ ձգնիմ 267

Մակբայն 152 : խորատք 158
Մակբայ և շաղկապ 183
Մասնական անուանց հոլովքն 127
Մասունք քերականութեան 469
Միջարկութիւն որ է ախտակք" 300

Յաղթել, տիրել, իշխել և" 401
Յարաբերականն հրցկն լինի 352
Յարմարադրութիւնն 520
Յիով վերջանալի բառքն 522
Յիւն ընդ միջական հնչումն 483
Յիւն վն տես և յերեսն 525
Յոգնաւական հոլովաւութքն 384
Յօդն 132 : հոլովքն յօդին 137

Նախդիրն 138 : խորատք 142
Նախդիրն — 146 : ընդ 147
Նախդիր և մակբայ 182
Ներդրծկնին դուանշն՚ինկը" 407
Նյնական և կողմնական բայք 83

Շաղկապն 168. խրատք 180
Շարամանութիւն որ է 306
Ոյ, իւ, ով, ու, օղ վանկքն 542
Ուցեալ ձեւացլ նախտպքն 269
Չափողն ուղղական և չա՛ 387
Պատուագրութիւնն 529
Սահմ̃կն 'ի տեղի ստորոգ̃ս' 275
Սեռն անուան 196
Սկսումն վերստին 'ի քերա' 464
Ստորգ̃ելն շինող մասունքն 429
Ստուգաբանութիւնն 543
Վանկն 11. 497. 582
Վերծանութիւնն 552
Տառն 8. նաև յերեսն 471
Տեսակն անուան 206
Տրոհութ̃ին որ է կէտադրութ̃ 572
Քաղցր քաղցու 34. 131. 250
Քանակն անուան 194
Քերականութիւնն 466


Ա. Ւ. Ր. Տ.

ՅԹ ՌԸ